

Ռ.Ն. ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՏԳ- 343 (479.25)
ԳՄԳ- 67.99 (2Հ) 8
Մ՝ 490

*Տպագրության է երաշխավորվել ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը*

*Հեղինակն իր երախտագիտությունն է հայտնում ԵՊՀ
ֆակուլտետի քրեական դատավարության և իրավագիտության
կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոսական կազմին աշխատանքի
կայացման գործում ունեցած մեծ ավանդի համար:*

**ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ռուբեն Նորայրի Մելիքյան

Մ՝ 490 Վերաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական
դատավարությունում: – Եր.: Երևանի համալս. հրատ., 2007թ.:
200 էջ:

*Խմբագիր՝ իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ս.Ա. Դիրբանդյան*

Վերաքննությունը, որպես դատական ակտերի վերանայման ավանդական եղանակ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում ընդամենը մի քանի տարվա պատմություն ունի: Ուստի հայրենական դատավարագիտության կողմից այն դեռևս չի ենթարկվել համակողմանի գիտական հետազոտության:
Աշխատության մեջ փորձ է արվել լրացնել այդ բացը նախանշվել են վերաքննության քրեադատավարական ինստիտուտի զարգացման ուղիները, վեր են հանվել առկա օրենսդրական թերությունները, կատարվել են դրանց վերացմանը և վերաքննության ինստիտուտի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

Մ՝ $\frac{1203021300}{704(02)07}$ 2007

ԳՄԳ- 67.99 (2Հ)8

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2007

ISBN 978-5-8084-0820-3

© Ռ.Ն. Մելիքյան, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

ԳԼՈՒԽ 1. Վերաքննության էությունը և նշանակությունը.. 7

 § 1. Վերաքննության հասկացությունն ու էությունը 7

 § 2. Վերաքննության տեղը և դերը քրեական գործերով դատական ակտերի վերանայման համակարգում 31

 § 3. Քրեադատավարական սկզբունքների իրացումը վերաքննիչ վարույթում 45

ԳԼՈՒԽ 2. Վերաքննիչ բողոքարկումը որպես վերաքննիչ վարույթի սկզբնական մաս..... 63

 § 1. Վերաքննիչ բողոքի հասկացությունը և նշանակությունը..... 63

 § 2. Վերաքննիչ բողոքարկման առարկան և վերաքննիչ բողոքի բովանդակությունը..... 72

 § 3. Վերաքննիչ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտները..... 89

 § 4. Վերաքննիչ բողոքարկման դատավարական կարգը 107

ԳԼՈՒԽ 3. Գործի քննությունը և լուծումը վերաքննության կարգով 127

 § 1. Գործի վերաքննիչ ստուգման առարկան, սահմանները և դատավարական կարգը 127

 §2. Դատարանի վերջնական որոշումների բեկանման և փոփոխման վերաքննիչ հիմքերը..... 148

 § 3. Վերաքննիչ վարույթը եզրափակող որոշումների հասկացությունը, ընդունման կարգը և տեսակները 173

Եզրահանգումներ 189

Օգտագործված գրականություն 194

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից դատավարագիտության մեջ քրեական գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկումը և դատական ստուգումը դիտվում է որպես դատավճիռների օրինականության, հիմնավորվածության և արդարացիության ապահովման երաշխիքների համակարգի անհրաժեշտ տարր: Սակայն դատական վերանայման *վերաքննիչ* եղանակի անհրաժեշտությունը և արդյունավետությունն ընդունում են ոչ բոլորը:

Այսպես, իր գոյության ողջ ընթացքում խորհրդային պետությունը հետևողականորեն չէր հրաժարվում վերաքննիչ վարույթի անթույլատրելիության՝ դեռևս 1917թ.-ից իր որդեգրած մոտեցումից: Վերաքննությունը հռչակվում էր «բուրժուական» ինստիտուտ, որը խորհրդային պետության քրեադատավարական համակարգում չէր կարող տեղ գտնել:

Քրեական դատավարությունում վերաքննիչ վարույթի նախատեսման հարցը ՀՀ դատաիրավական բարեփոխումների օրակարգ մտավ միայն անկախացումից հետո:

Հայաստանի Հանրապետության քրեական և քաղաքացիական դատավարություններում վերաքննիչ վարույթի փուլ ներմուծելու պատրաստակամությունն առաջին անգամ իրավական ամրագրում ստացավ Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրությամբ, որի 92 հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարաններն են առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը»:

Այնուհետև, վերաքննության ինստիտուտը մանրամասն իրավական կարգավորման ենթարկվեց 1998թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետև՝ քր.դատ.օր.), որպես դատական վերանայման ունիվերսալ (անձին մեղսագրվող հանցագործության ծանրության աստիճանով չսայմանավորված) եղանակ:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում վերաքննիչ վարույթը վերջնականապես ներմուծվեց 1999թ., երբ կազմավորվեց վերաքննության ինստիտուցիոնալ հիմքը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը:

Այսպիսով, քանի որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վերաքննության ինստիտուտն ընդամենը մի քանի տարվա պատմություն ունի, ուստի նախ անհրաժեշտ է գնահատել դատական ակտերի վերանայման այդ եղանակի ամրագրման նպատակահարմարությունը:

Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ դեռևս վերջնականապես հստակեցված չեն վերաքննության ինստիտուտի տեղն ու դերը ՀՀ քրեադատավարական համակարգում, ինչը հնարավորություն չի տալիս ամբողջապես օգտագործել դատավճիռների վերանայման այդ եղանակի մեծ ներուժը ՀՀ քրեական դատավարության ընդհանուր խնդիրների ապահովման գործում:

Մասնավորապես, հետագա լրամշակման կարիք ունեն վերաքննիչ բողոքարկված առարկան ու դատավարական կարգը, վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջների համակարգը, վերաքննիչ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակն ու նրանց իրավասությունը, վերաքննիչ հիմքերի համակարգը, վերաքննիչ դատարանի դերն ու իրավասությունը, գործը վերաքննության կարգով վերանայելիս քրեական դատավարության սուբյեկտների իրավական վիճակը, նրանց իրավունքների ու պարտականությունների շրջանակը, վերաքննության կարգով գործի քննության սահմանները և դատավարական կարգը, վերաքննիչ վարույթը եզրափակող որոշումների շրջանակը:

Նշված խնդիրների արդյունավետ լուծման գրավականը խորը գիտական հետազոտության վրա հիմնված համակարգային ու հայեցակարգային մոտեցումն է: Ընդ որում, այն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն: Բանն այն է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերաքննիչ վարույթի քրեադատավարական փուլ են անցնում տարեկան ավելի քան 400 քրեական գործ:

Մասնավորապես, 2000թ. վերաքննության կարգով քննության համար վերաքննիչ դատարանը ստացել է 550 քրեական գործ, 2001թ.՝ 576, 2002թ.՝ 594, 2003թ.՝ 538, 2004թ.՝ 820, 2005թ.՝ 729: Այդ քրեական գործերից 2000թ. քննվել և լուծվել է 425-ը, 2001թ.՝ 465-ը, 2002թ.՝ 443-ը, 2003թ.՝ 392-ը, 2004թ.՝ 541-ը, 2005թ.՝ 474-ը: Ընդ որում, 2000թ. ՀՀ առա-

ջին ատյանի դատարաններում ըստ էության քննվել և դատավճիռ կամ գործը կարճելու մասին որոշում է կայացվել 5638 քրեական գործով, 2001թ.՝ 5018, 2002թ.՝ 4886, 2003թ.՝ 4092, 2004թ.՝ 3993, 2005թ.՝ 3484:

Ինչպես երևում է, աճի միտում է դրսևորել ոչ միայն վերաքննիչ բողոքների թիվը, այլ նաև առաջին ատյանի դատարանի դատավճիռների ընդհանուր զանգվածում վերաքննության կարգով վերանայված դատավճիռների տեսակարար կշիռը: Այսպես, վերաքննիչ բողոքների թիվը 2000թ. կազմել է 550, իսկ 2005թ.՝ 729: Այսինքն՝ 2005 թվականին 2000 թվականի համեմատ վերաքննիչ բողոքների թիվն աճել է 32,5%-ով: Իսկ առաջին ատյանի դատարանի դատավճիռների ընդհանուր զանգվածում վերաքննության կարգով վերանայված դատավճիռների տեսակարար կշիռը 2000թ. կազմել է 7,5% (425/5638), իսկ 2005թ.՝ 13,5% (474/3484), այսինքն՝ աճել է 6 տոկոսային կետով:

Ներկայացված ցուցանիշները, զուգորդված դատական վերանայման վերաքննիչ եղանակի ունիվերսալ բնույթի հետ, վկայում են ՀՀ քրեական դատավարությունում վերաքննության ինստիտուտի կարևորության մասին:

Վերոգրյալը հիմնավորում է վերաքննության ինստիտուտի գիտական հետազոտության արդիականությունը և անհրաժեշտությունը:

Կամ, ըստ Ուկրաինայի քր.դատ.օր.-ի 365 հոդվ.-ի՝ «առաջին ատ-
յանի դատարանի դատավճիռը կամ որոշումը ստուգվում է վերաքննիչ
դատարանի կողմից ... »: Ինչպես երևում է, այստեղ խոսքը ոչ միայն
դատարանի վերջնական որոշումների մասին է, այլև գործը չլուծող ոչ
վերջնական որոշումների մասին (կալանքը որպես խափանման միջոց
ընտրելը և այլն):

Այս հանգամանքն ուղղակիորեն ընդգծում է Դ.Վ. Ֆիլինը, որը վե-
րաքննության մեխանիզմը («վերաքննիչ վերանայումը») սահմանում է
որպես՝

ա) դատարանի վերջնական որոշումների վերանայում,

բ) այն դատավարական որոշումների վերանայում, որոնցով քրեա-
կան դատավարությունը չի ավարտվում, սակայն դրանք էապես սահ-
մանափակում են քրեական դատավարությանը մասնակցող անձանց ի-
րավունքները¹:

Հիմնվելով ուկրաինական օրենսդրության վրա՝ հեղինակը նշված
երկու խումբ որոշումների վերանայումը, փաստորեն, դիտարկում է որ-
պես վերաքննության միասնական մեխանիզմի դրսևորման եղանակներ:

Մինչդեռ եթե ձևական առումով դրանց միջև առկա են որոշակի
ընդհանրություններ, ապա բովանդակային տեսակետից գործն ըստ
էության լուծող և չլուծող դատական որոշումների վերանայման վա-
րույթները որակապես տարբեր երևույթներ են: Տարբեր են թե՛ այդ վա-
րույթների խնդիրները, թե՛ դրանց մասնակցող սուբյեկտների շրջա-
նակն ու նրանց իրավական վիճակը և թե՛ այդ վարույթները եզրափա-
կող դատական ակտերի տեսակներն ու դրանց նշանակությունը:

Քննարկվող հարցի կապակցությամբ հայաստանյան օրենսդրի
դիրքորոշումն ավելի ընդունելի է: ՀՀ քր.դատ.օր. 384 հոդվածը սահմա-
նում է, որ վերաքննիչ վարույթը կանոնակարգող գլխի կանոններով բո-
ղոքարկման ենթակա են միայն դատարանի վերջնական որոշումները,
եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: Միևնույն ժամանակ,
մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության
կարգով ընդունված որոշումների բողոքարկման և ստուգման համար ՀՀ
քր.դատ.օր. 387-389 հոդվածներում «վերաքննություն» եզրույթը չի կի-

¹ Տե՛ս **Özeri A.A.** İ di aei u ai aeeyöe a ni adai ai i i i öai ei ai i -i di öañoöaeü i i
çae i i i äöaeünoä Öeäei ü // «**Äi nöäðnoäi è i äaäi**», 2005, N2, էջ 77:

րառվում, իսկ վերաքննիչ վարույթը կարգավորող ՀՀ քր.դատ.օր.-ի 10-
րդ բաժնին հղում չի կատարվում:

Այնուհանդերձ, հայաստանյան օրենսդրի դիրքորոշման մեջ առկա
են որոշակի անհստակություններ: Մասնավորապես, քր.դատ.օր.-ի 10-րդ
բաժնի վերտառությունը՝ «վարույթը վերաքննիչ դատարանում», շատ ա-
վելի լայն ոլորտ է ընդգրկում, քան այդ բաժնում պարունակվող իրավա-
նորմերով կանոնակարգվող դատավարական հարաբերությունները:

Օրինակ՝ վերաքննիչ դատարանն իրավասու է համապատասխան
բողոքի հիման վրա ստուգել ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ արդարա-
դատության նախարարի՝ հանձնման թույլտվության կամ հանձնումը
մերժելու վերաբերյալ որոշումների օրինականությունը (ՀՀ քր.դատ.օր.
479 հոդվ. 3-րդ մաս): Բնականաբար, վերաքննիչ դատարանն այս գոր-
ծունեությունն իրականացնում է վարութային կարգով, սակայն այդ ըն-
թացքում ղեկավարվում է ոչ թե ՀՀ քր.դատ.օր. 10-րդ բաժնի դրույթնե-
րով, այլ օրենսգրքի 479 հոդվածով:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք ՀՀ քր.դատ.օր. 10-րդ
բաժնի վերտառությունը համապատասխանեցնել դրա բովանդակութ-
յանը՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ. «Բաժին 10. Վե-
րաքննիչ վարույթը»:

Այսպիսով, վերաքննության մեխանիզմը և վերաքննիչ վարույթը
միասնության մեջ դիտելու հետևանքով հնարավոր է խուսափել տերմի-
նաբանական շփոթից ու անհստակությունից, ինչպես նաև գերծ մնալ
վերաքննիչ վարույթը կանոնակարգող քրեադատավարական նորմերի
գործողությունը վերաքննության էությանը չհամապատասխանող իրա-
վահարաբերությունների վրա տարածելուց:

Այնուհանդերձ, վերաքննության մեխանիզմը և դատավարական
փուլը հարաբերականորեն ինքնուրույն երևույթներ են, ուստի նպատա-
կահարմար ենք համարում դրանց հասկացությունները նախ վերլուծել
առանձին:

1. *Վերաքննության դատավարական-իրավական մեխանիզմն* իրա-
վաբանական գրականության մեջ բնութագրվում է որպես դատական
հսկողության ձև, դատական վերահսկողության ձև, դատարանի ավար-
տական որոշման վերանայման ձև, դատական ստուգման եղանակ,
դատական որոշումների բողոքարկման ձև:

Ներկայացված մոտեցումներից առավել անվիճելի վերաքննությունը դատարանի վերջնական որոշումների ստուգման ինքնուրույն եղանակ դիտարկելն է:

«Ստուգում» եզրույթն արտահայտում է վերաքննության էությունը, այն է՝ դատավարական ձևի շրջանակներում պարզել բողոքարկված վերջնական որոշման համապատասխանությունն օրենքին ու գործի փաստական հանգամանքներին և հարկ եղած դեպքում ուղղել դատական սխալները՝ կայացնելով նոր դատավճիռ:

Սակայն «դատական որոշումների ստուգում» հասկացությունը չի պարփակում վերաքննության մեխանիզմն ամբողջապես: Բանն այն է, որ, ինչպես ստորև կներկայացնենք, վերաքննիչ վարույթն ընթանում է երկու հարաբերականորեն ինքնուրույն ենթափուլերով՝ վերաքննիչ բողոքարկման ու վերաքննության կարգով գործի քննության, և դատավարական փուլի կառուցվածքն անխուսափելիորեն անդրադառնում է նաև դատավարական մեխանիզմի վրա: Իսկ «դատական ստուգումը» չի արտահայտում վերաքննության մեխանիզմի տարրերից առաջինը՝ վերաքննիչ բողոքարկումը:

«Դատարանի վերջնական որոշումների ստուգում» հասկացությունն օգտագործվում է ոչ միայն դոկտրինալ աղբյուրներում, այլ նաև ՀՀ քրեադատավարական օրենսդրության մեջ: Այսպես, համաձայն ՀՀ քր.դատ.օր. 386 հոդվածի՝ «վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն ստուգում է գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը»:

Օրենսգրքի 386 հոդվածի ձևակերպումը համադրելով քրեադատավարական այլ նորմերի հետ՝ կարող ենք վեր հանել վերաքննիչ ստուգման առարկան.

1. նյութական-իրավական և դատավարական-իրավական նորմերի պահպանումն առաջին ատյանի դատարանի և նախնական քննության մարմինների կողմից,
2. գործի փաստական հանգամանքների բացահայտման ճշտությունը,
3. մեղադրական դատավճռի բողոքարկման դեպքում՝ նշանակված պատժի արդարացիությունը:

Վճռաբեկ ստուգման առարկան ներառում է միայն վերը նշված առաջին կետը: Այսինքն՝ վերաքննիչ ստուգման առարկան ավելի լայն է և չի սահմանափակվում օրինականության պահպանմամբ: Այն ներառում է դատարանի հետևությունների համապատասխանությունը գործի փաստական կողմին՝ նաև վերջնական որոշման օրինականության և հիմնավորվածության շրջանակներից դուրս¹:

Խորհրդային և հետխորհրդային շատ հեղինակներ դատական ստուգումը հաճախ նույնացնում էին «դատական հսկողություն» հասկացության հետ կամ դիտարկում որպես վերջինիս բաղադրատարր:

Այսպես, ըստ Ի.Գ. Պերլովի բնորոշման՝ «դատական գործունեության նկատմամբ հսկողությունը դատավարական գործունեություն է, որն արտահայտվում է վերադաս դատարանների կողմից ինչպես օրինական ուժի մեջ մտած, այնպես էլ չմտած դատավճիռների օրինականության և հիմնավորվածության ստուգման մեջ»²: Կամ, ըստ Բ.Վ. Խարազիշվիլու՝ Ի.Գ. Պերլովի տված սահմանումից բխում է, որ դատական հսկողությունը միայն ստուգումն է, այնինչ հսկողության կարևորագույն տարրերից մեկն այն է, որ դրվում է դատավճռի վերանայման կամ փոփոխման հարցը³:

Մեր կարծիքով, ստուգում հասկացությունն արդեն իսկ ներառում է վերաքննության այնպիսի էական հատկանիշ, ինչպիսին է դատավճռի կամ այլ եզրափակիչ որոշման փոփոխման կամ նոր դատավճռի կայացման հնարավորությունը: Հակառակ դեպքում ստուգումը կդառնա ինքնանպատակ:

Այնուհանդերձ, քրեական դատավարությունում հսկողական-վերահսկողական գործունեությունը դիտելով որպես դատավարական իրավախախտումների կանխման կամ դրանց բացահայտման ու հետևանքների վերացմանն ուղղված գործունեություն՝ կարևոր ենք համարում վերլուծել վերաքննության՝ դատական հսկողության կամ վերահսկողության ձև լինելու կամ չլինելու հարցը: Բանն այն է, որ ժամա-

¹ Վերաքննիչ ստուգման առարկայի հետ կապված հարցերը մանրամասն կլուսարանվեն սույն աշխատանքի 3-րդ գլխի §1-ում:

² Տե՛ս **Ի աճե՛րա Է.Ա. Էաննաօե՛րի՛ն Ի ծի՛եճա՛րնօ՛ն Ի նի՛աօո՛նե՛րի օճի՛բի՛նի Ի ծի՛օաննա, Ի ., 1968, էջ 5:**

³ Տե՛ս **Օճաճե՛թաճե՛ Բ.Ա. Ծաճի՛թե՛յ Ի ճի՛թօ Է.Ա. Ի աճե՛րա՛՛ Էաննաօե՛րի՛ն Ի ծի՛եճա՛րնօ՛ն Ի նի՛աօո՛նե՛րի օճի՛բի՛նի Ի ծի՛օաննա՛՛ // «Ի ճա՛ն Ի աճա՛րնօ՛ն», 1970, N3, էջ 141:**

նակակից ռուսաստանցի շատ հեղինակներ շարունակում են վերաքննությունը և դատարանի վերջնական որոշումների ստուգման մյուս ձևերը բնորոշելիս օգտագործել «դատական հսկողություն» կամ «դատական վերահսկողություն» հասկացությունները:

Այսպես, Ա.Գ. Նազարովը քրեական դատավարությունում դատական հսկողության հասկացության մեջ ներառում է վերադաս դատարանների կողմից ստորադաս դատարանների որոշումների ստուգումը վերաքննության, վճռաբեկության և հսկողական կարգով, ինչպես նաև ՌԳ Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարաններին դեկավար պարզաբանումներ տալը¹:

Այլ դատավարագետներ, դատական վերահսկողությունը համարելով ինքնուրույն և համապարփակ դատավարական գործառույթ, որն առկա է դատավարության թե՛ մինչդատական և թե՛ դատական փուլերում, վերաքննությունը դիտարկում են որպես դատական վերահսկողության ձև²:

Միևնույն ժամանակ, դատավարական գրականության մեջ ընդգրծվում է դատական հսկողություն և դատական վերահսկողություն հասկացությունների տարբերակման անհրաժեշտությունը և ներկայացվում են դրանց հստակեցման առաջարկներ:

Այսպես, Մ.Ե. Տոկարևան և Ա.Գ. Խալիուլինը նշում են, որ հսկողություն իրականացելիս դատարանը պատասխանատվություն է կրում մինչդատական վարույթ իրականացնող մարմինների՝ քաղաքացիների իրավունքները սահմանափակող որոշումների օրինականության ու հիմնավորվածության համար՝ սանկցիա տալու միջոցով թույլատրելով այդ մարմիններին կատարել համապատասխան դատավարական գործողություններ (կալանքն ընտրել որպես խափանման միջոց, իրականացնել բնակարանի խուզարկություն, վերահսկել անձի փոստ-հեռագրային հաղորդումները, լսել անձի հեռախոսային խոսակցությունները): Մինչդեռ վերահսկողություն իրականացնելիս դատարանը չի սանկցա-

¹ Տե՛ս **І ачадіа А.А.** Аеёу і еа неааааа і і оо і оеаіе і а і оеаее ноаа, № 1 а, 2003, էջ 205:

² Տե՛ս **Етаоі І.І.** Ноаааі ое еі і ооіеу а оаіеіаіі ноаіонодіе ноаа оі ноое, ае но... аі ео.рдеа.іаое, І.І іааі ді а, 2002, **І ооаоіаа І.А.** Не ноаі а ноаааі іаі еі і ооіеу а оаіеіаіі ноаі і ді еаі а ноаа: а і і ді ноу оа і дее, а е і і і ааоаеу і а і ааоое ді аа і еу е і деооее, Еааі у, 2004:

վորում դատավարական գործողությունները, այլ ստուգում է վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականությունը և հիմնավորվածությունը¹:

Այսպիսով, դատական հսկողությունն իրականացվում է ստուգվող գործունեության ընթացքում, իսկ դատական վերահսկողությունը՝ դրա ավարտից հետո՝ post factum:

Մ.Ե. Տոկարևայի և Ա.Գ. Խալիուլինի մոտեցումը տարածելով նաև դատավճիռների ստուգման մեխանիզմների վրա՝ կարող ենք նշել, որ ներդատական հսկողություն գոյություն չունի և չի կարող գոյություն ունենալ, քանի որ այն կհակասեր արդարադատություն իրականացնելիս դատարանների անկախության և միայն օրենքին ենթարկվելու հիմնարար սկզբունքին:

Ներդատական քրեադատավարական հարաբերություններում հնարավոր է միայն դատական վերահսկողություն, որը հիմնականում ենթադրում է արդարադատության իրականացումից հետո դրա ընթացքի և արդյունքների ստուգում: Ընդ որում, վերաքննության սահմաններից կախված՝ վերաքննության քրեադատավարական մեխանիզմը, կարծում ենք, ոչ միշտ է վերահսկողական բնույթ կրում:

Դիտարկենք հետևյալ օրինակը. առաջին ատյանի դատարանի դատավճիռը բողոքարկվել է փաստի մասով, և տուժողի կամ ամբաստանյալի՝ վերաքննիչ ատյանի դատարանում տված ցուցմունքների հիման վրա վերաքննիչ դատարանը նորովի է գնահատում ապացույցների համակցությունը և հանգում է բողոքարկվող դատավճռում շարադրվածից տարբերվող հետևությունների: Եթե վերաքննիչ դատարանը կաշկանդված լինի վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջներով (*սահմանափակ վերաքննություն*), ապա դատական վերահսկողությունը կբացակայի, քանի որ վերաքննիչ դատարանը կոչված չի լինի բացահայտելու և վերացնելու առաջին ատյանի դատարանի թույլ տված նյութական կամ դատավարական-իրավական որևէ խախտում:

Այս հանգամանքն ընդգծում էին դեռևս խորհրդային դատավարագետները: Այսպես, Մ.Ս. Ստրոգովիչը նշում էր, որ «վերաքննությունն ամբողջ ծավալով չի ապահովում ... առաջին ատյանի դատարանի կող-

¹ Տե՛ս **№ і еіааа А.А., Оі еаоааа І .А., Оаеооеі А.А., Беаіае+ І .А.** а е і і і ноу а а і ноааа і оо ноааеу оа і е і а і а і і ді оа ноа оі ноое, І ., Еа і а ді а і, 1997, էջ 51:

մից գործերի ճիշտ լուծման նկատմամբ հսկողությունը: Վերաքննիչ ատյանն իր գործունեության բնույթով պայմանավորված՝ լրիվ ծավալով հսկողություն չի իրականացնում ստորադաս դատարանների գործունեության նկատմամբ: Այն ավելի շուտ փոխարինում է դրանց, քան վերահսկում, այն իր դատավճիռը դնում է առաջին ատյանի դատարանի դատավճռի տեղը»¹:

Սակայն քանի որ ՀՀ քր.դատ.օր. 385 հոդվածի համաձայն՝ «վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքով և գործում եղած, ինչպես նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով կարող է գործը քննել լրիվ ծավալով» (*լրիվ վերաքննություն*), ուստի ՀՀ քրեական դատավարությունում վերաքննությունը կրում է վերահսկողական բնույթ:

Եթե «դատական ստուգում» հասկացությունն արտահայտում է վերաքննության մեխանիզմի տարրերից միայն երկրորդը՝ վերաքննիչ ատյանում գործի քննությունը և լուծումը, ապա «դատական բողոքարկումը» վերաբերում է միայն դրա սկզբնական տարրին:

Այսպիսով, վերաքննության մեխանիզմը կարող է բնութագրվել որպես դատարանի վերջնական որոշումների *բողոքարկման-ստուգման եղանակ*:

Իրավաբանական գրականության մեջ որոշակի առարկություններ է առաջացրել այն բնորոշումը, որ վերաքննությունը *դատական վերանայման ձև է*: Որոշ դատավարագետներ կտրականապես դեմ են արտահայտվել «դատական վերանայում» եզրույթի օգտագործմանը: Այսպես, ըստ Ի.Գ. Պերլովի՝ «դատավճիռների վերանայում տերմինը ... քվում է անհաջող: Գործերի գերակշիռ մեծամասնությունում վճռաբեկ ատյանը ոչ մի վերանայում չի իրականացնում: Հայտնի է, որ վճռաբեկ կարգով զանգատարկված և բողոքարկված դատավճիռների մոտ չորս հինգերորդն անփոփոխ է թողնվում: Այդ դատավճիռները ստուգվում են, բայց ոչ վերանայվում»²:

Սակայն Ի.Գ. Պերլովի կարծիքի հետ դժվար է համաձայնել, քանի որ «դատական վերանայում» եզրույթն արտահայտում է ոչ թե վերադաս դատարանների գործունեության *արդյունքը*, այլ հենց այդ *գործընթացը*:

¹ Տե՛ս **Ռոճիսթե- Ի .Ն.** Ի ծիաձեձ չձեիւիւնոձ Ե իձիւնիաձիւնոձ ոձաձիւնո իձեձի- ձիձի, Ի ., 1956, էջ 41:

² Տե՛ս **Ի աձերա Ե.Ա.** Եձնձոձեիւնո իձեձիւնոձի ա ոնիաձոնի ձիւնիւնի իձիւնոն, էջ 18:

Այսպես, Ա.Ն. Ռազինկինան «քրեական գործի վերանայում» հասկացության օգտագործումը լրիվ տեղին է համարում, քանի որ այն արտահայտում է վերադաս ատյանի դատարանի գործունեության առարկան՝ ստորադաս ատյանի դատարանի կողմից արդեն իսկ հետագուտված ապացույցների ստուգումը¹:

Ուստի այն փաստից, որ բողոքարկվող որոշումների մեծ մասն անփոփոխ է թողնվում, չի բխում, որ այդ դեպքերում բողոքարկված դատավճիռները չեն վերանայվում: Վերադաս ատյանի դատարանի և դատավարությանը մասնակցող այլ սուբյեկտների կողմից դատավարական ձևի շրջանակում որոշակի գործողությունների կատարումն անկախ արդյունքից արդեն իսկ բողոքարկվող դատավճռի վերանայում է:

Այս դիրքորոշումը հիմնավորվում է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի տեքստում կիրառվող եզրաբանության վերլուծությամբ: Այսպես, Կոնվենցիային կից 7-րդ Արձանագրության 2-րդ հոդվ. 1-ին մասի համաձայն՝ «քրեական հանցագործության համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական ատյանի կողմից»:

ՀՀ օրենսդրությունը ևս «վերանայում» եզրույթն օգտագործում է նույն համատեքստում: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 20 հոդվ. 3-րդ մասով և ՀՀ քր.դատ.օր. 103 հոդվ. 7-րդ մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ ՀՀ քր.դատ.օր.-ով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք:

Երկու կարծիք լինել չի կարող, որ մեջբերված իրավանորմերում խոսքը վերաբերում է դատավճիռների բողոքարկման-ստուգման գործընթացին և ոչ թե արդյունքին:

Այսպիսով, կարող ենք ներկայացնել ՀՀ քրեական դատավարությունում վերաքննության մեխանիզմի հետևյալ հատկանիշները.

1. Այն դատարանի վերջնական որոշումների վերանայման (բողոքարկման և ստուգման) ինքնուրույն ձև է:
2. Կրում է վերահսկողական բնույթ:

¹ Տե՛ս **Ծաբիււրա Ա.Բ.** Աիւււււււ ա ձիւնիւնի ոնիւնիւնիւն, Ի ., 2004, էջ 9:

Ուստի գործն ըստ էության լուծելու խնդիրը տարածելով նաև վերաքննիչ վարույթի վրա՝ կնսեմացնենք առաջին ատյանի դատարանում գործի քննության բացառիկ և անփոխարինելի դերը քրեական դատավարությունում: Այդ դեպքում ստիպված կլինենք ընդունել այն հեղինակների դիրքորոշումը, որոնք վերաքննությունը համարում են առաջին ատյանի կարգով գործի քննության պարզ կրկնություն¹:

Մինչդեռ վերաքննիչ վարույթը, լինելով ինքնուրույն դատավարական փուլ և «մարմնավորելով» վերաքննիչ ստուգման քրեադատավարական մեխանիզմը, կոչված է իրականացնել իր բնույթին համապատասխանող ուրույն դատավարական նպատակներ, իսկ գործի լուծումը միայն միջոց է վերաքննության ցանկալի արդյունքին հասնելու համար:

Ինչ վերաբերում է միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը, ապա այն կարելի է համարել ոչ թե զուտ դատավարական, այլ նորմատիվ-դատավարական խնդիր: Այնուհանդերձ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի և ՀՀ օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը նպաստելը վերաքննիչ վարույթի նպատակներից մեկն է:

Այսպես, *C.R.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության և S.W.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործերով որոշումներում Ստրասբուրգի դատարանն ընդգծել է. «Նորմը որքան էլ հստակ ձևակերպվի իրավունքի ցանկացած համակարգում, ներառյալ՝ քրեականում, դատական մեկնաբանման տարրն անխուսափելի է: Միշտ գոյություն կունենա խորին դրվագների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին հարմարվելու անհրաժեշտություն: Մասնակից պետությունների իրավական ավանդույթը վկայում է այն մասին, որ դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր նպաստում է քրեական իրավունքի առաջընթաց զարգացմանը: Քրեական պատասխանատվության կանոնների պարզաբանումը ենթադրում է դատական պրակտիկայի կողմից դրանց հետևողական մեկնաբանում: Կոնվենցիային համապատասխանելու համար անհրաժեշտ է, որ մեկնաբանման արդյունքները հա-

¹ Տե՛ս, օրինակ, **Նոժարե+ Ի .Ն. Ի ժիաձեձ չաեիւիւնձե Է իւնիւիաիւնձե ոձաւիւնձ Իձեւիւի ձիւն**, էջ 40-41:

մապատասխանեն իրավախախտման բնույթին, իսկ որոշումը լինի ողջամտորեն կանխատեսելի»¹:

Անշուշտ, Եվրոպական դատարանի որոշումներն իրավաբանորեն պարտադիր են միայն պատասխանող պետության համար, իսկ մեր մեջբերած որոշումներում որպես պատասխանող հանդես է գալիս Միացյալ Թագավորությունը՝ ընդհանուր իրավական համակարգ ունեցող պետություն:

Սակայն, ինչպես երևում է Եվրոպական դատարանի՝ մեջբերված որոշումների տեքստից, դրանում պարունակվող մեկնաբանությունն ընդհանուր բնույթ է կրում, և եթե այն մեր պետության համար իրավաբանորեն պարտադիր չէ, ապա առնվազն պետք է ցանկալի ուղենիշի արժեք ունենա:

Մեր կարծիքով, քրեական դատավարության ընդհանուր խնդիրների իրագործումը դժվար է պատկերացնել առանց դատական որոշումների ողջամիտ կանխատեսելիության, իսկ դրա սպահովման գործում օրենքի շրջանակներից դուրս չեկող միասնական դատական պրակտիկայի դերը նշանակալի է:

Մեր պետությունն ընդունում է դատական պրակտիկայի միասնականացման կարևորությունը: Մասնավորապես, ՀՀ փոփոխված Սահմանադրության 92 հոդվ. 2-րդ մասի հիման վրա՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իրականացնում է օրենքների միատեսակ կիրառման սպահովման գործառույթ: Իսկ ըստ ՀՀ դատարանակազմության մասին օրենքի 27 հոդվածի՝ «դատարանների նախագահների խորհուրդն ամփոփում է դատական պրակտիկան և դրա հիման վրա տալիս օրենքների կիրառման խորհրդատվական բնույթի պարզաբանումներ»:

Ինչպես երևում է մեջբերված դրույթներից, միասնական դատական պրակտիկայի սպահովման հիմնական պատասխանատվությունը ներկայումս դրված է ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի վրա:

¹ Տե՛ս **Աձ Նաւաւա Ի . Ի ձաձաւիւն Աձժիւաեիւիւն ոձաւիւն Իձաւալի -աեիւաեձ. Զձեի-աիւսըձա Իձեիւեիւն ոձաւաիւե Իձաեձեձ, իձիւնիւաեիւն Է Աձժիւաեիւե Էիւաիւեձ Ի չաւեձա Իձաւ -աեիւաեձ Է ինիւիւնձ անիւա. Նձաւաիւս Իձաեձեձ ն 1960 իձ 2002ա., Ո՞՞ձ Է, 2004, էջ 515:**

Այնուհանդերձ կարծում ենք, որ դատական պրակտիկայի միասնականացմանը նպաստելու գործառնությունը չի կարող անմասն մնալ ՀՀ դատական համակարգի և ոչ մի օղակ, այդ թվում՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը: Հակառակ դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի գործունեությունը կարող է արդյունք չտալ: Ուստի միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը նպաստելը կարող ենք համարել քրեական դատավարության ընդհանուր խնդիրներից բխող վերաքննիչ վարույթի փուլային խնդիր:

Վերագրյալի հիման վրա կարող ենք առաջ քաշել վերաքննիչ վարույթի հետևյալ խնդիրները՝

1. մինչև վերջնական դատական որոշման օրինական ուժի մեջ մտնելն ուղղել դատական սխալները և ապահովել, որ ոչ մի անօրինական, անհիմն կամ անարդարացի դատավճիռ կամ դատարանի այլ վերջնական որոշում օրինական ուժի մեջ չմտնի,

2. ապահովել դատարանի վերջնական որոշման մեջ շարադրված հետևությունների համապատասխանությունը գործի փաստական հանգամանքներին,

3. նպաստել միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը:

Շարադրված երկրորդ խնդիրն ընդգծում է վերաքննիչ վարույթի անմիջական խնդիրների յուրահատկությունը: Այն ուղղակիորեն պայմանավորված է գործն ըստ էության քննելու և լուծելու՝ վերաքննիչ դատարանի իրավասության ծավալով:

Վերաքննիչ ատյանի դատարանի գործունեության դատավարական ձևը, ինչպես նաև վերաքննիչ վարույթին մասնակցող սուբյեկտների իրավական վիճակը կանոնակարգված է ՀՀ քր.դատ.օր. 10-րդ բաժնով: Դրա ուսումնասիրությունը թույլ է տալիս նշել, որ վերաքննիչ վարույթը, լինելով քրեական դատավարության ինքնուրույն փուլ, իր հերթին կազմված է հաջորդաբար ընթացող երկու մասերից¹: Դրանք միմյանցից տարբերվում են մասնակցող սուբյեկտների շրջանակով և նրանց միջև ծագող իրավահարաբերությունների բնույթով:

Վերաքննիչ վարույթի ենթափուլային կառուցվածքն արտացոլված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Այսպես, ՀՀ

¹ Տե՛ս **Агетаян А.Է.** նշված աշխատությունը, 2004, էջ 54:

քր.դատ.օր. 10-րդ բաժինը կազմված է երկու գլուխներից. «Գլուխ 46. Վերաքննիչ բողոք» և «Գլուխ 47. Գործի քննությունը վերաքննիչ դատարանում»:

*Վերաքննիչ վարույթի առաջին ենթափուլը՝ վերաքննիչ բողոքարկումը*¹, սկսվում է վերաքննիչ բողոք բերելու պահից և ավարտվում է գործը դատական նիստում քննության նշանակելու մասին վերաքննիչ դատարանի կազմը նախագահող դատավորի որոշմամբ:

Վերաքննիչ բողոքարկման ընթացակարգը սահմանված է ՀՀ քր.դատ.օր. 376-384 և 388-389 հոդվածներով: Այս ենթափուլի շրջանակներում ընթանում են վերաքննիչ բողոք բերելու, վերաքննիչ բողոքարկման ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը քննելու, տրված բողոքի մասին կողմերին ծանուցելու, քրեական գործը վերաքննիչ դատարան ուղարկելու հետ կապված դատավարական իրավահարաբերություններ, որոնց մասնակցում են բողոքարկվող դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը, վերաքննիչ դատարանը, ինչպես նաև վերաքննիչ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտները՝ ամբաստանյալը, արդարացվածը², նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, մեղադրողը, տուժողը, նրա իրավահաջորդը և վերջիններիս ներկայացուցիչները, տուժողի օրինական

¹ Վ.Լ. Գողովկովն այս ընթացաշրջանն անվանում է «նախապատրաստական փուլ»: Սակայն քանի որ դատարանի նախապատրաստական գործողություններն ածանցվում են վերաքննիչ բողոքարկման՝ կողմերի դատավարական գործունեությունից և պայմանավորված են դրանով, ուստի մենք առավել ճշգրիտ ենք համարում «վերաքննիչ բողոքարկում» արտահայտությունը:

² ՀՀ քր.դատ.օր. 64 հոդվածի 3-րդ մասի հիման վրա արդարացված կամ դատապարտյալ կարող է համարվել միայն այն մեղադրյալը, որի նկատմամբ կայացված դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել: Ուստի ՀՀ քր.դատ.օր. 376 հոդվածի առաջին մասի նախնական խմբագրության տեքստում «դատապարտյալ» և «արդարացված» եզրույթների օգտագործումը սխալ էր: ՀՀ քր.դատ.օր.-ում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ 2005թ. սեպտեմբերի 13-ի օրենքով այդ սխալը մասամբ ուղղվեց՝ 376 հոդվածում «դատապարտյալ» բառը փոխարինելով «ամբաստանյալ» եզրույթով: Մեր կարծիքով, ՀՀ քր.դատ.օր. 10-րդ բաժնում «արդարացված» բառի փոխարեն անհրաժեշտ է օգտագործել «ամբաստանյալ, որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ» արտահայտությունը: Սակայն հաշվի առնելով ՀՀ քր.դատ.օր.-ում օգտագործվող եզրաբանությունը՝ սույն աշխատանքի մեջ մենք կօգտագործենք «արդարացված» եզրույթը:

ներկայացուցիչը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը և նրանց ներկայացուցիչները:

Վերաքննիչ բողոքարկման ենթափուլը որոշակի նմանություններ ունի վճռաբեկ բողոքարկման ենթափուլի հետ¹:

Վերաքննիչ վարույթի երկրորդ ենթափուլը վերաքննիչ ատյանում գործի քննությունը և լուծումն է, որը սկսվում է վերաքննիչ դատարանի նիստը բացելով և ավարտվում է վերաքննիչ դատարանի վերջնական որոշման հրապարակմամբ:

Վերաքննիչ ատյանում գործի քննության ընթացակարգը սահմանված է ՀՀ քր.դատ.օր. 385-387, 390-402 հոդվածներով, ինչպես նաև քր.դատ.օր. 41-45 գլուխներով: Այս ենթափուլի շրջանակներում ընթանում են վերաքննիչ ատյանում դատական նիստի նախապատրաստման, ապացույցների հետազոտման, դատական վիճաբանությունների ու ամբաստանյալի վերջին խոսքի, դատավճռի կայացման ու հրապարակման հետ կապված դատավարական իրավահարաբերություններ:

Վերաքննիչ վարույթի երկրորդ ենթափուլին մասնակցում են վերաքննիչ բողոքարկմանը մասնակցող դատավարության սուբյեկտները (բացառությամբ առաջին ատյանի դատարանի), ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք՝ վկան, փորձագետը, դատական նիստի քարտուղարը և թարգմանիչը:

Վերաքննիչ ատյանում գործի քննության և լուծման ենթափուլն էապես նման է առաջին ատյանում դատական քննության փուլին²: Բանն այն է, որ ՀՀ քր.դատ.օր. 390 հոդվ. 1-ին մասը նախատեսում է, որ վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատարվում է առաջին ատյանի դատարաններում գործերի քննության համար սահմանված, ինչպես նաև օրենսգրքի 47 գլխում շարադրված կանոններով:

Միևնույն ժամանակ, ՀՀ քր.դատ.օր. 47 գլխի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ քրեական դատավարության նշված մասերի տարբերությունները ևս էական են: Այսպես.

¹ Վերաքննիչ բողոքարկման հետ կապված հարցերը կլուսաբանվեն սույն աշխատանքի 2-րդ գլխում:

² Վերաքննիչ ատյանում գործի քննության և լուծման հետ կապված հարցերը կլուսաբանվեն սույն աշխատանքի 3-րդ գլխում:

1. ՀՀ քր.դատ.օր. 385 հոդվածի հիման վրա՝ «վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքով և գործում եղած, ինչպես նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով կարող է գործը քննել լրիվ ծավալով»: Սակայն առաջին և վերաքննիչ ատյանի կարգով քրեական գործի քննության սահմանները հաճախ չեն համընկնում: Օրինակ՝ եթե արդարացման դատավճիռը քաղաքացիական հայցի մատով բողոքարկի միայն քաղաքացիական հայցվորը, ապա վերաքննիչ դատարանում տվյալ գործի քննության սահմաններն ավելի նեղ կլինեն, քան ստորադաս դատական ատյանում:

2. Տարբեր է գործն առաջին և վերաքննիչ ատյանի կարգով քննող դատական կազմը: Եթե առաջին ատյանի դատարանում քրեական գործը քննվում է բացառապես մեկ դատավորի կազմով, ապա վերաքննիչ դատարանում գործն ըստ էության քննվում է կոլեգիալության սկզբունքով՝ երեք դատավորի կազմով, որոնցից մեկը նախագահողն է: Դրա հիման վրա վերաքննիչ վարույթի դատավարական ձևը որոշակիորեն բարդացված է, քանի որ այն ներառում է դատական կազմի կոլեգիալության պայմաններում դատական որոշումների կայացման առանձնահատկությունները, դատավորի առանձին կարծիքի ինստիտուտը և այլն:

3. Տարբեր են առաջին և վերաքննիչ ատյանների կարգով քրեական գործի քննությանը դատավարության սուբյեկտների պարտադիր մասնակցության կանոնները: Օրինակ՝ ՀՀ քր.դատ.օր. 302 հոդվածին համապատասխան՝ առաջին ատյանում «դատական քննությունը կատարվում է ամբաստանյալի մասնակցությամբ, որի դատարան ներկայանալը պարտադիր է»: Իսկ վերաքննիչ ատյանում քրեական գործի քննությանն ամբաստանյալի մասնակցությունը պարտադիր է միայն օրենսգրքի 390 հոդվ. 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ եթե բողոքը ներկայացրել է տվյալ ամբաստանյալը կամ եթե նրա շահերի պաշտպանության համար բողոք է ներկայացրել պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը, կամ եթե բողոք է բերել դատախազը՝ ոչ հօգուտ ամբաստանյալի:

4. Վերաքննիչ դատարանն իր վերջնական որոշմամբ ոչ միայն գործը լուծում է ըստ էության, այլև իրավական գնահատական է տալիս վերաքննիչ վարույթի հիմք հանդիսացող դատավարական փաստաթղթին՝ վերաքննիչ բողոքին:

Մեր դիրքորոշումը հիմնավորվում է այն հանգամանքով, որ համեմատած հարակից դատավարական փուլերի հետ՝ վերաքննիչ բողոքարկման և վերաքննիչ ատյանում գործի քննության ընթացաշրջանների փոխադարձ կապն ու պայմանավորվածությունն առավել սերտ է, ինչն իր հերթին պայմանավորված է դրանց անմիջական խնդիրների ընդհանրությամբ ու միասնականությամբ:

Վերոգրյալի հիման վրա վերաքննիչ վարույթը՝ որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլ, կարող ենք բնորոշել հետևյալ կերպ. այն մինչև վերջնական դատական որոշման օրինական ուժի մեջ մտնելը դատական սխալներն ուղղելու ու դատարանի վերջնական որոշման մեջ շարադրված հետևությունների՝ գործով փաստերին համապատասխանությունն ապահովելու նպատակով վերաքննիչ ատյանի դատարանի և այլ իրավասու սուբյեկտների՝ օրենքով կարգավորված գործունեությունն է, որն ավարտվում է վերաքննիչ դատարանի կողմից նոր դատավճռի կամ այլ վերջնական որոշման կայացմամբ:

Իրեն նախորդող դատավարական փուլերից վերաքննության տարբերությունն այն է, որ գործով վարույթը վերաքննության փուլ տեղափոխելը պայմանավորված չէ նախորդ փուլը եզրափակող դատավարական որոշման քնույթով:

Օրինակ՝ քրեական գործի հարուցման փուլից վարույթը կանցնի նախնական քննության փուլ միայն այն դեպքում, եթե վարույթն իրականացնող մարմինն ընդունի քրեական գործ հարուցելու մասին որոշում:

Կամ, գործով վարույթը կթևակոխի քրեական գործի դատական քննության փուլ միայն այն դեպքում, եթե դատական քննության նախապատրաստման դատավարական փուլը եզրափակվի դատական քննությունն նշանակելու մասին որոշմամբ:

Այլ կերպ ասած՝ քրեական գործի հարուցման – նախնական քննության – դատական քննության նախապատրաստման – քրեական գործի դատական քննության դատավարական փուլերի հերթափոխն իրականացվում է անկախ դատավարության կողմերի կամարտահայտությունից և ինքնաբերաբար՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործի քննության և լուծման բնականոն ընթացքն ապահովող փուլային դատավարական որոշման ընդունման փաստով:

Քրեադատավարական համակարգում վերաքննիչ վարույթի առանձնահատուկ դերը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ

դատավարական փուլից սկսած՝ փոխվում է քրեական դատավարության փուլերի հաջորդության մեխանիզմը:

Այսպես, քրեական գործի տեղափոխումը վերաքննիչ վարույթ հնարավոր է առաջին ատյանի դատարանի կողմից թե՛ մեղադրական կամ արդարացման դատավճիռ կայացնելու և թե՛ գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում ընդունելու դեպքում:

Մակայն կողմերի պասիվ վարքագծի պայմաններում քրեական գործը վերաքննության փուլ չի անցնի: Միևնույն ժամանակ, կողմերից յուրաքանչյուրն ազատ է գործն ըստ էության լուծող դատական որոշման վերաքննիչ վերանայում նախաձեռնելու հարցում: Գործը կարող է անցնել վճռաբեկ վարույթի, նոր ի հայտ եկած կամ նոր հանգամանքներով գործի նորոգման քրեադատավարական փուլեր ևս բացառապես իրավասու սուբյեկտների ակտիվ վարքագծի շնորհիվ:

Այսինքն՝ վերաքննիչ վարույթից սկսած՝ քրեադատավարական փուլերի հաջորդության մեխանիզմում վճռական նշանակություն է ստանում կողմերի կամ այլ իրավասու սուբյեկտների (օրինակ՝ ՀՀ գլխավոր դատախազի, ՀՀ վճռաբեկ դատարանի) կամարտահայտությունը՝ դրսևորված օրենքով սահմանված համապատասխան դատավարական-իրավական ձևով:

Վերոգրյալն ամփոփելով և քրեական դատավարությունում վերաքննության երևույթի միասնական ընկալման անհրաժեշտության մասին մեր մտեցումը հետևողականորեն իրականացնելով՝ վերաքննությունը կարող ենք բնորոշել որպես ձևով՝ դատարանի վերջնական որոշումների վերանայման ինքնուրույն եղանակ և բովանդակությամբ՝ քրեական դատավարության ինքնուրույն փուլ հանդիսացող միասնական ինստիտուտ, որի էությունն առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ չմտած վերջնական որոշումների ինչպես իրավաբանական, այնպես էլ փաստական կողմի բողոքարկումն ու ստուգումն է:

Վերաքննության ինստիտուտի էությունը և նշանակությունը լիարժեք բացահայտելու համար անհրաժեշտ է նաև պարզել քրեական գործերով դատական ակտերի վերանայման համակարգում վերաքննության տեղը և դերը, ինչպես նաև ուսումնասիրել վերաքննության ընթացքում քրեադատավարական սկզբունքների իրացումը:

§ 2. Վերաքննության տեղը և դերը քրեական գործերով դատական ակտերի վերանայման համակարգում

Գատավճիռների վերանայման ժամանակակից ինստիտուտը, ենթադրելով և հիմնված լինելով միասնական դատական և իրավական համակարգի վրա, անհրաժեշտաբար օժտված է համակարգայնության հատկանիշով, թեև դատական մարմինների ինստիտուցիոնալ համակարգի և դատական վերանայման եղանակների գործառնական համակարգի տարրերը հաճախ համընկնում են ոչ ամբողջապես:

Միևնույն ժամանակ, դատավճիռների ստուգման համակարգի տարրերից յուրաքանչյուրն օժտված է հարաբերական ինքնուրույնությամբ և հանդիսանում է որևէ անմեղ անձի դատապարտման անթույլատրելիության և պատասխանատվության անխուսափելիության իրավական խնդիրների իրականացման ինքնուրույն երաշխիք: Այլ կերպ ասած՝ վերանայման կոնկրետ եղանակի ռացիոնալ իրավական կարգավորումը և գործնական արդյունավետությունն ուղղակիորեն ազդում են դատավճիռների բողոքարկման-ստուգման ողջ համակարգի արդյունավետության վրա: Մյուս կողմից, համակարգի տարրերից յուրաքանչյուրի խնդիրների իրականացումը մեծապես պայմանավորված է համակարգի ճիշտ մոդելավորմամբ և դրա տարրերի ներդաշնակ հարաբերակցությամբ:

Այսպես, եթե վերանայման համակարգը կառուցված լինի «վերաքննություն – մաքուր վճռաբեկություն» մոդելով, և վերաքննիչ ատյանը, օրինակ, չափազանց մեծ ծանրաբեռնվածության, «տարածքային խզման» կամ այլ օբյեկտիվ պատճառներով ի գործու չլինի վերացնել առաջին ատյանի դատարանի թույլ տված փաստական սխալները, ապա հնարավոր է, որ վճռաբեկ ատյանը չունենա դրանք ուղղելու բավարար իրավական և իրական հնարավորություններ:

Անհրաժեշտ է նշել, որ ամեն մի պետության քրեական դատավարությունում դատական վերանայման համակարգի տարրերի և դրանց փոխդասավորության (կոնֆիգուրացիայի) ու հարաբերակցության ընտրությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝

1. *քնական պայմաններով*՝ տարածքի մեծությունը և այլն,

2. *ընդհանուր-սոցիալական պայմաններով*՝ ազգաբնակչության քանակը, դրա բաշխվածությունը, տիրապետող սոցիալ-փիլիսոփայական գաղափարախոսությունը, հասարակության զարգացվածության աստիճանը, պետության կառուցվածքի ձևը, հասարակական գիտակցության մեջ դատարանների դերը, դրանց կշիռը և հեղինակությունը որպես սոցիալ-իրավական վեճեր լուծող մարմին և այլն,

3. *հատուկ-իրավական պայմաններով*՝ երկրի իրավական համակարգի տիպային պատկանելությունը (ռոմանագերմանական, ընդհանուր-իրավական համակարգեր), մյուս իրավական համակարգերի ազդեցությունները, իրավաբանական ավանդույթները, քրեական դատավարությունում մրցակցային և ինկվիզիցիոն սկզբունքների հարաբերակցությունը, առաջին ատյանի դատարանում գործի քննության պայմանները և այլն:

Նշված և այլ հանգամանքների ազդեցությամբ որոշ, հատկապես զարգացած պետություններ, հաճախ ընտրում են բողոքարկման-ստուգման բարդ (դիֆերենցված) համակարգ, որի պարագայում գործերի առանձին կատեգորիաների համար նախատեսվում են վերանայման ինքնուրույն ռեժիմներ:

Այսպես, Ռուսաստանյան Դաշնությունում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում վերաքննությունը նախատեսված է միայն այն գործերով, որոնցով ամբաստանյալին մեղսագրվում են ոչ մեծ ծանրության հանցանքներ: Կամ, Անգլիայում կողմերի փոխադարձ համաձայնությամբ առաջին ատյանի դատարանի դատավճիռը որոշ դեպքերում կարող է բողոքարկվել անմիջականորեն *Լորդերի պալատ*¹ շրջանցելով *Վերաքննիչ դատարանը*¹:

ՀՀ-ում քրեական գործերով սահմանված է վերանայման պարզ համակարգ. առաջին ատյանի դատարանի բոլոր վերջնական որոշումները վերաքննության կարգով կարող են բողոքարկվել *ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան*: Վերջինիս ավարտական ակտերն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: 2006թ. հունիսի 7-ի օրենքի հիման վրա վճռաբեկությունը վերափոխվել է դատական ստուգման բացառիկ եղանակի, որն իրականացնելու գործառնություն

¹ Այդ գործընթացն ընդունված է անվանել «leap frogging»: Տե՛ս **Mary Ann Glendon** and others. Comparative legal traditions. St. Paul, Minn., 1994, էջ 257:

դրված է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի վրա¹: Սահմանված է դատական ստուգման ևս երկու բացառիկ եղանակ՝ գործի նորոգում նոր ի հայտ եկած հանգամանքներով և գործի նորոգում նոր հանգամանքներով:

Մեր պետությունը, հանդիսանալով ժողովրդավարական իրավական ավանդույթներ ունեցող երկիր, դատական վերանայման իր համակարգը կառուցելիս առաջին հերթին, անշուշտ, օգտվել է մայրցամաքային իրավունքի «դրոշակակիր» երկրների՝ Ֆրանսիայի և Գերմանիայի փորձից: Այնուհանդերձ 2006թ. օրենսդրական փոփոխությունները ՀՀ քրեադատավարական համակարգ ներմուծեցին որոշ անգլոամերիկյան տարրեր: Այս առումով, ընդհանուր իրավունքի երկրների անցած բազմադարյա իրավական կայուն զարգացման ուղու ուսումնասիրումը, կարծում ենք, մեզ համար կարող է հետաքրքրական և օգտակար լինել:

Այսպես, Անգլիայի և ԱՄՆ-ի իրավունքի հետազոտման հիման վրա կարող ենք վերհանել անգլոսաքսոնական երկրների դատական վերանայման քրեադատավարական համակարգերի հետևյալ ընդհանուր հատկանիշները.

1. Այդ երկրներում գործում է վերանայման չափազանց բարդ համակարգ: Եթե ԱՄՆ-ում դա պայմանավորված է պետության կառուցվածքի դաշնային ձևով, ապա Անգլիայում դրա հիմնական պատճառն արխայիկ, խրթին դատական համակարգն է, որն իրենից ներկայացնում է միջնադարյան թագավորական արդարադատության աստիճանական զարգացման արդյունք:

2. Այդ երկրների վերանայման համակարգերում «վերաքննության», «վճռաբեկության», «ռեիզիայի»՝ մայրցամաքային իրավունքի համար ավանդական ինստիտուտները մաքուր ձևով բացակայում են:

3. Այդ երկրներում դատական վերանայման եղանակների հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորիչների թվում զգալի դեր ունի դատական նախադեպը, որն իբրև իրավունքի աղբյուր,

¹ Մեր կարծիքով 2006թ. բարեփոխումների արդյունքում ձևավորված ՀՀ դատական վերանայման համակարգի պայմաններում քաղաքացիների՝ դատական վերանայման սահմանադրական իրավունքը կարող է բավարար չափով երաշխավորված չլինել: Օրինակ՝ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը բեկանում է առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը և կայացնում մեղադրական դատավճիռ:

կրում է ինցիդենտային բնույթ (կապված է կոնկրետ գործի հետ): Ուստի նշված հարաբերությունները հաճախ շատ առանձնահատուկ են կանոնակարգվում:

4. Ընդհանուր իրավունքի երկրներում դատավճռի փաստական կողմը վերանայելու իրավական հնարավորությունները խիստ սահմանափակ են¹: Խոսքը հատկապես այն դեպքերի մասին է, երբ առաջին ատյանի կարգով դատավարությունն ընթանում է երդվյալների մասնակցությամբ:

5. Այդ երկրներում լայնորեն տարածված է բողոքարկման «թույլատվական» կարգը (Appeal on Leave, Discretionary Review): Դրա էությունն այն է, որ բողոքարկման համար սուբյեկտը պետք է ստանա գործը լուծած կամ դատավճռի վերանայման իրավասությամբ օժտված դատարանի թույլտվությունը: Օրինակ՝ 1995թ. Անգլիական օրենքի հիման վրա՝ երդվյալների դատարանի դատավճիռների դեմ պաշտպանի կողմից բերվող բողոքների համար սահմանվում է բացառապես «թույլատվական» կարգ²: Իսկ ԱՄՆ-ում բողոքարկման դիսկրեցիոն կարգը հիմնականում գործում է *ԱՄՆ Գերագույն դատարան*, ինչպես նաև նահանգային *«վերին ատյանի դատարաններ»* (Courts of Last Resort) բերվող բողոքների նկատմամբ, հատկապես եթե տվյալ նահանգում *«միջանկյալ վերաքննիչ դատարաններ»* (Intermediate Courts of Appeal) չեն գործում³:

6. Ստուգման-վերանայման միջոցների մատչելիության հարցում կողմերը, որպես կանոն, չեն օգտվում հավասար իրավունքներից: Վերանայման շատ եղանակներ նախատեսված են միայն պաշտպանության կողմի համար⁴:

Դատական վերանայման անգլոսաքսոնական ինստիտուտներից մեր պետությունն ընդունել է վերանայման դիսկրեցիոն կարգը: 2006թ.

¹ Տե՛ս *Λοδάρει Ε.Ο., Αϊεταει Ε.Α., Οεεει ιι ιι Α.Α. Οαι ει αι υε ι δι οαιη ςαι αι ι υδ αι ηδαιδηδαι*, I ., 2001, էջ 144, *Mary Ann Glendon and others. Comparative legal traditions*, St. Paul, Minn., 1994, էջ 102:

² Տե՛ս *Λοδάρει Ε.Ο.* ը *ծ.* նշված աշխատությունը, էջ 146:

³ Տե՛ս *Frank M.Coffin* On appeal: courts, lawyering and judging, New York – London, 1994, էջ 47-50:

⁴ Տե՛ս *Λοδάρει Ε.Ο.* ը *ծ.* նշված աշխատությունը, էջ 144-145, 150-152:

հուլիսի 7-ի օրենքով վճռաբեկ բողոք բերելու համար սահմանվել է թույլատրվող կարգ (ՀՀ քր.դատ.օր. 414.2 հոդված):

Այնուհանդերձ, քրեական գործերով դատարանի որոշումների ստուգման անգլո-ամերիկյան համակարգը մեզ ընդհանուր առմամբ խորթ է թվում: Մեր իրավական համակարգին ավելի հարագատ են դատական վերանայման ռոմանագերմանական կառուցակարգերը:

Մեզ համար առանձնակի կարևորություն և հետաքրքրություն ունի դատական ստուգման և վերանայման ֆրանսիական համակարգը, քանի որ մեր քրեադատավարական իրավունքում գործող վերաքննության և վճռաբեկության ինստիտուտներն իրենց ժամանակակից տեսքով ֆրանսիական ծագում ունեն: Առաջին անգամ դրանք նախատեսվել են 1808թ. Նապոլեոնյան քրեական դատավարության օրենսգրքով:

1808թ. օրենսգրքով վերաքննիչ ատյաններ էին *ուղղիչ ոստիկանության տրիբունալները* և *վերաքննիչ դատարանները*, որոնք իրավասու էին ըստ էության վերանայել, համապատասխանաբար, *հասարակ ոստիկանության տրիբունալների* (իրավախախտումների գործերով¹) և *ուղղիչ ոստիկանության տրիբունալների* (զանցանքների գործերով) վերջնական որոշումները: Միևնույն ժամանակ, *վերաքննիչ դատարանի* 3 դատավորներից և 12 հասարակ քաղաքացիներից կազմվում էր, այսպես կոչված, «*սահլների դատարան*» (ըստ էության՝ երդվյալների դատարան), որն առաջին ատյանի կարգով քննում և լուծում էր հանցանքների վերաբերյալ գործերը: Վճռաբեկ ատյանը *Ֆրանսիայի վճռաբեկ դատարանն* էր, որն իրավասու էր վերանայել ստորադաս դատարանների եզրափակիչ որոշումները՝ բացառապես իրավունքի հարցերով²:

Ինչպես երևում է, Նապոլեոնյան օրենսգրքով բողոքարկման ստուգման ձևերի համակարգում վերաքննությունը կարևոր դեր ուներ, բայց այն չէր կիրառվում *սահլների դատարանի* կայացրած դատավճիռների նկատմամբ: Փաստորեն, վերաքննությունը՝ առաջին ատյանի դատարանի թույլ տված փաստական սխալները վերացնելու ունակ էրե ոչ միակ, ապա ամենագործուն մեխանիզմը, ընդունված էր դիտել,

¹ Ֆրանսիայում քրեորեն պատժելի բոլոր արարքներն, ըստ հանրային վտանգավորության, բաժանվում են երեք խմբի՝ իրավախախտումներ, զանցանքներ և հանցանքներ:

² Տե՛ս **×αέπιοτα-Ααάοοι α Ι. Α. Εοδι ηαι ετ αι ι-ι δι οαηηοαεοι ι αι ι δααα**, էջ 476-477, **×αδι εετ αιεεε C. I . Αηαι αταγ εηοι δεγ αι ηοααηοαα ε ι δααα, Ι . ., 1999**, էջ 408:

որպես «արդարադատության կարևոր լրացուցիչ երաշխիք, որը հույժ անհրաժեշտ է առաջին ատյանի դատարանում ժողովրդական տարրի բացակայության պայմաններում»¹:

Դատական վերանայման ֆրանսիական հայեցակարգը մայրցամաքային Եվրոպայում լայն տարածում գտավ: Այն մեծ ազդեցություն ունեցավ նաև Ռուսական կայսրության 1864թ. Դատական կանոնադրությունների վրա:

Թեև պետության ահռելի մեծ տարածքով և բնակչության մեծ թվով պայմանավորված՝ Ռուսաստանը կազմավորեց բավականին բարդ դատական համակարգ, այնուհանդերձ, դատական վերանայումն ըստ 1864թ. կանոնադրությունների ընդհանուր առմամբ հիմնված էր «վերաքննություն – վճռաբեկություն» դասական մոդելի վրա: Ընդ որում, այդ մոդելը գործում էր հարաբերականորեն ինքնուրույն դատական ենթահամակարգերում՝ թե՛ հաշտարար և թե՛ ընդհանուր արդարադատությունում²: Ռուսաստանը նաև ընդօրինակեց երդվյալների դատարանի դատավճիռների՝ վերաքննության ենթակա չլինելու մասին ֆրանսիական դրույթը:

Գերմանիայի 1877թ. քր.դատ.օր.-ը ևս ընդհանուր առմամբ մնաց ֆրանսիական մոդելի շրջանակներում, այդ թվում՝ երդվյալների դատարանի դատավճիռների վերանայման սկզբունքների մասով³: Միևնույն ժամանակ, այն բարեփոխեց վճռաբեկության ֆրանսիական դասական ինստիտուտը՝ որոշակի դեպքերում վճռաբեկ ատյանի դատարանին իրավունք վերապահելով կայացնելու ինքնուրույն վերջնական որոշումներ (այսպես կոչված՝ «ռևիզիա»):

1877թ. օրենսգիրքը բազմաթիվ փոփոխություններով և լրացումներով գործում է ցայսօր, և այդ փոփոխությունների զգալի մասն ուղղված են եղել դատական ստուգման համակարգի բարեփոխմանը: Ներկայումս այդ համակարգն ունի հետևյալ տեսքը.

1. *Տեղամասային դատարանի* (դատական համակարգի 1-ին օղակ) դատավճիռները ենթակա են վերաքննիչ ստուգման *Լանդի դատարանի* (2-րդ օղակ) կողմից:

¹ Տե՛ս **Օի εί εοεεε Ε.Β.** նշված աշխատությունը, էջ 534:

² Տե՛ս **Չαբει εετ α Α.Ι. Αι αεεγοεγ α οαι ετ αι ιη ηοαι ι δι εçαι ηηοαα, Ι . ., 2004**, էջ 31:

³ Տե՛ս **Օի εί εοεεε Ε.Β.** նշված աշխատությունը, էջ 534:

2. Այն գործերը, որոնցով *Լանդի դատարանը* հանդես է եկել որպես առաջին կամ վերաքննիչ ատյան, կարող են ռեիզիոն կարգով վերանայվել *Լանդի գերագույն դատարանի* (3-րդ օղակ) կողմից: Լանդի դատարանի՝ որպես առաջին ատյան կայացված դատավճիռների մի մասը ենթակա է ռեիզիոն ստուգման անմիջականորեն *ԳՂՀ Գերագույն դատարանի* (պետության ընդհանուր իրավասության դատարանների համակարգը գլխավորող դատարան) կողմից:

3. Այն գործերով դատավճիռները, որոնցով *Լանդի գերագույն դատարանը* հանդես է եկել որպես առաջին ատյան, կարող են ռեիզիոն կարգով ստուգվել *ԳՂՀ Գերագույն դատարանի* կողմից: Վերջինս առաջին ատյանի կարգով գործեր չի քննում¹:

Փաստորեն, Գերմանիայում վերաքննիչ ստուգում կարող է կիրառվել միայն նվազ վտանգավոր հանցագործությունների վերաբերյալ գործերով: Առավել վտանգավոր հանցագործությունների մեղադրանքով կայացված դատավճիռները ենթակա են միայն ռեիզիոն վերանայման:

Այնուհանդերձ, Գերմանական վերաքննությունն ի սկզբանե տարածվում էր և այժմ էլ տարածվում է նաև ժողովրդական տարրի մասնակցությամբ առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճիռների որոշ մասի վրա: Խոսքը *տեղամասային շեֆենների դատարանի* մասին է, որի կազմի մեջ ներկայումս մտնում են մեկ պրոֆեսիոնալ դատավոր և երկու շեֆեն²:

Գերմանական նշված միտումը զարգացրեց Ֆրանսիան, որը 2000թ. օրենքով *ասիզների դատարանի* մեղադրական դատավճիռը մտցրեց վերաքննիչ ստուգման ոլորտ: Որպես այն վերանայող ատյան կարող է հանդես գալ ասիզների մեկ այլ դատարան³:

Այսպիսով, եթե դատավճիռների վերանայման գերմանական համակարգում վերաքննությունը միշտ համեստ դեր է ունեցել, ապա ֆրանսիական մոդելում, հատկապես 2000թ.-ից հետո, այն գրեթե ունի-

վերսալ նշանակություն է ստացել. ներկայումս Ֆրանսիայում վերաքննիչ կարգով չեն կարող վերանայվել միայն *ասիզների դատարանի* արդարացման դատավճիռները:

Ի տարբերություն Ֆրանսիայի և Գերմանիայի՝ մեր երկրի քրեադատավարական համակարգում վերաքննության դերը 20-րդ դարում կտրուկ վայրիվերումների է ենթարկվել՝ սկզբունքային մերժումից մինչև ունիվերսալ կիրառություն: Այսպես, Գատարանի մասին Խորհրդային Ռուսաստանի 1-ին (1917թ.) և 2-րդ (1918թ.) դեկրետներով վերաքննությունը՝ որպես դատավճիռների ստուգման եղանակ, վերացվեց: Հայաստանի խորհրդայնացումից հետո այդ դեկրետներն օրենքի ուժ ստացան նաև մեր երկրում:

Վերաքննության նկատմամբ ժխտողական մոտեցմանը Խորհրդային պետությունը հավատարիմ մնաց իր գոյության ողջ ընթացքում¹: Ականավոր դատավարագետ Մ.Ս. Ստրոգովիչը վերաքննության անընկալատակահարմարությունը հիմնավորում էր հետևյալ փաստարկներով.

1. Վերաքննիչ վերանայման դեպքում գործի լուծման ծանրության կենտրոնը, որպես կանոն, առաջին ատյանից տեղափոխվում է երկրորդ ատյան:

2. Վերաքննությունը դատական վերանայման բարդացված ձև է, սակայն այն առաջին ատյանի դատարանների դատավճիռների օրինականության բավարար երաշխիք չէ:

3. Վերաքննիչ վարույթը կարող է ընթանալ ավելի անբարենպաստ պայմաններում, քան առաջին ատյանի կարգով գործի դատական քննությունը, քանի որ վերաքննիչ դատարանին հաճախ չի հաջողվում ապահովել վկաների ներկայությունը:

4. Վերաքննիչ վերանայման պարագայում ստորադաս ատյանի դատարանի նկատմամբ ուղղակի հսկողությունը բացակայում է²:

¹ Տե՛ս **Авоаіеі Е.О.** և **ад.** նշված աշխատությունը, էջ 430-431:

² Շեֆենների գերմանական ինստիտուտը շատ նման է ժողովրդական ատենակալների խորհրդային ինստիտուտին: Ի տարբերություն երկվայակների մասնակցությամբ դատավարությանը՝ շեֆենները պրոֆեսիոնալ դատավորների հետ միասին լուծում են թե՛ փաստի և թե՛ իրավունքի հարցերը:

³ Գատական վերանայման այս եղանակը Լ.Վ. Գոլովկոն անվանում է «խորհրդանական վերաքննություն»: Տե՛ս **Аіеіаеі Е.А.** **Даоіди à оаіеіаіаі іди оаіааі аі** **Одаі оеè** // «**Аі ոааадоаі è і дааі**», 2001, N8, էջ 96:

¹ Թեև դատական ստուգման եղանակներն ուսումնասիրող գրեթե բոլոր խորհրդային դատավարագետները պաշտպանում էին վերաքննության նկատմամբ պետության որդեգրած ժխտողական դիրքորոշումը, այնուհանդերձ որոշ խորհրդային դատավարագետներ զգուշավոր կարծիք էին հայտնում վերաքննության ինստիտուտի ներդրման նպատակահարմարության վերաբերյալ: Տե՛ս, օրինակ, **Оаааеоаеèè А.А.** **Даоаі сөй іа еі еао Е.А.** **І адеіаа** «**Еаііаодеііііа іди еаі аіаіаі а ոі ааоіеі і оаіеіаіі іди оаіаа**» // «**І дааіаааі еа**», 1970, N3, էջ 142:

² Տե՛ս **Нооіаіае+ І.Ն.** **І диаадеа сәеііііііոө è іаі ոі іааііііոө ոоаааі ոо ідеаі аі ди а,** էջ 40-41:

Սակայն, մեր կարծիքով, ռացիոնալ կազմակերպման դեպքում վերաքննիչ վարույթը կարող է դատական վերանայման կենսունակ և արդյունավետ եղանակ լինել: Վերաքննիչ ատյանի դատարանը չպետք է ունենա գործը երկրորդ անգամ ամբողջ ծավալով քննելու պարտականություն: Եվ եթե վերջնական որոշում կայացնելիս այն իրավունք ունենա հիմնվել առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցների վրա ու եթե վերաքննիչ դատարանը դատական նիստում անմիջականորեն հետազոտի առավելապես վիճահարույց և լրացուցիչ ապացույցները, ապա, կարծում ենք, ծանրության կենտրոնն առաջինից երկրորդ ատյանի դատարան տեղափոխելուց հնարավոր կլինի խուսափել:

Բացի այդ, վերաքննության դատավարական ձևի բարդությունն ինքնանպատակ չէ: Այն կոչված է երաշխավորելու մարդու իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև ապահովելու քրեական դատավարության խնդիրների իրականացումը:

Ինչ վերաբերում է վերաքննիչ ատյանում վկաների հարցաքննության դժվարությանը, ապա կարծում ենք, որ այդ խնդիրը նվազագույնի կհասնի վերաքննության գործառույթ իրականացնող դատական մարմինների ապակենտրոնացվածության պայմաններում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ինչպես վերաքննության, այնպես էլ դատական ստուգման մյուս ձևերի գերխնդիրը դատական իշխանության ակտերի օրինականության, հիմնավորվածության և արդարացիության ապահովումն է, այլ ոչ թե ուղղակի դատական հսկողության իրականացումը: Ավելին, ներդատական հսկողությունը, մեր կարծիքով, չի համապատասխանում դատական իշխանության բնույթին և էությանը:

Ամեն դեպքում, վերաքննության նկատմամբ խորհրդային դատավարագիտության ունեցած բացասական վերաբերմունքը փոխանցվեց նաև ժամանակակից ռուսաստանյան դատավարագիտությանը: Ու թեև ՌԳ-ում դատական ստուգման վերաքննիչ եղանակը 2000թ. օրենքով վերականգնվեց, սակայն 2002թ. ուժի մեջ մտած ՌԳ քր.դատ.օր.-ով դրա կիրառության ոլորտն աննշան է: Ներկայումս ՌԳ-ում վերաքննության ենթակա են միայն հաշտարար դատավորների կայացրած դատավճիռները, իսկ այդ նորաստեղծ դատական օղակին ընդդատյա են նվազ վտանգավոր հանցագործությունների վերաբերյալ սահմանափակ թվով գործեր:

Կարևոր է ընդգծել նաև, որ գործի էությունը ո՛չ խորհրդային և ո՛չ էլ ռուսաստանյան վճռաբեկ ստուգման ոլորտից դուրս չի մնացել¹:

Ի տարբերություն ՌԳ-ի, մեր պետությունն իր քրեադատավարական համակարգում վերաքննությանը բավական մեծ դեր վերապահեց՝ հնարավոր վերաքննիչ ստուգման ոլորտի մեջ ներառելով առաջին ատյանի դատարանի բոլոր վերջնական որոշումները:

Այսպիսով, ռոմանագերմանական իրավական ավանդույթներ ունեցող պետությունների դատական վերանայման վերը ներկայացված համակարգերի համեմատական վերլուծության հիման վրա դրանք կարող ենք դասակարգել երկու խմբի.

1. համակարգեր, որոնցում կողմերին հնարավորություն է տրվում վերադաս առնվազն մեկ ատյանում դատական ստուգման առարկա դարձնել առաջին ատյանի դատարանի հետևությունների համապատասխանությունը գործով առկա ապացույցներին,

2. համակարգեր, որոնցում բոլոր կամ որոշ գործերով կողմերին մնան հնարավորություն չի տրվում:

Մեր կարծիքով, Գերմանիայում և մյուս այն երկրներում, որոնցում որոշ գործերով կողմերը չունեն գործի էությունը վերադաս ատյանի դատարանի վերանայման առարկա դարձնելու հնարավորություն, դատավճիռների բողոքարկման՝ կողմերի իրավունքը կարող է բավարար չափով երաշխավորված չլինել: Դա իր հերթին կարող է հանգեցնել դատավճիռների բողոքարկման և ստուգման եղանակների համակարգի անարդյունավետության:

Կարծում ենք, թե՛ մեղադրանքի և թե՛ պաշտպանության կողմերին պետք է օրենսդրական հնարավորություն տրվի երկրորդ ատյանում վիճարկել դատավճռում տեղ գտած հետևությունների համապատասխանությունը նույն կամ ստորադաս ատյանի դատարանի հետազոտած հանգամանքներին: Հակառակ դեպքում, բողոքարկող կողմը ստիպված կլինի փորձել «փաստական սխալը» ներկայացնել որպես «իրավաբա-

¹ Դեռևս Գատարանի մասին 2-րդ դեկրետի 5 հոդվածը սահմանում էր, որ «վճռաբեկության կարգով բողոքարկման դեպքում դատարանն իրավունք ունի որոշումը բեկանել ոչ միայն իր կողմից էական ճանաչված ձևական խախտումների հիմքով, այլև այն դեպքերում, եթե գտնի, որ բողոքարկվող որոշումն ակնհայտ անարդարացի է»: Տե՛ս **ՈճԻՅԻՆԻ Ի .Ն. Ի ծիճաճեճ չճեճի ի ի թե՛ è ի ճի ի ի թե՛ ոճաճի ի թե՛ ի թե՛ ճի թե՛ ճի**, էջ 38-39:

նական սխալ»։ Ծիշտ է, հաճախ դա հնարավոր է։ Օրինակ՝ 1923թ. խմբագրությամբ ՌԽՖՍՀ քր.դատ.օր.-ով, ի հեճուկս Դատարանի մասին 2-րդ դեկրետի, գործի էությունը մտցված չէր վճռաբեկ ստուգման ուղրտ, սակայն վճռաբեկ ատյանը ստուգում էր գործի փաստական կողմը և բեկանում անհիմն դատավճիռները՝ որպես օրենքի խախտումով կայացված՝ հիմնվելով քր.դատ.օր. 319 հոդվածի վրա, որը դատարանին պարտավորեցնում էր հիմնավորել «իր դատավճիռները բացառապես գործում առկա տվյալների վրա, որոնք հետագոտվել են դատական նիստում»¹։

Սակայն չպետք է գերազնահատել փաստական սխալն իրավաբանական խախտում ներկայացնելու հնարքի հնարավորությունները։ Այն բավարար երաշխիք չէ ո՛չ քրեական դատավարության խնդիրների իրականացումն ապահովելու և ո՛չ էլ քրեական դատավարությունում մարդու իրավունքների խախտումները կանխելու համար²։

Այսպիսով, կողմերը պետք է յուրաքանչյուր գործով իրավունք ունենան վիճարկելու գործի փաստական կողմի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի հետևությունները։ Կարելի է առանձնացնել այդ իրավունքի ապահովման երկու հայեցակարգ.

ա) Բոլոր դատավճիռները կարող են վերաքննության կարգով ստուգվել։ Վերաքննիչ ատյանի դատարանի վերջնական որոշումները ևս հրապարակման պահից օրինական ուժի մեջ չեն մտնում։ Դրանք կարող են բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ «մաքուր վճռաբեկության» կանոններով։ Այս հայեցակարգին մոտ է դատական վերանայման ֆրանսիական մոդելը։ Մինչև 2006թ. ՀՀ դատական համակարգը կառուցված էր այս հայեցակարգի հիման վրա։

բ) Դատավճիռների մի մասը կարող է ենթակա լինել վերաքննիչ բողոքարկման, կարող է և ենթակա չլինել։ Էականն այն է, որ բոլոր դեպքերում դատավճիռները կարող են բողոքարկվել և վերանայվել «ընդլայնված վճռաբեկության» կարգով։ Այս մոտեցումն ընդունվել է ԽՍՀՄ-ում, այնուհետև՝ ՌԴ-ում։

¹ Տե՛ս **Ռոճարաթ Ի Ն.** *Ի ծիաձեձ չձեիւիւնոձ Է իձիւիւնաիւնոձ նոձաիւնոձ իձեձիւնոձ*, էջ 49։

² Տե՛ս **Նեարձրա Բ. Ա.** *Այձեցյոձ Է նեձոձի Է իձիւնոձնոձ Է նոձա ձոձիւն Է ի նոձիւն Է ձոձիւն Է իձիւնոձնոձ Է ձոձաձոձեձ, ձեձն... ձեձիւն. իձեձ. իձեձ, Օիւնե, 2005, էջ 15-16։*

Վերոգրյալ հայեցակարգերից մեզ համար առավել ընդունելի է թվում առաջինը։ «Առաջին ատյանի դատարան – վերաքննիչ դատարան – վճռաբեկ դատարան» մոդելը հնարավորություն է տալիս օրինական ուժի մեջ չմտած դատավճիռները երկու անգամ բողոքարկել այնպիսի դատական ատյաններում, որոնցից յուրաքանչյուրն ունի սեփական գործառնություններին համապատասխան դատավարական հնարավորություններ։

Անհրաժեշտ է նշել, որ առաջին հայեցակարգի ներդրումը դյուրին չէ այն պետությունների համար, որոնցում քրեական գործերով դատական վարույթն իրականացվում է երդվյալների մասնակցությամբ։ Բանն այն է, որ եթե երդվյալների դատավճռի՝ ըստ էության վերանայումն իրականացնող դատարանը գործի առանց երդվյալների մասնակցության, ապա առաջին ատյանի դատարանի գործունեությունը կիմաստազրկվի։

Մյուս կողմից, երդվյալների մասնակցությամբ երկու դատավարություն կազմակերպելը, կարծում ենք, միջոցների չհիմնավորված վատնում է։

Եվ վերջապես, երդվյալների վերդիկտը վերաքննիչ ստուգման ուղրտից դուրս թողնելը միանշանակորեն կհանգեցնի դատական սխալի հավանականության մեծացման։

Մեր կարծիքով, ՀՀ-ի համար խնդրի լուծման երեք եղանակներն էլ անընդունելի են։ Ուստի և մեր երկրում երդվյալ ատենակալների դասական ինստիտուտի ներդրումն աննպատակահարմար է։

Միևնույն ժամանակ, ժողովրդական տարրի մասնակցության ուրոշ այլ ձևերի (օրինակ՝ շեֆենների, ժող. ատենակալների միջոցով) օգտագործումը, կարծում ենք, չի կարող բացասական ազդեցություն ունենալ դատական ստուգման համակարգի արդյունավետության վրա։

Ինչ վերաբերում է «ժող. դատարան – գերագույն դատարան» խորհրդային մոդելին, ապա նախ, այն կողմերին տալիս էր դատավճիռների բողոքարկման ավելի սահմանափակ հնարավորություն։ Բացի այդ, «խորհրդային վճռաբեկությունը», լինելով «մաքուր վճռաբեկության» և վերաքննության ինքնատիպ խառնուրդ, զերծ չէր որոշակի թերություններից։ Այսպես, «խորհրդային վճռաբեկությունը» իրենից կենտրոնացված վարույթ էր ներկայացնում, ինչն ինքնին սահմանա-

փակում էր գործի փաստական կողմը վիճարկելու կողմերի հնարավորությունները:

Ռուսաստանյան օրենսդրի կողմից որդեգրած մոտեցումը պարունակում է վերը նշված երկու մոդելների տարրեր, ինչը, կարծում ենք, հանգեցրել է խճճված դատական վերանայման համակարգի: Այսպես, Ա.Վ. Պրեդկինը գրում է. «Դատավճիռների վերանայման վերաքննիչ կարգի ներդրումը պետք է հանգեցնի և վճռաբեկ կարգի փոփոխության: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ դատավճիռների վերանայման վերաքննիչ կարգի ներդրմամբ վերանում է վճռաբեկության այն ձևի գոյության իմաստը, որն ըստ էության իրենից ներկայացնում է վերաքննիչ և վճռաբեկ վարույթների հիբրիդ: Ռ-Պ. դատ. օր. նախագծում արդարացիորեն նախատեսվել է, որ վերաքննիչ բողոքարկման առարկայի մեջ են մտնում գործի փաստական հանգամանքները և քրեական օրենքի կիրառումը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական նորմերի պահպանումը (այսինքն՝ դատավճռի և՛ էության, և՛ ձևի ստուգում): Իսկ վճռաբեկ բողոքներով և զանգատներով վերադաս դատարանը ստուգում է ստորադաս դատարանի կողմից հաստատված հանգամանքների նկատմամբ օրենքի ճիշտ կիրառումը և քրեադատավարական նորմերի պահպանումը (այսինքն՝ միայն դատավճռի ձևը):

Դրա հետ մեկտեղ, այն դատավճիռները վճռաբեկ կարգով վերանայելիս, որոնք չեն կարող բողոքարկվել վերաքննիչ կարգով ... անհրաժեշտ է պահպանել վերաքննության գծերը»¹:

Այնուհետև հեղինակը եզրակացնում է, որ «տրամաբանությանը հետևելով՝ Ռուսաստանի քրեական դատավարությունում պետք է գոյություն ունենան վճռաբեկության սկզբունքորեն տարբեր երկու ինստիտուտ, ինչը հղի է քրեադատավարական ինստիտուտների էության լրգվմամբ (միախառնմամբ)»²:

Ռուս դատավարագետը, փաստորեն, ներկայացնում է «ժող. դատարան – գերագույն դատարան» երկօղակ մոդելին հատուկ տեսական պրոբլեմները, որոնք, անշուշտ, հղի են նաև գործնական բարդություններով:

¹ Ст'у **Ү іаааеі А.А.** *Аіаеёёііііа ідіеаіаіаі а оаіеіаіі ідіоаіа: ідіаеаі ւ ոаі іаеаіеё // «Аіааааіаі а іааі», 2001, N3, էջ 49:*

² Ст'у նույն տեղում:

Այսպիսով, մեր պետության համար դատական վերանայման ամենաօպտիմալ համակարգը «վերաքննություն – վճռաբեկություն» դատական մոդելն է, որում վերաքննությունը, իր լայն իրավական հնարավորություններով պայմանավորված, պետք է լինի դատական սխալներն ուղղող հիմնական ատյանը:

Սակայն այդ պատասխանատու գործառույթը հաջողությամբ իրականացնելու համար միայն իրավական հնարավորություններով օժտված լինելն անբավարար է: Անհրաժեշտ են գործնական հնարավորություններ, որոնք կախված են նաև կազմակերպական-իրավական գործոններից:

Այսպես, կարծում ենք, որ անհրաժեշտ է բացասական գնահատել չչ-ում գործող վերաքննիչ վարույթի կենտրոնացվածության սկզբունքը: Ներկայումս չչ-ում գործում է քրեական գործերով միայն մեկ վերաքննիչ դատարան, որի նստավայրը Երևան քաղաքն է: Մինչդեռ, վերաքննիչ ատյանի դատարանի նստավայրը պետք է հնարավորինս մոտ լինի առաջին ատյանի կարգով գործը քննած դատարանին: Այլապես կարող են առաջանալ վերաքննիչ դատարանի նիստին դատավարության մասնակիցների, վկաների, փորձագետների ներկայությունն ապահովելու հետ կապված բարդություններ, քանի որ դա կարող է զգալի նյութական միջոցներ պահանջել:

Ռուսումնասիրելով օտար երկրների փորձը՝ կարող ենք եզրակացնել, որ վերաքննիչ ատյանի դատարանները հնարավորինս փոքր տարածք են սպասարկում: Օրինակ՝ Ռ-Ռ-ում վերաքննության գործառույթն իրականացնող դատարանները գործում են շրջանների մակարդակով: Ֆրանսիայում ներկայումս գործում է 35 վերաքննիչ դատարան, որոնցից յուրաքանչյուրը սպասարկում է մի քանի դեպարտամենտ¹:

Բացի այդ, վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է ավելացնել վերաքննիչ դատարանի դատավորների քանակը: Այսպես, 2004թ. չչ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը ստացել է 820 բողոք, որոնց հիման վրա քննվել և ըստ էության լուծվել է 541 գործ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ժամանակ դատարանը կազմված է եղել նախագահից և 15 դատավորներից, կարող ենք ստանալ երեք դատավորից բաղկացած

¹ Ст'у **Аооаіеі Е.О.** *а аа. նշված աշխատությունը, էջ 293:*

մեկ դատական կազմի կողմից մեկ գործի վրա ծախսված աշխատանքային օրերի միջին քանակը, այն է՝ մոտ 3 օր: Կարծում ենք, որ այդ ժամանակահատվածն օբյեկտիվորեն անբավարար է վերաքննիչ վարույթի առջև դրված խնդիրները պատշաճորեն լուծելու համար:

Վերոգրյալն ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ Հայաստանի Հանրապետության դատական վերանայման քրեադատավարական համակարգում վերաքննության տեղն ու դերը հայեցակարգային առումով ճիշտ է ընտրված: Միևնույն ժամանակ, համակարգի արդյունավետությունն էապես կրարձրանա, եթե վերաքննության՝ որպես դատական սխալներն ուղղող առաջին մեխանիզմի կազմակերպման և գործունեության պայմանները համապատասխանեցվեն վերանայման այդ եղանակի մեծ իրավական ներուժին, մասնավորապես, եթե իրականացվի վերաքննիչ ատյանի ապակենտրոնացում:

§ 3. Քրեադատավարական սկզբունքների իրացումը վերաքննիչ վարույթում

Քրեադատավարական գործունեության հիմքում ընկած են որոշակի ելակետային նորմատիվ-դեկլարատիվ հիմնադրույթներ, որոնք բնութագրում են քրեական դատավարության իրավունքի բովանդակությունը և իրավունքի այդ ճյուղով ամրագրված հասարակական կյանքի օրինաչափությունները, և որոնք սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ, քրեական դատավարության օրենսգրքում և այլ օրենքներում: Այդ հիմնադրույթները տեսության և օրենսդրության մեջ ընդունված է անվանել սկզբունքներ¹:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում առաջին անգամ քրեական դատավարության սկզբունքները ստացան առանձին ամրագրում: Վերջիններս իրենց ամբողջության մեջ արտահայտում են ՀՀ քրեական դատավարության էությունը՝ իրենց ազդեցությունը տարածելով քրեական դատավարության բոլոր ինստիտուտների և փուլերի

վրա, այդ թվում՝ վերաքննության ինստիտուտի և վերաքննիչ վարույթի քրեադատավարական փուլի վրա:

Բացի այդ, վերաքննության կապը քրեական դատավարության սկզբունքների հետ արտահայտվում է նաև նրանում, որ ՀՀ քրեական դատավարության ցանկացած սկզբունքի խախտում հանդիսանում է քրեադատավարական օրենքի էական խախտման վերաքննիչ հիմքի անհրաժեշտ բաղադրատարր:

Հարկ է նշել, որ ՀՀ քր.դատ.օր. 2-րդ գլխում սահմանված դատավարական սկզբունքների ձևակերպումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք բավարար չեն վերաքննության էությունն ամբողջապես բացահայտելու համար՝ հետևյալ նկատառումներով.

1. ՀՀ քր.դատ.օր. 2-րդ գլխում ամրագրված չեն որոշ սկզբունքներ, որոնք օբյեկտիվորեն ընկած են ՀՀ քրեադատավարական իրավունքի հիմքում, և դրանցից բխող իրավադրույթները կարգավորված են ՀՀ քր.դատ.օր. համապատասխան կառուցվածքային մասերում: Նման «օրենսդրորեն չամրագրված սկզբունքներից» մի քանիսն էապես ազդում են վերաքննության ինստիտուտի հետ կապված և վերաքննիչ վարույթի ընթացքում առաջացող դատավարական իրավահարաբերությունների կանոնակարգման վրա: Դրանք են դատավարության ողջամիտ տևողության և բողոքարկման ազատության սկզբունքները:

2. Վերաքննության էությունն արտահայտում են որոշ այնպիսի ելակետային հիմնադրույթներ, որոնք մասնավոր նշանակություն ունեն, գործում են քրեական դատավարության ոչ բոլոր փուլերում և դրսևորվում են քրեադատավարական ոչ բոլոր ինստիտուտներում¹: Դրանցից է, օրինակ, դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության սկզբունքը:

Վերոգրյալի հիման վրա վերաքննիչ վարույթում քրեադատավարական սկզբունքների իրացման հարցը քննարկելիս մենք կանդրադառնանք միայն այն սկզբունքներին, որոնք էական ազդեցություն են ունենում վերաքննության ինստիտուտի հետ կապված քրեադատավարական իրավահարաբերությունների կարգավորման վրա: Ընդ որում, մենք

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս» / **Գ.Մ. Ղազինյանի** խմբագրությամբ, Եր., 2000, էջ 119, **ԱԵԵԱ Օ.Օ., ԱճԻ Ի Ա Ի .Ա. Ի նի Ի Ա Ի Ա Ի Ա=աԵԱ ծԱԻ ԵԻ Ա Ի ԱԻ ո՞ճԱԻ ծո՞ծԻ Ե՞ն՞՞՞Ա, Ի . .**, 2003, էջ 3:

¹ Օրինակ՝ ՀՀ քր.դատ.օր. 16 հոդվածում ամրագրված դատական քննության հրապարակայնության սկզբունքը լրիվ ծավալով գործում է միայն քրեական դատավարության դատական փուլերում:

կքննարկենք նաև այն դեկավար հիմնադրույթները, որոնք, ամրագրված չլինելով ՀՀ քր.դատ.օր. 2-րդ գլխում, օբյեկտիվորեն ընկած են ՀՀ քրեադատավարական իրավունքի հիմքում:

1. *Օրինականության սկզբունքն* իրավամբ համարվում է «սկզբունքների սկզբունք» և հանդիսանում է իրավական համակարգի, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման, իրավունքի մասին գիտության, իրավական գիտակցության հիմնաքարը:

Քրեական դատավարությունում օրինականության սկզբունքի տակ ընդունված է հասկանալ իրավասու պետական մարմինների կողմից օրենքի ճիշտ և անշեղ կիրառում, քրեական դատավարության բոլոր մասնակիցների, պետական և ոչ պետական կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից ՀՀ Սահմանադրության, օրենքների և դրանց համապատասխան ընդունված նորմատիվ-իրավական ակտերի պահանջների պահպանում (կատարում)¹: Օրինականության սկզբունքն ամրագրված է ՀՀ քր.դատ.օր. 7 հոդվածում:

Վերաքննության ինստիտուտում օրինականության սկզբունքն առաջին հերթին դրսևորվում է որպես հիմնարար և համապարփակ իրավական պահանջ, որը քրեական դատավարության սուբյեկտներին պարտավորեցնում է իրենց գործողություններում անշեղորեն պահպանել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ միջազգային պայմանագրերը, ՀՀ քր.դատ.օր.-ը, մյուս օրենքները:

Սակայն վերաքննիչ վարույթի կարգը սահմանող դատավարական նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում քրեական դատավարության սուբյեկտները չեն կարող պահպանել օրինականության սկզբունքը՝ օրենքում առկա բացերի պատճառով: Օրինակ՝ ՀՀ քր.դատ.օր. 394 հոդվածում, որում սահմանված է վերաքննիչ վարույթը եզրափակող դատավարական որոշումների տեսակների սպառիչ ցանկը, որևէ կերպ լուծված չէ այն հարցը, թե դատարանն ինչ վերջնական որոշում պետք է կայացնի այն դեպքում, երբ անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշու-

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս» / Գ.Ս. Ղազինյանի խմբագրությամբ, Եր., 2000, էջ 124-128, ԱճԵԱ Ծ.Ծ., Աժու 1 ա 1 Ա. 1 ու 1 ա 1 ա 1 ա:աճ օձի Էի 1 ա 1 ա 1 ոձի օնօձ, 1 ., 2003, էջ 32:

մը ենթակա է բեկանման և առկա են բավարար իրավական և ապացուցողական հիմքեր մեղադրական դատավճիռ կայացնելու համար:

Այսպիսով, վերաքննիչ վարույթում օրինականության սկզբունքի անշեղ կենսագործմանը երբեմն խոչընդոտում է այն, որ առանձին դեպքերում բացակայում է օրինականության սկզբունքով դեկավարվելու անհրաժեշտ պայմանը՝ դատավարական հարաբերությունների հստակ, անհակասական ու անթերի իրավական կանոնակարգումը:

Ընդ որում, դա կարող է լինել նաև իրավաբանական տեխնիկայի խոտանի արդյունք: Այսպես, ՀՀ քր.դատ.օր. 390 հոդվ. 1-ին մասը սահմանում է, որ «վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատարվում է առաջին ատյանի դատարաններում գործերի քննության համար սահմանված, ինչպես նաև սույն գլխում շարադրված կանոններով»:

Կարծում ենք, որ առանց վերապահում կատարելու՝ հողվածի տեքստում «ինչպես նաև» շարկապի օգտագործումը կարող է թյուրըմբռնման պատճառ դառնալ և հիմք տալ պնդելու, որ վերաքննիչ դատարանում գործի քննության որոշ հարցեր միաժամանակ կարգավորվում են երկու տարբեր կանոններով՝ սահմանված առաջին ատյանի և վերաքննիչ ատյանի կարգով գործի քննության համար:

Նշված անհստակությունը հեշտությամբ կարող է շտկվել՝ ՀՀ քր.դատ.օր. 390 հոդվ. 1-ին մասը շարադրելով հետևյալ կերպ. «Վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատարվում է սույն գլխում շարադրված կանոններով, ինչպես նաև առաջին ատյանի դատարաններում գործերի քննության համար սահմանված կանոններով, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխում»:

Վերաքննության ինստիտուտի համար օրինականության սկզբունքն ունի նաև առանձնահատուկ նշանակություն, քանի որ վերաքննությունը կոչված է ապահովել առաջին ատյանի դատարանի վերջնական որոշման օրինականությունը, և այդ դիտանկյունից վերաքննությունն օրինականության սկզբունքի ապահովման ինստիտուցիոնալ երաշխիքն է:

2. *Դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման իրավունքի սկզբունքը* ՀՀ քր.դատ.օր. 2-րդ գլխում հաստատված է:

Ի հեճուկս ՀՀ քրեադատավարական օրենսդրության՝ այն առանձին ամրագրված է ՌԴ քր.դատ.օր. 19 հոդվածում որպես քրեական դատավարության ինքնուրույն սկզբունք, որը կոչված է երաշխավորելու դատավարության մասնակիցների կողմից իրենց իրավունքների իրականացումը և ապահովելու քրեական դատավարության մյուս սկզբունքների կենսագործումը¹:

Համաձայն ՌԴ քր.դատ.օր. 19 հոդվածի՝ դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի և հետաքննիչի գործողությունները (անգործությունը) և որոշումները կարող են բողոքարկվել քր.դատ.օր.-ով սահմանված կարգով: Յուրաքանչյուր դատապարտյալ ունի քր.դատ.օր. 43-45, 48 և 49 գլուխներով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից դատավճռի վերանայման իրավունք²:

ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դատավարական բողոքարկման իրավունքի սկզբունքն օբյեկտիվորեն գոյություն ունի մաս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում, և ինչպես մյուս սկզբունքները, այն հիմնարար նշանակություն ունի քրեադատավարական հարաբերությունների իրավական կարգավորման համար: Այդ մասին են վկայում, մասնավորապես, ՀՀ քր.դատ.օր. 31 հոդվ. 3-րդ մասով, 52 հոդվ. 3-րդ մասով, 55 հոդվ. 4-րդ մասի 26-27 կետերով, 98 հոդվ. 5-րդ մասով, 99 հոդվ. 1-ին մասի 3-րդ կետով, 100 հոդվ. 3-րդ մասով, 103, 150, 185, 263-264 հոդվածներով, 267 հոդվ. 3-րդ մասով, 287-290, 376-426 հոդվածներով 429 հոդվ. 3-րդ մասով, 479 հոդվածով և ՀՀ քր.դատ.օր. այլ հոդվածներով նախատեսված դրույթները:

Վերաքննությունը դատավարական բողոքարկման ազատության սկզբունքի ինստիտուցիոնալ երաշխիք է: Այն ապահովում է դատավրճման բողոքարկման՝ ամբաստանյալի իրավունքը:

Այդ իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է և ստացել է սահմանադրական-իրավական և միջազգային-իրավական ամրագրում: Այսպես, ըստ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 3-րդ մասի՝ «Յուրա-

¹ Տե՛ս «Օáï èí áí í -í ðí óáññóáèúí í á í ðááí ðí ññéèñéí é Óáááðáòèè: ó-:ááí èè» / Í ðá. ðáá. **Ի.Ա. Եօրեմեայ**, **Ի ., 2004**, էջ 214:

² Համանման նորմեր նախատեսված են ՀՀ քր.դատ.օր. 103 հոդվածով՝ «Եզրափակիչ դրույթներ քրեական դատավարությանը մասնակցող անձանց մասին» գլխում:

քանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք»:

Նույնաբովանդակ նորմ ամրագրված է մարդու իրավունքների հանրահռչակ միջազգային-իրավական ակտերում՝ Մարդու քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (14 հոդվ. կետ 5), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրությունում (2 հոդվ. 1-ին մաս), ինչպես մաս՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին ԱՊՀ կոնվենցիայում¹ (7 հոդվ. 2-րդ մաս):

Այնուհանդերձ, դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման իրավունքի սկզբունքը դատարանի վերջնական որոշումների բողոքարկման մասով չպետք է նույնացնել ամբաստանյալի համապատասխան իրավունքի հետ: Այն ներառում է մաս այլ իրավասու սուբյեկտների, առաջին հերթին՝ մեղադրող դատախազի և տուժողի դատավարական գործունեությունը:

Եթե սուբյեկտային առումով քննարկվող սկզբունքն անհրաժեշտ է լայն հասկանալ, ապա նույնը չի կարելի ասել դրա բովանդակային կողմի մասին: Մեր կարծիքով՝ դատավարական բողոքարկման ազատությունը չպետք է բացարձակացնել և դրա տակ չպետք է հասկանալ վերաքննիչ բողոք բերելու իրավական հնարավորություն՝ առանց պատշաճ փաստարկման:

Կարծում ենք, որ պաշտպանության կողմի սուբյեկտների կողմից վերաքննիչ բողոքը պատշաճորեն հիմնավորելու պահանջը չի հակասի անմեղության կանխավարկածին, մասնավորապես՝ ապացուցման պարտականությունը մեղադրանքի կողմի վրա թողնելու հիմնադրույթին:

Բանն այն է, որ ամբաստանյալի, նրա օրինական ներկայացուցչի ու պաշտպանի կողմից վերաքննիչ բողոք բերելը ոչ թե պարտականություն է, այլ իրավունք: Եվ եթե նշված սուբյեկտները ցանկանում են օգտվել այդ դատավարական իրավունքից, ապա վերաքննիչ բողոքը պետք է բերեն՝ պահպանելով դատավարական ձևը:

¹ Հայաստանի Հանրապետությունը ԱՊՀ կոնվենցիան ստորագրել է 1995թ. մայիսի 26-ին, սակայն դեռևս չի վավերացրել:

Վերաքննիչ վարույթում դատավարական բողոքարկման իրավունքի սկզբունքը ստացել է մաս մասնավոր արտահայտություն: Խոսքը վերաբերում է վերաքննիչ բողոքարկման ժամկետը բաց թողնելը հարգելի ճանաչելու ընթացակարգին, որը ներառում է մաս համապատասխան միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու օրենսդրական հնարավորություն (ՀՀ քր.դատ.օր. 380 հոդվ. 2-րդ մաս):

3. *Դատավարության ողջամիտ տևողության սկզբունք:* Դեռևս քրեական իրավունքի դասականները գիտակցում էին արդարադատության օպերատիվության հույժ կարևորությունը քրեական քաղաքականության արդյունավետության ապահովման գործում:

Այսպես, Չ. Բեքարիան նշում էր. «Որքան արագ է պատիժը հետևում հանցագործությանը և որքան մոտ է վերջինիս, այնքան պատիժն արդարացի է և արդյունավետ: ... Որքան կարճ ժամանակ է բաժանում հանցագործությունը պատժից, այնքան մարդկանց հոգիներում ուժգին է ամրապնդվում այդ երկու գաղափարների՝ հանցագործության և պատժի փոխադարձ կապը, և նրանք ինքնաբերաբար սկսում են ընկալվել անքակտելի միասնության մեջ՝ մեկը որպես պատճառ, մյուսը որպես անհրաժեշտ և անխուսափելի հետևանք»¹:

Թեև դատավարության ողջամիտ տևողության պահանջը ՀՀ քր.դատ.օր.-ով որպես առանձին սկզբունք ամրագրված չէ, սակայն ՀՀ իրավական համակարգի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն ՀՀ քրեական դատավարության ինքնուրույն սկզբունք է, որով պետք է ղեկավարվեն քրեական դատավարության բոլոր սուբյեկտները:

Բանն այն է, որ ՀՀ Սահմանադրության 6 հոդվ. հիման վրա ՀՀ միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, իսկ Մարդու քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14 հոդվ., 3-րդ մաս, «Ե» կետ), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (6 հոդվ. 1-ին մաս) դատավարության ողջամիտ տևողության ղեկավար հիմնադրույթն ամրագրում են որպես մարդու անօտարելի իրավունք:

¹ Տե՛ս **Аа Naenaea I** . I ðaðáááí ðú Áaðííáeñeíáí nóáá íí íðáááí +áeí ááeá, էջ 478:

Ընդ որում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում հստակ ընդգծել է, որ դատավարության արագության պահանջը տարածվում է մաս դատավճռի բողոքարկման և ստուգման վարույթների վրա:

Այսպես, Kudla-ի գործով որոշման 122 կետում Ստրասբուրգի դատարանը նշել է, որ կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին մասը պետություններին չի պարտադրում հիմնել վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ: Այնուհանդերձ, եթե պետությունը հիմնում է այդպիսի դատարաններ, ապա պարտավոր է ապահովել, որ դատավարության կողմերն օգտվեն 6 հոդվածի հիմնական երաշխիքներից: Ամեն դեպքում, կասկած չի հարուցում, որ վերաքննիչ և վճռաբեկ վարույթները ներառվում են 6 հոդվածի կիրառման ոլորտի մեջ: Հետևաբար այդ վարույթները պետք է հաշվի առնվեն այն հարցը որոշելիս, թե արդյոք ողջամիտ է դատական քննության ընդհանուր տևողությունը¹:

Wemhoff-ի գործով որոշման 18-րդ կետում Եվրոպական դատարանը նշում է, որ դատավարության ողջամիտ տևողության պահանջը կիրառելիս հաշվի առնվող ժամանակահատվածը շարունակվում է առնվազն մինչև արդարացման կամ դատապարտման մասին որոշման կայացումը, նույնիսկ եթե այն կայացվել է վերաքննիչ ատյանի դատարանում²:

Հարկ է նկատել, որ ապացույցներն անմիջականորեն հետազոտելու՝ վերաքննիչ դատարանի իրավասությանը պայմանավորված՝ դատավճիռների վերանայման ձևերից վերաքննությունն օբյեկտիվորեն ամենաժամանակատարն է: Մակայն դա հակակշռվում է դատական սխալներն ուղղելու առավել մեծ ներուժով:

Բացի այդ, ի տարբերություն դատարանի վերջնական ակտերի բողոքարկման և ստուգման մյուս եղանակների՝ վերաքննության արդյունքում կարող է կայացվել նոր վերջնական որոշում, և դատավճիռը բեկանելով՝ վերադաս դատարանը ստիպված չէ գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ պահանջելով նոր քննություն:

Մեր կարծիքով՝ դատավարության ողջամիտ տևողության սկզբունքը պետք է հատուկ ամրագրվի ՀՀ քր.դատ.օր. 2-րդ գլխում և ապահովվի համապատասխան դատավարական երաշխիքներով:

¹ Տե՛ս **Аа Naenaea I** . I ðaðáááí ðú Áaðííáeñeíáí nóáá íí íðáááí +áeí ááeá, էջ 478:

² Տե՛ս **Аа Naenaea I** . I ðaðáááí ðú Áaðííáeñeíáí nóáá íí íðáááí +áeí ááeá, էջ 480:

Այնուհանդերձ, ՀՀ քր.դատ.օր.-ում սահմանված են դատավարության ողջամիտ տևողության որոշակի երաշխիքներ: Գրանցից կարելի է նշել վերաքննիչ բողոքարկման 15-օրյա ժամկետը, ինչպես նաև վերաքննիչ դատարանում գործերի քննությունն սկսելու ժամկետը (ՀՀ քր.դատ.օր. 388 հոդված):

Սակայն նշվածն ակնհայտ անբավարար է: Կարծում ենք, անհրաժեշտ է օրենսդրորեն պարտավորեցնել վերաքննիչ դատարանին անհարկի կամ չափազանց երկար ժամանակահատվածով գործի քննությունը չհետաձգել կամ դատական նիստը չընդմիջել:

4. Գատավարական իրավունքի ճյուղերում *մրցակցության սկզբունքի* բացառիկ նշանակությունն այն է, որ այդ սկզբունքն արտահայտում է տվյալ երկրի դատավարության տիպը:

Հետխորհրդային դատավարագիտությունը մեծ հաջողությունների է հասել դատավարության տիպաբանության ուսումնասիրման հարցում: Մասնավորապես, բարձր գիտական արդյունավետություն ունի դատավարության տիպաբանության Ա.Վ. Սմիրնովի հայեցակարգը:

Ա.Վ. Սմիրնովը նշում է. «դատավարության տեսության մեջ որպես իդեալական տիպեր հանդես են գալիս մրցակցային և հետախուզական դատավարությունների հասկացությունները: Ներկայում ոչ մի իրական քրեադատավարական համակարգի բնորոշ չեն մրցակցային կամ հետախուզական ընթացակարգերը՝ բացարձակ մաքուր տեսքով: Գատավարության ցանկացած պոզիտիվ ընթացակարգ, ի տարբերություն իդեալականի, պատմական հավելումների արդյունք է, որոնք այս կամ այն չափով մարմնավորում են նշված երկու մոդելները»¹:

Այս առումով մրցակցության դատավարական սկզբունքը կարող ենք ընկալել որպես հիմնարար, ելակետային և ղեկավար հիմնադրույթ, որն ընդգծում է մրցակցային տիպատարրերի որակական և քանակական գերակայությունը հետախուզական տիպատարրերի նկատմամբ՝ միաժամանակ չբացառելով վերջիններս:

Ավելին, անգամ ՀՀ քր.դատ.օր. 23 հոդվածով ամրագրված մրցակցության սկզբունքի ձևակերպման վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ քննարկվող սկզբունքը ներառում է ոչ միայն գուտ մրցակցային, այլ նաև դրանց տրամաբանական հակադրությունը հանդիսացող հետախուզական տարրեր: Խոսքը վերաբերում է ապացուցման

¹ Տե՛ս **Ռի Էժիա Ա.Ա. Ի** iāaēē oāiēiāiāi iđiōānna, **ՌԻ** á, 2000, էջ 14:

գործընթացում դատարանի ակտիվ դերի ղեկավար կարգադրագրին, որը հետախուզական դատավարությանը բնորոշ հիմնադրույթ է¹:

Վերաքննության ինստիտուտում մրցակցային և հետախուզական տիպատարրերի հարաբերակցությունը բացահայտելու համար անհրաժեշտ է դրանք ուսումնասիրել առանձին:

Մասնավորապես, իրենց էությանը մրցակցային են վերաքննության հետևյալ հատկանիշները.

ա) Վերաքննիչ դատարանը գործը քննության է առնում բացառապես կողմերից մեկի կամ մի քանիսի ներկայացրած վերաքննիչ բողոքի հիման վրա: Գատարանն իրավունք չունի սեփական նախաձեռնությամբ իրականացնել գործի կրկնակի քննություն և լուծում:

բ) Գատարանը, մեղադրանքի և պաշտպանության կողմերն օժտված են ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ առանձնացվածությամբ:

գ) Գործի վերաքննիչ վերանայման ընթացքում մեղադրանքի և պաշտպանության կողմերն օժտված են հավասար դատավարական իրավունքներով:

դ) Վերաքննիչ ատյանի դատարանում ապացույցները կարող են հետազոտվել անմիջականորեն, կարող են ներկայացվել նոր ապացույցներ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, վերաքննիչ վարություն առկա են նաև հետախուզական տարրեր: Այսպես՝

ա) Վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքով և կարող է գործն ըստ էության քննել ամբողջ ծավալով:

բ) Որոշ դեպքերում կողմերի ինստիտուցիոնալ-ֆունկցիոնալ տարանջատվածությունը կարող է բացակայել կամ ամբողջական չլինել²:

գ) Գատարանն ունի սեփական նախաձեռնությամբ նոր ապացույցներ հավաքելու իրավունք:

¹ Տե՛ս, օրինակ, «**Νόααίáγ áεαñoü**» / **ιiá** δáá. **Է.Է. Ի** áððóεéiá, **Ի** ., 2003, էջ 265:

² Կողմերի ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ տարանջատվածությունը կբացակայի այն դեպքում, եթե վերաքննիչ դատարանում դատախազը պաշտպանի ամբաստանյալի դիրքորոշումը, օրինակ՝ վերաքննիչ բողոք բերի ի շահ ամբաստանյալի, և տվյալ գործով ոչ ոք տուժող ճանաչված չլինի: Իսկ եթե քննարկվող իրավիճակում որևէ անձ ճանաչված չլինի որպես տուժող և նա, օրինակ, վերաքննիչ բողոք բերի՝ պահանջելով բեկանել արդարացման դատավճիռը և կայացնել մեղադրական դատավճիռ, ապա վերաքննիչ դատարանում կողմերի ինստիտուցիոնալ-ֆունկցիոնալ տարանջատվածությունն ամբողջական չի լինի:

եզրակացնել, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանը կրում են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման պարտականություն:

Այսպես, ըստ ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվ. 1-ին մասի՝ «քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով **խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը**, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա» (ընդգծումը մերն է - Ռ.Մ.):

Այլ կերպ ասած՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում չիրականացնելը, հետևաբար՝ դատարանի կողմից մեղադրանքի կամ պաշտպանության գործառույթին բնորոշ գործողություններ չկատարելը կարող է համարվել դատավարական իրավախախտում:

Խորհրդային օրենսդրության տրամաբանության արտացոլում կարելի է համարել նաև ՀՀ քր.դատ.օր. 2 հոդվ. 2-րդ մասում ամրագրված քրեական դատավարության անմիջական խնդիրների ձևակերպումը. «Քրեական դատավարություն իրականացնող մարմինները **պարտավոր են** ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում՝ (1) քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և ... պատասխանատվության ենթարկվի...» (ընդգծումը մերն է - Ռ.Մ.):

Այսինքն՝ դատարանը, որպես քրեական դատավարություն իրականացնող մարմին, որոշակի դեպքերում կրում է գործով ճշմարտության բացահայտման պարտականություն:

Կարծում ենք, քննարկվող հարցի կապակցությամբ օրենսդրի դիրքորոշման փոփոխությունը հստակորեն և հետևողականորեն արտահայտելու համար անհրաժեշտ է «գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում» հասկացությունը հանել ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածի տեքստից, իսկ ՀՀ քր.դատ.օր. 2 հոդվ. 2-րդ

մասի 1-ին կետով ամրագրված պարտականությունը կրող սուբյեկտների շրջանակից դուրս թողնել դատարանը:

Ընդհանուր առմամբ գնահատելով վերաքննիչ վարույթի դատավարական ձևը՝ ՀՀ քրեական դատավարությունում վերաքննությունը կարող ենք համարել առավելապես մրցակցային:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ ՀՀ դատախազության և փաստաբանության ինստիտուտների զարգացման ներկայիս մակարդակը թույլ է տալիս վերաքննիչ վարույթում մրցակցային տիպային տարրերի «տեսակարար կշիռը» մեծացնել ի հաշիվ հետախուզական տիպատարրերի¹: Դա հնարավորություն կտա խորացնել դատավարական գործառույթների տարանջատումը և որպես հետևանք՝ բարձրացնել ընդհանրապես քրեական դատավարության և մասնավորապես վերաքննիչ վարույթի մասնակիցների մասնագիտական գործունեության արդյունավետությունը:

5. *Դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության* (nec peius) քրեադատավարական ինստիտուտի իրավական նշանակության մասին մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ²: Տարակարծությունների հիմնական պատճառն այս իրավական կարգադրագրի գործողության շրջանակի հարցն է:

Դատավարագետների մի մասը գտնում է, որ քննարկվող կանոնի գործողությունը բացառապես տարածվում է պաշտպանության կողմի բողոքներով դատական վերանայման կարգի և արդյունքների վրա: Այս առումով դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության նշանակությունը հանգում է պաշտպանության կողմի բողոքարկման ազա-

¹ Մասնավորապես, ա) դատարանի նախաձեռնությամբ հավաքված ապացույցները չպետք է դրվեն ամբաստանյալի վիճակը վատթարացնող վերջնական որոշման հիմքում, բ) գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշումը պետք է կայացվի դիսպոզիտիվության սկզբունքով՝ բացառապես որևէ կողմի միջնորդության հիման վրա: Այս հարցերը կքննարկվեն սույն աշխատանքի 3-րդ գլխում:

² Օրինակ՝ Մ.Ս. Ստրոգովիչը, Ի.Գ. Պերլովը, Մ.Մ. Գրոդզինսկին, Ա.Լ. Ռիվլինն այն համարում են «խորհրդային վճռաբեկության հիմնական հատկանիշ», Ռ.Գ. Ռախունովը, Յա.Օ. Մոտովիլովերը, Ա.Լ. Ռիվլինը, Է.Ֆ. Շեյֆնոն, Ն.Յա. Կալաշնիկովան, Ե.Գ. Մարտինչիկը՝ «սկզբունք», Ն.Յա. Կալաշնիկովան, Պ.Ֆ. Պաշկևիչը, Է.Ֆ. Կուցովան՝ «քրեադատավարական երաշխիք»: Տե՛ս **Аї ді ааеї еєї а І .А. Чаї дао ї даї аааї ааї еї є ооаөаї о а нї ааоөеїї оаї еї аї ї ї ді оаӧӧа, Бди ӧеӧӧеӧ, 1976, էջ 80:**

տությունը, հետևաբար՝ մեղադրյալի պաշտպանության իրավունքը երաշխավորելուն¹:

Գատավարագետների մյուս խումբը քննարկվող ինստիտուտն ավելի լայն է հասկանում՝ դրա գործողությունը տարածելով նաև մեղադրանքի կողմի բողոքներով դատարանի վերջնական որոշումների ստուգման կարգի և արդյունքների վրա:

Այսպես, Տ.Վ. Ալշևսկին գրում է, որ դատախազի ցանկացած բողոք չէ, որ վերադաս դատարանին իրավունք է տալիս դատավճիռը բեկանել պատժի մեղմության հիմքով, այլ միայն այն բողոքը, որը բերվել է այդ նույն հիմքով²:

Մ.Ա. Վորոբեյնիկովը գտնում է, որ դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության դերը մեղադրյալի կողմից դատավճիռի բողոքարկման ազատությանը հանգեցնելն անբավարար է, և այդ արգելքը պետք է ներառի նաև մեղադրանքի կողմի սուբյեկտի բողոքում նշված հիմքերից տարբերվող հիմքով մեղադրյալի վիճակը վատթարացնող որոշում կայացնելու անթույլատրելիության կանոնը³:

Գեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության նշված հիմքը Մ.Ա. Վորոբեյնիկովը համարում է մեղադրանքի ծավալն իմանալու մեղադրյալի իրավունքի, հետևաբար՝ դարձյալ մեղադրյալի պաշտպանության իրավունքի երաշխիք: Ռուս դատավարագետը փաստում է, որ «ծանոթանալով դատախազի կամ տուժողի՝ դատարան ներկայացված բողոքին՝ մեղադրյալը հենց դրանից է իմանում, թե ինչի դեմ պետք է պաշտպանվի»⁴:

Մեր կարծիքով՝ դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության նշանակությունը չի սահմանափակվում մեղադրյալի պաշտպանության իրավունքի երաշխիքը լինելով: Լրիվ վերաքննության պայմաններում, երբ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքով, ուր բեկանելու սկզբունքը մրցակցության սկզբունքի կարևոր երաշխիք է, քանի

¹ Տե՛ս **Άστυάδει Ε.Ι .** *Í αὶ δααεία έα νόαῖι δαίεῖαίῖαῖ ααεία ία αῖνεαῖααίααί έα, Ἰ ., 1960, էջ 145:*

² Տե՛ս **Άστυάδει Ε.Α.** *Ἰ δαααείν ἰδαα νόαα ἰδε δανῖι ἰδδαίεε δαίεῖαίῖαῖ ααεία á εαῖῖαδῖεῖῖῖῖ ἰῖδῖαεία è á ἰῖδῖαεία ίααείδῖα // Νῖααδῖεῖά αῖνόααδῖνοαί è ἰδῖααί, 1956, N6, էջ 76:*

³ Տե՛ս **Άῖδῖααείεεῖα Ἰ .Α.** նշված աշխատությունը, էջ 16, 48-66:

⁴ Տե՛ս **Άῖδῖααείεεῖα Ἰ .Α.** նշված աշխատությունը, էջ 15:

որ էապես սահմանափակում է մեղադրական գործառույթ իրականացնելու դատարանի հնարավորությունը:

Ինչպես նշել ենք, ՀՀ քր.դատ.օր. 2-րդ գլխում դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության կանոնը՝ որպես ՀՀ քրեական դատավարության սկզբունք, ամրագրված չէ: Այն սահմանված է վերաքննիչ և վճռաբեկ վարույթը կանոնակարգող բաժիններում՝ տարբեր հոդվածներով:

Այսպես, ՀՀ քր.դատ.օր. 400 հոդվածը սահմանում է, որ «(1) Արդարացման դատավճիռը վերաքննիչ դատարանը կարող է բեկանել՝ կայացնելով մեղադրական դատավճիռ՝ ամբաստանյալի արդարացումն անհիմն լինելու մասին դատախազի, տուժողի կամ նրա ներկայացուցչի բողոքով: (2) Արդարացման դատավճիռն արդարացվածի բողոքով կարող է փոփոխվել արդարացման հիմքերի մասով»:

ՀՀ քր.դատ.օր. 399 հոդվ. 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն ամբաստանյալին կարող է նշանակել առաջին ատյանի դատարանի դատավճռով նախատեսվածից ավելի խիստ պատիժ միայն այն դեպքում, երբ տվյալ հիմքով բողոքը բերել է դատախազը, ինչպես նաև տուժողը կամ նրա ներկայացուցիչը:

ՀՀ քր.դատ.օր. 397 հոդվ. 3-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանն իրավունք ունի գործի քննության արդյունքներով առաջադրված մեղադրանքի սահմաններում կիրառել ավելի ծանր հանցագործության համար օրենք կամ նշանակել ավելի խիստ պատիժ միայն այն դեպքում, երբ այդ հիմքերով բողոք է բերել մեղադրողը, ինչպես նաև տուժողը կամ նրա ներկայացուցիչը»:

Հարցի ոչ միասնական կարգավորումը որոշակի բացեր է թողնում:

Օրինակ՝ ՀՀ քր.դատ.օր. 400 հոդվածի կարգավորման առարկայից օրենսդիրը դուրս է թողել քրեական գործը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների բողոքարկման հետ կապված դատավարական հարաբերությունները:

Բացի այդ, հնարավոր է, որ ամբաստանյալին առաջադրված լինի մեղադրանք երկու հանցագործությունների համակցությամբ, և առաջին ատյանի դատարանը կայացրած լինի մեղադրական դատավճիռ՝ մեղադրանքներից մեկով ամբաստանյալին մեղավոր ճանաչելով, իսկ մյուսով՝ անմեղ:

Եթե նման մեղադրական դատավճիռն առաջին մեղադրանքի մասով վերաքննության կարգով բողոքարկվի մեղադրողի կողմից պատժի անարդարացիության հիմքով, և վերաքննիչ դատարանը հանգի այն հետևությանը, որ երկրորդ մեղադրանքի մասով թույլ է տրվել քրեադատավարական օրենքի էական խախտում (օրինակ՝ ապացուցողական զանգվածից դուրս է թողնվել թույլատրելի մեղադրական ապացույց), ապա այն կարող է բեկանել դատավճիռը և կայացնել նոր մեղադրական դատավճիռ՝ ամբաստանյալին մեղավոր ճանաչելով առաջադրված երկու մեղադրանքների համար:

Մեր կարծիքով՝ դեպի վատթարացում շրջադարձի արգելքն արտահայտում է ՀՀ քրեական դատավարության հիմնական գծերից մեկը և հանդիսանում է դրա սկզբունքային հատկանիշներից մեկը, ուստի այն պետք է ամրագրվի քրեական դատավարության սկզբունքների շարքում:

Դրա հետ մեկտեղ, ուր բուս սկզբունքի միասնական և ընդհանուր կարգավորումը կբացառի օրենսդրական բացերը:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք ՀՀ քր.դատ.օր. 2-րդ գլուխը լրացնել նոր հոդվածով՝ «Դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիությունը» վերտառությամբ և հետևյալ բովանդակությամբ. «Ամբաստանյալի նկատմամբ կայացված վերջնական որոշումը վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանում կարող է բեկանվել կամ փոփոխվել ի վնաս ամբաստանյալի միայն այն դեպքում, եթե նույն հիմքով վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք է բերել դատախազը, տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը կամ իրավահաջորդը»:

Վերաքննիչ վարույթում քրեադատավարական սկզբունքների իրացման մեխանիզմների հետազոտության արդյունքներն ընդհանրացնելով՝ կարող ենք նշել հետևյալը.

1. Վերաքննիչ վարույթում օրինականության սկզբունքի անշեղ գործողությունն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել դատավարական հարաբերությունների հստակ, անհակասական ու անթերի իրավական կանոնակարգում, վերացնել օրենսդրական բացերը և իրավաբանական տեխնիկայի թերությունները: Դրան է ուղղված ՀՀ քր.դատ.օր. 390 հոդվ. 1-ին մասը հետևյալ կերպ վերաշարադրելու մեր առաջարկը. «Վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատար-

վում է սույն գլխում շարադրված կանոններով, ինչպես նաև առաջին ատյանի դատարաններում գործերի քննության համար սահմանված կանոններով, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխում»:

2. Դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման իրավունքի, դատավարության ողջամիտ տևողության և դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության ղեկավար հիմնադրույթներն անհրաժեշտ է ամրագրել ՀՀ քր.դատ.օր. 2-րդ գլխում որպես քրեական դատավարության ինքնուրույն սկզբունքներ:

3. Անհրաժեշտ է նախատեսել վերաքննիչ վարույթում այդ սկզբունքների իրացման գործուն երաշխիքներ: Մասնավորապես, նպատակահարմար է օրենքով սահմանել անհարկի կամ չափազանց երկար ժամանակահատվածով գործի քննությունը չհետաձգելու և դատական նիստը չընդմիջելու՝ վերաքննիչ դատարանի պարտականությունը:

4. Գնահատելով վերաքննիչ վարույթում մրցակցային և ինկվիզիցիոն տիպային տարրերի որակական և քանակական հարաբերակցությունը՝ կարող ենք փաստել, որ գերակայում են մրցակցային տիպատարրերը, և դրանց տեսակարար կշիռը ենթակա է էլ ավելի մեծացման:

ԳԼՈՒԽ 2.

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՈՒՅԹԻ ՍԿՋԲՆԱԿԱՆ ՄԱՍ

§ 1. Վերաքննիչ բողոքի հասկացությունը և նշանակությունը

Վերաքննիչ վարույթի վերաքննիչ բողոքարկման ենթափուլում ընթացող դատավարական իրավահարաբերությունների առանցքը վերաքննիչ բողոքն է՝ վերաքննիչ վարույթի հիմքը և այն «շարժող ելակետը»¹:

ՀՀ քր.դատ.օր. 6 հոդվածը, որ ամրագրում է օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունների սահմանումները, «վերաքննիչ բողոք» հասկացությանը չի անդրադառնում, թեև «վերաքննիչ բողոք» վերտառությունն է կրում ՀՀ քր.դատ.օր. 46-րդ գլուխը:

Ռուսաստանի կայսրության իրավաբանական գրականության մեջ վերաքննիչ բողոքն ընդհանուր ձևով բնութագրվում էր որպես դատարանի օրինական ուժի մեջ չմտած որոշումներն ամբողջությամբ կամ որոշակի մասով վերանայելու խնդրանք²:

Ժամանակակից դատավարագետները ևս պատշաճ ուշադրություն չեն դարձնում «վերաքննիչ բողոք» հասկացության սահմանմանը և դրա հատկանիշների ուսումնասիրմանը՝ փոխարենը մանրամասն վերլուծելով «վերաքննիչ բողոքարկման նախադրյալները»³:

Մեր կարծիքով՝ իրավաբանական գրականության մեջ տեղ գտած «վերաքննիչ բողոքարկման նախադրյալները»՝ վերաքննիչ բողոքարկման առարկան, վերաքննիչ բողոք բերելու ժամկետը, վերաքննիչ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը և վերաքննիչ բողոքի ձևը և բովանդակությունը հանդիսանում են «վերաքննիչ բողոքի» հասկացության հատկանիշներ: Այս առումով վերաքննիչ բողոքարկման միակ նախադրյալ կարող է համարվել վերաքննիչ բողոքը:

Միևնույն ժամանակ, «վերաքննիչ բողոք» հասկացության հատկանիշները չեն սահմանափակվում վերաքննիչ բողոքարկման նախադր-

¹ Տե՛ս **Deaer A.E.** *Ī adānī īōđ ī deāīāī dīā ā NĪNĪ, Ī ., 1958*, էջ 167:

² Տե՛ս **Āōōīānēē Ī .Ā.** նշված աշխատությունը, էջ 387:

³ Տե՛ս **Āēīāēīā Ā.E.** նշված աշխատությունը, էջ 79-106, **Āīōēnīāā Ā.A.** *Āī āēēyōēy ā ādāēāī nēīī (ādāēōdāēīī) ī dīōānīā, Ī ., 2000*, էջ 64-88:

յալներով. այն օժտված է այլ հատկանիշներով ևս (օրինակ՝ առաջացում է որոշակի իրավական հետևանքներ):

Վերոգրյալի հիման վրա, կարծում ենք, անհրաժեշտ է խորը գիտական վերլուծության ենթարկել «վերաքննիչ բողոք» հասկացությունը, որն արտահայտում է վերաքննիչ վարույթի հիմքը, ինչպես նաև մեծապես կանխորոշում է վերաքննիչ վերանայման ընթացքը և արդյունքները:

Ելնելով ՀՀ քր.դատ.օր. 10-րդ բաժնում ամրագրված իրավական նորմերից՝ կարող ենք առանձնացնել վերաքննիչ բողոքի հետևյալ հատկանիշները.

1. Վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն որոշակի շրջանակի դատավարական որոշումների դեմ, որոնք կազմում են *վերաքննիչ բողոքարկման առարկան*:

Վերաքննիչ բողոքարկման առարկայի մեթոդաբանորեն ճիշտ սահմանումն այն անհրաժեշտ միջոցն է, որը վերաքննության ինստիտուտի համար կարող է ապահովել իր էությունից բխող տեղ և դեր քրեական դատավարությունում:

Պրակտիկայում վերաքննիչ բողոք ասելով՝ հաճախ հասկանում են դատավարական որոշումների դեմ վերաքննիչ դատարան բերվող բոլոր բողոքները: Մինչդեռ վերաքննիչ բողոքարկման առարկան կազմող դատավարական որոշումների շրջանակը, որպես «վերաքննիչ բողոք» հասկացության հատկանիշ, հստակ տարբերվում է վերաքննիչ դատարան բողոքարկման ենթակա որոշումների շրջանակից: Վերջինն ավելի լայն է և ընդգրկում է նաև այնպիսի դատավարական որոշումներ, որոնց բողոքարկման և ստուգման ընթացքում վերաքննության մեխանիզմը չի կարող գործադրվել, օրինակ՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին, գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումները:

Ուստի բողոքարկման յուրահատուկ առարկան ոչ միայն բնութագրում է «վերաքննիչ բողոք» հասկացությունը, այլև արտահայտում է վերաքննության ինստիտուտի էությունը՝ ուրվագծելով վերաքննության մեխանիզմի գործառնության հնարավոր սահմանները¹:

¹ Վերաքննիչ բողոքարկման առարկայի հետ կապված հարցերն ավելի հանգամանորեն կքննարկվեն սույն գլխի §2-ում:

2. Վերաքննիչ բողոք բերելու համար նախատեսված է որոշակի *ժամկետ*: Այն կարող է բերվել առաջին ատյանի դատարանի միայն ուժի մեջ չմտած դատավճիռների և որոշումների դեմ (ՀՀ քր.դատ.օր. 376 հոդվ. 1-ին մաս): Եթե դատավճիռը կամ որոշումն արդեն մտել է օրինական ուժի մեջ, ապա ընդհանուր կանոնի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերելու՝ համապատասխան սուբյեկտների իրավունքը դադարում է: Այսպիսով, վերաքննիչ ժամկետն օրենքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում թույլատրվում է վերաքննիչ բողոք բերել:

Համաձայն ՀՀ քր.դատ.օր. 379 հոդվածի 1-ին մասի՝ «Վերաքննիչ բողոք բերվում է առաջին ատյանի դատարանի դատավճռի հրապարակվելու օրվանից 15 օրվա ընթացքում»: Իսկ ըստ 427 հոդվածի՝ «Առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, եթե այն բողոքարկված չի եղել»:

Վերաքննիչ բողոքարկման ողջամիտ ժամկետի սահմանումը կարևոր նշանակություն ունի վերաքննության ինստիտուտի արդյունավետության համար: Ինչպես նշել է Գ.Ժիլինը, վերաքննիչ ժամկետի ողջամտությունը ենթադրում է գործով մասնակցող բոլոր անձանց շահերի հավասարակշռված հաշվառում, որպեսզի բացառվի դատարանի վերջնական որոշման ուժի մեջ մտնելու անհիմն ուշացումը՝ մի կողմից, և բողոք բերելու անհամաչափ բարդությունները՝ մյուս կողմից¹:

Մասնավորապես, վերաքննիչ ժամկետը ճիշտ սահմանելու համար անհրաժեշտ է կողմերին բավարար ժամանակ տրամադրել՝

- ա) վերաքննիչ բողոքը նախապատրաստելու համար,
- բ) բնակության վայրից վերաքննիչ դատարանի նստավայր հասնելու համար²:

Նշված գործողությունները կատարելու համար անհրաժեշտ և բավարար ժամանակահատվածի տևողությունը պայմանավորված է նաև այդ ժամկետի հաշվարկման սկզբնապահի ողջամիտ սահմանմամբ:

¹ Տե՛ս **Евсеев А. А.** *Академия: иurisdictio // Юр-бюллетень*, 2003, N5, էջ 26:
² Տե՛ս **Айдемьян А. А.** *Академия: иurisdictio (адвокатские) иurisdictio, I ..*, 2000, էջ 74:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ վերաքննիչ բողոքարկման ժամկետի հաշվարկը սկսվում է առաջին ատյանի դատարանի դատավճռի հրապարակման օրվանից:

Ի տարբերություն ՀՀ քր.դատ.օր.-ի՝ ՌԴ-ի քրեադատավարական օրենսդրությունն այս ընդհանուր կանոնից բացառություն է նախատեսում կալանքի տակ պահվող դատապարտյալների համար՝ այդ սուբյեկտների կողմից վերաքննիչ բողոք բերելու ժամկետի սկզբնապահ համարելով առաջին ատյանի դատարանի դատավճռի պատճենը նրանց հանձնելու օրը (ՌԴ-ի քր.դատ.օր. 356 հոդվ.):

Այս բացառությունը ՌԴ-ի դատավարագետները բացատրում են այն հանգամանքով, որ կալանավորված լինելով՝ անձը հնարավորություն չունի սեփական նախաձեռնությամբ ստանալ դատական որոշման պատճեն, ուստի և վերաքննիչ բողոքարկման իրավունքից նրանց օգտվելը կախված է դատարանից այդ փաստաթղթի ուղարկման ժամկետից¹:

Մեր կարծիքով՝ առանձին սուբյեկտների համար վերաքննիչ բողոքարկման ժամկետի հաշվարկման հատուկ կարգ սահմանելը կարող է որոշակի բարդություններ առաջացնել: Մասնավորապես այդպիսի կարգավորումը կարող է անհստակություն մտցնել դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետի հարցում:

Բացի այդ, ամբաստանյալի մասնակցությունն առաջին ատյանի դատարանում գործի քննությանը պարտադիր է, և նա կարող է անմիջականորեն ընկալել թե՛ դատարանի վերջնական որոշման բովանդակությունը² և թե՛ դրա հիմքում դրվող ապացույցները, ուստի անկախ դա-

¹ Տե՛ս **Айдемьян А. А.** նշված աշխատությունը, 2004, էջ 81:
² Հարկ է նշել, որ ի տարբերություն ՀՀ քրեադատական դատավարության օրենսգրքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի նախատեսել դատարանի իրավունքը հրապարակելու վերջնական որոշման միայն եզրափակիչ մասը: Ընդհանուր կանոնից արվել է միայն մեկ բացառություն. ՀՀ քր.դատ.օր. 16 հոդվ. 4-րդ մասի համաձայն՝ «Դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանի որոշման հիման վրա կարող են հրապարակայնորեն հայտարարվել դատավճռի կամ այլ վերջնական որոշման միայն ներածական և եզրափակիչ մասերը. չեն հրապարակվում այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել դռնփակ դատական քննություն անցկացնելու համար»: Հետևաբար որպես կանոն դատարանը պարտավոր է հրապարակել դատավճիռն ամբողջությամբ: Սակայն ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դատարանները համատարած չեն հրապարակում դատավճիռների նկարագրական-պատճառաբանական մասը:

տավճռի պատճենի ստացման ժամկետից՝ արդեն դատավճռի հրապարակման օրն ամբաստանյալը կարող է ունենալ բոլոր հիմքերը վերաքննիչ բողոք բերելու համար:

Վերագրյալի հիման վրա՝ կարծում ենք, որ դատավճռի հրապարակման օրվանից հաշված վերաքննիչ բողոքարկման 15-օրյա ընդհանուր ժամկետը լրիվ բավարար է վերաքննիչ բողոք բերելու մտադրություն ունեցող յուրաքանչյուր սուբյեկտի կողմից անհրաժեշտ նախապատրաստական գործողություններ կատարելու համար:

Նշված ժամկետը լրանալուց հետո առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների կողմից պահվ վարքագիծ դրսևորելու և իրենց այդ իրավունքից չօգտվելու դեպքում տվյալ գործով վարույթը թևակոխում է վերջին՝ դատական որոշումների կատարման փուլ՝ շրջանցելով, մասնավորապես, վերաքննիչ ատյանում վարույթի փուլը:

Այնուհանդերձ, օրենքը նախատեսել է գործը դատական որոշումների կատարման փուլից վերաքննիչ վարույթ վերադարձնելու հնարավորություն՝ որպես վերաքննիչ բողոքարկման լրացուցուցիչ երաշխիք: ՀՀ քր.դատ.օր. 380 հոդվածի համաձայն՝ «Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատավճիռ կամ որոշում կայացնող դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը»:

3. Վերաքննիչ բողոքը պետք է համապատասխանի օրենքով դրա *ձևին և բովանդակությանը* ներկայացվող պահանջներին:

Կարելի է առանձնացնել վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների հետ կապված օրենսդրի մոտեցման երկու հայեցակարգ.

ա) *Մեղմ մոտեցում*: Բողոք կարող է բերվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ձևով՝ տվյալ առաջին ատյանի դատարանի արձանագրության մեջ մտցնելով: Հատուկ պահանջներ բողոքի բովանդակությանը չեն ներկայացվում. այն կարող է պարունակել որոշակի հիմնավորումներ, կարող է և չպարունակել: Բողոքը կարող է սահմանափակվել որոշակի կետերով, և այդ դեպքում դատավճիռը ենթակա է վերանայման միայն բողոքարկվող մասով: Այն դեպքում, երբ բողոքը

կոնկրետ կետերի վերաբերյալ նշում չի պարունակում, ապա դատավճիռը համարվում է ամբողջությամբ բողոքարկված: Այս մոտեցումը որդեգրել է գերմանական օրենսդիրը, և վերը նշված կանոններն ամրագրված են Գերմանիայի քրեական դատավարության օրենսգրքի §314-ում և այլ պարագրաֆներում:

ՌԽՖՍՀ 1922թ. քր.դատ.օր.-ը, ՀԽՍՀ 1923 քրեական դատավարության օրենսգրքերը և խորհրդային մյուս հանրապետությունների քրեական դատավարության առաջին օրենսգրքերը ևս մեղմ պահանջներ էին ներկայացնում վճռաբեկ բողոքի բովանդակությանը: Վերլուծելով ՌԽՖՍՀ 1922թ. քր.դատ.օր.-ը՝ Ա.Լ. Ռիվիինը կարծիք է հայտնում, որ պատշաճ սուբյեկտից ելնող, պատշաճ դատարանին հասցեագրված և կայացված դատավճռի վերանայման խնդրանք պարունակող հասարակ դիմումը լրիվ բավարար է գործով վճռաբեկ վարույթ հարուցելու համար¹:

բ) *Խիստ մոտեցում*: Բողոքը պարտադիր պետք է ներկայացվի գրավոր ձևով: Այն նաև պետք է բովանդակի օրենքով սահմանված որոշակի տվյալներ, այդ թվում՝ բողոքի հիմքերը: Նման կարգ է նախատեսված ՀՀ քր.դատ.օր.-ով:

Այսպես, ՀՀ քր.դատ.օր. 381 հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի ... (5) բողոք բերող անձի հետևություններն այն մասին, թե որն է դատավճռի կամ այլ որոշման անճշտությունը և նրա բողոքի էությունը, (6) առկայության դեպքում՝ այն ապացույցները, որոնցով դիմողը հիմնավորում է իր պահանջները, և որոնք պետք է հետագոտվեն վերաքննիչ դատարանում, այդ թվում՝ նաև առաջին ատյանի դատարանում նախօրոք չհետագոտված ապացույցները»:

Վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը խիստ մոտեցում է ներկայացվում նաև Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ օրենսդրությամբ:

Օրինակ՝ ԱՄՆ դատավարական իրավունքի հիման վրա՝ վերաքննիչ բողոք բերելու մտադրություն ունեցող սուբյեկտը պետք է տասնօրյա ժամկետում դատավճիռը կայացրած դատարանին գրավոր տեղեկացնի որոշումը բողոքարկելու մտադրության մասին: Այնուհետև, 40

¹ Տե՛ս **Deaer A.E.** *Ī adāni ĩdđ ĩdēāi āi dī ā ā NÑÑĐ, Ī* .,1958, էջ 167-168:

օրվա ընթացքում բողոքարկողը պետք է գրավոր ներկայացնի իր դիրքորոշումը և այն հիմնավորող փաստաթղթերը¹:

Մեր կարծիքով, ավելի նպատակահարմար է պահպանել վերաքննիչ բողոքի բովանդակության նկատմամբ խիստ մոտեցումը: Վերաքննիչ բողոքը լուրջ փաստաթուղթ է, և այն ներկայացնելու համար անձը պետք է որոշակի հիմքեր ունենա: Հակառակ դեպքում, ոչինչ չի խոչընդոտի, որ առաջին ատյանի դատավճռից դժգոհ կողմն ամեն դեպքում բողոքարկի կայացված վերջնական որոշումը: Դրա հետևանքով առաջին ատյանի կարգով գործի քննությունը կվերածվի վերաքննիչ ատյանում գործի քննության նախապատրաստության²:

3. Վերաքննիչ բողոքը կարող է բերվել միայն օրենքով նախատեսված *սուբյեկտների* կողմից: Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց և մարմիններին ըստ բողոքարկման իրավունքի ծավալի կարելի է դասակարգել երկու խմբի.

ա) *Բողոքարկման անսահմանափակ իրավունք ունեցող սուբյեկտներ*: Վերաքննիչ բողոք բերելու այս սուբյեկտների իրավունքն առարկայական սահմանափակումներ չունի: Ըստ ՀՀ քր.դատ.օր. 376 հոդվածի՝ այս խմբի մեջ մտնող սուբյեկտներն են ամբաստանյալը, արդարացվածը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, իսկ 2004թ. ապրիլի 3-ից³ նաև տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդը:

բ) *Բողոքարկման սահմանափակ իրավունք ունեցող սուբյեկտներ* են քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը, նրանց ներկայացուցիչները, ինչպես նաև տվյալ գործով կողմ չհանդիսացող անձը, եթե դատավճիռը կամ որոշումն առնչվում է նրա շահերին: Քանի որ այս սուբյեկտները քրեական դատավարությունում պաշտպանում են սեփական կամ ներկայացվող գույքային շահեր, ուստի օրենսդիրը վերաքննիչ բողոք բերելու նրանց իրավունքը սահմանափակել է միայն քաղաքացիական հայցի մասով:

¹ Տե՛ս **Άσφαίει Ε.Θ.** è äð. նշված աշխատությունը, էջ 276-277:

² Վերաքննիչ բողոքի բովանդակության հետ կապված հարցերը մանրամասն կլուսաբանվեն սույն գլխի §2-ում:

³ Այդ օրն ուժի մեջ է մտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ 2004թ. փետրվարի 18-ի օրենքը:

Այս խումբ սուբյեկտների շարքին է դասվում նաև մեղադրողը: ՀՀ քր.դատ.օր. 376 հոդվ. 2-րդ մասի հիման վրա՝ դատախազն իրավունք ունի քաղաքացիական հայցի մասով բողոքարկել դատավճիռը միայն այն դեպքում, երբ քաղաքացիական հայցը շոշափում է պետության գույքային շահերը:

Վերը նշված յուրաքանչյուր սուբյեկտ վերաքննիչ բողոքարկման իրավունքը կարող է իրացնել որոշակի ընդհանուր և հատուկ պայմանների հիման վրա, որոնք բխում են այդ սուբյեկտի դատավարական կարգավիճակից¹:

4. Վերաքննիչ բողոքը բերվում է որոշակի *դատավարական կարգով*: Դատավարական փաստաթուղթը կարող է վերաքննիչ բողոք համարվել միայն այն դեպքում, եթե այն բերվել է օրենքով սահմանված որոշակի կարգի պահպանմամբ և ընդունվել է իրավասու դատական մարմնի կողմից²:

5. Վերաքննիչ բողոքն իրավական ակտ է, որն առաջացնում է որոշակի իրավական *հետևանքներ*: Պոզիտիվ (դրական) առումով վերաքննիչ բողոք բերելու փաստով հարուցվում է վերաքննիչ վարույթ, որի հետևանքով առաջանում են բազմաբնույթ իրավական հարաբերություններ վերաքննիչ վարույթին մասնակցող սուբյեկտների միջև: Նեգատիվ (բացասական) առումով վերաքննիչ բողոքի ամենակարևոր իրավական հետևանքը բողոքարկվող դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու կասեցումն է:

Եթե Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքերն օգտագործում են «օրինական ուժի մեջ մտնելու կասեցում» արտահայտությունը, ապա Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքը նախապատվությունը տվել է «դատավճիռների կատարման կասեցում» եզրույթին (ՌԴ քր.դատ.օր. 359 հոդվածի 1-ին մաս):

Մեզ առավել ճշգրիտ է թվում ՀՀ քր.դատ.օր.-ի ձևակերպումը, քանի որ դատավճռի կատարման փուլը՝ որպես քրեական դատավարության

¹ Վերաքննիչ բողոքարկման սուբյեկտների հետ կապված հարցերն ավելի հանգամանորեն կքննարկվեն սույն գլխի §3-ում:

² Վերաքննիչ բողոքարկման կարգի հետ կապված հարցերը մանրամասն կլուսաբանվեն սույն գլխի §4-ում:

ինքնուրույն փուլ, իբրև դատավարության սուբյեկտների գործունեություն, կարող է սկսվել միայն դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, ուստի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու կասեցման պայմաններում դրա կատարման մասին խոսելն ավելորդ է:

Մյուս կողմից, եթե օրենքն օգտագործի «դատավճռի կատարում» կամ «դատավճռի կատարման կասեցում» արտահայտությունները, ապա այդ հասկացությունը կարտահայտի օրինական ուժի մեջ մտած դատավճիռները, ինչը, կարծում ենք, անընդունելի է դատավճռի վերաքննիչ բողոքարկման մասին խոսելիս:

ՌԴ քր.դատ.օր. 359 հոդվ. 1-ին մասում սահմանված կանոնից օրենսդիրը նախատեսել է մի կարևոր բացառություն՝ դատավճռի կատարման կասեցումը չտարածելով առաջին ատյանի դատարանի նիստի դահլիճից օրենքով նախատեսված դեպքերում կալանքից ազատ արձակված ամբաստանյալների վրա:

Անհրաժեշտ է նշել, որ քննարկվող վերապահման բացակայությունը ՀՀ իրավակիրառական պրակտիկայում խնդիրներ չի առաջացնում: Եթե բողոքարկված է առաջին ատյանի դատարանի այն դատավճիռը, որով դատարանի դահլիճից ամբաստանյալն ազատ է արձակվել, ապա դա պրակտիկայում չի հանգեցնում մինչև դատավճռի կայացումը եղած վիճակի վերականգնմանը:

Սակայն հետագայում խնդիրներից խուսափելու և ՀՀ քր.դատ.օր.-ում հստակություն մտցնելու նպատակով, մեր կարծիքով, ճիշտ կլինի օգտագործել ՌԴ փորձը և ՀՀ քր.դատ.օր.-ում ամրագրել ՌԴ քր.դատ.օր. 359 հոդվ. 1-ին մասով նախատեսված վերապահումը, նկատի ունենալով, որ մարդու ազատության և անձեռնմխելիության հիմնարար իրավունքն ապահովող ոչ մի երաշխիք ավելորդ լինել չի կարող:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք ՀՀ քր.դատ.օր. 383 հոդվածի 1-ին մասը վերաշարադրել հետևյալ կերպ. «Դատավճռի բողոքարկումը կասեցնում է դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Դատավճռի բողոքարկումը չի ազդում սույն օրենսգրքի 374 հոդվածով նախատեսված որոշման կատարման վրա»:

Վերոգրյալն ամփոփելով՝ վերաքննիչ բողոքը կարող ենք սահմանել որպես ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով իրավասու անձանց և մարմինների կողմից առաջին ատյանի դատա-

րանի վերջնական որոշումների դեմ ներկայացվող դատավարական փաստաթուղթ, որը համապատասխանում է օրենքով դրա ձևին և բովանդակությանը ներակայացվող պահանջներին, կասեցնում է բողոքարկվող դատավճռի կամ որոշման օրինական ուժի մեջ մտնելը և առաջացնում է օրենքով նախատեսված այլ իրավական հետևանքներ:

Վերաքննիչ բողոքի *նշանակությունը* վերաքննիչ վարույթի հիմքը լինելով չի սահմանափակվում: Վերաքննիչ բողոք բերելու իրավունքն իրենից ներկայացնում է ամբաստանյալի պաշտպանության իրավունքի կարևոր երաշխիք: Քրեական դատավարությանը սեփական անձնական և գույքային շահերի պաշտպանությամբ հանդես եկող սուբյեկտների համար ևս վերաքննիչ բողոք բերելու իրավունքն այդ շահերի պաշտպանության արդյունավետ միջոց է: Իսկ մեղադրողը՝ որպես հանրային շահերը ներկայացնող սուբյեկտ, չի կարող պատշաճորեն պաշտպանել հանրային շահերն առանց վերաքննիչ բողոք բերելու իրավունքի:

Ուստի և՛ պաշտպանության, և՛ մեղադրանքի կողմը ներկայացնող սուբյեկտների համար վերաքննիչ բողոքարկման իրավունքը հանդիսանում է սեփական դատավարական գործառնության բխող և մասնավոր կամ հանրային շահերի պաշտպանությունն ապահովող գործունե երաշխիք:

Վերաքննիչ բողոքը կարևոր նշանակություն ունի նաև վերանայման ծավալի համար: Որոշ դատավարական համակարգերում վերաքննիչ բողոքի բովանդակությունը որոշում է գործի վերաքննիչ քննության սահմանները:

§ 2. Վերաքննիչ բողոքարկման առարկան և վերաքննիչ բողոքի բովանդակությունը

Վերաքննիչ բողոքարկման առարկայի ճիշտ սահմանումը և վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջների հստակ ամրագրումը հույժ կարևոր մեթոդաբանական նշանակություն ունի վերաքննության ինստիտուտին վերաբերող իրավահարաբերությունների կանոնակարգման համար:

Այլ կերպ ասած՝ քրեական դատավարության համակարգում վերաքննիչ վարույթի տեղը և դերը չի կարող համապատասխանել վե-

րաքննության էությանը, եթե վերաքննիչ բողոքարկման առարկան չափազանց լայն կամ նեղ սահմանվի կամ վերաքննիչ բողոքի բովանդակությանը չափազանց մեղմ պահանջներ նեկայացվեն:

Վերաքննիչ բողոքարկման առարկան կարող է դիտարկվել երկու տեսանկյուններից.

ա) *դատարանակազմական-դատավարական* առումով վերաքննիչ բողոքարկման առարկան սահմանող կանոններով որոշվում է, թե դատական ո՞ր օղակում կայացված ակտերն են կարող բողոքարկվել և ստուգվել վերաքննության կարգով: Քանի որ Հայաստանի Հանրապետությունում բոլոր քրեական գործերն առաջին ատյանի կարգով քննվում են դատական համակարգի ստորին օղակի դատարանների կողմից (ՀՀ դատարանակազմության մասին օրենքի 13 հոդվ. 1-ին մաս, ՀՀ քր.դատ.օր. 44 հոդվ.), իսկ վերջիններիս կայացրած դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարան (ՀՀ դատարանակազմության մասին օրենքի 18 հոդվ. 1-ին մաս, ՀՀ քր.դատ.օր. 45 հոդվ.), ուստի քննարկվող առումով վերաքննիչ բողոքարկման առարկան կազմում են միայն առաջին ատյանի դատարանների դատավարական որոշումները¹:

բ) *զուտ դատավարական* առումով վերաքննիչ բողոքարկման առարկան կարգավորող կանոններով սահմանվում է, թե առաջին ատյանի դատարանի ո՞ր որոշումները կարող են ենթարկվել վերաքննիչ վերանայման:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրության համադրման արդյունքում կարելի է առանձնացնել դատավարական առումով վերաքննիչ բողոքարկման առարկայի սահմանման երկու մոդել:

1. *Բացառման մոդելի* դեպքում օրենքով սահմանվում է առաջին ատյանի դատարանի այն դատավարական որոշումների շրջանակը, որոնք ենթակա չեն վերաքննիչ բողոքարկման: Մյուս դատավարական որոշումները կարող են բողոքարկվել վերաքննության կարգով: Օրի-

¹ Դատարանակազմական-դատավարական առումով վերաքննիչ բողոքարկման առարկայի հետ կապված հարցերն առավել մանրամասն ներկայացված են սույն աշխատանքի 1-ին գլխի §2-ում:

նակ՝ ՌԴ քր.դատ.օր. 355 հոդվ. 5-րդ մասում թվարկված են վերաքննիչ բողոքարկման ոչ ենթակա որոշումները: Դրանք են՝

ա) ապացույցների հետազոտման կարգի վերաբերյալ որոշումները.

բ) դատավարության մասնակիցների միջնորդությունները բավարարելու կամ մերժելու վերաբերյալ որոշումները.

գ) դատական նիստերի դահլիճում կարգուկանոնի պահպանման միջոցների վերաբերյալ որոշումները, բացառությամբ դրամական բռնագանձումների մասին որոշումների:

2. *Ամրագրման մոդելի* պայմաններում օրենքը սահմանում է այն դատավարական որոշումների շրջանակը, որոնք ենթակա են վերաքննիչ բողոքարկման: Օրինակ՝ ՀՀ քր.դատ.օր. 384 հոդվածի համաձայն՝ վերաքննության կանոններով բողոքարկման ենթակա են միայն դատարանի վերջնական որոշումները, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Մեր կարծիքով՝ նշված օրենսդրական մոդելներից նախապատվելի է երկրորդը: Այն հնարավորություն է տալիս խուսափել վերաքննիչ վերանայման մեխանիզմը գործադրելուց այն դեպքերում, երբ բացակայում է դրա անհրաժեշտությունը, և որպես հետևանք՝ զերծ մնալ դատավարական ձևի անհարկի բարդացումից, կատարել նյութական միջոցների ու դատավորների աշխատանքային ժամանակի խնայողություն:

Իրավաբանական գրականության մեջ ՌԴ քր.դատ.օր.-ով արտահայտված մոտեցումը քննադատության է ենթարկվել անհստակության հիմքով: Այսպես, Ե. Շերբատիխը գտնում է, որ օրենքի տառին համապատասխան՝ կարող են վերաքննիչ ստուգման առարկա դառնալ առաջին ատյանի դատարանի այնպիսի դատավարական որոշումներ, որոնց վերանայումն ակնհայտորեն չի համապատասխանում վերաքննության էությանը, օրինակ՝ վերաքննիչ բողոքը վերակազմման համար բողոքատուին վերադարձնելու մասին որոշումը¹:

Վերոգրյալի հիման վրա Ե. Շերբատիխն առաջարկում է բացառող սահմանման հետ մեկտեղ օրենքում նախատեսել նաև ամրագրող սահմանում հետևյալ բովանդակությամբ. «Դատավորի (հաշտարար դատավորի)՝ օրինական ուժի մեջ չմտած մյուս որոշումները ենթակա են

¹ См. Ушаков А. А. *И а ана ииоаиіаеаіеу і едїаїаї ոоаіе і іаеаеао аіаеу-оеіііі і о іаеаеіаіе* // *І а аіаіа. Чаеіі. І дааі ոоаеа*, 2005, N1, էջ 44-47:

բողոքարկման այն դեպքում, եթե դրանք կարող են վնաս հասցնել սահմանադրական իրավունքներին և ազատություններին կամ խոչընդոտել քաղաքացիների՝ արդարադատության մատչելիության իրավունքը»¹:

Վերաքննիչ բողոքարկման առարկայի սահմանման հարցում հայաստանյան օրենսդրի որդեգրած մոտեցումն ավելի մոտ է վերաքննության էության ճիշտ ընկալմանը, սակայն այն ևս զերծ չէ որոշակի անհստակությունից:

Այսպես, ՀՀ քր.դատ.օր. 384 հոդվ. համաձայն՝ սույն գլխի կանոններով (գլ. 46. «Վերաքննիչ բողոք») բողոքարկման ենթակա են միայն դատարանի վերջնական որոշումները, եթե օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Այսինքն՝ վերաքննիչ բողոքարկման առարկան բացահայտելու համար անհրաժեշտ է դիմել «դատարանի վերջնական որոշում» հասկացությանը, որը ՀՀ քր.դատ.օր. 6 հոդվածում սահմանված չէ: Գրափոխարեն ՀՀ քր.դատ.օր. 6 հոդվածի 10-րդ կետում ամրագրված է «վերջնական որոշում» հասկացության սահմանումը:

Մեր կարծիքով՝ «վերջնական որոշում» հասկացության սահմանման հետ մեկտեղ անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել նաև «դատարանի վերջնական որոշում» հասկացությունը:

Բանն այն է, որ վերջնական դատավարական որոշում կարող են ընդունել ոչ միայն դատարանները, այլ նաև մինչդատական վարույթ իրականացնող իրավասու պետական մարմինները և պաշտոնատար անձինք՝ հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը: Ընդ որում, մինչդատական և դատական վարույթներում կայացվող վերջնական որոշումների հիմնական ընդհանրությունն այն է, որ այդ ակտերով ավարտվում է տվյալ գործով քրեական դատավարությունը կամ տվյալ դատավարական փուլը, և նախադրյալներ են ստեղծվում գործով վարույթը քրեադատավարական նոր փուլ փոխադրելու համար: Ուստի «վերջնական որոշում» հավաքական հասկացությունը կարող է սահմանվել միայն ընդհանուր հասկացությունների միջոցով:

Այսպես, ըստ ՀՀ քր.դատ.օր. 6 հոդվածի 10-րդ կետի՝ վերջնական որոշման տակ անհրաժեշտ է հասկանալ «քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթն

¹ Տե՛ս **Մաճաթյան Ա.** Նույն տեղում, էջ 47:

սկսելը¹ կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության»: Ինչպես երևում է, սահմանման մեջ օգտագործված հասկացություններից յուրաքանչյուրն ինքնուրույն մեկնաբանման կարիք ունի:

Վիճակը սկզբունքորեն նույնն է նաև 1996թ. ԱՊՀ մոդելային քր.-դատ.օր. նախագծում, որի 10 հոդվածի 15-րդ կետը «ավարտական որոշումը» սահմանում է որպես «վարույթն իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը ... թեև ոչ վերջնականապես, բայց գործը լուծում է ըստ էության»²:

Ի տարբերություն «վերջնական որոշման»՝ «դատարանի վերջնական որոշում» հասկացությունը կարող է սահմանվել սպառիչ թվարկմամբ, և միայն նման սահմանումը կարող է հստակորեն արտահայտել օրենսդրի կամքը վերաքննիչ բողոքարկման ենթակա դատավարական որոշումների շրջանակի հարցում:

Այսպիսով, կարող ենք ձևակերպել վերաքննիչ բողոքարկման առարկայի հետ կապված հետևյալ հիմնահարցերը.

1. Առաջին ատյանի դատարանների ո՞ր դատավարական որոշումներն են կազմում վերաքննիչ բողոքարկման առարկան ըստ ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրության:

2. Ելնելով սույն աշխատանքի 1-ին գլխում առաջ քաշված վերաքննության էության հայեցակարգից՝ ո՞ր դատավարական որոշումները պետք է կազմեն վերաքննիչ բողոքարկման առարկան:

Առաջին հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերլուծել ՀՀ քր.դատ.օր. 6 հոդվածի 10-րդ կետի բովանդակությունը՝ համադրելով քրեադատավարական այլ իրավանորմների, ինչպես նաև քննարկվող հարցի կապակցությամբ ձևավորված դատական պրակտիկայի հետ:

Բնականաբար, ՀՀ քր.դատ.օր. 6 հոդվ. 10-րդ կետում ամրագրված սահմանման մեջ առաջին հերթին մտնում են առաջին ատյանի դատարանի կայացրած արդարացման կամ մեղադրական դատավճիռները:

¹ «Գործով վարույթը սկսել» հասկացությունը կարող է վերաբերել միայն մինչդատական վարույթին:

² Ընդունվել է ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական ասամբլեայի 7-րդ պլենար նստաշրջանում:

Գործն ըստ էության լուծող, հետևաբար վերջնական որոշումներ են մաս քրեական գործը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին¹, ինչպես նաև անմեղսունակության վիճակում քրեորեն պատժելի արարք կատարած անձին քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ու նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին առաջին ատյանի դատարանի կայացրած որոշումները:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու, գործի վարույթը կասեցնելու, գործն ըստ ընդդատության ուղարկելու, նախագահող դատավորի բացարկի և ինքնաբացարկի մասին առաջին ատյանի դատարանի որոշումների վերաքննիչ բողոքարկման հնարավորության հարցը:

Նախ, ակնհայտ է, որ այդ որոշումներով գործն ըստ էության չի լուծվում, քանի որ պատասխան չի տրվում քրեական դատավարության հիմնական հարցին՝ մեղսագրվող հանցագործության մեջ անձի մեղավորության և դրա համար պատասխանատվության չափի հարցին:

Սակայն արդյո՞ք նշված որոշումները կարող են համարվել վերջնական այն հիմքով, որ դրանք բացառում են գործով վարույթը շարունակելը: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՀ քր.դատ.օր. 6 հոդվ. 10-րդ կետի տեքստում օգտագործված է «բացառել» բավականին խիստ բառը, որն ունի «ֆուլ չտալ, հնարավորությունը վերացնել» իմաստը²:

Մեր կարծիքով, գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու, գործի վարույթը կասեցնելու, գործն ըստ ընդդատության ուղարկելու, նախագահող դատավորի բացարկի և ինքնաբացարկի մասին առաջին ատյանի դատարանի որոշումներով քրեական գործի վարույթը շարունակելու հնարավորությունը չի վերացվում:

Այսպես, գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշմամբ վարույթն անհրաժեշտաբար վերադարձվում է նախնական

¹ Եթե տվյալ քրեական գործով որպես մեղադրյալ են ներգրավված մի քանի անձինք, ապա նրանցից մեկի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը գործն ըստ էության կլուծի միայն այդ անբաստանյալի մասով:

² Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ.1, Եր., 1969, էջ 306:

քննության փուլ և իրականացվում է համապատասխան քրեադատավարական գործունեություն:

Քննարկվող որոշումը կարող է համարվել վերջնական միայն այն դեպքում, եթե «գործով վարույթը շարունակելը բացառող որոշում» արտահայտության մեջ «գործով վարույթ» բառակապակցությունը սահմանափակ մեկնաբանվի և դրա տակ նկատի առնվի վարույթը միայն քրեական դատավարության տվյալ փուլում: Այդ պարագայում գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումն իրոք կբացառի առաջին ատյանի կարգով գործի քննությունը բնականոն շարունակելը և կհամարվի վերջնական որոշում:

Սակայն իրավիճակը նույնը չէ գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին, ինչպես նաև նախագահող դատավորին հայտնված բացարկն ընդունելու կամ ինքնաբացարկի մասին որոշումների կապակցությամբ: Նշված որոշումները վերացնում են քրեական դատավարությունը շարունակելու հնարավորությունը ոչ թե տվյալ դատավարական փուլի շրջանակներում, այլ միայն կոնկրետ դատավորի կամ դատարանի վարույթում: Այսպես, համաձայն ՀՀ քր.դատ.օր. 301 հոդվածի 2-րդ մասի՝ «Դատավորի մասնակցությունը դատական քննությանն անհրճապար լինելու դեպքում, նա փոխարինվում է այլ դատավորով, իսկ գործի քննությունը վերսկսվում է»: Վերոգրյալից բխում է, որ քննարկվող որոշումները վերջնական համարելու համար անհրաժեշտ է էլ՝ ավելի սահմանափակ մեկնաբանել «գործով վարույթ» արտահայտությունը:

Ինչ վերաբերում է գործով վարույթի կասեցման մասին որոշմանը, ապա մեր կարծիքով՝ այն ևս չի կարող համարվել վերջնական որոշում: Քրեական դատավարության տեսության մեջ գործի վարույթը կասեցնելը բնորոշվում է որպես դատավարական գործողությունների կատարման *ժամանակավոր ընդմիջում*, որը պայմանավորված է գործի քննությանը մեղադրյալի մասնակցության անհնարինության հետ¹:

Հաշվի առնելով վարույթի կասեցման ժամանակավոր բնույթը՝ այդ մասին դատարանի որոշումը չի կարող վերացնել վարույթը շարունակելու սկզբունքային հնարավորությունը:

Այսպիսով, ՀՀ իրավական ակտերի մասին օրենքի 86 հոդվածի պահանջների հիման վրա ՀՀ քր.դատ.օր. 6 հոդվածի 10-րդ կետի տեքս-

¹ Տե՛ս, օրինակ, «Ὅαι εἰ ἄι ἕε ἰ δῖ ὀαῖν» / ἰ ἰ ἄ δαἰ. **Α.Γ. Αἰ** ~~αἰ~~ **αἰ**, էջ 374:

տում պարունակվող բառերը և արտահայտությունները մեկնաբանելով դրանց տառագի նշանակությամբ՝ կարող ենք եզրակացնել, որ վերաքննիչ բողոքարկման առարկան են կազմում առաջին ատյանի դատարանի կայացրած արդարացման և մեղադրական դատավճիռները, քրեական գործը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները, ինչպես նաև անմեղսունակության վիճակում քրեորեն պատժելի արարք կատարած անձին քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ու նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին որոշումները:

Սակայն ՀՀ դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ վճռաբեկ դատարանը և քրեական գործերով վերաքննիչ դատարանը ՀՀ քր.դատ.օր. 6 հոդվածի 10-րդ կետն այլ կերպ են մեկնաբանում:

Քննարկվող հարցի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումն արտահայտվել է, օրինակ, Մ.Հ.-ի գործով 2001թ. սեպտեմբերի 7-ին կայացված որոշմամբ: Համաձայն այդ որոշման՝ «Օրենսդիրը վերջնական որոշման հասկացությունը բնորոշում է երեք տարրով. որոշում, որը բացառում է վարույթն սկսելը, շարունակելը և գործի լուծումը:

Քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու որոշումն իր էությամբ վերաբերվում է վարույթը շարունակելու տարրին: Եթե նման որոշումը վերջնական չհամարվի, գործի վարույթը չի կարող շարունակվել, այսինքն հնարավորություն չի տրվի գործն ըստ էության լուծել: Ավելի կոնկրետ, կբացառվի քրեական գործի շարժը՝ քրեական դատավարության հաջորդ փուլը:

«Վերջնական որոշում» հասկացությունը պետք է դիտարկել նաև ՀՀ քր.դատ.օր. 26 հոդվածի ենթատեքստով նույնպես: Ըստ այդ հոդվածի, քրեական վարույթն իր մեջ ներառում է. քրեական գործի հարուցման մասնապատրաստումը, հարուցումը, քրեական հետապնդումը, ինչպես նաև հարուցված գործի և իրականացվող քրեական հետապնդման հետ կապված բոլոր դատավարական գործողությունները և որոշումները: Այս առումով վերջնական որոշում պետք է դիտվի նաև քրեական գործի վարույթի կասեցման, ինչպես նաև դատավորի կողմից բացարկ կամ ինքնաբացարկ ընդունելու որոշումները»¹:

¹ Տե՛ս «ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու», 3-րդ հատոր (2001թ.), Եր., 2002, էջ 392-393:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումն անդրադարձել է ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի պրակտիկայի վրա: Այսպես, 2001-2003թթ. ՀՀ վերաքննիչ դատարանը ստացել, քննել և լուծել է գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին առաջին ատյանի դատարանի 63 որոշումների դեմ բերված բողոքներ (2001թ.՝ 24, 2002թ.՝ 27, 2003թ.՝ 12): Ընդ որում, բողոքը բավարարելու դեպքում վերաքննիչ դատարանը բեկանում է գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը և գործն ուղարկում առաջին ատյանի դատարան նոր դատական քննության, այսինքն՝ կայացնում է ՀՀ քր.դատ.օր.-ով չնախատեսված որոշում: Վերաքննիչ դատարանն այդպիսի որոշում է կայացրել, օրինակ, 2002թ. օգոստոսի 27-ին՝ ՀՀ 1961թ. քրեական օրենսգրքի 86 հոդվ. 2-րդ մասով նախատեսված հանցագործության համար մեղադրվող Հ.Խ.-ի գործով¹:

Մի կողմից, ձևավորված դատական պրակտիկան, կարծում ենք, չի համապատասխանում օրինականության հիմնարար սկզբունքին:

Մյուս կողմից, անհրաժեշտ է փաստել, որ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշումը և մյուս ոչ վերջնական դատավարական որոշումներն էական ազդեցություն են ունենում դատավարության մասնակիցների իրավունքների և պարտականությունների վրա, և որպես վերջիններիս իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիք՝ անհրաժեշտ է նախատեսել նշված որոշումները բողոքարկելու իրավական հնարավորություն:

Սակայն նշված որոշումների բողոքարկումը և ստուգումը պետք է դուրս լինի վերաքննության մեխանիզմի շրջանակներից, քանի որ այն չի համապատասխանում վերաքննության էությանը: Բանն այն է, որ դատական վերանայման եղանակների համակարգում վերաքննությունն առանձնանում է բողոքարկման առարկան կազմող որոշումների ոչ միայն իրավական, այլ նաև փաստական կողմը ստուգելու հնարավորությամբ:

Մինչդեռ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու, գործի վարույթը կասեցնելու, գործն ըստ ընդդատության ուղարկելու, նախագա-

¹ Տե՛ս «ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի արխիվ», գործ N433/02:

հող դատավորի բացարկի և ինքնաբացարկի մասին առաջին ատյանի դատարանի որոշումները վերանայելիս դատական ստուգման առարկան կարող է կազմել միայն գործի իրավաբանական կողմը, այն է՝ տվյալ որոշման կայացման համար օրենքով սահմանված համապատասխան հիմքերի առկայությունը և դատավարական կարգի պահպանումը:

Օրինակ՝ գործը ՀՀ քր.դատ.օր. 311 հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքով լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերանայելիս վերաքննիչ դատարանը կարող է ստուգել միայն քրեադատավարական օրենքի էական խախտման առկայությունը և գնահատել այդ խախտումը դատական քննության ընթացքում վերացնելու հնարավորությունը:

Բացի այդ, վերը նշված որոշումները վերանայելիս դատական ստուգման ենթակա հանգամանքների շրջանակը դուրս է ՀՀ քր.դատ.օր. 107 հոդվածով սահմանված ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակից:

Օրինակ՝ առաջին ատյանի դատարանը կայացրել է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշում ամբաստանյալի՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու հիմքով, իսկ տուժողը բողոքարկում է այդ որոշումը՝ պնդելով, որ ամբաստանյալը գտնվում է Հանրապետության տարածքում:

Տվյալ դեպքում Հանրապետության տարածքում ամբաստանյալի գտնվելու հանգամանքը չի մտնում տվյալ գործով ապացուցման առարկայի մեջ և ոչ էլ հանդիսանում է ապացուցման առարկայի մեջ մտնող որևէ հանգամանք բացահայտելու միջոց՝ «միջանկյալ փաստ»: Ուստի նույնիսկ եթե անհրաժեշտ լինի համապատասխան փաստերի մասին դատարանին նյութեր և փաստարկումներ ներկայացնել, ապա դրանք չեն կարող *ապացույց* համարվել: Այսպես, դիմողի փաստարկումները կարող են ոչ թե *ցուցմունք*, այլ *բացատրություն* համարվել, քանի որ քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքների հետ չկապված տվյալները նկատի ունենալիս օրենսդիրն օգտագործում է «բացատրություն» եզրույթը¹:

¹ Տե՛ս ՀՀ քր.դատ.օր. 283 հոդվ. 3-րդ մասը, 284 հոդվ. 5-րդ մասը, 285 հոդվ. 4-րդ մասը, 288 հոդվ. 3-րդ մասը, 290 հոդվ. 4-րդ մասը, 380 հոդվ. 1-ին մասը:

Դրան հակառակ, օրինակ, գործով վարույթը կարճելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումները վերանայելիս դատական ստուգման առարկան կազմող հանգամանքները, որպես կանոն, համընկնում են տվյալ գործով ապացուցման ենթակա հանգամանքների հետ: Այսպես, եթե բողոքարկվել է հանցադեպի բացակայության հիմքով գործը կարճելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը, ապա քանի որ հանցագործության դեպքը ներառված է ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակի մեջ (ՀՀ քր.դատ.օր. 107 հոդվ. 1-ին կետ), ուստի վերաքննիչ դատարանում այդ հանգամանքը ենթակա է հաստատման բացառապես *ապացույցների* հիման վրա:

Վերոգրյալից բխում է, որ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու, գործի վարույթը կասեցնելու, գործն ըստ ընդդատության ուղարկելու, նախազահող դատավորի բացարկի և ինքնաբացարկի մասին առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկման և ստուգման դատավարական կարգը պետք է որոշակիորեն տարբերվի վերաքննության դատավարական կարգից: Այսպես՝

1. դրանց բողոքարկման և բեկանման հիմքերի շրջանակը պետք է ավելի նեղ լինի,
2. բողոքի բովանդակությանը կարող են ավելի մեղմ պահանջներ ներկայացվել,
3. դատարանը կարող է չունենալ ապացույցներն անմիջականորեն հետազոտելու իրավունք,
4. դատարանը կարող է բողոքը քննել և լուծել մեկ դատավորի կազմով,
5. բողոքի քննությանը պարտադիր մասնակցող սուբյեկտների շրջանակը կարող է սահմանափակվել բողոքատուով (մինչև նույն ժամանակ նախատեսելով դատավարության բոլոր մասնակիցներին դատական նիստի տեղի և ժամանակի մասին ծանուցելու իմպերատիվ պահանջ),
6. կարող է սահմանվել բողոքի քննության առավելագույն ժամկետ,
7. բողոքարկման և բողոքի քննության դատավարական կարգը պետք է պարզեցվի,
8. բողոքը բավարարելով՝ դատարանը պետք է իրավունք ունենա գործը վերադարձնել առաջին ատյանի դատարան:

Վերոգրյալի հիման վրա կարծում ենք, որ օրենքը պետք է հստակ սահմանի վերաքննիչ բողոքարկման առարկան: Այն պետք է կազմեն առաջին ատյանի դատարանի արդարացման կամ մեղադրական դատավճիռները, քրեական գործը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները, ինչպես նաև անմեղսունակության վիճակում քրեորեն պատժելի արարք կատարած անձանց քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ու նրանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին որոշումները:

Միևնույն ժամանակ օրենքը պետք է առանձին սահմանի գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու, գործի վարույթը կասեցնելու, գործն ըստ ընդդատության ուղարկելու, նախագահող դատավորի բացարկի և ինքնաբացարկի մասին առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկման և ստուգման միասնական կարգ, որը կարող է տարածվել նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթի շրջանակներում առաջին ատյանի դատարանի կայացրած որոշումների, օրինակ՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման բողոքարկման և ստուգման վրա: Այդ որոշումները պետք է ենթակա լինեն բողոքարկման վերաքննիչ դատարան, բայց ոչ վերաքննության կարգով:

ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ վերաքննության ինստիտուտի ճիշտ կանոնակարգման համար կարևոր նշանակություն ունեն նաև *վերաքննիչ բողոքի բովանդակությանը* ներկայացվող պահանջները:

ՀՀ քր.դատ.օր. 381 հոդվածի 1-ին մասը թվարկում է վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող հետևյալ պահանջները.

1) *Այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը* (381 հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Այս պահանջը ձևական է, քանի որ Հայաստանի Հանրապետությունում քրեական գործերով վերաքննություն իրականացնող միակ մարմինը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանն է:

2) *Տվյալներ՝ բողոք բերած անձի մասին՝ նշելով նրա դատավարական կարգավիճակը* (381 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Այս պահանջը դատարանին հնարավորություն է տալիս հեշտությամբ ստու-

գել, թե արդյոք վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջները դուրս չեն գալիս դատավարության տվյալ մասնակցի իրավասության շրջանակներից¹:

3) *Բողոք բերած անձի բնակության կամ գտնվելու վայրը* (381 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Այս պահանջը պայմանավորված է այն հանգամանքով, որ կարող է անհրաժեշտություն առաջանալ բողոքատուին ծանուցելու բողոքը վերակազմելու համար վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, բողոքը քննելու համար նշանակված դատական նիստի օրվա վերաբերյալ և այլն:

4) *Դատավճիռը կամ այլ որոշումը, որը բողոքարկվում է, և այդ որոշումը կայացրած դատարանի անվանումը* (381 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ): Այս պահանջը նպատակ է հետապնդում ստուգել, թե արդյոք բողոքարկվող որոշումը մտնում է վերաքննիչ բողոքարկման առարկայի մեջ:

5) *Նշում այն մասին, թե դատավճիռը կամ այլ որոշումը բողոքարկվում է ամբողջությամբ, թե՞ մի մասով* (381 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ): Այս պահանջը հատկապես կարևոր նշանակություն ունի սահմանափակ վերաքննության պայմաններում, երբ այն իրավաբանորեն կանխորոշում է դատական ստուգման առարկան և սահմանները:

ՀՀ քրեական դատավարությունում վերաքննությունն ունի վերստուգիչ (ռեկվիզիտ) բնույթ, և այս պահանջը կոչված է ապահովելու դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիությունը, ինչպես նաև նախանշելու վերաքննիչ դատարանի ստուգողական-դատավարական գործունեության հիմնական ուղղությունները:

6) *Բողոք բերող անձի հետևություններն այն մասին, թե որն է դատավճռի կամ այլ որոշման անճշտությունը* (381 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ): Սա վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող առանցքային պահանջ է, քանի որ արտահայտում է վերաքննիչ բողոքի հիմնավորվածության հատկանիշը: Բացի այդ, «հետևություն» հասկա-

¹ Վճռաբեկ գանգատի բովանդակությանը ներկայացվող պահանջներն ամրագրող ՀԽՍՀ 1961թ. քր.դատ.օր. 349 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը բողոքատուին չէր պարտավորեցնում նշելու իր դատավարական կարգավիճակը, ինչն իրավաբանական գրականության մեջ քննադատության էր արժանացել: Տե՛ս, օրինակ, **Αεαέναιαδία Α.Ν., Εταοσί Ι.Ι.** Ατἀεέγοέγ ἀ δόννηείι οάτ᾽είάτ᾽ίι νόάτ᾽ίι δ᾽εçάτ᾽άνοάα, **Ι. Ι** 1άάτ᾽δ᾽ί, 1999, էջ 54-64:

ցությունը ենթադրում է որոշակի վերլուծական աշխատանք և դրա արտացոլում վերաքննիչ բողոքի մեջ:

7) *Բողոքի էությունը* (381 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ) բողոքատուի առավելագույն հնարավոր պահանջն է, ուղղված վերաքննիչ դատարանին: Այն պետք է բխի առաջին ատյանի դատարանի վերջնական որոշման վերլուծությունից և դրա անճշտության մասին հետևությունից:

Բողոքի էությունը ներկայացնելու պահանջի իրավական նշանակությունը պայմանավորված է դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության սկզբունքի ապահովման անհրաժեշտությամբ: Բացի այդ, վերաքննիչ վարույթը եզրափակող դատավարական որոշման մեջ դատարանը պետք է որոշակի իրավական գնահատական տա վերաքննիչ բողոքի էությանը (վերաքննիչ պահանջին)¹՝ լրիվ կամ մասնակի բավարարի այն, կամ թողնի առանց բավարարման:

8) *Առկայության դեպքում՝ այն ապացույցները, որոնցով դիմողը հիմնավորում է իր պահանջները, և որոնք պետք է հետազոտվեն վերաքննիչ դատարանում, այդ թվում՝ նաև առաջին ատյանի դատարանում նախօրոք չհետազոտված ապացույցները, ինչպես նաև բողոքին կցվող նյութերի ցանկը* (381 հոդվածի 1-ին մասի 6 և 7 կետեր): Այս դրույթը բողոքատուին հնարավորություն է տալիս դատարան ներկայացնել նոր ապացույցներ կամ միջնորդել, որ դատական նիստում հետազոտվեն այն ապացույցները, որոնք հաստատում են իր վերաքննիչ պահանջները:

ՀՀ քր.դատ.օր. 381 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում ամրագրված դրույթը ֆակուլտատիվ է, որի մասին է վկայում «առկայության դեպքում» արտահայտությունը: Ուստի վերաքննիչ բողոքի մեջ այն հիմնավորող ապացույցները չնշելը վերաքննիչ բողոքի վերադարձման կամ առանց քննության թողնելու հիմք հանդիսանալ չի կարող:

Սակայն վերաքննության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է հենց այս դրույթի պահպանմամբ: Բանն այն է, որ վերաքննիչ դատարանի նիստ նշանակելու մասին որոշման մեջ դատարանը պարտադիր պետք է որոշի դատական նիստում անմիջականորեն հետազոտման ենթակա ապացույցների ծավալը, դատական նիստին կանչվող վկաները, փորձագետը և այլ անձինք (ՀՀ քր.դատ.օր. 389 հոդ-

վածի 3-րդ մասի): Հետևաբար, եթե բողոքատուն չմատնանշի իր պահանջը հիմնավորող ապացույցները, ապա հնարավոր է, որ դրանք վերաքննիչ դատարանում չհետազոտվեն, իսկ վերաքննիչ դատարանի վերջնական որոշումն անարդարադատ լինի:

9) *Բողոք ներկայացնող անձի ստորագրությունը* (381 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ):

ՀՀ քր.դատ.օր. 381 հոդվածի 1-ին մասով կարգավորվող իրավահարաբերությունների մեթոդաբանական նշանակությունը հանգում է վերաքննիչ բողոքի *հիմնավորվածության* պահանջի հետևողական իրականացմանը:

Ըստ Մ.Ս. Ստրոգովիչի՝ հիմնավորված, փաստարկված բողոքը, որը բովանդակում է դատարանի թույլ տված խախտումների հանգամանակից շարադրանք, կարևոր դատավարական միջոց է կողմերի իրավունքների պաշտպանության, դատական սխալների ուղղման համար¹:

Ինչպես արդարացիորեն նշում է Ն.Ն. Կովտունը՝ առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք բերած անձի առարկությունները չեն կարող մերկապարանոց լինել: Պահանջվում է, որ բողոքարկողը մատնանշի առաջին ատյանի դատարանում հետազոտված (կամ չհետազոտված) կոնկրետ ապացույցներ, կամ ներկայացնի նոր (լրացուցիչ) ապացույցներ, կամ փաստարկված ձևով ներկայացնի առաջին ատյանի դատարանի թույլ տված անճշտությունները և խախտումները²:

Ն.Ն. Կովտունի առաջ քաշած չափանիշների տեսանկյունից՝ մեր կողմից ուսումնասիրված 100 վերաքննիչ բողոքներից 48-ը կարող ենք գնահատել չհիմնավորված:

Քննարկվող խնդրի կապակցությամբ առկա է մասնավոր և հանրային շահերի բախում: Վերաքննիչ բողոք բերող սուբյեկտների մասնավոր շահերից բխում է, որ բավարար չափով չհիմնավորված վերաքննիչ բողոքներն ընդունվեն, և հարուցվի վերաքննիչ վարույթ:

Այսպես, որոշ դեպքերում բողոքատուները (հատկապես պաշտպանության կողմը ներկայացնող սուբյեկտները) չեն ունենում դատավճռի

¹ Տե՛ս **Ռոժմաթ + Ի .Ն. Էժոն նի առոճեթի՛ն օթի՛ն ի՛ն ի՛ն ո՛թի՛ն ժեթի՛ն անձն, զ.2, Ի ., 1970, էջ 391:**

² Տե՛ս **Էրձոթ Ի .Բ.** նշված աշխատությունը, էջ 362:

անօրինականության կամ չհիմնավորվածության մասին վկայող լուրջ հիմնավորումներ, սակայն քանի որ նրանց վերաքննիչ բողոքի հիման վրա ամբաստանյալի վիճակը չի կարող վատթարանալ, ուստի նրանք պարզապես օգտագործում են վերաքննության մեխանիզմը՝ որպես պատիժը մեղմացնելու լրացուցիչ հնարավորություն:

Սակայն ինչպես նշել ենք սույն աշխատության 1-ին գլխի §3-ում, դատավարական բողոքարկման ազատությունը չպետք է բացարձակ հասկանալ և դրանում ներառել առանց պատշաճ փաստարկման վերաքննիչ բողոք բերելու հնարավորությունը:

Այլ դեպքերում բողոքատուները բավարար չափով չեն փաստարկում իրենց վերաքննիչ բողոքները՝ նշելով, որ հիմնավորումները կներկայացնեն դատարանում: Դա դիտվում է որպես տակտիկական հնարք, որը կոչված է ապահովելու դիրքորոշման կամ ապացույցի ներկայացման հանկարծակիությունը:

Իրոք, ՀՀ քր.դատ.օր. 23 հոդվածի 6-րդ մասը կողմերին իրավունք է տալիս իրենց դիրքորոշումը, այն պաշտպանելու եղանակները և միջոցներն ընտրել ինքնուրույն՝ անկախ դատարանից, այլ մարմիններից և անձանցից: Սակայն նույն հոդվածը հստակ սահմանում է, որ իրենց դիրքորոշումը և այն պաշտպանելու միջոցներն ընտրելիս կողմերը չեն կարող դուրս գալ օրենքի շրջանակներից, իսկ ՀՀ քր.դատ.օր. 381 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն ամրագրում է վերաքննիչ բողոքի հիմնավորվածության պահանջը:

Այսպիսով, վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջները կանոնակարգելիս մասնավոր շահերի հետ մեկտեղ անհրաժեշտ է հաշվի առնել նաև հանրային շահերը, որոնք թելադրում են վերաքննիչ դատարանը չժանրաբեռնել ակնհայտ անհիմն վերաքննիչ բողոքների քննությամբ և այդ դատական ատյանը չվերածել ներման (պատժի մեղմացման) յուրօրինակ մեխանիզմի:

Վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջների հարցում մասնավոր և հանրային շահերի ներդաշնակման համար առաջարկում ենք՝

1. Վերակազմելու համար վերադարձնել չհիմնավորված վերաքննիչ բողոքները՝ այն բողոքները, որոնք չեն պարունակում ո՛չ բողոքատուի փաստարկներն առաջին ատյանի դատարանի թույլ տված ան-

ճշտությունների և խախտումների մասին, ո՛չ նոր (չհետագոտված) ապացույցներ հետագոտելու միջնորդություն և ո՛չ էլ առաջին ատյանի դատարանում հետագոտված ապացույցների վերլուծություն: Կարծում ենք, ավելի նպատակահարմար է այս խնդիրը լուծել՝ ՀՀ քր.դատ.օր. 381 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի մեկնաբանման հիման վրա՝ վերաքննիչ դատարանում ձևավորելով ընդհանուր դատական պրակտիկա:

2. Վերաքննիչ բողոք բերող անձանց օրենսդրորեն պարտավորեցնել վերաքննիչ բողոքում նշել մեկ կամ մի քանի վերաքննիչ հիմք: Բանի որ առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումը բողոքարկող անձը նպատակ է հետապնդում հասնել դրա բեկանմանը կամ փոփոխմանը, իսկ դատարանի վերջնական որոշումների բեկանման և փոփոխման հիմքերը հստակ սահմանված են ՀՀ քր.դատ.օր. 395-399 հոդվածներով, ուստի վերաքննիչ բողոքի հիմնավորումներն անհրաժեշտաբար պետք է խարսխված լինեն նշված իրավանորմերով ամրագրված հանգամանքների վրա¹:

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների կատարման և դատական պրակտիկայի արմատավորման հետևանքով հանրային շահերը չպետք է չեզոքացնեն իրավասու սուբյեկտների մասնավոր շահերը: Սեր կարծիքով՝ վերաքննիչ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիք է հաղիսանում ՀՀ քր.դատ.օր. 381 հոդվածի 2-րդ մասում ամրագրված այն դրույթը, որ վերակազմելու համար վերաքննիչ բողոքը կարող է վերադարձվել միայն այն դեպքում, եթե բերված բողոքը չի համապատասխանում ներկայացվող պահանջներին, ինչը խոչընդոտում է գործի քննությանը:

Բացի այդ, սույն գլխի §4-ում մենք առաջարկում ենք օրենսդրորեն ամրագրել վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը բողոքարկելու մեխանիզմ:

Սեր կարծիքով՝ նշված օրենսդրական փոփոխությունները հնարավորություն կտան վերաքննիչ բողոքարկման ենթափուլում ապահովել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը:

Վերոգրյալն ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ վերաքննիչ բողոքարկման առարկայի և վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներ-

¹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Արեաթա Ա.Է.** նշված աշխատությունը, էջ 102-104:

կայացվող պահանջների՝ մեթոդաբանորեն ճիշտ և հստակ սահմանումն անհրաժեշտ նախապայման է ՀՀ քրեական դատավարությունում վերաքննության ինստիտուտի արդյունավետության համար: Այն ապահովելու համար մենք առաջարկում ենք՝

1. վերաքննիչ բողոքարկման առարկան սահմանափակել առաջին ատյանի դատարանի դատավճիռներով, քրեական գործը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և անմեղսունակության վիճակում քրեորեն պատժելի արարք կատարած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին որոշումներով,

2. վերաքննիչ բողոքարկման առարկան կազմող դատավարական որոշումները հստակ տարանջատել առաջին ատյանի դատարանի մյուս որոշումներից,

3. նախատեսել վերաքննիչ բողոքարկման առարկայի մեջ չմտնող առաջին ատյանի դատարանի որոշումների (գործը լրացուցիչ նախաքննության կամ ըստ ընդդատության ուղարկելու, գործով վարույթը կասեցնելու, բացարկն ընդունելու կամ ինքնաբացարկի, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումների) բողոքարկման և դատական ստուգման այլ կարգ,

4. վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացնել հիմնավորվածության հստակ պահանջ:

§ 3. Վերաքննիչ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտները

ՀՀ քր.դատ.օր.-ը մանրամասն կարգավորել է վերաքննիչ վարույթի համար ելակետային նշանակություն ունեցող փաստաթղթի՝ վերաքննիչ բողոքի բերման իրավունք ունեցող անձանց ու մարմինների շրջանակը և դրա հետ կապված վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները: Վերաքննիչ բողոք բերելու իրավունքով այս կամ այն չափով օժտված են մեղադրողը, ամբաստանյալը, արդարացվածը, տուժողը, ամբաստանյալի, արդարացվածի և տուժողի օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղ. հայցվորը, քաղ. պատասխանողը, տուժողի, քաղ. հայցվորի և քաղ. պատասխանողի ներկայացուցիչները, տուժողի իրավահաջորդը:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռն իրավասու սուբյեկտը կարող է բողոքարկել օրենքով նախատեսված վերաքննիչ հիմքերից առնվազն մեկի առկայության մասին հետևության հանգելու դեպքում: Ընդ որում, համապատասխան սուբյեկտների կողմից վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրականացումը կապված է որոշակի *ընդհանուր պայմանների (նախադրյալների) հետ:*

Այսպես, մեղադրողի համար այդպիսի նախադրյալ է հանրային շահը պաշտպանելու անհրաժեշտությունը: Դատասխան իրավունք ունի վերաքննիչ բողոք բերել բոլոր այն դեպքերում, երբ համոզված է, որ դատավճիռը կամ առաջին ատյանի դատարանի այլ վերջնական որոշումն անօրինական է կամ անհիմն, և առկա են համապատասխան վերաքննիչ հիմքեր¹:

Ա.Ս. Ալեքսանդրովը և Ն.Ն. Կովտունն առանձնացնում են քրեական դատավարությունում մասնավոր շահեր հետապնդող սուբյեկտների՝ ամբաստանյալի, արդարացվածի, տուժողի, քաղաքացիական հայցվորի և քաղաքացիական պատասխանողի կողմից վերաքննիչ բողոք բերելու հետևյալ պայմանները՝

1) դատավճռով կամ դատարանի այլ վերջնական որոշմամբ բողոք բերող սուբյեկտի օրինական շահերի խախտումը: Անհմաստ է դատավճիռը բողոքարկել այն խախտումների հիման վրա, որոնք օբյեկտիվորեն առկա են եղել, սակայն չեն խախտել բողոքարկող սուբյեկտի իրավունքներն ու օրինական շահերը (դրական պայման),

2) ի շահ տվյալ սուբյեկտի կատարված դատավարական խախտումներին ազատ կամքի արտահայտմամբ և ակնհայտորեն համաձայնություն տալը բացառում է այդ խախտումները բողոքարկելու հնարավորությունը (բացասական պայման),

3) դատավարական որոշումների կարգադրագրեր, անկախ կողմերի կամքից և դիրքորոշումից, ենթակա են անշեղ կատարման (օրինակ՝ ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվ. 3-րդ մասում ամրագրված անվերապահ վերաքննիչ հիմքերը): Ուստի դրանց խախտումն իրավասու սուբյեկտներին տալիս է օրենքի շրջանակներում դրանց վերաքննիչ բողոքարկման

¹ Տե՛ս **Εἰσαοί 1.1.** նշված աշխատությունը, էջ 347-348, **Νααάνουι εε Ε.Ε.** Ο-άνοεα ἰδίεοδιδα ἄ νόαα ἀἰεεγυοειίίίε ε εἰνἄοειίίίε εἰνἄοί οεε, ἀεἰ... εἰἰ.βδεἰ.ἰἄοε, Νἰ ἄ, 2004, էջ 85:

բացարձակ իրավունք անգամ դատաբնության ընթացքում դրանց միանշանակ համաձայնություն տալու դեպքում¹:

Նման մոտեցում արտահայտել են նաև խորհրդային դատավարագետները: Այսպես, Մ.Ա. Չելցովը, Պ.Ի. Լյուբիմսկին և Ն.Ն. Պոլյանսկին կարծիք էին հայտնում, որ կողմը պարտավոր է ժամանակին առարկել իր իրավունքների խախտման դեմ և հոգալ դատական նիստի արձանագրության մեջ դրանց արտացոլման մասին²:

Այս դիրքորոշումը քննադատվել է, մասնավորապես, Է.Ֆ. Կուցովայի կողմից: Նրա կարծիքով՝ դատարանում կատարված խախտումների դեմ առարկելու պարտականությունը դրված է միայն դատախազի վրա, իսկ կողմերը նման պարտականություն չունեն³:

Մենք հակված ենք համաձայնելու Ա.Ս. Ալեքսանդրովի և Ն.Ն. Կովտունի տեսակետին: Կարծում ենք, անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել դատավարական խախտումների նկատմամբ և հաշվի առնել քրեական դատավարությունում թե՛ հանրային և թե՛ մասնավոր շահերը:

Իրավասու սուբյեկտներից յուրաքանչյուրի վերաբննիչ բողոքարկման իրավունքը պայմանավորված է *հատուկ պայմաններով (նախադրյալներով)*:

Առավել հաճախ վերաբննիչ բողոքարկման իրավունքից օգտվում են *ամբաստանյալները*: Նրանք վերաբննիչ բողոք են բերել մեր կողմից ուսումնասիրված 100 գործերից 42-ում:

ՀՀ քր.դատ.օր. 376 հոդվ. առաջին մասում վերաբննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների թվում առաջինը նշվում է ամբաստանյալը⁴: Բացի այդ մեղադրյալի իրավունքները թվարկող ՀՀ

¹ Տե՛ս **Έταδοί Ι.Ι.** նշված աշխատությունը, էջ 349-350, **Αεαεαί αάι έϋ ιδεαί αί θί α: ιθαααέν ιθι οαηθααένι αο ιθαα έ ιίει ιι ι-εέ // «Έοθι αε θι ηηεεηεί αί ιθαα», 2002, N5, էջ 110-111:**

² Տե՛ս **αεουθι Ι.Α.** Οάι εί αί սέ ιθι οαηθ, Ι ., 1948, էջ 565, **Έπαεεί ηεεε Ι.Ε., Ι ιεϋι ηεεε Ι.Ι.** Οί Έ θΝΘΝθ: Έι ι ι αί οαδδε. 2-α εçä., Ι ., 1928, էջ 341-342:

³ Տե՛ս **Έοθι αα Υ.Ο.** Ոί ααοηεαϋ εαηηαοεϋ, εαε ααδαί οεϋ çαεί ιι ιηθε α ιθααί ηοαεε, Ι ., 1957, էջ 138:

⁴ ՀՀ 376 հոդվածի տեքստում արդարացվածին, որպես վերաբննիչ բողոքարկման ինքնուրույն սուբյեկտ առանձնացնելը հիմք է տալիս պնդելու, որ «ամբաստանյալ» եզրույթի տակ օրենսդիրը նկատի ունի այն անձին, ում նկատմամբ առաջին ատյանի դատարանը կայացրել է մեղադրական դատավճիռ:

քր.դատ.օր. 65 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը նախատեսում է դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը բողոքարկելու մեղադրյալի իրավունքը:

Անհրաժեշտ է նշել, որ մինչև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ 2005թ. սեպտեմբերի 13-ի օրենքն ուժի մեջ մտնելը ՀՀ քր.դատ.օր. 376 հոդվածի տեքստում օգտագործվում էր «դատապարտյալ» եզրույթը: «Ամբաստանյալ» տերմինի կիրառումն ավելի ճշգրիտ է, քանի որ ըստ ՀՀ քր.դատ.օր. 64 հոդվածի 2-րդ մասի՝ մեղադրյալը (ամբաստանյալը) ստանում է դատապարտյալի կարգավիճակ միայն այն ժամանակ, երբ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ է մտնում:

Ամբաստանյալն իրավունք ունի բողոքարկել իր նկատմամբ կայացված դատավճիռը 395 հոդվ. մեկ կամ մի քանի կետերով՝ խնդրելով դատարանին մեղսագրվող բոլոր արարքներով կամ դրանց մի մասով արդարացնել իրեն կամ հօգուտ իրեն փոփոխել դատավճիռը: Նա կաշկանդված չէ առաջին ատյանի դատարանում իր դիրքորոշմամբ և վերաբննիչ բողոքում կարող է ներկայացնել առաջին ատյանում արտահայտածից էապես տարբերվող պահանջներ:

Օրինակ՝ անձն առաջին ատյանի դատարանում կարող է իր մեղքն ընդունած լինել, սակայն հետագայում իր նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը բողոքարկել քրեական օրենքի սխալ կիրառման, մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 42 հոդվածի (անհրաժեշտ պաշտպանություն) չկիրառման հիմքով: Եվ ընդհակառակը, ամբաստանյալն առաջին ատյանի դատարանում կարող է հանցագործության մեջ իր մեղքն ընդունած չլինել, սակայն մեղադրական դատավճիռը բողոքարկել պատժի անարդարացիության հիմքով:

Ն.Ն. Կովտունի կարծիքով՝ վերաբննիչ բողոք բերելիս ամբաստանյալը կաշկանդված չէ նաև դատավճռի եզրափակիչ մասով: Դրա ներածական և նկարագրական-պատճառաբանական մասերը ևս վերաբննիչ բողոքարկման և ստուգման պատշաճ օբյեկտ են¹:

ՀՀ քր.դատ.օր. 65 հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետի և 383 հոդվածի 3-րդ մասի հիման վրա ամբաստանյալն իրավասու է հետ վերցնելու ոչ

¹ Տե՛ս **Έταδοί Ι.Ι.** նշված աշխատությունը, էջ 352:

միայն իր, այլ նաև իր պաշտպանի բերած վերաքննիչ բողոքը, մինչդեռ, պաշտպանի վերաքննիչ բողոքը հետ վերցնելու մեղադրյալի իրավունքը Ռ.Գ. քր.դատ.օր.-ը չի նախատեսում:

Այս խնդրի կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ ևս մոտեցումները հակասական են: Այսպես, ըստ Ի.Գ. Պերլովի՝ անհրաժեշտություն չկա ամբաստանյալին իրավունք վերապահել հետ վերցնել պաշտպանի բերած վերաքննիչ բողոքը: Պաշտպանը, ինչպես և դատավարության մյուս մասնակիցները, իրավունք ունի հետ վերցնել իր բողոքը: Պաշտպանը չպետք է համաձայնեցնի այդ հարցն իր պաշտպանյալի հետ: Նա իրավունք ունի դա ինքնուրույն անել¹:

Այս մոտեցմանը տրամագծորեն հակառակ տեսակետ է հայտնել Մ.Ս. Ստրոգովիչը: Նա արդարացված է համարում ամբաստանյալի իրավունքը հետ վերցնելու ինչպես իր, այնպես էլ իր պաշտպանի ներկայացրած բողոքը²:

Ն.Ս. Չուվաշովան գտնում է, որ որպես կանոն՝ պաշտպանը պետք է վերաքննիչ բողոք բերելու հարցը և դրա բովանդակությունը համաձայնեցնի ամբաստանյալի հետ, իսկ վերջինս պետք է իրավունք ունենա հետ վերցնելու իր պաշտպանի բերած վերաքննիչ բողոքը: Այս կարգից միակ բացառությունը, ըստ Ն.Ս. Չուվաշովայի, պետք է սահմանվի անձի ինքնամատուցության դեպքում³:

Ելնելով ՀՀ քր.դատ.օր.-ի տառին և ոգուն համապատասխանող պաշտպանի դատավարական դերի և կարգավիճակի այն հասկացողությունից, որ նա մեղադրյալի ընդամենը ներկայացուցիչը չէ, որ պաշտպանն ունի հարաբերականորեն ինքնուրույն դատավարական կարգավիճակ⁴, մենք կարծում ենք, որ այս հարցի կապակցությամբ ռուսաստանյան օրենսդրի որդեգրած մոտեցումն ավելի ճիշտ է:

Իր պաշտպանի բերած վերաքննիչ բողոքը հետ վերցնելու իրավունքից ամբաստանյալին զրկելը նրա դատավարական վիճակը չի

վատթարացնում, քանի որ դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության սկզբունքից ելնելով՝ վերաքննիչ դատարանը չի կարող ի վնաս ամբաստանյալի բեկանել կամ փոփոխել դատավճիռը, եթե վերաքննիչ բողոքը բերել է պաշտպանը:

Մյուս կողմից, հնարավոր է, որ ամբաստանյալն ինչ-ինչ պատճառներով իրեն մեղավոր ճանաչի այն հանցագործության մեջ, որը չի կատարել: Նման իրավիճակներում ամբաստանյալը կարող է հետ վերցնել իր նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեմ իր պաշտպանի բերած վերաքննիչ բողոքը, ինչը կհակասի թե՛ արդարադատության և թե՛ տվյալ անձի շահերին:

Ուստի, իր իսկ օրինական շահերից ելնելով՝ անհրաժեշտ է մեղադրյալին զրկել իր պաշտպանի ներկայացրած բողոքը հետ վերցնելու իրավունքից՝ ՀՀ քր.դատ.օր. 65 հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետի տեքստից հանելով «կամ իր պաշտպանի» արտահայտությունը, ինչպես նաև ՀՀ քր.դատ.օր. 383 հոդվածի տեքստում պաշտպանի բերած վերաքննիչ բողոքի մասով վերապահում կատարելով:

ՀՀ քր.դատ.օր. 376 հոդվածը վերաքննիչ բողոքարկման ինքնուրույն սուբյեկտ է ճանաչում *արդարացվածին*: Այս սուբյեկտը հազվադեպ է վերաքննիչ բողոք բերում:

Արդարացվածն այն մեղադրյալն է, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է կամ քրեական գործով վարույթն օրենքով նախատեսված հիմքերով կարճվել է, կամ որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ (ՀՀ քր.դատ.օր. 64 հոդվ. 3-րդ մաս, 66 հոդվ. 1-ին մաս): Որպես մեղադրյալ, վերաքննիչ բողոք բերելու արդարացվածի իրավունքը նախատեսող նորմը լրացվում է ՀՀ քր.դատ.օր. 66 հոդվ. 2-րդ մասում և 400 հոդվ. 2-րդ մասում մասում ամրագրված նորմերով: Մասնավորապես, ՀՀ քր.դատ.օր. 400 հոդվ. 2-րդ մասի՝ «Արդարացման դատավճիռն արդարացվածի բողոքով կարող է փոփոխվել արդարացման հիմքերի մասով»:

Անշուշտ, արդարացվածի օրինական շահերի մեջ կարող է մտնել իր անմեղությունը ճանաչող և հռչակող դատավճռի բողոքարկումը միայն դրա հիմքերի մասով: Օրինակ՝ առաջին ատյանի դատարանն արդարացման դատավճիռ է կայացրել վնաս պատճառած արարքը քրեական օրենսգրքով օրինաչափ համարվելու հիմքով, սակայն արդա-

¹ Տե՛ս **Y adēra E.Ā. Eānnaōēīīīā i dīēçāīānōāī ā nīāāōnēīī oāī ēīāīīī i dīōānāā**, էջ 226:

² Տե՛ս **Nōdīāī ae+ I .N. Eōdñ nī āāōnēī āī oāī ēī āīīāī i dīōānāā**, զ.2, էջ 465:

³ Տե՛ս **×ōāāōīāā ī.N. Ōōīēōēy āāāīēāōā-çāūēōīēēā ā āīāēēyōēīīīē ē ēānā-ōēīīīīē nōāāāī ūō ēī nōāīōēyō, āēññ... ēāī ā.ĵdēā.īāōē, I dāī āōōā**, 2002, էջ 40:

⁴ Տե՛ս **Դուկասյան Հ.Հ.** Պաշտպանի դատավարական վիճակը նախնական քննության փուլում, Եր., 2001, էջ 6-23:

բացվածը գտնում է, որ դատարանի հետևությունները չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքներին, և իր նկատմամբ կայացված դատավճիռը պետք է հիմնավորվի արարքում հանցակազմի բացակայությամբ:

Հնարավոր է նաև, որ արդարացման դատավճիռն արդարացվածի կողմից բողոքարկվի միայն քաղաքացիական հայցի մասով¹: Օրինակ՝ եթե անձի նկատմամբ արդարացման դատավճիռ է կայացվել քրեական օրենսգրքով նախատեսված արարքը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարելու հիմքով, իսկ տուժողի ներկայացրած քաղաքացիական հայցն ամբողջությամբ բավարարվել է, ապա արդարացվածը, ընդունելով քաղաքացիական հայցի հիմքը, վերաքննիչ բողոքում կարող է պահանջել այն բավարարել մասամբ:

Վերաքննիչ բողոք բերելու *պաշտպանի* իրավունքը նախատեսված է ՀՀ քր.դատ.օր. 73 հոդվածի 1-ին մասի 15 կետով և 376 հոդվածի 1-ին մասով:

Իրավակիրառական պրակտիկայում ամբաստանյալը և պաշտպանը, որպես կանոն, մեկ միասնական վերաքննիչ բողոք են բերում: Այսպես, մեր ուսումնասիրած 100 վերաքննիչ բողոքներից 23-ը ստորագրված էին և՛ ամբաստանյալի, և՛ պաշտպանի կողմից:

Սակայն վերաքննիչ բողոք բերելու պաշտպանի իրավունքն անմիջականորեն չի ածանցվում մեղադրյալի համապատասխան իրավունքից: Բանն այն է, որ ոչ միշտ է պարտադիր, որ պաշտպանի դատավարական դիրքորոշումը համընկնի իր պաշտպանյալի դիրքորոշմանը: Եթե, օրինակ, ամբաստանյալն առաջին ատյանի դատարանում ընդունել է իր մեղքն ու տվել ինքնախոստովանական ցուցմունքներ, սակայն պաշտպանը եկել է այն համոզման, որ կայացված մեղադրական դատավճիռն անհիմն է, ապա ի շահ իր պաշտպանյալի, բայց նրա կամքից անկախ՝ պաշտպանը պետք է իր անունից վերաքննիչ բողոք բերի:

Նման դեպքերում չի բացառվում այնպիսի իրավիճակ, երբ ամբաստանյալը բերի ինքնուրույն վերաքննիչ բողոք (օրինակ՝ խնդրելով մեղմացնել պատժաչափը), իսկ պաշտպանը՝ ինքնուրույն (խնդրելով, օրինակ, նոր ապացույցների հետազոտման հիման վրա կայացնել արդարացման դատավճիռ):

¹ Տե՛ս «Êî ï ï áí òà òè è ÓÍ Ê ÐÔ» / Í òà. òàà. **Ե.Է. Ի անոթեի, Ի .**, 2004, էջ 487:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե իր բերած վերաքննիչ բողոքը հետ վերցնելու համար պաշտպանին անհրաժեշտ է արդյոք ստանալ իր պաշտպանյալի համաձայնությունը:

Ռ-Դ քր.դատ.օր. 359 հոդվածով նախատեսված վերաքննիչ բողոքը ներկայացրած անձի կողմից այն հետ վերցնելու իրավունքն ամրագրող նորմը որևէ այլ հոդվածով չի կոնկրետացվում: Դրանից բխում է, որ պաշտպանն իրավունք ունի առանց իր պաշտպանյալի համաձայնության հետ վերցնել իր ներկայացրած վերաքննիչ բողոքը: Այնուհանդերձ, որոշ դատավարագետներ, օրինակ՝ Մ.Ս. Ստրոգովիչն այն կարծիքն է արտահայտել, որ դա չպետք է թույլատրվի¹:

Ելնելով ամբաստանյալի շահերից՝ իր բերած վերաքննիչ բողոքը հետ վերցնելու պաշտպանի իրավունքը ՀՀ քրեական դատավարությունում միջնորդավորվել է նրա պաշտպանյալի համաձայնությամբ (ՀՀ քր.դատ.օր. 103 հոդվ. 9-րդ կետ և 383 հոդվ. 3-րդ մաս): Բանն այն է, որ հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ ամբաստանյալը մտադրություն ունենա որևէ հիմքով բողոքարկել իր նկատմամբ կայացված դատավճիռը, սակայն ինչ-ինչ պատճառներով բողոքը բերվի պաշտպանի անունից: Այդ դեպքում առանց պաշտպանյալի համաձայնության իր ներկայացրած վերաքննիչ բողոքը պաշտպանի կողմից հետ վերցնելը կխախտի մեղադրյալի պաշտպանության իրավունքը:

Տուժողի վերաքննիչ բողոքարկման իրավունքը երաշխավորված է ՀՀ քր.դատ.օր. 376 հոդվ. 1-ին մասով և 59 հոդվ. 1-ին մասի 12 կետով: Մինչև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ 2004թ. փետրվարի 18-ի օրենքն ուժի մեջ մտնելը տուժողն իրավունք ուներ վերաքննիչ բողոք բերել խիստ սահմանափակ թվով դեպքերում՝ միայն մասնավոր մեղադրանքի գործերով:

Անշուշտ, այս սահմանափակումը խախտում էր հանցագործությունից բարոյական, ֆիզիկական կամ գոյքային վնաս կրած անձի իրավունքները, և այն վերացնելուց հետո էապես մեծացավ վերաքննիչ բողոքների թիվը: Այսպես, եթե 2003թ. ստացված վերաքննիչ բողոքների հիման վրա վերաքննիչ դատարանը քննել և լուծել է 392 քրեական գործ, ապա 2004թ. դրանց թվաքանակն ավելացել է 149-ով: Մեր ուսում-

¹ Տե՛ս **Ոճի արե+ Ի .Ն. Էօժոն մի անոթեի ար օնի արի ար ար օաննա, օ.2**, էջ 465:

ցիական հայցի մասով առաջին ատյանի դատարանի դատավճիռը բողոքարկելու իրավունքը (ՀՀ քր.դատ.օր. 376 հոդվածի 1-ին մաս, 61 հոդվածի 1-ին մասի 12 կետ):

Որպես կանոն քաղաքացիական հայց է ներկայացնում տուժող ճանաչված անձը՝ միաժամանակ ձեռք բերելով քաղաքացիական հայցվորի կարգավիճակ: Այդ դեպքում վերաքննիչ բողոք բերելու այդ անձի իրավունքը բավական լայն է:

Քաղաքացիական հայցվորի վերաքննիչ բողոքարկման իրավունքի հետ կապված խնդիրներ կարող են առաջանալ միայն այն դեպքում, եթե ինչ-ինչ պատճառներով քաղաքացիական հայցվորը միաժամանակ տուժող ճանաչված չի եղել: Նման իրավիճակներում քաղաքացիական հայցվորի վերաքննիչ բողոքարկման իրավունքը սահմանափակված է միայն քաղաքացիական հայցի մասով:

Պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական հայցվորը, որպես կանոն, վերաքննիչ բողոք է բերում այն դեպքում, եթե առաջին ատյանի դատարանի դատավճռով իր ներկայացրած քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության: Օրինակ՝ Ա.Հ.-ի գործով Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը 2003թ. հոկտեմբերի 29-ին կայացրել է մեղադրական դատավճիռ, որով «Հայագրոբանկ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը թողել է առանց քննության: Իր ներկայացրած վերաքննիչ բողոքում քաղ. հայցվոր «Հայագրոբանկ» ԲԲԸ-ն խնդրել է քննության առնել և լուծում տալ իր քաղաքացիական հայցին: 2003թ. դեկտեմբերի 24-ին կայացված դատավճռով վերաքննիչ դատարանը բավարարել է քաղ. հայցվորի վերաքննիչ բողոքը¹:

Կարող է բարդություններ առաջացնել այն հանգամանքը, որ քաղաքացիական հայցի փաստական հիմքը գործնականում անբաժանելի է գործի քրեախրավական կողմից, և գրեթե յուրաքանչյուր գործով հնարավոր է բողոք բերել քաղաքացիական հայցի մասով, սակայն դատարանի առջև դնել գործն ըստ էության կրկին քննելու և լուծելու հարցը:

Վերը նշված խնդիրը հատկապես սուր բնույթ է կրում այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանը կայացրել է արդարացման դատա-

¹ Տե՛ս «ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի արխիվ», գործ N543/03:

վճիռ: Այս պարագայում ակնհայտ է քաղ. հայցվորի և արդարացվածի շահերի միջև բախման առկայությունը, և այդ բախումն անհրաժեշտ է լուծել կա՛ն հոգուտ արդարացվածի (քաղաքացիական հայցվորին գրկելով արդարացման հիմքերի մասով վերաքննիչ բողոք բերելու իրավունքից), կա՛ն հոգուտ քաղաքացիական հայցվորի (նրան վերապահելով նման իրավունք):

Խորհրդային շատ դատավարագետներ առաջարկում էին վերը նշված երկընտրանքը լուծել հոգուտ քաղ. հայցվորի: Այսպես, Վ.Յա. Դոբրոտովը և Վ.Ս. Նիկոլաևը հաստատում էին, որ արդարացման դատավճիռների բողոքարկման՝ քաղ. հայցվորի իրավունքը ճանաչվում է շատ դատավարագետների կողմից: Նրանց կարծիքով՝ նպատակահարմար է այդ հարցը դրական լուծել նաև պրակտիկայում: Այդպիսի որոշումը կհամապատասխանի դատավճռի կառուցվածքին, որում քրեական պատասխանատվության և քաղաքացիական հայցի հիմքերն այնքան են միաձուլվում, որ դրանք ո՛չ հնարավոր է առանձին բողոքարկել, ո՛չ էլ ստուգել¹: Անհրաժեշտ է նշել, որ պրակտիկայում վերադաս դատարանը երբեմն ընդունում էր քաղաքացիական հայցվորի նման բողոքները և դրանց հիման վրա անգամ բեկանում արդարացման դատավճիռներ:

Ժամանակակից ռուսաստանցի որոշ դատավարագետներ ևս պաշտպանում են այս դիրքորոշումը: Այսպես, Ն.Ն. Կովտունն այն կարծիքն է հայտնում, որ եթե քաղաքացիական հայցվորին արդարացման դատավճռի բողոքարկման իրավունք չվերապահվի, ապա դրանով կխախտվի նրա իրավունքների դատական պաշտպանության իրավունքը²:

Սակայն, մեր կարծիքով, քրեական դատավարության սկզբունքները և առհասարակ քրեական դատավարության ժամանակակից առաջնահերթությունները թելադրում են այս երկընտրանքը լուծել հոգուտ արդարացվածի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ի տարբերություն արդարացվածի՝ քաղաքացիական հայցվորի շահը բացառապես գույքային է³:

¹ Տե՛ս **Άϊδισορά Α.Β., Ίεερεααά Α.Ν.** Ἰ ἀίνίιαάίίνοῦ ἰδεαῖαῖδα ἂ νίαάονεῖί ὀαῖ εῖαῖίί ἰδῖ ὀαῖνῖα, Ἰ ., 1959, էջ 167:

² Տե՛ս **Εῖαδῖ ἰ.ἰ.** նշված աշխատությունը, էջ 355-356:

³ Տե՛ս **Δαδῖα Δ.Α.** Ὁ-αῖοῖ εεε ὀαῖ εῖαῖί-ἰδῖ ὀαῖνῖαεῖίε ἂαγῖαεῖίίῖ, Ἰ ., 1961, էջ 256:

Այս հարցը միանշանակորեն լուծվել է ՀՀ քր.դատ.օր. 400 հոդվածով, որը դատարանին արդարացիորեն իրավունք չի վերապահում քաղաքացիական հայցվորի բողոքի հիման վրա բեկանել արդարացման դատավճիռը և կայացնել մեղադրական դատավճիռ:

Գործող օրենսդրությամբ քաղաքացիական հայցվորը կարող է բողոքարկել թե՛ մեղադրական և թե՛ արդարացման դատավճիռները միայն այն դեպքում, եթե բողոքով անձի մեղավորության և անմեղության հարցը կասկածի տակ չի դրվում: Որպես կանոն, դա տեղի է ունենում նյութական օրենքը սխալ կիրառելու և գործի հանգամանքներին քաղաքացիական հայցի հետ կապված դատարանի հետևությունների անհամապատասխանության հիմքերով:

Քաղաքացիական պատասխանողը պաշտպանության կողմը ներկայացնող սուբյեկտ է, որն իրեն ներկայացված քաղաքացիական հայցի մասով ունի վերաքննիչ բողոքարկման իրավունք (ՀՀ քր.դատ.օր. 75 հոդվ. 1-ին մասի 13-րդ կետ և 376 հոդվ. 1-ին մաս):

Քաղաքացիական պատասխանող կարող է ճանաչվել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը քաղաքացիական օրենսգրքին համապատասխան պատասխանատվություն է կրում հանցագործությամբ հասցված վնասի համար (ՀՀ քր.դատ.օր. 74 հոդված):

Եթե քաղաքացիական հայցվորը, որպես կանոն, քրեական դատավարությունում ունենում է նաև տուժողի կարգավիճակ, ապա մեղադրյալը քաղաքացիական պատասխանող ճանաչվել չի կարող:

Քաղաքացիական պատասխանողի կողմից վերաքննիչ բողոք բերելու հիմքեր, որպես կանոն, լինում են մեղադրական դատավճիռներում: Սակայն չի բացառվում նաև քաղաքացիական պատասխանողի կողմից առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճռի կամ գործը կարճելու մասին որոշման բողոքարկումը: Օրինակ՝ հնարավոր է դատարանը գտնի, որ անչափահասը գույքային վնասը հասցրել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, և դրա հիման վրա նրա նկատմամբ կայացնի արդարացման դատավճիռ, սակայն միաժամանակ բավարարի քաղաքացիական հայցը՝ քաղաքացիական պատասխանողին (անչափահասի հորը) պարտավորեցնելով հատուցել հասցված վնասը: Անշուշտ, քաղաքացիական պատասխանողն իրավասու է բողոքարկել նման դատավճիռները:

Ինչ վերաբերում է մեղադրական դատավճիռներին, ապա մենք համաձայն ենք Վ.Ա. Պոզնանսկու այն տեսակետին, որ իր բողոքում քաղաքացիական պատասխանողն իրավասու է անդրադառնալ նաև հանցադեպին ու հանցակազմի հատկանիշներին՝ հիմնավորելով ամբաստանյալի անմեղությունը¹: Բանն այն է, որ քաղաքացիական հայցի և քրեական պատասխանատվության հիմքերի միաձուլման պայմաններում օրինական շահերի վերը ներկայացված բախումն այստեղ բացակայում է:

Օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ որևէ իրավական խոչընդոտ չկա, որպեսզի քաղաքացիական պատասխանողը բողոքարկի քաղաքացիական պատասխանատվության հիմքի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի հետևությունները:

Անհրաժեշտ է նշել նաև, որ իրենց ներկայացուցիչների հետ թե՛ քաղաքացիական հայցվորի և թե՛ քաղաքացիական պատասխանողի հարաբերություններն իրենց բնույթով չեն տարբերվում տուժողի ու նրա ներկայացուցչի հարաբերություններից, ուստի քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի և տուժողի ներկայացուցիչների, որպես վերաքննիչ բողոքարկման սուբյեկտների իրավական վիճակը նույնական է:

ՀՀ քր.դատ.օր. 376 հոդվ. 3-րդ մասը սահմանում է, որ քաղաքացիական հայցի մասով վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն նաև *տվյալ գործով կողմեր չհանդիսացող անձինք*, եթե դատավճիռը կամ որոշումն առնչվում է նրանց շահերին: Քրեական դատավարության սուբյեկտ չհանդիսացող անձանց քաղաքացիական հայցի մասով վերաքննիչ բողոքարկման իրավունք վերապահելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում համանման իրավական նորմի առկայությամբ:

Այսպես, ՀՀ քաղ.դատ.օր. 205 հոդվածի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած դատավճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն ... գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վճիռ է կայացվել»: Ռ.Գ. Պետրոսյանը նշում է, որ այս անձանց օրենսդիրը դասել է վերաքննիչ բողոքարկման սուբյեկտների

¹ Տե՛ս **Ի ռ ի ճ ի ն ե ե Յ.Ա.** նշված աշխատությունը, էջ 56:

շարքին, որպեսզի «վերաքննիչ դատարանում նրանք մրցակցային վարույթում ընդհանուր հիմունքներով իրականացնեն իրենց այն սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, որն առաջին ատյանի դատարանը լուծել է առանց նրանց մասնակցության և որոնք պաշտպանելու հնարավորություն նրանք չեն ունեցել»¹:

ՀՀ քր.դատ.օր. 54 հոդվ. 1-ին մասի 11 կետը և 376 հոդվ.-ն ամրագրում են վերաքննիչ բողոք բերելու *դատախազի (մեղադրողի)* իրավունքը: Այս սուբյեկտը վերաքննիչ բողոքարկման իրավունքից հաճախ է օգտվում: Մեր ուսումնասիրած վերաքննիչ բողոքների 27%-ը բերվել է դատախազի կողմից:

Իբրև վերաքննիչ ատյանում հանրային շահերը ներկայացնող սուբյեկտի՝ դատախազին վերաքննիչ բողոք բերելու իրավունք վերապահելն ունի հատուկ նշանակություն: Դատախազը հսկողական գործառույթի շրջանակներում պետք է իրավունք ունենա վերաքննիչ բողոք բերել ի շահ դատավարության ցանկացած մասնակցի², այդ թվում՝ ամբաստանյալի և արդարացվածի:

Պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ մեղադրողը երբեմն օգտվում է դատավճիռն ի շահ ամբաստանյալի բողոքարկելու օրենսդրական հնարավորությունից: Օրինակ՝ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 2003թ. հուլիսի 3-ին կայացված դատավճռով Կ.Թ.-ը մեկ տարի ժամկետով ազատազրկման է դատապարտվել ծանրացուցիչ հանգամանքներում կատարված դիտավորությամբ թեթև մարմնական վնասվածք հասցնելու համար (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 109 հոդվ. 2-րդ մաս): Այդ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել մեղադրողը՝ խնդրելով ամբաստանյալի նկատմամբ նշանակել ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ: Վերաքննիչ դատարանը 2003թ. օգոստոսի 6-ի որոշմամբ բավարարել է մեղադրողի վերաքննիչ բողոքը, ամբաստանյալի նկատմամբ կիրառված պատիժը մեղմացրել է և նրան դատապարտել է տուգանքի 60 հազար դրամի չափով³:

¹ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.** Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Եր., 2003, էջ 548:

² Տե՛ս **Արեաթեա Ա.Է.** նշված աշխատությունը, էջ 92:

³ Տե՛ս «ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի արխիվ», գործ N359/03:

Ամբաստանյալի վիճակի վատթարացում պահանջելու անթույլատրելիության մասին դրույթը դատախազի վրա չի տարածվում: Սակայն իր պահանջներում նա չի կարող դուրս գալ ամբաստանյալին առաջադրած մեղադրանքի սահմաններից:

Համեմատած ՀՀ նախկին քրեադատավարական օրենսդրության հետ, որպես բողոք բերող սուբյեկտի, դատախազի կարգավիճակը որոշակիորեն փոփոխվել է և ստացել է առավելապես դիսպոզիտիվ բնույթ:

Այսպես, բողոք բերելն այսուհետև դատախազի ոչ թե պարտականությունն է (ՀԽՍՀ 1961թ. քր.դատ.օր. 35 հոդվածի 2-րդ մաս), այլ իրավունքը:

Բացի այդ, ՀՀ քր.դատ.օր. 376 հոդվ. 2-րդ մասը սահմանել է, որ բողոք բերելու իրավունք ունի գործի քննությանը մեղադրողի կարգավիճակով մասնակցած դատախազը: Այսինքն՝ գործին չմասնակցելու դեպքում ՀՀ գլխավոր դատախազը, մարզի (Երևան քաղաքի), Երևան քաղաքի համայնքների դատախազները, նրանց տեղակալները և օգնականներն այդ իրավունքից զրկվել են:

Անշուշտ, այս սահմանափակմամբ օրենսդիրը ձգտել է երաշխավորել դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազի ինքնուրույնությունը: Սակայն, մեր կարծիքով, մարզի (Երևան քաղաքի), Երևան քաղաքի համայնքների և վերադաս դատախազները վերաքննիչ բողոք բերելու իրավունք պետք է ունենան: Բանն այն է, որ գործող կարգը հակասում է դատախազության կենտրոնացվածության հատկանիշին¹:

Համակարգը չի կարող միասնական և կենտրոնացված լինել, երբ տվյալ համակարգի լիազորությունների հետ կապված հարցերում ստորադասն ազատ է ինքնուրույն ընտրել իր վարքագծի չափը, իսկ վերադասը չունի այդ որոշման վրա ներազդելու դատավարական-իրավական լծակներ:

Ավելորդ չէ նշել, որ անգամ պետական մեղադրողի լայն ինքնուրույնության կողմնակից Վ.Ա. Պոզնանսկին չէր վիճարկում բողոք բերե-

¹ ՀՀ Սահմանադրության 2005թ. խմբագրությամբ 103 հոդվածի տեքստից «կենտրոնացվածություն» եզրույթը հանվել է: Սակայն «դատախազության համակարգը ղեկավարում է գլխավոր դատախազը» սահմանադրական դրույթը մասամբ արտահայտում է դատախազության կենտրոնացվածության հատկանիշը: Այն ամրագրված է նաև դատախազության մասին ՀՀ օրենքի 5 հոդվածի 1-ին մասում:

համեմատ՝ ամբաստանյալի վիճակի վատթարացման ավելի խիստ պահանջներ, եթե ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ, որոնք կարող էին ազդած լինել մեղադրողի ներքին համոզման վրա:

Օրինակ՝ եթե առաջին ատյանի դատարանում հանցադեպի բացակայության հիմքով մեղադրողը հրաժարվել է մեղադրանքից, և նույն հիմքով դատարանը կայացրել է գործով վարույթը կարճելու մասին որոշում, ապա գործի փաստական հանգամանքներին դատարանի հետևությունների անհամապատասխանության հիմքով մեղադրողի կողմից այդ որոշման վերաքննիչ բողոքարկումը կհակասի նրա ներքին համոզմանը:

Վերոշարադրյալն ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ քր.դատ.օր.-ով վերաքննիչ բողոքարկման իրավունք ունեցող անձանց և մարմինների շրջանակը ենթակա է ընդլայնման, իսկ որոշ սուբյեկտների կողմից բողոքարկման իրավունքի իրականացման պայմաններն ունեն հստակեցման կարիք:

§ 4. Վերաքննիչ բողոքարկման դատավարական կարգը

Քրեական դատավարությունում վերաքննիչ վարույթ հարուցելու համար վերաքննիչ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտները պարտավոր են պահպանել վերաքննիչ բողոքարկման դատավարական կարգը:

«Վերաքննիչ բողոքարկման դատավարական կարգ» ասելով՝ հասկանում ենք.

ա) քրեական դատավարության սուբյեկտների դատավարական գործունեություն, որի արդյունքում վերաքննիչ բողոքարկման սուբյեկտներն իրականացնում են վերաքննիչ բողոքարկման իրենց իրավունքը.

բ) քրեադատավարական իրավունքի ինստիտուտ, որը կարգավորում է այդ գործունեությունը:

Վերաքննիչ բողոքարկման կարգը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 378-383, 388 և 389 հոդվածներով: Դրանց վերլուծությունը թույլ է տալիս վերաքննիչ բողոքարկման կարգի քրեադատավարական ինստիտուտով կանոնակարգվող դատավարական իրավահարաբերությունները դասակարգել հետևյալ խմբերի՝

ա) այն դատական մարմնի սահմանման հետ կապված իրավահարաբերություններ, որին պետք է ներկայացվի վերաքննիչ բողոքը (ՀՀ քր.դատ.օր. 378 հոդված),

բ) վերաքննիչ բողոքի ընդունման և առանց քննության թողնելու հետ կապված իրավահարաբերություններ (ՀՀ քր.դատ.օր. 379 հոդվ. 2-րդ մաս, 381 հոդվ. 2-րդ մաս),

գ) վերաքննիչ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու հետ կապված իրավահարաբերություններ (ՀՀ քր.դատ.օր. 380 հոդված),

դ) վերաքննիչ բողոքի մասին կողմերի ծանուցման և դրա դեմ առարկությունների ներկայացման հետ կապված իրավահարաբերություններ (ՀՀ քր.դատ.օր. 382 հոդված),

ե) վերաքննիչ բողոքը հետ վերցնելու հետ կապված իրավահարաբերություններ (ՀՀ քր.դատ.օր. 383 հոդվ. 3-րդ մաս),

զ) վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանի նիստ նշանակելու հետ կապված իրավահարաբերություններ (ՀՀ քր.դատ.օր. 388 և 389 հոդվածներ):

Իրավահարաբերությունների նշված խմբերի միջև առկա է սերտ կապ և փոխալայնման ավորվածություն: Այնուհանդերձ, դրանց թվում առանցքայինն առաջին խումբ իրավահարաբերություններն են: Վերաքննիչ բողոքարկման ենթափուլում դատավարության մասնակիցների իրավունքների լիարժեք իրացումը մեծապես պայմանավորված է այն հարցի ճիշտ լուծմամբ, թե արդյոք վերաքննիչ բողոքը պետք է ներկայացվի բողոքարկվող որոշումը կայացրած առաջին ատյանի դատարան⁶, թե՞ անմիջականորեն վերաքննիչ դատարան:

ՀՀ քր.դատ.օր. 378 հոդվածի համաձայն՝ վերաքննիչ բողոքը ներկայացվում է վերաքննիչ դատարան, իսկ դրա պատճենը՝ դատավճիռը կայացրած դատարան: Սահմանված կարգի առավելությունները, մեր կարծիքով, հետևյալներն են՝

1) վերաքննիչ բողոքի ընդունման հետ կապված հարցերը լուծում է վերաքննիչ դատարանը՝ ընդհանուր մոտեցում ձևավորելով այդ փաստաթղթի բովանդակությանը ներկայացվող պահանջների նկատմամբ: Այս հանգամանքը մենք հատկապես կարևորում ենք՝ վերաքննիչ բողոքի բովանդակության նկատմամբ պահանջների խստացման անհրաժեշտությունից ելնելով:

2) վերաքննիչ բողոքի ընդունման հարցում վերաքննիչ դատարանը կարող է ավելի անկողմնակալ լինել, քան բողոքարկվող դատավճիռը կայացրած առաջին ատյանի դատարանը:

ՀՀ քր.դատ.օր. 378 հոդվածով սահմանված կարգն ունի նաև որոշակի թերություններ: Մասնավորապես՝

1) Հայաստանի Հանրապետությունում քրեական և զինվորական գործերով միակ վերաքննիչ դատարանը գտնվում է Երևան քաղաքում, ուստի գործող կարգը հակասում է արդարադատության տարածքային մատչելիության սկզբունքին¹:

2) Գործող կարգի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումը բողոքարկող սուբյեկտը վերաքննիչ բողոքը վերաքննիչ դատարան ներկայացնելու հետ մեկտեղ պետք է լրացուցիչ գործողություններ կատարի՝ բողոքի պատճենը բողոքարկվող դատավճիռը կայացրած դատարան ներկայացնելու համար:

Այս թերությունն ունի նաև մասնավոր դրսևորում: Այսպես, եթե ՀՀ քր.դատ.օր. 380 հոդվ. 1-ին մասի հիման վրա վերջնական որոշումը կայացրած առաջին ատյանի դատարանը բավարարում է վերաքննիչ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, ապա ըստ օրենսգրքի 378 հոդվածի՝ բողոքատուն պետք է լրացուցիչ գործողություններ կատարի՝ բողոքը վերաքննիչ դատարան հանձնելու համար:

3) Օրենքը չի սահմանում վերաքննիչ բողոքի պատճենը դատավճիռը կայացրած դատարան ներկայացնելու առավելագույն ժամկետ, ինչպես նաև այն իրավական հետևանքները, որոնք կառաջանան բողոքի պատճենն ուշ ներկայացնելու դեպքում:

ՀՀ քր.դատ.օր. 378 հոդվածով սահմանված կարգի թերությունները վերացնելու համար Գ.Ս. Ղազինյանն առաջարկում է փոփոխել այն և կողմերին ընտրության հնարավորություն տալ. վերաքննիչ բողոքը ներկայացնել առաջին², թե՞ վերաքննիչ ատյանի դատարանի միջոցով²:

Անհրաժեշտ է նշել, որ վերաքննիչ բողոքն առաջին ատյանի դատարանի միջոցով բերելու նպատակահարմարությունն ընդունում են շատ պրակտիկ իրավաբաններ: Այսպես, մեր կողմից հարցված 45 դա-

տավորներից, փաստաբաններից և դատախազներից 29-ը կամ շուրջ 65%-ը «քրեական դատավարությունում ո՞ր դատական մարմնին պետք է կողմը ներկայացնի վերաքննիչ բողոքը» հարցին պատասխանել է՝ «միայն բողոքարկվող որոշումը կայացրած դատարան» կամ «բողոքարկողի հայեցողությամբ կամ վերաքննիչ, կամ առաջին ատյանի դատարան»:

Համաձայնելով Գ.Ս. Ղազինյանի առաջարկությանը՝ կարծում ենք, որ վերաքննիչ բողոքարկման կարգի մեջ դիսպոզիտիվության սկզբունքի դերի բարձրացումը համապատասխանում է կողմերի օրինական շահերին:

Նշված փոփոխության հետ մեկտեղ անհրաժեշտ է խորացնել վերաքննիչ բողոք բերելու հետ կապված իրավահարաբերությունների ողջ համալիրի կանոնակարգման մակարդակը, ինչը հնարավորություն կտա երաշխավորել իրավասու սուբյեկտների վերաքննիչ բողոքարկման իրավունքը, ապահովել վերաքննիչ բողոքին ծանոթանալու և առարկություններ ներկայացնելու կողմերի իրավունքը, ինչպես նաև նվազեցնել վերաքննիչ վարույթում դատավարական ժամկետները խախտելու հավանականությունը:

Այս առումով հատկապես կարևոր է ներկայացված վերաքննիչ բողոքին ընթացք տալու հարցը:

Այսպես, տրված վերաքննիչ բողոքի վերաբերյալ բողոքը ստացած դատարանը կարող է կատարել հետևյալ երեք գործողություններից որևէ մեկը՝

- ա) ընդունել վերաքննիչ բողոքը,
- բ) բողոքը թողնել առանց քննության,
- գ) բողոքը վերադարձնել բողոքատուին վերակազմելու համար (ՀՀ քր.դատ.օր. 379 հոդվածի 2-րդ մաս և 381 հոդվածի 2-րդ մաս):

Ըստ ՀՀ քր.դատ.օր. 379 հոդվածի 2-րդ մասի՝ «ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության», իսկ ըստ 381 հոդվ. 2-րդ մասի՝ «այն դեպքում, երբ բերված բողոքը չի համապատասխանում դրան ներկայացվող պահանջներին, ինչը խոչընդոտում է գործի քննությանը, բողոքը համարվում է տրված, սակայն դատարանի կողմից վերադարձվում է վերակազմելու համար՝ նշելով կոնկրետ ժամկետ: Այդ ժամկետը չի մտնում վերաքննիչ դատարանում գործերի քննության ժամկետի

¹ Տե՛ս Ղազինյան Գ.Ս. նշված աշխատությունը, էջ 391-392:

² Տե՛ս Ղազինյան Գ.Ս. նշված աշխատությունը, էջ 391-392:

մեջ: Վերակազմման համար սահմանված ժամկետում բողոքը չվերակազմելու դեպքում բողոքը համարվում է չտրված»:

Ինչպես երևում է, քննարկվող հարցի կանոնակարգումը թերի է, մակերեսային և ոչ ամբողջական: Այսպես՝

1) Վերաքննության կարգով գործերի դատական քննության առավելագույն կամ նվազագույն *տևողություն* ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված չէ: Մինչդեռ ՀՀ քր.դատ.օր. 388 հոդվածն ամրագրում է վերաքննության կարգով գործերի դատական քննությունը *սկսելու* ժամկետները: Ուստի ՀՀ քր.դատ.օր. 381 հոդվածի 2-րդ մասում ամրագրված «վերաքննիչ բողոքը վերակազմելու համար տրված ժամկետը չի մտնում վերաքննիչ դատարանում գործերի քննության ժամկետի մեջ» արտահայտությունը ճշգրիտ չէ: Մեր կարծիքով՝ այստեղ օրենսդիրը նկատի է ունեցել վերաքննիչ դատարանում *գործի քննությունը սկսելու* ժամկետը:

2) Պարզ չէ, թե ինչպես պետք է ձևակերպվի և ինչ ժամկետում պետք է կատարվի վերաքննիչ բողոքն ընդունելը, առանց քննության թողնելը կամ վերակազմելու համար բողոքատուին վերադարձնելը:

3) Կարգավորված չէ, թե ինչպես պետք է վարվի դատարանը, եթե բողոքը ներկայացվել է վերաքննիչ բողոքարկման առարկայի մեջ չմտնող դատավարական որոշումների դեմ, կամ այն ներկայացրել է ոչ պատշաճ սուբյեկտը, կամ եթե բողոքարկողը վերակազմման համար սահմանված ժամկետում բողոքը չի վերակազմել:

4) Սահմանված չէ վերակազմելու համար վերաքննիչ բողոքի վերադարձման դեպքում տրվող առավելագույն ժամկետը:

5) Սահմանված չէ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը բողոքարկելու հնարավորություն:

Անդրադառնալով վերաքննիչ բողոքն ընդունելու փաստի ձևակերպման հարցին՝ Վ.Լ. Գոլովկովը նշում է, որ վերաքննիչ վարույթն անհրաժեշտ է հարուցված համարել ներկայացված բողոքը դատարանի գրասենյակում գրանցելու պահից: Բացի այդ, ռուսաստանցի դատավարագետը կարծիք է հայտնում, որ աննպատակահարմար է բարդացնել վերաքննիչ բողոքարկման կարգը՝ սահմանելով վերաքննիչ բողոքն ընդունելու մասին որոշում կայացնելու օրենսդրական պահանջ¹:

¹ Տե՛ս **Артеста А.Е.** նշված աշխատությունը, էջ 107:

Մեր կարծիքով՝ վերաքննիչ բողոքը ստանալու փաստը դատարանի գրասենյակում գրանցելը և վերաքննիչ բողոքն ընդունելը չի կարելի նույնացնել: Վերաքննիչ բողոքն ընդունելու փաստը դատավարական ձևի շրջանակներում առանձին արձանագրելու կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերաքննիչ բողոքի մասին կողմերին ծանուցելու դատարանի պարտականությունը կարող է ծագել միայն վերաքննիչ բողոքն ընդունելուց հետո: Հարցի չկարգավորված լինելու պայմաններում հնարավոր է, որ առաջին ատյանի դատարանը վերաքննիչ դատարան ներկայացված, բայց դեռևս չընդունված վերաքննիչ բողոքի պատճենի հիման վրա կողմերին ծանուցի գործի վերաքննիչ բողոքարկման մասին, սակայն հետագայում վերաքննիչ դատարանը բողոքը վերակազմելու համար վերադարձնի բողոքատուին:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք վերաքննիչ դատարանին օրենքով պարտավորեցնել վերաքննիչ բողոքը ստանալու ոչ ուշ, քան հաջորդ օրն ընդունել հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1. որոշում վերաքննիչ բողոքն ընդունելու մասին,
2. որոշում վերակազմելու համար բողոքը վերադարձնելու մասին,
3. որոշում վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին

(այն հիմքով, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է վերաքննիչ բողոքարկման առարկայի մեջ չմտնող դատավարական որոշումների դեմ, կամ այն ներկայացրել է ոչ պատշաճ սուբյեկտը, կամ բողոքը ժամկետանց է, կամ վերակազմման համար սահմանված ժամկետում բողոքը չի վերակազմվել):

Կարծում ենք, անհրաժեշտ է նաև ՀՀ քր.դատ.օր.-ում սահմանել վերաքննիչ բողոքը վերադարձնելիս վերակազմելու համար տրվող առավելագույն ժամկետ: Հաշվի առնելով ձևավորված պրակտիկան՝ կարծում ենք, հարցի ամենաօպտիմալ լուծումը բողոքը վերակազմելու համար 5-օրյա առավելագույն ժամկետ սահմանելն է:

Իրավաբանական գրականության մեջ կարծիք է հայտնվել այն մասին, որ անհրաժեշտ է սահմանել բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը բողոքարկելու հնարավորություն¹: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերաքննիչ բողոքն առանց

¹ Տե՛ս **Артеста А.Е.** նշված աշխատությունը, էջ 109:

քննության թողնելու մասին անօրինական կամ անհիմն որոշմամբ կարող է խախտվել անձի՝ վերաքննիչ բողոքարկման իրավունքը:

Մեր կարծիքով, սակայն, աննպատակահարմար է բողոքը քննող մարմին սահմանել վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացրած դատական մարմնի վերադաս դատարանը¹: Դա, նախ, անհարկի կերկարածգի վերաքննիչ բողոքարկման ենթափուլը և կբարդեցնի դրա դատավարական ձևը:

Բացի այդ, քանի որ մենք անհրաժեշտ ենք համարում կողմերին հնարավորություն տալ վերաքննիչ բողոքը ներկայացնել թե՛ առաջին ատյանի դատարան և թե՛ վերաքննիչ դատարան, ուստի նման կարգավորման պայմաններում որպես «վերադաս դատարան» մի դեպքում հանդես կգա վերաքննիչ դատարանը, մյուս դեպքում՝ վճռաբեկ դատարանը: Իսկ նման տարբերակված մոտեցում դրսևորելու կարիք չկա:

ՀՀ քր.դատ.օր. 51 հոդվածով, ինչպես նաև 90 հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգի հետ համանմանությամբ՝ ավելի նպատակահարմար է համապատասխան բողոքը քննելու և լուծելու լիազորությամբ օժտել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահին:

Վերաքննիչ բողոքարկման կարգը սահմանող իրավական ինստիտուտներից անձի քրեադատավարական իրավունքների պաշտպանման հստակ ընդգծված ուղղվածություն ունի վերաքննիչ բողոքարկման բաց թողնված ժամկետի վերականգնման ինստիտուտը:

Ընդհանուր կարգի համաձայն՝ վերաքննիչ բողոքարկման ժամկետը բնույթով իրավունք դադարեցնող է, և տասնհինգօրյա ժամկետը լրանալուց հետո առաջին ատյանի դատարանի վերջնական որոշման բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների կողմից պասիվ վարքագիծ դրսևորելու դեպքում տվյալ գործով վարույթը թևակոխում է վերջին՝ դատական որոշումների կատարման փուլ՝ շրջանցելով, մասնավորապես, վերաքննիչ ատյանում վարույթի փուլը:

Այնուհանդերձ, օրենքը նախատեսել է գործը դատական որոշումների կատարման փուլից վերաքննիչ վարույթ վերադարձնելու հնարավորություն: Մասնավորապես, ՀՀ քր.դատ.օր. 380 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահման-

¹ Տե՛ս **Արեաբեթ Ա.Է.** նշված աշխատությունը, էջ 111:

ված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատավճիռ կամ որոշում կայացնող դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը քննվում է դատական նիստում դատավճիռ կամ որոշում կայացրած դատարանի կողմից, որն իրավունք ունի կանչել միջնորդություն հարուցած անձին՝ բացատրություններ տալու համար»:

Ինչպես երևում է, ՀՀ քր.դատ.օր. 380 հոդվածով սահմանված չեն նշված միջնորդության հիմքերը, դրա ձևը, այն ներկայացնելու առավելագույն ժամկետը, իսկ միջնորդությունը քննելու և լուծելու կարգավորումը թերի է: Օրինակ՝ պարզ չէ, թե ինչ իմաստ ունի միջնորդությունը քննել և լուծել դատական նիստում, եթե ամրագրված չէ դատավարության և ոչ մի մասնակցի, այդ թվում՝ միջնորդողի իրավունքը դատարանի կամքից անկախ մասնակցելու դատական նիստին: Միջնորդությունը հարուցած անձն իրավունք ունի դատական նիստին մասնակցել միայն դատարանի հայեցողությամբ:

Վերաքննիչ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու հետ կապված իրավահարաբերություններն ավելի մանրամասն կանոնակարգված են ՌԴ քր.դատ.օր.-ով: Այսպես, ՌԴ քր.դատ.օր. 357 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «բաց թողնված ժամկետը վերականգնվում է այն դեպքում, եթե սույն օրենսգրքի 354 հոդվ. 4 և 5 մասերում նշված անձանց (խոսքը վերաբերում է վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտներին՝ Ռ.Մ.) բողոքարկվող դատական որոշման պատճենները տրվել են դրա հրապարակման օրվանից 5 օր անցնելուց հետո»:

Ռուսաստանի դատավարագետներն ընդհանուր առմամբ դրական են բնութագրում ՌԴ քր.դատ.օր. 357 հոդվ. 2-րդ մասով ամրագրված նորույթը՝ վերաքննիչ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու անվերապահ հիմք նախատեսելը¹:

Իրոք, վերը նշված դրույթը գործունե երաշխիք է վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների իրավունքների պաշտպա-

¹ Տե՛ս **Նեարժաա Ի.Ն.** նշված աշխատությունը, էջ 140, **Արեաբեթ Ա.Է.** նշված աշխատությունը, էջ 86, **Ճաչեթեթա Ա.Ի.** . *Այաեթյեթյ ա թաթեթաթի ռոթիթեթաթեթաթաթ, Ի ., 2004, էջ 104:*

նության համար և միևնույն ժամանակ կարող է նպաստել դատական որոշման պատճենները դատավարության մասնակիցներին հանձնելու պարտականությունը ժամանակին կատարելուն (ՀՀ քր.դատ.օր. 375 հոդվ.), ուստի և անհրաժեշտ է ընդօրինակել Ռ-Դ քր.դատ.օր. 357 հոդվ. 2-րդ մասում ամրագրված դրույթը:

Սակայն իրավաբանական գրականության մեջ քննադատության է արժանացել Ռ-Դ քր.դատ.օր. 357 հոդվ. 2-րդ մասով ամրագրված այն մոտեցումը, որով դատարանին պարտավորեցվում է անկախ վերաքննիչ բողոքի բերման ժամանակից բավարարել բաց թողնված բողոքարկման ժամկետը վերականգնելու միջնորդություն¹:

Մեր կարծիքով՝ ճիշտ կլինի բաց թողնված ժամկետի անվերապահ վերականգնման ժամանակաշրջանը սահմանափակել պատճենը համապատասխան սուբյեկտին հանձնելուց հետո 15 օրով՝ վերաքննիչ բողոքարկման ընդհանուր ժամկետով:

Կարծում ենք, անհրաժեշտ է օրենքով նաև նախատեսել վերաքննիչ բողոքարկման ոչ անվերապահ հիմքերի ոչ սպառնիչ ցանկ: Մասնավորապես, հաշվի առնելով ձևավորված պրակտիկան, նպատակահարմար է սահմանել հետևյալ հիմքերը՝ վերաքննիչ բողոքարկման ժամկետի ընթացքում բողոքատուի ծանր հիվանդությունը, գործուղումը, առաջին ատյանի դատարանի նիստի արձանագրության կազմման, պատրաստման, դրա պատճենի (համակարգչային արձանագրման կրիչի օրինակի) տրամադրման, ներկայացված դիտողությունների վերաբերյալ որոշում կայացնելու ժամկետների խախտումը (ՀՀ քր.դատ.օր. 315 և 316 հոդվածներ), ինչպես նաև տարերային աղետը²:

Մենք նպատակահարմար ենք համարում տարբերակված մոտեցում որդեգրելը նաև վերաքննիչ բողոքարկման բաց թողնված ժամկետի վերականգնման ընթացակարգի հարցում: Այսպես, կարծում ենք ավելորդ է բաց թողնված ժամկետի վերականգնման միջնորդությունը քննել և լուծել դատական նիստում, եթե այն բերվել է անվերապահ հիմքով:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է բարձրացնել մրցակցային տարրի դերը ոչ անվերապահ հիմքերով միջնորդությունների քննության և լուծման ընթացակարգում:

¹ Տե՛ս **Άιτεαία Α.Ε.** նշված աշխատությունը, էջ 88:

² Տե՛ս **Εἰσδοί Ι.Ι.** նշված աշխատությունը, էջ 368:

Մասնավորապես, կարծում ենք, անհրաժեշտ է դատավարության մասնակիցներին ծանուցել բողոքարկման բաց թողնված ժամկետի վերականգնման միջնորդությունը քննելու համար հրավիրված դատական նիստի տեղի և ժամանակի մասին և ամրագրել նրանց իրավունքը մասնակցելու այդ նիստին՝ դրա հետ մեկտեղ, պատշաճ ձևով ծանուցված անձանց չներկայանալը խոչընդոտ չհամարելով միջնորդության քննության և լուծման համար:

Պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ բաց թողնված վերաքննության ժամկետի վերականգնման միջնորդությունները հաճախ են հարուցվում: Մեր կողմից հարցված առաջին ատյանի տասը դատավորներից յոթի պրակտիկայում պատահել են նման միջնորդություններ, և դրանք բոլորն էլ բավարարվել են:

Այնուամենայնիվ, կարևոր երաշխիքային նշանակություն ունի բաց թողնված ժամկետի վերականգնման միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու հնարավորությունը: Այսպես, ըստ ՀՀ քր.դատ.օր. 380 հոդվածի 1-ին մասի՝ «Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշումը տասնհինգօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, որն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը և քննել գործը՝ պահպանելով սույն օրենսգրքի 382 հոդվածում և 383 հոդվածի երկրորդ մասում շարադրված պահանջները»:

Դատավարության մասնակիցների իրավունքների ապահովման և վերաքննիչ վարույթի արդյունավետության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն վերաքննիչ բողոքի մասին կողմերի ծանուցման և դրա դեմ առարկությունների ներկայացման հետ կապված իրավահարաբերությունները:

Այսպես, վերաքննիչ բողոքի պատճենը ստանալուց հետո առաջին ատյանի դատարանը պարտավոր է կատարել որոշակի դատավարական գործողություններ: Մասնավորապես, նա կողմերին ծանուցում է ստացված բողոքի մասին՝ ծանուցմանը կցելով բողոքի պատճենը: Ծանուցման մեջ դատարանը պարզաբանում է նաև գրավոր առարկությունները ներկայացնելու կողմերի իրավունքը և դրանց ներկայացման ժամկետները: ՀՀ քր.դատ.օր. 382 հոդվածը սահմանում է, որ այդ ժամկետը չի կարող գերազանցել 15 օրը, թեև օրենսգրքի 383 հոդվ. 2-րդ

մասի շարադրանքից բխում է, որ առարկությունները ներկայացնելու ժամկետը պետք է համընկնի դատավճռի բողոքարկման ժամկետի մնացորդի հետ:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ո՞րն է վերաքննիչ բողոքի վերաբերյալ կողմի ներկայացրած առարկության դատավարական բնույթը, ինչպիսի՞ օ՞ իրավական հետևանքներ է այն առաջացնում:

Որոշ հեղինակներ առարկությունը համարում են վերաքննիչ բողոքի դրսևորման ձև: Այսպես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ *առարկությունը* (այդ բառի իսկական իմաստով) ենթադրում է այս կամ այն բողոքարկողի ներկայացրած վերաքննիչ բողոքի մեջ արտահայտված դիրքորոշման հետ որոշակի անհամաձայնություն, Ա.Ս. Ալեքսանդրովը և Ն.Ն. Կովտունը կարծիք են հայտնում այն մասին, որ այդ առարկություններն ավելի շուտ հանդիսանում են այս կամ այն վերաքննիչ պահանջների արտահայտման ինքնուրույն ձև այն անձի կողմից, որը ձևակերպել է դրանք և ցանկանում է անպայման հասցնել վերաքննիչ ատյանի դատարանին, իբրև տվյալ գործով իր դիրքորոշում, քան պարզապես բողոքին միանալու (ավելի ճիշտ՝ չմիանալու) ձև¹:

Սակայն, մեր կարծիքով, իրենց բնույթով և իրավական հետևանքներով առարկություններն էապես տարբերվում են վերաքննիչ բողոքից: Եթե վերաքննիչ բողոքը տվյալ գործով վերաքննիչ վարույթի իրավական հիմքն է, ապա առարկություններն անխզելիորեն կապված են բողոքի հետ և ինքնուրույնաբար չեն կարող հիմք հանդիսանալ վերաքննիչ վարույթի համար: Օրինակ՝ եթե բողոք բերած սուբյեկտը հետ վերցնի այն, ապա առարկության հիման վրա գործը վերաքննիչ ատյանում չի կարող քննվել:

Բացի այդ, վերաքննիչ դատարանն իր վերջնական որոշման մեջ ամենևին էլ պարտավոր չէ անդրադառնալ վերաքննիչ բողոքի դեմ ներկայացված առարկություններին: Դատարանը կարող է և չնշել առարկության մեջ բերված եզրահանգումներն անհիմն համարելու հիմքերը: Մինչդեռ, ՀՀ քր.դատ.օր. 393 հոդվ. 4-րդ մասը վերաքննիչ դատարանին պարտավորեցնում է դատավճռում նշել, թե «ինչ հիմքերով է առաջին

¹ Տե՛ս **Աբաբախչյան Ա.Ն., Երանյան Ի.Ի.** Արաբոյեթիմնա յժիբճախոթի ա օաթեթիմն յժի օաննա ժիմնե: յժի աթաի ու Ե ժաթաի եթ // *Միմոթաթոթի Ե ժաթ*, 2001, N3, էջ 44:

ատյանի դատարանի դատավճիռը համարվում ճիշտ, իսկ բողոքում բերված եզրահանգումները՝ անհիմն»:

Մյուս կողմից, սակայն, առարկությունն առաջացնում է որոշակի դատավարական հետևանքներ: Մասնավորապես, այն պարտադիր կցվում է քրեական գործին և հետագայում ուղարկվում է վերաքննիչ դատարան (ՀՀ քր.դատ.օր. 382 հոդվ. 2-րդ մաս, 383 հոդվ. 2-րդ մաս):

Բացի այդ, դատաքննության ժամանակ վերաքննիչ դատարանում հրապարակվում են ինչպես բողոքները, այնպես էլ դրանց վերաբերյալ ներկայացված առարկությունները:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ կողմերն իրավունք ունեն ինչպես բողոքի, այնպես էլ առարկության հիմքերը հաստատելու համար դատարան ներկայացնել նոր նյութեր կամ միջնորդել՝ դատարան կանչելու իրենց նշած վկային կամ փորձագետին: Այլ կերպ ասած, ինչպես վերաքննիչ բողոքի, այնպես էլ դրա դեմ բերված առարկության բովանդակությունը կարող է կանխորոշել վերաքննիչ դատարանում հետազոտման ենթակա ապացույցների շրջանակը:

Այսպիսով, թեև առարկություններն իրենց բնույթով տարբերվում են վերաքննիչ բողոքից, սակայն հանդիսանում են կողմերի դատավարական շահերի պաշտպանության կարևոր միջոց: Միևնույն ժամանակ, առարկությունները կարող են առնչվել միայն բողոքում նշված հանգամանքներին, ուստի իրենց բնույթով սահմանափակ են: Եթե կողմը ցանկանում է ինքնուրույն պահանջներ ներկայացնել (օրինակ՝ մեղադրողն իր վերաքննիչ բողոքում հիմնավորում է, թե նշանակված պատիժը չափազանց մեղմ է, իսկ պաշտպանը գտնում է, որ ընդհակառակը, այն չափազանց խիստ է), ապա նա պետք է ինքնուրույն վերաքննիչ բողոք բերի:

Անհրաժեշտ է նշել, որ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը բերվել է բողոքարկման համար սահմանված 15-օրյա ժամկետի վերջին օրը, վերաքննիչ բողոքին ծանոթանալու և դրա վերաբերյալ առարկություններ ներկայացնելու կողմերի իրավունքը կարող է վերածվել ոչնչով չապահովված դեկլարատիվ ֆիկցիայի (ձևականության)¹:

¹ Տե՛ս **Աբաբախչյան Ա.Ն., Երանյան Ի.Ի.** Արաբոյեթիմնա յժիբճախոթի ա օաթեթիմն յժի օաննա ժիմնե: յժի աթաի ու Ե ժաթաի եթ, էջ 43:

Իրավաբանական գրականության մեջ առաջ են քաշվել այս խնդրի լուծման հետևյալ տարբերակները.

1. Օրենքով կարող է ամրագրվել վերաքննիչ բողոքի վերաբերյալ իրենց առարկություններն անմիջականորեն վերաքննիչ դատարան ներկայացնելու կողմերի իրավունքը¹:

2. ՀՀ քր.դատ.օր. 383 հոդվ. 2-րդ մասի համաձայն՝ «Բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո դատավճիռ կամ որոշում կայացնող դատարանը գործը՝ բողոքների վերաբերյալ ստացված առարկությունների հետ, ուղարկում է վերաքննիչ դատարան, որի մասին հայտնվում է կողմերին»: Մեկնաբանելով ՌԴ քր.դատ.օր. 359 հոդվ. 2-րդ մասով ամրագրված համանման իրավական նորմը՝ Վ.Լ. Գուլովկովը նշում է, որ «բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո» հասկացությունը չի համընկնում բողոքարկման համար սահմանված ժամկետի վերջին օրվա հետ: Նշված ժամկետի սահմանման միակ նպատակը մինչև վերաքննիչ բողոքարկման ժամկետի լրանալը գործը վերաքննիչ դատարան ուղարկելը բացառելն է: Այդ մասին է վկայում հոդվածի տեքստում «անմիջապես» բառի բացակայությունը²: Վերոգրյալի հիման վրա ռուսաստանցի դատավարագետը կարծիք է հայտնում, որ օրենքն ընդհանրապես չի սահմանել բողոքների վերաբերյալ ստացված առարկությունների հետ գործը վերաքննիչ դատարան ուղարկելու առավելագույն ժամկետը, և այդ ժամկետն ամրագրելը կարող է լուծել խնդիրը:

Մեր կարծիքով՝ քննարկվող հարցում ևս անհրաժեշտ է ճկուն մոտեցում ցուցաբերել, և դիսպոզիտիվության սկզբունքից ելնելով՝ կողմերին հնարավորության տակ առարկությունները ներկայացնել թե՛ վերաքննիչ դատարան (գործը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում) և թե՛ առաջին ատյանի դատարան՝ մինչև քրեական գործը վերաքննիչ դատարան ուղարկելը, բայց ոչ ուշ, քան վերաքննիչ բողոքարկման ժամկետը լրանալուց հետո տասնօրյա ժամկետը:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև իրենց բերած վերաքննիչ բողոքը փոփոխելու կամ լրացնելու կողմերի իրավունքի հարցը: ՌԴ քր.դատ.օր. 359 հոդվ. 4-րդ մասը սահմանում է, որ «Գանգատ

¹ Տե՛ս **ΕΓΓΛΟΙ Ι.Ι.** նշված աշխատությունը, էջ 370:

² Տե՛ս **ΆΓΕΡΑΕΤΑ Α.Ε.** նշված աշխատությունը, էջ 118-119:

կամ բողոք բերած անձը մինչև դատական նիստը սկսելն իրավունք ունի փոփոխել այն կամ լրացնել նոր փաստարկներով»: Իսկ ՀՀ քր.դատ.օր.-ը նման նորմ չի նախատեսում:

Ալենհայտ է, որ քննարկվող հարցին ռուսաստանյան և հայաստանյան օրենսդիրների մոտեցումների տարբերությունը պայմանավորված է մեր երկրներում վերաքննիչ վարույթի բնույթի տարբերություններով: Եթե ՌԴ-ում վերաքննիչ ատյանում գործի քննության սահմաններն ուղղակիորեն կախված են վերաքննիչ բողոքի բովանդակությունից, ապա ՀՀ քր.դատ.օր.-ով նախատեսված վերաքննիչ վարույթն իր բնույթով վերստուգիչ է:

Քանի որ բողոք բերած սուբյեկտը վերաքննիչ դատարանի նիստում անձամբ է ներկայացնում իր բողոքը, ապա հաշվի առնելով վերաքննիչ դատարանում գործի քննության վերստուգիչ բնույթը, բանավորությունը և անմիջականությունը՝ ոչինչ չի խոչընդոտում, որ բողոքարկողն իր ելույթում որոշակիորեն փոփոխի կամ լրացնի իր բողոքը՝ անշուշտ, չներկայացնելով ամբաստանյալի վիճակի վատթարացման նոր պահանջներ¹: Իսկ եթե մեղադրանքի կողմը ներկայացնող սուբյեկտները ցանկանան նման պահանջներ ներկայացնել, ապա վերաքննիչ բողոքարկման 15-օրյա ժամկետում նրանք ազատորեն կարող են նախնական բողոքը հետ վերցնել և նորը բերել:

Այս դիրքորոշումը պաշտպանում է Ի.Գ.Պերլովը: Ըստ խորհրդային դատավարագետի՝ եթե անձը բողոքը հետ է վերցրել մինչև բողոքարկման ժամկետը լրանալը, ապա չկա որևէ խոչընդոտ այն կրկին բերելու համար²:

ՀՀ քր.դատ.օր. 103 հոդվ. 9-րդ մասով այս դիրքորոշումն ընդունել է նաև հայաստանյան օրենսդիրը:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ վերաքննիչ բողոքարկման սուբյեկտներին վերաքննիչ բողոքները փոփոխելու կամ լրացնելու առանձին իրավունքով օժտելը նպատակահարմար չէ, քանի որ այն կհանգեցնի դատավարական ձևի չարդարացված բարդեցման:

¹ ՌԴ քր.դատ.օր.-ը ևս կողմերին իրավունք չի վերապահում լրացուցիչ բողոքում կամ բողոքի փոփոխության մեջ դնել ամբաստանյալի վիճակի վատթարացման հարց, եթե սկզբնական բողոքը նման պահանջ չէր բովանդակում:

² Տե՛ս **Ϊ άδεται Ε.Α. Εανναδεται ι ι ι α ι δ ι ε ς α ι α ν ο α ι α ν ι ι α α ο ν ε ι ι ο α ι ε ι α ι ι ι ι δ ι ο α ν η α**, էջ 225:

Վերաքննիչ բողոքարկման ընթացակարգն իր բնականոն ավարտին է հասնում վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանի նիստ նշանակելով: Դրա հետ կապված իրավահարաբերություններն օրենսդիրը կարգավորել է ոչ թե «Վերաքննիչ բողոք», այլ «Գործի քննությունը վերաքննիչ դատարանում» գլխում: Սակայն քանի որ քննարկվող իրավահարաբերությունները կազմում են վերաքննիչ բողոքարկման ենթափուլի մաս, ապա իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից ավելի ճիշտ կլինի վերաքննիչ դատարանի նիստը նշանակելու կարգը սահմանող 388 և 389 հոդվածները տեղաբաշխել ՀՀ քր.դատ.օր. 46 գլխում:

Համաձայն ՀՀ քր.դատ.օր. 389 հոդվածի՝ «Գործը վերաքննիչ դատարանում ստացվելուց հետո հանձնվում է դատարանի կազմը նախագահողին: Ուսումնասիրելով ստացված գործը՝ նախագահողն իր որոշմամբ գործը նշանակում է դատական նիստում քննության»:

Ինչպես երևում է, քրեական գործին ծանոթանալու պարտականություն կրում է միայն նախագահողը: Մինչդեռ մյուս պայմաններում դատարանի կազմի մեջ ներառված մյուս երկու դատավորների մասնակցությունը վերաքննիչ վերանայմանը կարող է ստանալ ձևական նշանակություն:

Վիճակը փոքր-ինչ շտկելու համար Գ.Ս. Ղազինյանն առաջարկում է նախագահողին օրենսդրորեն պարտավորեցնել ձեռնարկել դատական կազմի այլ անդամների կողմից գործին ծանոթանալու միջոցներ¹:

Հարկ է նշել, որ վերաքննության կարգով գործի քննության նախապատրաստմանը դատական ողջ կազմի մասնակցության անհրաժեշտությունն ընդունում են նաև պրակտիկ իրավաբանները: Մեր կողմից հարցված 45 դատավորներից, փաստաբաններից և դատախազներից 33-ը (այդ թվում՝ վերաքննիչ դատարանի 10 դատավորներից 6-ը) կամ 73%-ը (վերաքննիչ դատարանի դատավորների 60%-ը) «Ո՞ր դատավորները պետք է մասնակցեն վերաքննիչ ատյանում քրեական գործի քննության նախապատրաստմանը» հարցին պատասխանել են «Տվյալ գործը քննող ամբողջ դատական կազմը»:

Գործի ուսումնասիրության արդյունքում նախագահողը որոշում է կայացնում այն դատական նիստում քննության նշանակելու մասին:

¹ Տե՛ս Ղազինյան Գ.Ս. նշված աշխատությունը, էջ 393:

Ըստ ՀՀ քր.դատ.օր. 389 հոդվ. 3-րդ մասի՝ «Դատական նիստ նշանակելու որոշման մեջ պետք է լուծվեն հետևյալ հարցերը՝ գործի քննությունն սկսելու ժամանակը և տեղը, ելնելով դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունը պատշաճ կերպով ստուգելու անհրաժեշտությունից՝ դատական նիստում անմիջականորեն հետազոտման ենթակա ապացույցների ծավալը, դատական նիստին կանչվող վկաները, փորձագետը և այլ անձինք, եթե դա անհրաժեշտ է, ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոցը պահպանելը, փոխելը կամ վերացնելը, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում գործը դռնփակ դատական նիստում քննելու անհրաժեշտությունը»:

Ի տարբերություն առաջին ատյանի դատարանի, վերաքննիչ դատարանի դատական կազմը նախագահողը քրեական գործի քննության նախապատրաստման արդյունքում չի կարող որոշում կայացնել քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, քրեական գործի վարույթը կասեցնելու մասին, գործը մեղադրողին վերադարձնելու մասին, քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին, գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին կամ ինքնաբացարկի մասին (ՀՀ քր.դատ.օր. 292 հոդվ. 2-7 կետերով նախատեսված որոշումներ): Դատական կազմը նախագահողն իր որոշմամբ միայն կարող է գործը նշանակել դատական նիստում քննության:

Հաշվի առնելով գործի դատական քննության և վերաքննիչ վարույթի քրեադատավարական փուլերի տարբերակիչ առանձնահատկությունները՝ քննարկվող հարցին օրենսդրի մոտեցումը կարելի է ընդհանուր առմամբ դրական համարել:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ անհրաժեշտ է օրենքում հստակ ամրագրել մինչև վերաքննիչ դատարանի նիստ նշանակելը դատական կազմի մեջ մտնող յուրաքանչյուր դատավորի կողմից ինքնաբացարկի մասին որոշում կայացնելու հնարավորությունը: Բանն այն է, որ եթե գործն ուսումնասիրելիս դատավորը բացահայտում է ՀՀ քր.դատ.օր. 90 հոդվածով նախատեսված իրեն առնչվող որևէ բացարկման հիմք, ապա հարցի լուծումը մինչև դատական նիստի բացումը հետաձգելն անիմաստ է:

Ինչպես երևում է ՀՀ քր.դատ.օր. 389 հոդվածի 3-րդ մասի ձևակերպումից, դատական միատուն հետազոտման ենթակա ապացույցների ծավալի որոշումը որևէ կերպ պայմանավորված չէ վերաքննիչ բողոքի բովանդակությամբ. այդ ծավալը դատարանը որոշում է՝ «ելնելով դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունը պատշաճ կերպով ստուգելու անհրաժեշտությունից»:

Մեր կարծիքով՝ նման ձևակերպումը ոչ միայն անարդարացիորեն նսեմացնում է վերաքննիչ վարույթում վերաքննիչ բողոքի նշանակությունը, այլև կարող է մեկնաբանվել որպես դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունն ամբողջ ծավալով ստուգելու՝ վերաքննիչ դատարանի պարտականության դրսևորում, մինչդեռ դատարանը նման *պարտականություն* չի կրում: Ուստի առաջարկում ենք ՀՀ քր.դատ.օր. 389 հոդվ. 3-րդ մասի տեքստի «դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունը» արտահայտությունը փոխարինել «վերաքննիչ բողոքում նշված հանգամանքները և բողոք բերած անձի հետևությունները» արտահայտությամբ:

Իրավաբանական գրականության մեջ հասուկ ուշադրություն է դարձվում վերաքննիչ դատարանում գործերի քննությունը սկսելու ժամկետների խնդրին:

Համաձայն ՀՀ քր.դատ.օր. 388 հոդվածի՝ «վերաքննիչ բողոքի հիման վրա ստացված գործերի քննությունը վերաքննիչ դատարանը սկսում է վերաքննիչ բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում, սակայն ոչ շուտ, քան 10 օր՝ դատավճռի բողոքարկման ժամկետն անցնելու օրվանից: Հարգելի պատճառների առկայության դեպքում գործը քննող դատարանի որոշմամբ այդ ժամկետը կարող է երկարացվել, բայց ոչ ավելի, քան 10 օրով»¹:

Ինչպես երևում է, որպես դատավարական ժամկետի հաշվարկման հիմք՝ օրենսգրքում օգտագործված է «վերաքննիչ բողոքն ստանալու օր» արտահայտությունը:

¹ ՀՀ քր.դատ.օր. 388 հոդվածի տեքստի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն իր մեջ ակնհայտ մաթեմատիկական սխալ է պարունակում: Եթե բողոքը բերվել է դատավճիռը կայացնելուց ոչ ուշ, քան 9-րդ օրը, ապա վերաքննիչ դատարանը չի կարող առաջին դատական միստի օրը նշանակել այնպես, որ չխախտվի ոչ 15-օրյա, ոչ էլ 10-օրյա ժամկետը:

Ակնհայտ է, որ նման կարգավորում սահմանելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել վերաքննիչ վարույթի փուլում հնարավորինս պահպանել դատավարության ողջամիտ տևողության սկզբունքը:

Սակայն հաշվի առնելով դատավարության մասնակիցներին վերաքննիչ բողոքի մասին ծանուցելու և վերջիններիս կողմից վերաքննիչ բողոքի դեմ առարկություններ ներկայացնելու համար նախատեսված ժամանակը՝ օրենսգրքի 388 հոդվածով սահմանված ժամկետների պահպանումն անհրատեսական է:

Զննարկվող խնդրին անդրադարձել են Մ. Ադամյախյան, Լ.Ֆ. Մարտինյախինը, Վ.Լ. Գոլովկովը: Նրանք անհրաժեշտ են համարում վերաքննիչ բողոքի հիման վրա ստացված գործերի քննության ժամկետի հաշվարկման սկիզբ սահմանել գործը վերաքննիչ դատարանի կողմից ստանալու օրը¹:

Մենք ընդունելի ենք համարում ներկայացված մոտեցումը: Այն ավելի իրատեսական է և դրա օրենսդրական ամրագրումը հնարավորություն կտա խուսափել դատավարական ժամկետների խախտումներից:

Վերոգրյալն ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ վերաքննիչ բողոքարկման դատավարական կարգը կարևոր նշանակություն ունի վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրացման, վերաքննիչ վարույթի ընթացքում կողմերի դատավարական իրավունքների ապահովման և վերաքննության արդյունավետության համար: Ուստի անհրաժեշտ է որոշակիորեն մանրամասնել այդ դատավարական ինստիտուտի օրենսդրական կարգավորումը՝ միևնույն ժամանակ թույլ չտալով դատավարական ձևի անհարկի բարդեցում:

Մասնավորապես, առաջարկում ենք հետևյալ օրենսդրական փոփոխությունները՝

1. Սահմանել վերաքննիչ բողոքն առաջին ատյանի դատարանի միջոցով բերելու օրենսդրական հնարավորությունը՝ չբացառելով բողոքն անմիջականորեն վերաքննիչ դատարան ներկայացնելու կողմերի իրավունքը:

¹ Տե՛ս **Αααί ααααί Ι . Έαε αϊϊδαααααου ηαααααααε α αϊ αααααααααααα αϊ αααααααααααα αϊ αααααααααααα // «Δϊηηααααααα αααααααα», 2003, N10, էջ 52, **Αααα Α.Α.** ε αδ. նշված աշխատությունը, էջ 39, **Αϊαααα Α.Ε.** նշված աշխատությունը, էջ 126:**

2. Սահմանել դատարանի պարտականությունը վերաքննիչ բողոքը ստանալու՝ ոչ ուշ, քան հաջորդ օրը որոշում կայացնել վերաքննիչ բողոքն ընդունելու, բողոքն առանց քննության թողնելու կամ վերակազմելու համար բողոքատուին վերադարձնելու մասին:

3. Սահմանել բողոքատուին վերադարձված բողոքը վերակազմելու համար հնգօրյա առավելագույն ժամկետ:

4. Սահմանել վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը բողոքարկելու օրենսդրական հնարավորություն՝ բողոքը քննելու և լուծելու լիազորությունը վերապահելով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահին:

5. Սահմանել բաց թողնված վերաքննիչ ժամկետի վերականգրման անվերապահ հիմք (բողոքարկվող դատական որոշման պատճենը տրվել է դրա հրապարակումից 5 օր անցնելուց հետո)՝ դատավճռի պատճենը համապատասխան սուբյեկտին հանձնելուց հետո 15 օրվա ընթացքում՝ դատարանին հնարավորություն տալով միջնորդությունը լուծել առանց դատական նիստ հրավիրելու:

6. Սահմանել բաց թողնված վերաքննիչ ժամկետի վերականգրման ոչ անվերապահ հիմքերի ոչ սպառիչ ցանկ (վերաքննիչ բողոքարկման ժամկետի ընթացքում բողոքատուի ծանր հիվանդությունը, գործուղումը, առաջին ատյանի դատարանի նիստի արձանագրության կազմման, պատրաստման, դրա պատճենի տրամադրման, ներկայացված դիտողությունների վերաբերյալ որոշում կայացնելու ժամկետների խախտումը, ինչպես նաև տարերային աղետը)՝ դատարանին պարտավորեցնելով միջնորդությունը լուծել դատական նիստում:

7. Սահմանել վերաքննիչ բողոքարկման բաց թողնված ժամկետի վերականգնման միջնորդությունը քննելու համար հրավիրված դատական նիստի տեղի և ժամանակի մասին դատավարության մասնակիցներին ծանուցելու դատարանի պարտականությունը և ամրագրել նրանց իրավունքը մասնակցելու այդ նիստին:

8. Սահմանել, որ բողոքարկված որոշումը կայացրած առաջին ատյանի դատարանը քրեական գործը վերաքննիչ դատարան է ուղարկում ոչ ուշ, քան վերաքննիչ բողոքարկման ժամկետը լրանալուց հետո տասնօրյա ժամկետում:

9. Սահմանել կողմերի իրավունքը վերաքննիչ բողոքի դեմ առարկությունները ներկայացնել վերաքննիչ դատարան՝ գործը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, կամ առաջին ատյանի դատարան՝ մինչև քրեական գործը վերաքննիչ դատարան ուղարկելը:

10. Սահմանել դատական կազմը նախագահողի պարտականությունը՝ միջոցներ ձեռնարկել դատական կազմի մեջ մտնող մյուս երկու դատավորների կողմից գործին ծանոթանալու համար:

11. Սահմանել, որ դատական նիստ նշանակելու մասին որոշման մեջ դատական նիստում անմիջականորեն հետագոտման ենթակա ապացույցների ծավալը որոշվում է՝ ելնելով վերաքննիչ բողոքում նշված հանգամանքները և բողոք բերած անձի հետևությունները պատշաճ կերպով ստուգելու անհրաժեշտությունից:

12. Վերաքննիչ դատարանում գործի քննությունը սկսելու ժամկետ սահմանելու համար հիմք ընդունել ոչ թե վերաքննիչ բողոքը ստանալու, այլ գործը վերաքննիչ դատարանի կողմից ստանալու օրը:

Նշված օրենսդրական փոփոխությունները կոչված են ընդլայնելու կողմերի դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության դատավարական երաշխիքները, ինչպես նաև վերացնելու իրավակիրառ պրակտիկայում վեր հանված օրենսդրական թերությունները և բացերը:

ԳԼՈՒԽ 3.
ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ
ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ

§ 1. Գործի վերաքննիչ ստուգման առարկան,
սահմանները և դատավարական կարգը

Վերաքննության կարգով գործի քննությունը վերաքննիչ վարույթի կենտրոնական և որոշիչ մասն է: Դրա ընթացքում վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիման վրա իրականացնում է դատական ստուգում, ինչն իր հերթին անհրաժեշտ և բավարար նախադրյալներ է ստեղծում վերաքննիչ վարույթը եզրափակող դատավարական որոշում կայացնելու համար:

ՀՀ քր.դատ.օր. 386 հոդվածը սահմանում է վերաքննիչ ստուգման առարկան¹: Ըստ այդ հոդվածի՝ «Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն ստուգում է գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը»:

Ըստ Ն.Ն. Կոփտունի՝ գործի վերաքննիչ ստուգման առարկան ներառում է՝

1. դատավճռի կամ այլ վերջնական որոշման *օրինականությունը, հիմնավորվածությունը և արդարացիությունը,*

2. *սպացույցները,* որոնց հիման վրա կայացվել է բողոքարկվող դատական ակտը և որոնք անմիջականորեն հետագոտվել են առաջին ատյանի դատարանում,

¹ ՀՀ քր.դատ.օր. 386 հոդվածը վերնագրված է «վերաքննիչ բողոքի առարկան»: Սակայն դրա բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն սահմանում է ոչ թե վերաքննիչ բողոքի, այլ վերաքննիչ ստուգման առարկան: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ այդ հոդվածը տեղաբաշխված է ՀՀ քր.դատ.օր. 47 գլխում, որը կանոնակարգում է վերաքննության կարգով գործի քննության կարգը, և ոչ թե ՀՀ քր.դատ.օր. 46 գլխում, որով սահմանվում է վերաքննիչ բողոքարկման կարգը:

3. *առաջին ատյանի դատարանում գործի քննության դատավարական ձևը* (օրինակ՝ գործի ընդդատության, դատական կազմի, գործի քննության պարտադիր մասնակիցների հետ կապված կանոնները),

4. *առաջին ատյանի դատարանի բոլոր* (կամ առանձին) *գործողությունների դատավարական ձևը՝* ինչպես դրանց կատարման պայմանների, կարգի և հաջորդականության, այնպես էլ դրանց էության (սպացուցողական նշանակության) մասով,

5. *մինչդատական վարույթի դատավարական ձևը՝* ինչպես դրա կարգի, պայմանների և հիմքերի պահպանման, այնպես էլ դրա էության մասով¹:

Այս հարցի կապակցությամբ Է.Ֆ. Կուցովան նշում է, որ վերադաս դատարանը պարտավոր է ստուգել ոչ միայն ստորադաս դատարանի, այլև նախնական քննության մարմինների գործողությունների օրինականությունը, հիմնավորվածությունը և արդարացիությունը այն մասով, որն անհրաժեշտ է ստուգման նպատակներն իրականացնելու համար²:

Մեր կարծիքով՝ վերաքննիչ ստուգման առարկան կազմող հանգամանքներին անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել և առանձնացնել վերաքննիչ ստուգման *անմիջական* առարկան և վերաքննիչ ստուգման *միջնորդավորված* առարկան:

Առաջինը ներառում է ստորադաս դատարանի վերջնական որոշման օրինականությունը, հիմնավորվածությունը և արդարացիությունը: Դատավճռի նշված հատկանիշների ստուգումը վերաքննության կարգով գործը քննող դատարանի դատավարական գործունեության բուն էությունն է: Այսպես, Յա.Օ. Մոտովիլովները նշում է, որ դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունը դրա ընդհանուր դրական գնահատականն է, օրենքով ներկայացվող բոլոր պահանջները բավարարող դատավճռի բնութագիրն է³:

Իր հերթին դատավճռի օրինականությունը, հիմնավորվածությունը և արդարացիությունը ստուգվում է վերաքննիչ ստուգման միջնորդա-

¹ Տե՛ս **Εἰσαοί Ι.Ι.**, նշված աշխատությունը, էջ 344-345:
² Տե՛ս **Εσοία Υ.Օ.** Νίααοηεαγ εαηηαοεγ, εαε ααδαίοεγ ραείίίίηοε α ίδααίηοαεε, **Ι .**, 1957, էջ 128:
³ Տե՛ս **Ι ίοίαεείαεαδ Β.Ι.** . Ι αεί οί δ ο α αί ι δ ι η ο η η α α ο η ε ί α ι ο α ί ε ί α ι α ι ι δ ι ο α η η α α η α α ο α ι α ι α ι - ι δ ι ο α η η ο α ε υ ι ι α ι ρ α ε ί ι ι α α ο α ε υ η ο α α, **Εαί α δ ι α ι**, 1962, էջ 165:

վորված առարկայի միջոցով, որը ներառում է ապացույցների ստուգումը, նախնական քննության, դատական քննության, առանձին դատավարական գործողությունների դատավարական ձևի պահպանման ստուգումը:

Դատավճռի օրինականությունն իրավաբանական գրականության մեջ բնութագրվում է որպես վերջնական դատական ակտի խիստ համապատասխանություն նյութական և դատավարական իրավունքի նորմերին, այդ թվում՝ քննվող գործին առնչություն ունեցող քրեադատավարական, քրեական, քաղաքացիական, աշխատանքային, հարկային և այլ իրավական նորմերին¹:

Դատավճռի *հիմնավորվածությունը* նշանակում է, որ այն օրենքով սահմանվածներից միակ ճշմարիտ որոշումն է, և բացառված էր որևէ այլ դատավարական որոշման կայացումը²: Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե դրանում արված հետևությունները հիմնված են դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար, դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին (ՀՀ քր.դատ.օր. 358 հոդվածի 3-րդ մաս):

Դատավճռի հիմնավորվածությունը ներառում է նաև դրա պատճառաբանվածության պահանջը: Պատճառաբանվածությունը դատավրճում կամ այլ վերջնական որոշման մեջ այն ընդունելու պատճառների բացատրության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այդ որոշումը հաստատող ապացույցների առկայությունն է³:

Օրինականությունը և հիմնավորվածությունը դատավճիռը բնութագրող տարբեր հասկացություններ են, սակայն դրանք փոխկապակցված և փոխայայնանավորված են: Մասնավորապես, դատավճռի օրինականության հասկացությունն իր մեջ ընդգրկում է հիմնավորվածությո-

¹ Տե՛ս **Արեաթեա Ա.Է.** նշված աշխատությունը, էջ 144, **Շարժուեթ Ա.Է. Նօճաճիճ ճաճեճոճաթոճոճի իճ օճիթիճնոճ ասեճ, ի ., 1985, էջ 75, Նօճիճիճթ. ի .Ն. իճ օճեճաթուճիճ ասեճ և ճօճաճիճ ճիթաթաթեճոճոճ և ճիճաթեճիճ օճիթիճնոճ իճ օճնոճ, ի ., 1955, էջ 47:**

² Տե՛ս «Էճիճ ճիճ օճեճ և օճիճ ԾՕ» / իճ ճիճ. ճաճ. **Նօճաթաթ Ա.Բ.**, ի ., 2002, էջ 500:

³ Տե՛ս «Էճիճ ճիճ օճեճ և օճիճ ԾՕ» / իճ ճիճ. ճաճ. **Իճ օճոճիճ ճիճ Ա.Բ. և Շարժուեթ Ա.Է.**, ի ., 2002, էջ 23:

ությունը, քանի որ վերջինն օրենսդրական պահանջ է: Ուստի յուրաքանչյուր չհիմնավորված դատավճիռ նաև անօրինական է¹:

Թեև ՀՀ քր.դատ.օր. 358 հոդվածը, սահմանելով դատավճռին ներկայացվող պահանջները, չի անդրադառնում *դատավճռի արդարացիությանը*, սակայն ՀՀ քր.դատ.օր. այլ դրույթների, դատական պրակտիկայի և քրեական դատավարության տեսության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ արդարացիությունը դատավճռի անհրաժեշտ հատկանիշներից է, ուստի այն հանդիսանում է դատական ստուգման անմիջական առարկա:

Այսպես, համաձայն ՀՀ քր.դատ.օր. 399 հոդվածի՝ վերաքննիչ դատարանը կարող է մեղմացնել ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը՝ «գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով» (ընդգծումը մերն է - Ռ.Մ.):

Իրավաբանական գրականության մեջ դատավճռի արդարացիությունը հասկացվում է նեղ և լայն իմաստներով: Նեղ առումով այն նույնացվում է պատժի արդարացիության հետ: Այս իմաստով պատժի արդարացիությունը դրա համապատասխանությունն է հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին:

Ըստ Ռ. Իսկենդերովի՝ դատավճռի արդարացիությունը լայն առումով նշանակում է գործի՝ ըստ էության և ըստ ձևի ճիշտ լուծում, որն արտահայտում է մարդու և նրա կատարած արարքի նկատմամբ վերաբերմունքի ոչ միայն իրավական, այլ նաև սոցիալ-բարոյական սկզբունքները²:

Ա.Ն. Ռազմինկինայի կարծիքով՝ դատավճռի արդարացիության հասկացությունը ներառում է նաև այն, որ արդարադատություն իրականացնելիս դատարանը պետք է քրեական գործը լուծի առանց կողմնակալության՝ ճշմարտությանը համապատասխան³:

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, հատուկ մաս» / **Գ.Ս. Ղազինյանի** խմբագրությամբ, Եր., 2003, էջ 336:

² Տե՛ս **Էթեթիճաթիճ Ծ. Նիճաթաթեթիճոճ - ասեթիճ օճաթիճաթեթ և իճեթիճիճ օճեթիճ** // «Նիճաթեթիճ իճեթեթիճ», 1988, N7, էջ 15:

³ Տե՛ս **Ծաթեթեթիճ Ա.Բ.** Աթեթեթիճ և օճիթիճնոճ ճօթիճիճ օճեթիճ և ճեթ... օթիճ. իճեթիճ. օթեթ, ի ., 2003, էջ 135:

Եթե դատավճռի հիմնավորվածության հասկացությունը, հարաբերականորեն ինքնուրույն լինելով, ամբողջապես ներառվում է դատավճռի օրինականության հասկացության մեջ, ապա նույնը չի կարելի ասել դատավճռի արդարացիության մասին: Դատարանի վերջնական որոշումը կարող է լինել օրինական և հիմնավորված, սակայն ոչ արդարացի՝ լայն առումով:

Օրինակ՝ հնարավոր է, որ դատարանը դատական նիստում հետազոտված բավարար ապացույցների ամբողջությամբ կայացնի մեղադրական դատավճիռ, որը համապատասխանի օրինականության և հիմնավորվածության ձևական պահանջներին և լինի տվյալ պայմաններում հնարավոր միակ որոշումը, սակայն ամբաստանյալն իրեն մեղսագրվող հանցագործությունը կատարած չլինի: Այս դեպքում դատավճիռը չի կարող համարվել արդարացի, թեև դատարանը կարող է օրենքի ոչ մի խախտում թույլ տված չլինի:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ կարելի է ասել, որ դատական ստուգման առարկայի շրջանակներում դատավճռի արդարացիության հատկանիշի լայն ընկալումը հատուկ նշանակություն է ձեռք բերում դատական ստուգման վերաքննիչ ձևի պարագայում, քանի որ վերաքննությունն իր էությանը օժտված է օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված դատական սխալներն ուղղելու իրական ներուժով:

Վերաքննիչ ստուգման առարկան սերտորեն կապված է *վերաքննիչ ստուգման սահմանների* խնդրի հետ: Վերջինս կոչված է արտահայտելու վերաքննիչ ստուգման առարկայի թույլատրելի շրջանակները տվյալ քրեական գործը վերաքննության կարգով վերանայելիս: Մասնավորապես, վերաքննության կարգով գործի քննության սահմանների մասին կանոնով լուծվում են հետևյալ հարցերը.

1. գործը քննելիս և լուծելիս վերաքննիչ դատարանը կարո՞ղ է կամ պարտավո՞ր է արդյոք անդրադառնալ վերանայվող դատավճռով լուծված այն հարցերին, որոնք ստուգելու պահանջ որևէ իրավասու սուբյեկտ վերաքննիչ բողոքում չի ներկայացրել:

2. վերաքննիչ դատարանը կարո՞ղ է կամ պարտավո՞ր է արդյոք բեկանել կամ փոփոխել դատավճիռն այն ամբաստանյալների մասով, որոնք վերաքննիչ բողոք չեն բերել և ի շահ որոնց վերաքննիչ բողոք չի բերվել:

Վերաքննության կարգով գործի քննության սահմանների վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ արտահայտվել են իրարամերձ տեսակետներ:

Շատ դատավարագետներ գտնում են, որ վերաքննիչ ատյանի դատարանը պետք է կաշկանդված լինի վերաքննիչ բողոքով և ո՛չ գործը քննելիս, ո՛չ էլ որոշում կայացնելիս չպետք է իրավունք ունենա դուրս գալ կողմի ներկայացրած պահանջների սահմաններից¹:

Այսպես, Ի.Լ. Պետրովիսինի կարծիքով՝ հանրայնության սկզբունքի «զերաճը» միայն արտաբուստ է մարդասիրական բնույթ կրում: Իրականում դա անարգանք է անձի նկատմամբ, որի կամարտահայտության հետ չեն ցանկանում հաշվի նստել՝ իբրև թե իր իսկ շահերից ելնելով²:

Քննարկվող խնդրին այլ մոտեցում ունեն Ս.Ա. Վորոժցովը և Ա.Ն. Ռազինկինան: Նրանց կարծիքով՝ վերաքննիչ դատարանը պետք է իրավունք (և ոչ թե պարտականություն) ունենա վերացնելու առաջին ատյանի դատարանի դատավճռում տեղ գտած մաս այն խախտումները, որոնք բողոքում մատնանշված չեն³:

Քրեական դատավարության տեսության մեջ առկա տարակարծությունն իր արտահայտությունն է գտել նաև օրենսդրության մեջ:

Վերաքննության կարգով գործի քննության սահմաններն ուղղակիորեն կախված են տվյալ երկրի քրեական դատավարությունում մրցակցային և ոչ մրցակցային տարրերի հարաբերակցությունից: Եթե գերիշխում են հետախուզական (ինկվիզիցիոն) տարրերը, ապա վերաքննիչ վարույթը, որպես կանոն, ունենում է վերստուգիչ բնույթ: Առավելապես մրցակցային տեսակի դատավարական համակարգ ունեցող պետություններում վերաքննիչ ատյանում գործի քննության սահմանները որոշվում են վերաքննիչ բողոքի բովանդակությամբ:

Այսպես, վերաքննիչ վերանայման հարուստ ավանդույթներ ունեցող Ֆրանսիայում վերաքննիչ դատարանը չի կարող դուրս գալ վերաքննիչ բողոքի շրջանակներից և վերացնել այն դատական սխալներ:

¹ Տե՛ս *Αδστανείε Ι. Α.* նշված աշխատությունը, էջ 390, *Օրείεծեε Ε.Β.* նշված աշխատությունը, էջ 546, *Εταδσί Ι. Ι.* նշված աշխատությունը, էջ 346-347:

² Տե՛ս *Υ αδδσεί Ε.Ε.* *Ι δααί νόεεα: αδαί γ δαδί δι, Ι ., 1991*, էջ 163:

³ Տե՛ս *Αιδίεεία Ν.Α.* *Ι δείεείν εαηηεεε ιί ιίαιίό Οί Έ // «Δίηηεεαγ ηηεδեγ», 2002*, N12, էջ 15, *Δαεείεεία Α.Ι.* *Αιεεγεεγ α δαίεαίίί ηόαίίδեε-αίηηεε, αεηη... εαί α.ηδεε.ίαε, Ι ., 2003*, էջ 140-141:

ըը, որոնք բողոք բերած սուբյեկտներն աչքաթող են արել: Քննարկվող հարցի կապակցությամբ Ֆրանսիայի Հանրապետությունում գործում է *tantum devolutum quantum appellatum* սկզբունքը, որի իմաստը հետևյալն է. դատավճիռը վերանայվում է այնքանով, որքանով այն բողոքարկվել է¹:

Մինչև 2003թ. Ռուսաստանի Դաշնությունում ևս վերաքննիչ ատյանի դատարանն ամբողջովին կաշկանդված էր վերաքննիչ բողոքով և չէր կարող դուրս գալ այդ դատավարական փաստաթղթով կողմի ներկայացրած պահանջներից: ՌԴ քր.դատ.օր. 360 հոդվածի 2-րդ մասի սկզբնական խմբագրությամբ՝ գործը վերաքննիչ կամ վճռաբեկ կարգով քննող դատարանը ստուգում է դատական որոշման օրինականությունը, հիմնավորվածությունը և արդարացիությունը միայն այն մասով, որով այն բողոքարկված է և այն դատապարտյալների նկատմամբ, որոնց վերաբերում է բողոքը:

Սակայն 2003թ. հունիսի 21-ին ընդունված դաշնային օրենքով ՌԴ քր.դատ.օր.-ում փոփոխություններ կատարվեցին, որոնցով օրենսդիրը որոշակիորեն մեղմեց քննարկվող հարցին կոշտ մոտեցումը: Մասնավորապես, քր.դատ.օր. 360 հոդվածի 2-րդ մասի վերջին դրույթը շարադրվեց հետևյալ խմբագրությամբ. եթե քրեական գործը քննելիս բացահայտվեն հանգամանքներ, որոնք առնչվեն նույն քրեական գործով դատապարտված կամ արդարացված այն անձանց շահերին, որոնց նկատմամբ բողոք չի բերվել, ապա քրեական գործը պետք է ստուգվի նաև այդ անձանց նկատմամբ: Ընդ որում չի կարող թույլ տրվել նրանց վիճակի վատթարացում:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում վերաքննության կարգով գործի քննության սահմանները պայմանավորված են վերաքննիչ բողոքարկման առանձնահատկություններով: Ինչպես նշել ենք, ԳԴՀ քր.դատ.օր. §314-ի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կարող է բերվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ձևով՝ տվյալ առաջին ատյանի դատարանի արձանագրության մեջ մտցնելով: Ընդ որում, բողոքարկող սուբյեկտը կարող է դատավճիռը բողոքարկել նաև առանց հիմնավորման:

¹ Տե՛ս **Αόθαιετ Ε.Ο. è äð.** նշված աշխատությունը, էջ 377, **Ðαçεíεεéτá Α.Í.** **Αί äεéýðεé ä öáíεí áí í í ñóáí í ðí εçáí äñðáá, Í .,** 2004, էջ 48:

Համաձայն ԳԴՀ քր.դատ.օր. §318-ի՝ վերաքննությունը կարող է սահմանափակվել բողոքի մեջ ներկայացված կետերով: Սակայն եթե վերաքննիչ բողոքի մեջ համապատասխան հիմնավորումները բացակայում են, ապա դատավճիռը ստուգվում է ամբողջ ծավալով:

Վերագրյալից երևում է, որ Գերմանիայի քրեական դատավարությունում համակցված են վերաքննիչ ստուգման սահմանների որոշման երկու հայեցակարգերը, սակայն լրիվ վերաքննության հայեցակարգի կիրառության միակ պատճառը բողոքարկման ազատության լայն ընկալումն է: Վերաքննիչ բողոքը հիմնավորելու և բողոքի էությունը ներկայացնելու պարտականության բացակայության պայմաններում լրիվ վերաքննության հայեցակարգի կիրառումն անխուսափելի է:

Ի տարբերություն Գերմանիայի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում վերաքննության կարգով գործի քննության սահմանները, որպես ընդհանուր կանոն, որոշվում են լրիվ վերաքննության հայեցակարգի հիման վրա: Այսպես, ՀՀ քր.դատ.օր. 385 հոդվածը սահմանում է, որ «վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքով և գործում եղած, ինչպես նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով կարող է գործը քննել լրիվ ծավալով»:

Ներկայացված ընդհանուր կանոնից նախատեսված է բացառություն դեպի վատթարացումը շրջադարձի անթույլատրելիության մասին դրույթի տեսքով: Ուստի առաջին ատյանի և վերաքննության կարգով գործի քննության սահմանները չեն նույնանում:

Թեև ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությամբ փորձ է կատարվել հատկապես դատական փուլերում ավելացնել մրցակցության տարրերը, սակայն քննարկող խնդրի կապակցությամբ օրենսդիրը որդեգրել է պահպանողական մոտեցում և վերաքննիչ դատարանին չի կաշկանդել վերաքննիչ բողոքով:

Անկասկած, վերաքննիչ վարույթում գործը քննելիս և լուծելիս վերստուգիչ կարգից հրաժարվելը կնպաստի դատավարական տնտեսմանը, կողմերի ինքնուրույնությանը, վերաքննիչ բողոքի՝ իբրև վերաքննիչ վարույթի հիմքի նշանակության բարձրացմանը:

Այնուհանդերձ, մեր կարծիքով վերաքննիչ վարույթի վերստուգիչ կարգն ավելի մեծ հնարավորություններ է տալիս ապահովելու ՀՀ Սահ-

մանադրության 3-րդ հոդվածով հռչակված՝ *մարդուն, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ* ճանաչելու սահմանադրական նորմ-սկզբունքի իրականացումը:

Հաշվի առնելով այն, որ վերաքննիչ վարույթում գործի քննության սահմանների նեղացմանը ՀՀ փաստաբանության ինստիտուտը և ՀՀ դատախազության համակարգը դեռևս լրիվ պատրաստ չեն, և որ այս ոլորտում մրցակցային կառուցակարգերի կիրառման կայուն ավանդույթներ դեռևս չեն ձևավորվել, կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարությունում սահմանափակ վերաքննության հայեցակարգի ներդրումը կարող է եսպես նվազեցնել անօրինական կամ անհիմն դատապարտված անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունները:

Գործող կարգը դատարանին չի զրկում ակտիվություն ցուցաբերելու և հարկ եղած դեպքում առաջին ատյանի դատարանի թույլ տված և շահագրգիռ սուբյեկտների կողմից աչքաթող արված սխալները և խախտումները վերացնելու հնարավորությունից¹:

Պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում վերաքննիչ դատարանն օգտվում է իր վերստուգիչ լիազորություններից և դուրս գալով վերաքննիչ բողոքի շրջանակներից՝ ուղղում է առաջին ատյանի դատարանի թույլ տված սխալները: Օրինակ՝ Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի 2004թ. նոյեմբերի 12-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով ու 325 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների համար Գ.Փ.-ն և Լ.Ս.-ն դատապարտվել են յուրաքանչյուրը 400 հազար դրամի չափով տուգանքի և մեկ տարի ժամանակով ուղղիչ աշխատանքների՝ պետության օգտին նրանց վատակալի 15%-ը պահելու պայմանով: Դատավճռի դեմ վերաքննիչ բողոք բերել է ամբաստանյալ Գ.Փ.-ն, իսկ ամբաստանյալ Լ.Ս.-ն վերաքննիչ բողոք չի ներկայացրել: Սակայն դատարանն իր 2005թ. մարտի 10-ի որոշմամբ մեղմացրել է ոչ միայն Գ.Փ.-ի, այլ նաև Լ.Ս.-ի նկատմամբ նշանակված պատիժը՝ նույն հանցագործությունների համար նրանցից յուրաքանչյուրին դատապարտելով 100 հազար դրամի չափով տուգանքի և մեկ տարի ժամա-

¹ Տե՛ս **Ղազինյան Գ.Ս.** նշված աշխատությունը, էջ 387:

նակով ուղղիչ աշխատանքների՝ պետության օգտին նրանց վատակալի 5%-ը պահելու պայմանով¹:

Այնուհանդերձ, վերաքննիչ վարույթում վերստուգիչ կարգը չի կարող մեկնաբանվել որպես դատարանի պարտականություն՝ վերացնելու վերաքննիչ բողոքում չնշված և ամբաստանյալի վիճակը չվատարացնող դատական սխալները: Դրա մասին է վկայում վերաքննության կարգով գործի քննության սահմաններն ամրագրող իրավական նորմի դիսպոզիտիվ բնույթը²:

Վերաքննիչ ստուգման առարկայի մեջ մտնող հանգամանքների ստուգումն իրականացվում է որոշակի *դատավարական կարգով*:

Վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը նման է առաջին ատյանի կարգով գործի քննությանը: Համաձայն ՀՀ քր.դատ.օր. 390 հոդվածի՝ վերաքննիչ կարգով գործի դատական քննությունը կատարվում է առաջին ատյանի դատարանների համար սահմանված կանոններով՝ քր.դատ.օր. վերաքննիչ վարույթը կարգավորող գլխում նախատեսված վերապահումներով և բացառություններով:

Առաջին ատյանի և վերաքննության կարգով գործի քննության տարբերությունները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ եթե առաջին ատյանի դատարանում գործի քննությունն իրականացվում է անձի նկատմամբ հարուցված քրեական հետապնդման կապակցությամբ, ապա գործի վերաքննության առիթը վերաքննիչ բողոքն է:

Այդ տարբերություններից մեկը գործը քննող դատական կազմը սահմանող կանոնն է: Եթե առաջին ատյանի դատարանում գործը

¹ Քրեական գործ N18210204, տե՛ս «ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի արխիվ», գործ NՁ-15-790/05:

² Վերաքննիչ բողոքի շրջանակներից դուրս գալու *հնարավորության* և ոչ թե *պարտադիրության* մասին օրենսդրի մոտեցումն առավել հետևողական դարձնելուն է ուղղված սույն աշխատանքի 2-րդ գլխի §4-ում առաջարկված ՀՀ քր.դատ.օր. 389 հոդվ. 3-րդ մասի խմբագրությունը: Համաձայն դրա՝ դատական միտ նշանակելու մասին որոշման մեջ դատական միտում անմիջականորեն հետազոտման ենթակա ապացույցների ծավալը պետք է որոշվի ոչ թե ելնելով դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելու անհրաժեշտությունից, այլ վերաքննիչ բողոքում նշված հանգամանքները և բողոք բերած անձի հետևությունները պատշաճ կերպով ստուգելու անհրաժեշտությունից:

քննվում է մեկ դատավորի կազմով, ապա վերաքննիչ դատարանում՝ երեք դատավորի կազմով, որոնցից մեկը նախագահողն է:

Արտասահմանյան երկրների քրեադատավարական իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական դատավարությանն առավելապես հատուկ է վերաքննության կարգով գործը քննող դատարանի կողմից կազմը:

Այսպես, Գերմանիայի օրենսդիրը, գործի բնույթից կախված, նախատեսում է վերաքննության կարգով գործը քննող հետևյալ դատական կազմերը՝ երեք դատավոր և երկու շեֆեն կամ մեկ դատավոր և երկու շեֆեն¹:

Ֆրանսիայում վերաքննության կարգով գործերը քննում է երեք դատավորից (նախագահից և երկու «խորհրդակցական») բաղկացած դատական կազմը², իսկ «հորիզոնական վերաքննության» կարգով գործեր քննող ասիզների դատարանը կազմված է երեք պրոֆեսիոնալ և տասներկու ոչ պրոֆեսիոնալ դատավորից³:

Ռուսաստանի կայսրության քրեական դատավարությունում ևս վերաքննության կարգով գործերը քննվում էին կողմնակալության սկզբունքով: Օրինակ՝ հաշտարար դատավորի կայացրած դատավճիռը վերանայվում էր հաշտարար դատավորների համագումարի կողմից, որին մասնակցում էին առնվազն երեք հաշտարար դատավոր⁴:

Սակայն ՌԴ-ի քր.դատ.օր. 30 հոդվ. 3-րդ մասի համաձայն՝ քրեական գործերի վերաքննիչ կարգով քննությունն իրականացվում է միանձնյա՝ շրջանային դատարանի դատավորի կողմից: Ընդ որում, ՌԴ-ի իրավաբանական գրականության մեջ վերաքննիչ ատյանում գործերի կողմնակալ քննության սկզբունքից շեղումը քննադատության է ենթարկվել⁵:

Մեր կարծիքով՝ կողմնակալության սկզբունքը վերաքննության արդյունավետության կարևոր երաշխիք է: Ուստի վերաքննության կարգով

¹ Տե՛ս **Άσπρίει Ε.Ο.** è äð. նշված աշխատությունը, էջ 448-453:

² Տե՛ս **Նեալժիաա Ի.Ա.** նշված աշխատությունը, էջ 99:

³ Տե՛ս **Άίτερεϊ Ε.Α.** **Θαδιδι à óαιεί áííái** **ϊδιδάññá áí** **Όδαίðèè** // «**Άί ñóàðñóái è** **ϊδάái**», 2001, N8, 96-97 էջեր:

⁴ Տե՛ս **Ճաբեբեթա Ա.Բ.** **Այաբեթեթ à óáiεί áííái** **ñóái** **ϊδιδεբái ñóóá, Ի ., 2004,** էջ 38:

⁵ Տե՛ս **Ճաբեբեթա Ա.Բ.** **Այաբեթեթ à óáiεί áííái** **ñóái** **ϊδιδεբái ñóóá, äèññ. . .** **èái.á.ððè.á.áóè, Ի ., 2003,** էջ 40, **Άίτερεϊ Ε.Α.** նշված աշխատությունը, էջ 233-238:

գործը քննող դատական կազմի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանոնն օրինաչափ է:

Ի տարբերություն դատական կազմի մասին կանոնի՝ *կողմերի իրավական վիճակը* հիմնականում նույնն է առաջին ատյանի և վերաքննության կարգով քրեական գործը քննելիս:

Քանի որ վերաքննությունը դատական վերանայման մյուս ձևերից տարբերվում է ապացույցներն անմիջականորեն հետազոտելու հնարավորությամբ, ուստի կողմերի դերը վերաքննիչ վարույթի ընթացքում բավական մեծ է:

Այսպես, գործի ելքով շահագրգռված բոլոր սուբյեկտներն իրավունք ունեն մասնակցել գործի վերաքննիչ քննությանը: Իբրև այդ իրավունքի ապահովման երաշխիք՝ ՀՀ քր.դատ.օր. 390 հոդվ. 2-րդ մասը սահմանում է, որ գործի քննության տեղի և ժամանակի մասին կողմերը ծանուցվում են:

Դատական նիստին մասնակցելու կողմերի իրավունքը հատկապես կարևոր նշանակություն ունի այն իրավական համակարգերում, որոնցում գործի քննության սահմանները չեն որոշվում վերաքննիչ բողոքի բովանդակությամբ: Եթե դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքի փաստարկներով, ապա ինչ-ինչ պատճառներով դատավճիռը չբողոքարկված սուբյեկտները միջնորդություններ հարուցելու, ցուցմունքներ տալու և այլ եղանակներով կարող են փորձել հասնել իրենց շահերին համապատասխանող նոր վերջնական որոշման կայացմանը:

Միևնույն ժամանակ, բողոք չբերած անձանց (բացառությամբ դատավարության առանցքային սուբյեկտների՝ մեղադրողի, ամբաստանյալի, պաշտպանի) չներկայանալը խոչընդոտ չպետք է լինի վերաքննիչ դատարանի նիստում գործի քննության համար:

Օրինակ՝ եթե քաղաքացիական պատասխանողը բավարարված է առաջին ատյանի դատարանի դատավճռով և վերաքննիչ դատարանի նիստի մասին պատշաճորեն ծանուցված լինելով՝ չի ցանկանում մասնակցել գործի քննությանը, ապա դա որևէ կերպ չի կարող խոչընդոտել գործի վերաքննիչ վերանայմանը: Սակայն, եթե դատարանը գտնի, որ նաև որպես վկա կանչված քաղաքացիական պատասխանողին վերաքննիչ դատարանում հարցաքննելը կարևոր նշանակություն ունի

գործը ճիշտ լուծելու համար, ապա վերջինս պարտավոր է ներկայանալ և ցուցմունք տալ:

Այսպիսով, այն դեպքում, եթե դատավճիռը չբողոքարկած դատավարության մասնակիցը նաև կանչվել է որպես վկա, ապա նրա չներկայանալը վերաքննիչ ատյանի դատարանում գործի քննության համար կարող է խոչընդոտ համարվել:

Դրա հետ մեկտեղ, կողմերը ներկայացնող առանցքային սուբյեկտների չներկայանալը հնարավորություն չի տա դատավարությունը կառուցել մրցակցության սկզբունքի հիման վրա: Այդ իսկ պատճառով ՀՀ քր.դատ.օր. 390 հոդվ. 3-րդ մասը նախատեսել է վերաքննիչ դատարանի նիստին պարտադիր մասնակցող սուբյեկտների ցանկ: Այն ներառում է դատախազին (մեղադրողին), որի մասնակցությունը բոլոր դեպքերում պարտադիր է, ինչպես նաև ամբաստանյալին և պաշտպանին, որոնց մասնակցությունը պարտադիր է միայն նշված հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսած դեպքերում:

Հաշվի առնելով գործի վերաքննիչ քննության վերատուգիչ բնույթը պահպանելու մեր դիրքորոշումը՝ կարծում ենք, անհրաժեշտ է պահպանել նաև վերաքննիչ վարույթին *դատախազի* պարտադիր մասնակցության իմպերատիվ պահանջը: Եթե անգամ վերաքննիչ բողոքն առնչվում է միայն քաղաքացիական հայցին, ապա վերաքննության կարգով գործի քննության լայն սահմանների պայմաններում դատարանը պահպանում է բողոքատուի վերաքննիչ պահանջների շրջանակից դուրս գալու և ամբաստանյալի վիճակը բարելավող եզրափակիչ որոշում կայացնելու իրավունքը:

Ուստի նույնիսկ քաղաքացիական հայցվորի կամ քաղաքացիական պատասխանողի ներկայացրած վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանում գործի քննությանը դատախազի պարտադիր մասնակցության պահանջն օրինաչափ է, քանի որ այն կոչված է ապահովելու մեղադրանքի կողմի դիրքորոշման ներկայացվածությունը դատարանի կողմից դատավարական ակտիվություն դրսևորելու դեպքում:

Եթե ՀՀ քր.դատ.օր.-ն օգտագործում է «դատախազ» եզրույթը, ապա ՌԴ քր.դատ.օր.-ը՝ «մեղադրող» տերմինը:

Հայաստանյան օրենսդրի կողմից *«դատախազ»* տերմինի ընտրությունն ամենևին էլ պատահական չէ: Գ.Ս. Ղազինյանը փաստում է,

որ «Դատական նիստին պարտադիր մասնակցում է դատախազը, բայց ոչ որպես մեղադրող, ինչպես դա նախատեսված է առաջին ատյանի դատարանում: Քանի որ վերաքննիչ վարույթի առարկան կարող է լինել դատավճիռը, որով դատախազը լրիվ բավարարված է, ուրեմն նրա դերը ... պետք է հանգի վերաքննիչ ընթացակարգի պահպանմանը, ինչպես նաև նոր դատավճռի օրինականության և հիմնավորվածության նկատմամբ վերահսկողությանը»¹:

Վերաքննիչ դատարանում գործի քննությանը մասնակցող դատախազը հաճախ իրականացնում է քրեական հետապնդման և մեղադրանքի գործառույթներ: Բանն այն է, որ անգամ այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանի դատավճիռը բավարարում է մեղադրողին, վերաքննիչ դատարանում գործի քննությանը մասնակցելիս նա, որպես կանոն, չի կարող խուսափել այնպիսի գործողություններից, որոնք բնորոշ են քրեական հետապնդման և մեղադրանքի գործառույթներին: Վերաքննիչ բողոքի հիմքերը, առաջին ատյանի դատարանի կայացրած մեղադրական դատավճռի բովանդակությունը և տվյալ գործով դատախազի դիրքորոշումն այնքան փոխկապակցված են, որ մեղադրական ճառ արտասանելիս, փորձելով ապացուցել վերաքննիչ բողոքի անհիմն լինելը, դատախազը չի կարող խուսափել ապացույցները վերլուծելուց և ամբաստանյալի մեղքը հիմնավորելուց:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քր.դատ.օր. 54 հոդվ. 1-ին մասով թվարկված մեղադրողի լիազորությունների ճնշող մեծամասնությունը վերաբերում են նաև վերաքննիչ դատարանում հանդես եկող դատախազին:

Այնուհանդերձ, որոշ դեպքերում դատախազը կարող է վերաքննիչ դատարանում մեղադրանքի և քրեական հետապնդման գործառույթներ չիրականացնել: Դա հնարավոր է, օրինակ, այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանի դատավճիռը քաղաքացիական հայցվորի կողմից բողոքարկվել է քաղաքացիական հայցի մասով կամ այն դեպքում, երբ մեղադրական դատավճիռը հօգուտ ամբաստանյալի բողոքարկել է մեղադրողը, իսկ պաշտպանության կողմը վերաքննիչ բողոք չի բերել:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ քր.դատ.օր. 390 հոդվ. 3-րդ մասի տեքստում «դատախազ» եզրույթի կիրառումն արդարացված ենք համարում:

¹ Տե՛ս **Ղազինյան Գ.Ս.** նշված աշխատությունը, էջ 394:

Ի տարբերություն դատախազի՝ ամբաստանյալի և պաշտպանի մասնակցությունը վերաքննության կարգով գործի քննությանը ոչ միշտ է պարտադիր: Համաձայն ՀՀ քր.դատ.օր. 390 հոդվ. 3-րդ մասի 2-րդ կետի՝ դատական նիստին պարտադիր մասնակցում է *ամբաստանյալը*, որը ներկայացրել է բողոքը, կամ որի շահերի պաշտպանության համար բողոք է ներկայացրել պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը կամ, երբ բողոք է բերել դատախազը ոչ հօգուտ ամբաստանյալի:

Մեր կարծիքով՝ ամբաստանյալի պարտադիր մասնակցության դեպքերը ՀՀ քր.դատ.օր.-ով թերի են սահմանված: Օրինակ՝ եթե քաղաքացիական պատասխանողը վերաքննիչ բողոք է բերել ի պաշտպանություն տվյալ ամբաստանյալի կամ տուժողը՝ ի վնաս նրա, ապա գործի վերաքննիչ քննությանն այդ ամբաստանյալի մասնակցությունը ՀՀ քր.դատ.օր.-ով պարտադիր չէ:

Նշված դեպքերում գործը վերաքննիչ կարգով ամբաստանյալի բացակայությամբ քննելը, կարծում ենք, կլինի մրցակցության սկզբունքի խախտում: Ամբաստանյալի մասնակցությունը կարող է պարտադիր չլինել միայն այն դեպքում, եթե վերաքննիչ բողոքն անմիջականորեն չի առնչվում իր անձին ու արարքին, և միաժամանակ տվյալ ամբաստանյալի վիճակի վատթարացում չի թույլատրվում:

Այսպիսով, առաջին ատյանի դատարանում ամբաստանյալի պարտադիր մասնակցության իմպերատիվ պահանջը (ՀՀ քր.դատ.օր. 302 հոդված) վերաքննության ինստիտուտի վրա չի տարածվում:

Մինչդեռ *պաշտպանի* պարտադիր մասնակցության իրավական ռեժիմը նույնական է առաջին ատյանի և վերաքննության կարգով գործի դատական քննության համար:

Այսպես, ՀՀ քր.դատ.օր. 69 հոդվածը սահմանում է, որ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ այդպիսի ցանկություն հայտնել է մեղադրյալը, ինչպես նաև հոդվածի 1-ին մասի 2-9 կետերով ամրագրված այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք էապես սահմանափակում են սեփական շահերի պաշտպանությունն ինքնուրույն իրականացնելու մեղադրյալի հնարավորությունը:

Համաձայն ՀՀ քր.դատ.օր. 304 հոդվածի 2-րդ մասի՝ «Պաշտպանի չներկայանալու և այդ նիստում նրան մեկ ուրիշ պաշտպանով փոխարինելը հնարավոր չլինելու դեպքում գործի քննությունը հետաձգվում է»:

Այսպիսով, եթե ամբաստանյալն ունի պաշտպան և չի ցանկանում հրաժարվել նրանից, կամ ցանկանում է պաշտպան ունենալ, կամ առկա են ՀՀ քր.դատ.օր. 69 հոդվածի 1-ին մասի 2-9 կետերով ամրագրված հանգամանքները, ապա պաշտպանի մասնակցությունն առաջին ատյանի դատարանի դատական նիստին պարտադիր է:

Իսկ ըստ ՀՀ քր.դատ.օր. 390 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի՝ վերաքննիչ դատարանի դատական նիստին պարտադիր մասնակցում է պաշտպանը քր.դատ.օր. 69 հոդվածով նախատեսված դեպքերում:

Վերոգրյալից երևում է, որ վերաքննիչ վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը համընկնում են քրեական դատավարությունում պաշտպանի պարտադիր մասնակցության ընդհանուր դեպքերի հետ:

Վերաքննիչ և առաջին ատյանների դատարաններում դատական քննության փուլերը, ընդհանուր առմամբ, համընկնում են: Գործի վերաքննիչ քննությունը ևս հաջորդաբար անցնում է դատական նիստի նախապատրաստական մասի, դատաքննության, դատական վիճաբանությունների, ամբաստանյալի վերջին խոսքի և եզրափակիչ որոշման կայացման փուլեր:

Վերաքննիչ վարույթի խնդիրներն իրականացնելու տեսանկյունից հատկապես կարևոր նշանակություն ունի *դատաքննությունը*՝ որպես դատական քննության կենտրոնական մաս: Ընդ որում, այն որոշակիորեն տարբերվում է դատաքննությունից առաջին ատյանի դատարանում:

Այսպես, Լ.Ֆ. Մարտինյախինը նշում է, որ դատաքննությունը նպատակ է հետապնդում ոչ միայն ստուգել առաջին ատյանի դատարանի կողմից գործի փաստական հանգամանքների բացահայտումը, այլ նաև վեր հանել դատավճռի բեկանման կամ փոփոխման հիմքերը¹:

Ինչպես առաջին ատյանի դատարանում, վերաքննիչ դատարանում ևս դատաքննության ժամանակ կողմերն ունեն բավական լայն իրավունքներ: Նրանք իրավունք ունեն հայտնել բացարկներ, հարուցել միջնորդություններ, կարծիք հայտնել դատավարության մյուս մասնակիցների հարուցած միջնորդությունների վերաբերյալ, մասնակցել գործի նյութերի հետազոտմանը, բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ, առարկել նախագահողի անօրինական գործողութ-

¹ Տե՛ս **Äeläo A.A.** è äd. նշված աշխատությունը, էջ 48:

յունների դեմ, պահանջել դատական նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել իրենց նշած հանգամանքների մասին: Կողմերը նաև կրում են որոշակի պարտականություններ: Օրինակ՝ նրանք պարտավոր են ենթարկվել դատական նիստում սահմանված կարգ ու կանոնին և նախագահողի օրինական կարգադրություններին:

Եթե առաջին ատյանի դատարանում գործի դատաքննությունն սկսվում է մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակմամբ (ՀՀ քր.դատ.օր. 333 հոդվ.), ապա վերաքննիչ ատյանում այն սկսվում է նախագահողի կողմից՝ բողոքարկված դատավճռի բովանդակության և վերաքննիչ բողոքի ու դրա դեմ ներկայացված առարկությունների շարադրմամբ (ՀՀ քր.դատ.օր. 391 հոդվ. 1-ին մաս): Այնուհետև, դատարանը լսում է բողոք բերած անձի հիմնավորումները և հակառակ կողմի առարկությունները:

Ինչպես երևում է, բողոքը և դրա դեմ բերված առարկությունները վերաքննիչ դատարանում երկու անգամ են հրապարակվում. նախ՝ դատարանի, ապա և՛ համապատասխան շահագրգիռ սուբյեկտի կողմից: Մենք կարծում ենք, որ նախագահողի կողմից կողմերի դիրքորոշումները շարադրելն ավելորդություն է, և համաձայն ենք Ա.Ս. Ալեքսանդրովի և Ն.Ն. Կովտունի այն մտքին, որ մրցակցային հիմունքին ավելի կհամապատասխաներ դատաքննության այնպիսի կարգը, երբ կողմն ինքը շարադրեր իր վերաքննիչ բողոքի կամ դրա դեմ իր առարկության էությունը՝ անմիջապես հիմնավորելով դա ապացույցներով: Նախագահողը պետք է բանավոր կարդա միայն այն մասնակցի վերաքննիչ բողոքը, որը չի ներկայացել¹:

Լսելով կողմերի ելույթները՝ դատարանն անցնում է ապացույցների հետազոտմանը: Ընդ որում, ապացույցների հետազոտման կարգը դատարանը որոշում է՝ լսելով կողմերի կարծիքները: Փաստորեն, կողմերի կարծիքները հաշվի առնելով՝ դատարանն ինքն է որոշում, թե որ ապացույցները պետք է անմիջականորեն հետազոտվեն վերաքննիչ դատարանի նիստում:

Չնայած դատական նիստ նշանակելու մասին դատարանի որոշման մեջ նախագահողն արդեն նախանշում է հետազոտման ենթակա

¹ Տե՛ս **Αεαεναί αδιá Α.Ν., Εταοσί í.í.** Αί αεεγοεί íííá íδιεçáí ανοái á οáiεíáííí íδι óánná θί nnée: íδι áεái ú è δάοáí εý, էջ 45:

ապացույցների որոշակի ծավալ¹, սակայն կողմերի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ նիստի ընթացքում դատարանն իրավունք ունի որոշում կայացնել գործում եղած այլ ապացույցների հետազոտման, վկաների կրկնակի հարցաքննության մասին:

Վերաքննիչ դատարանը կարող է որոշ վկաների չհարցաքննել, քանի որ վերջնական որոշում կայացնելիս նա իրավունք ունի հիմնվել վերաքննիչ դատարանի նիստին չկանչված, սակայն առաջին ատյանի դատարանում հարցաքննված անձանց ցուցմունքների վրա (ՀՀ քր.դատ.օր. 393 հոդվ. 10-րդ մաս):

Վերաքննիչ դատարանի այս իրավունքը քննադատել է Վ.Լ. Գոլովկովը: Նա այն կարծիքն է հայտնում, որ առաջին ատյանում հարցաքննված վկաներին վերաքննիչ դատարանում չհարցաքննելու և առաջին ատյանի դատարանում տրված ցուցմունքների վրա հիմնվելու հնարավորությունը չի համապատասխանում վերաքննության էությանը, քանի որ վերաքննությունը ենթադրում է գործի՝ ըստ էության կրկին քննություն: Դրա հիման վրա ռուսաստանցի դատավարագետն առաջարկում է վերաքննիչ վարույթի վրա տարածել առաջին ատյանի դատարանի համար սահմանված ապացույցների անմիջական հետազոտման իրավական ռեժիմը²:

Մենք համամիտ չենք ռուսաստանցի դատավարագետի հետ, քանի որ նրա առաջարկի ընդունումը կհանգեցնի նյութական ռեսուրսների վատնման: Բացի այդ, դրա արդյունքում վերաքննությունը կվերածվի առաջին ատյանի կարգով գործի քննության պարզ կրկնության, ինչն էապես կնսեմացնի քրեական դատավարության կենտրոնական փուլի՝ դատական քննության դերը և նշանակությունը:

Անշուշտ, ցանկալի է, որ վերաքննիչ դատարանը հնարավորինս հաճախ օգտվի ապացույցներն անմիջականորեն հետազոտելու իր իրավական հնարավորությունից, սակայն այդ նպատակին Վ.Լ. Գոլովկովի առաջարկած արմատական եղանակով հասնելը, կարծում ենք, աննպատակահարմար է:

Մեր կարծիքով, վերաքննիչ դատարանում ապացույցների պարտադիր հետազոտման օրենսդրական պահանջը վերաքննության էություն

¹ Տե՛ս սույն աշխատանքի 2-րդ գլխի §4-ը:

² Տե՛ս **Άεταεíá Á.Ε.** նշված աշխատությունը, էջ 78-79:

յանը համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է դրա հիմքում դնել վիճարկման չափանիշը: Ըստ այդմ, վերաքննիչ դատարանում պարտադիր պետք է հարցաքննվեն այն վկաները և տուժողները, որոնց ցուցմունքները վիճարկվում են դատավարության որևէ մասնակցի կողմից, ինչպես նաև պետք է անմիջականորեն հետազոտվեն այն գրավոր ապացույցները, որոնց պիտանիությունը (վերաբերելիությունը, թույլատրելիությունը կամ արժանահավատությունը) կողմ ներկայացնող որևէ սուբյեկտ կասկածի տակ է դնում:

Հետաքրքրական է նաև վերաքննիչ ատյանում նոր ապացույցների ներկայացման հնարավորության հարցը: ՀՀ քր.դատ.օր. 391 հոդվ. 5-րդ մասը նախատեսում է, որ կողմերն իրավունք ունեն միջնորդություն հարուցել նոր վկաներ կանչելու, փորձաքննություն նշանակելու, իրեղեն ապացույցներ և փաստաթղթեր պահանջելու մասին: Ըստ որում, վերաքննիչ դատարանն իրավունք չունի միջնորդությունը մերժել այն հիմքով, որ այն չի բավարարվել առաջին ատյանի դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանում նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորության հարցում Ռ-Գ քր.դատ.օր.-ը մի էական վերապահում է կատարում՝ սահմանելով, որ այդ միջնորդությունը կարող է վերաբերել միայն այն նյութերին, որոնց հետազոտման մասին առաջին ատյանի դատարանում հարուցված միջնորդությունը մերժվել է (Ռ-Գ քր.դատ.օր. 365 հոդվ. 5-րդ մաս): Ստացվում է, որ եթե առաջին ատյանի դատարանում համապատասխան միջնորդություն չի հարուցվել, ապա վերաքննիչ դատարանը պարտավոր է մերժել այն:

Ռ-Գ քր.դատ.օր. 365 հոդվ. 5-րդ մասում ամրագրված սահմանափակումը քննադատել է Ա.Ն. Ռ-ազիկինյան այն հիմքով, որ նշված սահմանափակումը չի համապատասխանում վերաքննիչ դատարանում գործի քննության ընդհանուր կանոններին, որոնք ենթադրում են վերաքննիչ դատարանում նոր դատաքննության անցկացում¹:

Մենք լիովին համաձայն ենք Ա.Ն. Ռ-ազիկինյանի դիրքորոշման հետ և կարծում ենք, որ թեև Ռ-Գ քր.դատ.օր. 365 հոդվ. 5-րդ մասում ամրագրված դրույթը բխում է տնօրինչականության և մրցակցության սկզբունքներից, բայց ՀՀ քր.դատ.օր.-ում նման իմպերատիվ պահանջ

¹ Տե՛ս **Ճաբիճեթի Ա.Բ.** *Արաբյոյեյ ա Օմեթիթի նոսիճիճեթիթոճա, ձեռն... ճաթ. թճթ. 1-րդ, 2003, էջ 150-151:*

նախատեսելն անտեղի կսահմանափակի սեփական դիրքորոշումը հիմնավորելու կողմերի հնարավորությունը:

Ավելին, մեր կարծիքով, ոչ հոգուտ մրցակցային հիմնադրույթի է պետք լուծել նաև վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույցների հավաքման հարցը:

Վերաքննիչ դատարանում գործի քննությունը կարգավորող ՀՀ քր.դատ.օր. գլուխ 47-ը սեփական նախաձեռնությամբ լրացուցիչ ապացույցներ պահանջելու դատարանի իրավունքը նախատեսող կամ արգելող նորմ չի պարունակում: Սակայն քր.դատ.օր. 390 հոդվ. 1-ին մասից բխում է, որ եթե քր.դատ.օր. 47 գլուխը որևէ հարց չի կարգավորել, ապա անհրաժեշտ է ելնել առաջին ատյանի դատարանում սահմանված կանոններից: Եվ քանի որ 331 հոդվ. 3-րդ մասը սահմանում է, որ դատարանն իրավունք ունի վկաներ կանչելու, փորձաքննություն նշանակելու, այլ ապացույցներ պահանջելու մասին սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել, ապա կարելի է փաստել, որ այդ իրավունքը վերապահված է նաև վերաքննիչ դատարանին:

Այնհայտ է, որ դատարանի քննարկվող իրավունքն անհամատեղելի է գուտ մրցակցային դատավարության հետ: Սակայն, ելնելով արդարադատության, ինչպես նաև ամբաստանյալի շահերից, կարծում ենք, անհրաժեշտ է պահպանել սեփական նախաձեռնությամբ նոր ապացույցներ պահանջելու դատարանի իրավունքը:

Այս դիրքորոշումը պաշտպանում է նաև մեր կողմից հարցված պրակտիկ իրավաբանների ճնշող մեծամասնությունը: Այսպես, «Պե՞տք է արդյոք վերաքննիչ դատարանն իրավունք ունենա սեփական նախաձեռնությամբ նոր վկաներ կանչել, փորձաքննություն նշանակել, այլ ապացույցներ պահանջել» հարցին հարցվածներից 38-ը (մոտ 85%-ը) դրական, իսկ 7-ը (մոտ 15%-ը) բացասական պատասխան են տվել:

Վերաքննիչ դատարանի պրակտիկան ևս վկայում է այն մասին, որ քիչ չեն այն դեպքերը, երբ դատարանը սեփական նախաձեռնությամբ, օրինակ, վկաներ է կանչում կամ փորձաքննություն է նշանակում, և այդ վկայի ցուցմունքներով կամ փորձագետի եզրակացությամբ հաստատվում է գործի համար էական նշանակություն ունեցող որևէ հանգամանք:

Օրինակ՝ հաշվի առնելով ՀՀ քր.օր. 224 հոդվ. 4-րդ և 203 հոդվ. 1-ին մասերով նախատեսված հանցագործությունների համար առաջին ատ-

յանի դատարանի կողմից ազատագրկման դատապարտված Ա.Ա.-ի ոչ համարժեք վարքագիծը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2002թ. ապրիլի 9-ին սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացրել ամբաստանյալի նկատմամբ դատահոգեբու-ժական փորձաքննություն նշանակելու մասին, պարզելու համար այն հանգամանքը, թե արդյո՞ք Ա.Ա.-ն տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ¹:

Սակայն չարաշահումներից խուսափելու և դատարանի քննարկվող իրավունքն ի վնաս ամբաստանյալի օգտագործելը կանխելու նպատակով առաջարկում ենք ՀՀ քր.դատ.օր. 393 հոդվածը համալրել նոր մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ կանչված վկայի ցուցմունքները, նշանակված փորձաքննության արդյունքում ստացված եզրակացությունը, պահանջված և ստացված մյուս ապացույցներն ամբաստանյալի վիճակը վատթարացնող որոշման հիմքում չեն կարող դրվել»:

Մեր այս դիրքորոշումը ևս պաշտպանում է մեր կողմից հարցված պրակտիկ իրավաբանների մեծամասնությունը: «Պե՞տք է արդյոք վերաքննիչ դատարանն իրավունք ունենա իր նախաձեռնությամբ ստացված ապացույցները դնել ամբաստանյալի վիճակը վատթարացնող վերջնական որոշման հիմքում» հարցին հարցվածներից 27-ը (մոտ 60%-ը) բացասական, իսկ 18-ը (մոտ 40%-ը) դրական պատասխան են տվել:

Վերագրյալն ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ վերաքննիչ վարույթի դատական քննության ենթափուլը վճռական նշանակություն ունի վերաքննության խնդիրների իրականացման համար: Վերաքննիչ ստուգման առարկայի ու սահմանների, ինչպես նաև վերաքննության կարգով քրեական գործի քննության դատավարական կարգը ՀՀ քր.դատ.օր.-ում ընդհանուր առմամբ ճիշտ է սահմանված:

Սակայն վերաքննության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է կատարել որոշակի օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես՝

1. ընդլայնել վերաքննության կարգով գործի քննությանն ամբաստանյալի պարտադիր մասնակցության հիմքերի շրջանակը: Նախա-

¹ Քրեական գործ N44201101, տե՛ս «ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի արխիվ», գործ N72/02:

տեսել, որ ամբաստանյալի մասնակցությունը պարտադիր չէ միայն այն դեպքում, եթե վերաքննիչ բողոքն անմիջականորեն չի առնչվում իր անձին ու արարքին, և միաժամանակ տվյալ ամբաստանյալի վիճակի վատթարացում չի թույլատրվում,

2. հանել օրենքի այն պահանջը, համաձայն որի նախագահողը պարտավոր է հրապարակել վերաքննիչ դատարանի նիստին ներկայացած դատավարության մասնակիցների վերաքննիչ բողոքները,

3. սահմանել, որ վերաքննիչ դատարանում պարտադիր պետք է հարցաքննվեն այն վկաները և տուժողները, որոնց ցուցմունքները վիճարկվում են դատավարության որևէ մասնակցի կողմից, ինչպես նաև պարտադիր պետք է հետազոտվեն այն գրավոր ապացույցները, որոնց պիտանիությունը որևէ կողմ կասկածի տակ է դնում,

4. սահմանել, որ դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ կանչված վկայի ցուցմունքները, նշանակված փորձաքննության արդյունքում ստացված եզրակացությունը, պահանջված և ստացված մյուս ապացույցներն ամբաստանյալի վիճակը վատթարացնող որոշման հիմքում չեն կարող դրվել:

§2. Դատարանի վերջնական որոշումների բեկանման և փոփոխման վերաքննիչ հիմքերը

ՀՀ քրեական դատավարությունում «վերաքննության հիմքերը» ոչ թե օրենսդրական, այլ դոկտրինալ հասկացություն է: Ընդ որում, իրավաբանական գրականության մեջ այն, որպես կանոն, նույնացվում է «դատավճիռների և այլ որոշումների բեկանման և փոփոխման հիմքեր» օրենսդրական հասկացության հետ:

Համաձայն ՀՀ քր.դատ.օր. 395 հոդվածի՝ «Առաջին ատյանի դատարանի դատավճիռը կամ որոշումը բեկանվում կամ փոխվում է և կայացվում է նոր դատավճիռ կամ որոշում, եթե՝

1. գործի փաստական հանգամանքների մասին դատավճռում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին,

2. ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը,

3. առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում,
4. դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին»:

Այսպես, Ա.Ս. Ալեքսանդրովը և Ն.Ն. Կովտունը վերաքննության հիմքերը սահմանում են որպես «օրենքով սահմանված հանգամանքներ, որոնց առկայության հաստատումը վերաքննիչ դատարանի կողմից հանգեցնում է հաշտարար դատավորի դատավճռի (գործը կարճելու մասին որոշման) լրիվ կամ մասնակի բեկանման, կամ առաջին ատյանի դատարանի դատավճռի (որոշման) փոփոխման և նոր դատավճռի կայացման, կամ էլ երկրորդ ատյանի դատարանի կողմից քրեական գործի կարճման»¹:

Մեր կարծիքով, սակայն, «վերաքննության հիմքեր» եզրույթն անհրաժեշտ է ավելի լայն ընկալել՝ դրա տակ հասկանալով նաև վերաքննիչ բողոքարկման հիմքերը: Նման ընկալումը ոչ միայն տեսականորեն ավելի ճշգրիտ է թվում, այլև կարող է որոշակի գործնական խնդիրներ լուծել:

Վերաքննության հիմքեր հասկացության լայն ընկալման տեսական հիմնավորվածությունը պայմանավորված է վերաքննիչ վարույթի քրեադատավարական փուլի բազմաէտապ բնույթով²: Ինչպես երևում է անգամ վերաքննությունը կանոնակարգող ՀՀ քր.դատ.օր. բաժին 10-ի կառուցվածքից, դատավարական այս փուլը կազմված է հաջորդաբար ընթացող և հարաբերականորեն ինքնուրույն երկու ենթափուլից՝ 1) վերաքննիչ բողոքարկում և 2) գործի քննությունը վերաքննիչ ատյանում:

Ընդ որում, վերաքննիչ ատյանի դատարանում գործի քննության ենթափուլում վերաքննիչ հիմքերը կարող են արտահայտվել վերաքննիչ դատարանի վերջնական որոշման մեջ, որը, անշուշտ, վերաքննիչ վարույթի դատավարական փուլի կարևորագույն դատավարական փաստաթուղթն է:

¹ Տե՛ս **Αεαεναίαδία Α.Ν., Είσαοί Ι.Ι. Ἰνίίάαιέϋ ε̅ ἰοι̅άία (ε̅ε̅ί̅άί̅ά̅ε̅թ)** ἰ̅δ̅ε̅α̅ί̅α̅ί̅δ̅α̅ ἄ̅ νο̅α̅α̅ α̅ί̅α̅ε̅ϋ̅ο̅ε̅ί̅ί̅ί̅ε̅ ε̅ί̅νο̅α̅ί̅ο̅ε̅ // «**Α̅ί̅νο̅α̅α̅δ̅η̅ο̅α̅ί̅ ε̅ ἰ̅δ̅α̅α̅ί̅**», 2001, N10, էջ 55-56: Տես նաև **Α̅δ̅ί̅α̅ε̅ί̅η̅ε̅ε̅ Ι̅.Ι̅. Ε̅α̅η̅η̅α̅ο̅ε̅ί̅ί̅ί̅α̅ ε̅ ἰ̅α̅α̅ε̅ί̅δ̅ί̅α̅ ἰ̅δ̅ί̅ε̅α̅ί̅α̅νο̅α̅ί̅ ἄ̅ η̅ί̅α̅α̅δ̅η̅ε̅ί̅ ὁ̅α̅ί̅ε̅ί̅ά̅ί̅ί̅ ἰ̅δ̅ί̅ο̅α̅η̅η̅α̅, Ἰ̅.Ι̅.**, 1949, էջ 97, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, հատուկ մաս» / **Գ.Ս. Ղազինյանի** խմբագրությամբ, Եր., 2003, էջ 362:

² Տե՛ս սույն աշխատանքի 1-ին գլխի §1-ը:

Միևնույն ժամանակ, գործը վերաքննիչ ատյանում չի կարող քննվել, եթե դատավարության մասնակիցներից մեկը կամ մի քանիսը հիմնավորված վերաքննիչ բողոք չբերի: Վերաքննիչ բողոքի հիմնավորվածության մասին է վկայում ՀՀ քր.դատ.օր. 381 հոդվ. 1-ին մասի 5-րդ կետի շարադրանքը, որով վերաքննիչ բողոք բերող սուբյեկտները պարտավորեցվում են բողոքում ներկայացնել իրենց հետևություններն այն մասին, թե որն է դատավճռի կամ այլ որոշման անճշտությունը¹:

Քանի որ առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումը բողոքարկող անձը նպատակ է հետապնդում հասնել դրա բեկանմանը կամ փոփոխմանը, իսկ դատարանի վերջնական որոշումների բեկանման և փոփոխման հիմքերը հստակ սահմանված են ՀՀ քր.դատ.օր. 395-399 հոդվածներով, ուստի վերաքննիչ բողոքի հիմնավորումներն անհրաժեշտաբար պետք է խարսխված լինեն նշված իրավանորմերով ամրագրված հանգամանքների վրա:

Այլ կերպ ասած՝ վերաքննիչ վարույթի ընթացքում դատավճիռների բողոքարկման հիմքերը և դատավճռի բեկանման ու փոփոխման հիմքերը բովանդակային առումով և օբյեկտիվորեն նույնական են:

Այնուհանդերձ, վերաքննիչ բողոքարկման և վերաքննիչ ատյանում գործի քննության ենթափուլերում դրսևորվող վերաքննիչ հիմքերն իրենց ամրագրման աղբյուրներով, դատավարական հետևանքներով և այլ հատկանիշներով որոշակիորեն տարբերվում են.

1. Վերաքննիչ բողոքարկման հիմքերն ամրագրվում են վերաքննիչ բողոքում, իսկ դատավճիռների բեկանման կամ փոփոխման հիմքերը՝ վերաքննիչ ատյանի դատարանի վերջնական որոշման մեջ:

2. Առանց վերաքննիչ բողոքի և վերաքննիչ բողոքարկման հիմքերի՝ գործի վերաքննություն լինել չի կարող: Մինչդեռ տվյալ գործով վերաքննիչ դատարանի վերջնական որոշումը կարող է դատավճիռների բեկանման և փոփոխման հիմքեր չպարունակել: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ վերաքննիչ դատարանը կայացնում է առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումն անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման թողնելու մասին որոշում:

¹ Տե՛ս սույն աշխատանքի 2-րդ գլխի §2-ը:

3. Վերաքննիչ բողոքարկման հիմքերն օրենքով սահմանված կարգով և ձևով ներկայացնելն անհրաժեշտ և բավարար նախադրյալ է տվյալ գործով դատավարությունը վերաքննիչ վարույթի փուլ փոխադրելու համար: Իսկ դատավճիռների բեկանման կամ փոփոխման հիմքերի շարադրմամբ վերաքննիչ վարույթն ավարտվում է:

4. Կոնկրետ գործով վերաքննիչ բողոքարկման հիմքը կարող է չհամընկնել դատավճռի բեկանման կամ փոփոխման հիմքի հետ: Օրինակ՝ Գ.Փ.-ի և Լ.Ս.-ի գործով ամբաստանյալ Գ.Փ.-ն վերաքննիչ բողոք է բերել գործի փաստական հանգամանքներին դատարանի հետևությունների անհամապատասխանության հիմքով: Իսկ վերաքննիչ դատարանը գտել է, որ առաջին ատյանի դատարանի հետևությունները համապատասխանում են գործի փաստական հանգամանքներին, սակայն ստորադաս դատարանի նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին, և այդ հիմքով փոփոխել է բողոքարկված դատավճիռը¹:

Վերաքննիչ հիմքերի լայն ընկալման կողմնակից Ն.Ն. Կովտունը դատավճիռների բեկանման և փոփոխման հիմքերը բնութագրում է որպես՝

1. դատավարական սանկցիաների հիմքեր՝ դատարանի թույլ տված նյութական կամ դատավարական օրենքի խախտումների կամ դատավճիռը հիմնավորելիս թույլ տրված բացթողումների համար,
2. կանխավարկածային փաստեր իրավաբանական կանխավարկածում, այսինքն՝ ենթադրություններ այն մասին, որ դատավճիռը ոչ արդարադատ է,
3. գործի վերանայման իրավական նախադրյալներ,
4. դատավճռի արդարացիության ձևական իրավաբանական չափանիշներ,
5. գործով թույլ տրված խախտումներ²:

Այլ դատավարագետներ ևս դատարանի վերջնական որոշումների բեկանման և փոփոխման վերաքննիչ հիմքերը բնութագրում են որպես քրեադատավարական սանկցիայի կիրառման հիմքեր, իսկ վերաքննիչ

¹ Քրեական գործ N18210204, տե՛ս «ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի արխիվ», գործ NՁ-15-790/05:

² Տե՛ս **Էրնոսի Ի.Ի.** նշված աշխատությունը, էջ 398:

դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումը փոփոխելը կամ բեկանելը՝ որպես քրեադատավարական սանկցիայի տարատեսակ¹:

Ընդունելով քրեադատավարական պատասխանատվության՝ որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակի գոյությունը փաստող դատավարագետների մոտեցումը², մենք կարծում ենք, որ ի տարբերություն դատական վերանայման մյուս եղանակների, վերաքննության արդյունքում դատարանի վերջնական որոշման փոփոխումը կամ բեկանումը ոչ միշտ է հաղիսանում քրեադատավարական սանկցիա:

Բանն այն է, որ վերաքննիչ բողոք բերելու կամ վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումը բեկանելու կամ փոփոխելու համար ամենևին պարտադիր չէ, որ ստորադաս դատարանը թույլ տված լինի նյութական կամ դատավարական իրավունքի որևէ խախտում:

Այլ կերպ ասած՝ որոշակի հիմքերով իրավասու սուբյեկտը կարող է վերաքննիչ բողոք բերել, իսկ վերաքննիչ դատարանը՝ բեկանել կամ փոփոխել բողոքարկվող դատական ակտը նաև այն պայմաններում, երբ վերջինս օրինական է և հիմնավորված: Օրինակ՝ հնարավոր է, որ կողմը գործի վերաքննիչ քննության ընթացքում ներկայացնի նոր ապացույցներ, որոնք գործի լուծման համար ունենան էական նշանակություն, ընդ որում, առաջին ատյանի կարգով գործը քննելիս այդ ապացույցների հետ կապված միջնորդություն հարուցված չլինի: Կամ հնարավոր է, որ առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրական դատավճիռ կայացնելուց հետո, սակայն մինչև վերաքննիչ դատարանի՝ խորհրդակցական սենյակ հեռանալն առաջնա ամբաստանյալի անձի հետ կապված որևէ մեղմացնող հանգամանք, ինչը վերաքննիչ դատարանին հիմք տա տվյալ անձի նկատմամբ նշանակված պատի-

¹ Տե՛ս **Արծաթի Բ.Ա.** *Մի ծոցի մեջ է ինձ տեսնում իմ աչքերն իմ աչքերն, Ելնում է իմ խոսքս իմ խոսքս, Ելնում է իմ խոսքս իմ խոսքս // «Մի ասում է ասում ես իմ ասում, ասում ես իմ ասում, ասում ես իմ ասում, ասում ես իմ ասում»*, 2003, էջ 15-30:

² Տե՛ս, օրինակ, **Էրնոսի Շ.Օ.** *Օրհնություններ իմ ասումներին*, 1975, էջ 30, **Գրիգորի Ի.Ն.** *Իմ ասումներին իմ ասումներին* և *Կրեմլի դռներ* // «Նի ասում է ասում ես իմ ասում», 1973, N9, էջ 33-41, **Աստուհի Բ.Բ.** *Մի ասում է ասում իմ ասում*, 1991, էջ 57:

ժը համարել նրա անձը բնութագրող հանգամանքներին չհամապատասխանող:

Ուստի, մեր կարծիքով, վերաքննիչ հիմքերը չեն կարող սահմանվել որպես «գործով թույլ տրված խախտումներ»¹: Այդ հասկացության միջոցով կարող է բնորոշվել միայն վճռաբեկության հիմքերի ինստիտուտը:

Վերագրյալի հիման վրա առաջարկում ենք «վերաքննիչ հիմքեր» հասկացության հետևյալ սահմանումը. դրանք օրենքով սահմանված այն հանգամանքներն են, որոնց մատնանշումն անհրաժեշտ է վերաքննիչ բողոք բերելու համար և որոնց առկայության հաստատումը վերաքննիչ ատյանի դատարանի կողմից հանգեցնում է առաջին ատյանի դատարանի վերջնական որոշման բեկանմանը կամ փոփոխմանը:

Քրեական դատավարական գիտության մեջ վեճերի տեղիք է տվել դատավճիռների բեկանման և փոփոխման հիմքերի դասակարգման հարցը:

Խորհրդային դատավարագետների դասակարգումներից առավել արժեքավոր կարելի է համարել Մ.Ս. Ստրոգովիչի առաջարկածը: Նա ՌԽՖՍՀ քր.դատ.օր.-ով սահմանված խորհրդային վճռաբեկության հիմքերը դասակարգում էր երկու խմբի՝

1. դատավճռի չհիմնավորվածության բովանդակությունը բացահայտող հիմքեր (հետաքննության, նախաքննության և դատաքննության միակողմանիությունը և ոչ լրիվությունը, ինչպես նաև դատավճռում շարադրված դատարանի հետևությունների անհամապատասխանությունը գործի փաստական հանգամանքներին) և

2. դատավճռի անօրինականության բովանդակությունը բացահայտող հիմքեր (ՀՀ քր.դատ.օր. 395 հոդվ. 2-4 կետերով նախատեսված հիմքերի հետ բովանդակությամբ համընկնող հիմքեր)²:

Այնուհանդերձ, խորհրդային այլ դատավարագետներ այս դասակարգումը համարում էին պայմանական¹, և այդ տեսակետի հետ կա-

¹ Տե՛ս Նոժդարե+ Ի .Ն. *Еодн нааоների оаіеіаіаі ідиоанна*, ծ.2, էջ 378, *Կաժեիա Ե.Ա.* *І ааџідиіа ідиџаіааноаі а оаіеіаііі ідиоанна*, էջ 145, *Կիզիաիեե Բ.Ա.* նշված աշխատությունը, էջ 68, «*Оаіеіаіі-ідиоанноаеиіа іџааі Диінееіеіе Оаааџаџе: џ-ааіеџ*» / *ііа џаа. Կ.Ա. Եօլեіեіе, Ի ., 2004*, էջ 621:

² Տե՛ս Նոժդարե+ Ի .Ն. *Еодн нааоների оаіеіаіаі ідиоанна*, ծ.2, էջ 378:

րելի է համաձայնել, քանի որ դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունը սերտ կապի և փոխապայմանավորվածության մեջ են գտնվում²:

Դրա հետ մեկտեղ պրոֆ. Մ.Ս. Ստրոգովիչի տված դասակարգումը չի համապատասխանում վերաքննիչ հիմքերի էությանն այն պատճառով, որ, ինչպես նշել ենք, վերաքննության կարգով կարող է բողոքարկվել, բեկանվել կամ փոփոխվել նաև առաջին ատյանի դատարանի օրինական և հիմնավորված վերջնական որոշումը:

Դատավճիռների բեկանման և փոփոխման հիմքերի այլ խմբավորում է ներկայացնում Վ.Վ. Բորոդինովը: Կախված այն հանգամանքից, թե առաջին ատյանի դատարանը նյութական, թե դատավարական իրավունքի նորմ է խախտել՝ հեղինակն առաջարկում է այդ հիմքերը դասակարգել երկու խմբի՝

1. նյութական հիմքեր (ՀՀ քր.դատ.օր. 395 հոդվ. 3-4 կետերով նախատեսված հիմքեր),

2. դատավարական հիմքեր (ՀՀ քր.դատ.օր. 395 հոդվ. 1-2 կետերով նախատեսված հիմքեր)³:

Այս դասակարգումն արժանի է ուշադրության, սակայն դրա հետ ևս դժվար է համաձայնել, քանի որ Վ.Վ. Բորոդինովը ևս հակված է այն դիրքորոշմանը, որ բեկանվել կամ փոփոխվել կարող են միայն օրենքի խախտմամբ կայացված դատավճիռները:

Ելնելով դատարանի վերջնական որոշումների բողոքարկման և ստուգման դատավարական մեխանիզմների առանձնահատկություններից՝ առաջարկում ենք վերաքննության հիմքերի հետևյալ դասակարգումը.

1. գուտ վերաքննիչ հիմքեր (ՀՀ քր.դատ.օր. 395 հոդվ. 1-ին և 4-րդ կետերով նախատեսված հիմքեր) և

¹ Տե՛ս Կիզիաիեե Բ.Ա. նշված աշխատությունը, էջ 69:

² Դատավճիռների օրինականության և հիմնավորվածության անխզելի կապի մասին տե՛ս *Ծաճեի Բ.Ե. Շաեիіііոու, іаінііааіііոու Ե Եոեіііոու а оаіеіаііі ոоаі ідиџаі аноаа Ե Եџ аџаеі інаџџі // «І џааіааааіеа», 1969, N2, էջ 102-109:*

³ Տե՛ս *Աիժաեիա Բ.Ա.* նշված աշխատությունը, էջ 51-52:

2. վերաքննիչ-վճռաբեկ հիմքեր (ՀՀ քր.դատ.օր. 395 հոդվ. 2-3 կետերով նախատեսված հիմքեր)¹:

Առաջին խումբ հիմքերը պայմանավորված են վերադաս դատարանի կողմից գործն ըստ էության քննելու՝ դատական վերանայման իրավական մեխանիզմներից միայն վերաքննության բնորոշ առանձնահատկությամբ²: Չուտ վերաքննիչ հիմքերով կարող են բողոքարկվել, բեկանվել կամ փոփոխվել ոչ միայն անօրինական և չհիմնավորված դատական ակտերը, այլ նաև օրինական և հիմնավորված դատավճիռները:

Ի տարբերություն գուտ վերաքննիչ հիմքերի՝ վերաքննիչ-վճռաբեկ հիմքերը միայն կարող են առաջին ատյանի դատարանի կողմից վերջնական որոշման օրինականության և հիմնավորվածության խախտման արդյունք լինել: Երկրորդ խումբ հիմքերն իրենց վրա կրում են վճռաբեկությանը բնորոշ ոչ անմիջականության և գրավորության հատկանիշների հետքեր³:

Սակայն քանի որ առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումներն առաջին անգամ վերաքննության կարգով են վերանայվում, և վերաքննիչ վարույթի ընթացքում դատարանն օժտված է ստորադաս դատարանի նյութաիրավական սխալները և դատավարական խախտումները բացահայտելու և դրանց համարժեք գնահատական տալու բոլոր իրավական հնարավորություններով, ուստի այս խումբ հիմքերը «վերաքննիչ-վճռաբեկ» անվանելը, կարծում ենք, հիմնավորված է:

¹ Ներկայացված դասակարգումը մնան է Ա.Ս. Ալեքսանդրովի և Ն.Ն. Կովտունի առաջարկված վերաքննիչ հիմքերի խմբավորմանը՝ նյութական վճռաբեկ հիմքերի (քրեական օրենքի սխալ կիրառում), ձևական վճռաբեկ հիմքերի (դատավարական օրենքի էական խախտում) և բացառապես վերաքննիչ հիմքերի (գործի փաստական հանգամանքների մասին դատավճռում շարադրված հետևությունների անհամապատասխանությունը դատարանի հետազոտված ապացույցներին, ինչպես նաև դատավճռով նշանակված պատժի անհամապատասխանությունը կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին): Տե՛ս **Асаенгаіадога А.Ն., Եгадоі Ի.Ի. Ի նііааіеу ё іоі аіа (ёсі аіаіеб) і деаі аі да а ноаа аі аеёуоёі і іі ёі ноаі оёе**, էջ 58:

² Այնուամենայնիվ, որոշ իրավական համակարգերում (օրինակ՝ ԽՍՀՄ, ՌԴ) նշված հիմքերը կարող են նախատեսվել նաև որպես վճռաբեկ հիմքեր: Նման բնույթով փաստական հիմքերի առկայությունը կամ բացակայությունը մարտր և խառը վճռաբեկությունը միմյանցից տարբերող հիմնական չափանիշներից մեկն է:

³ Տե՛ս **Асаенгаіадога А.Ն., Եгадоі Ի.Ի. Ի նііааіеу ё іоі аіа (ёсі аіаіеб) і деаі аі да а ноаа аі аеёуоёі і іі ёі ноаі оёе**, էջ 58-61:

Ներկայացված դասակարգման գործնական արժեքն այն է, որ օրենսդիրը, մեր կարծիքով, պետք է գուտ վերաքննիչ և վերաքննիչ-վճռաբեկ հիմքերը կանոնակարգելիս տարբերակված մոտեցում ցուցաբերի և չմանրամասնի գուտ վերաքննիչ հիմքերի դրսևորման եղանակները¹:

Ինչպես նշել ենք, ՀՀ-ում վերաքննիչ հիմքերի համակարգը բաղկացած է 4 տարրերից, որոնցից յուրաքանչյուրի առկայությունը բավարար է առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու կամ փոփոխելու համար: Սակայն համակարգի տարրերի միջև առկա են այնպիսի սերտ կապեր, որ դրանցից մեկի առկայությունը հաճախ հանգեցնում է վերաքննության այլ հիմքերի վերհանմանը:

Օրինակ՝ եթե առաջին ատյանի դատարանի դատավճռում շարադրված հետևությունները չեն համապատասխանում հետազոտված ապացույցներին, ապա հաճախ դրա հետևանքով փոխվում է արարքի որակումը՝ հանգեցնելով առաջին ատյանի դատարանի կողմից սխալ քրեական օրենք կիրառելու մասին հետևության²:

Դատավճիռների բեկանման և փոփոխման հիմքերի թվարկումն օրենսդիրը սկսում է *վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին գործի փաստական հանգամանքների մասին դատավճռում շարադրված դատարանի հետևությունների անհամապատասխանության* վերաքննիչ հիմքից: Այն արտահայտում է վերաքննության էական առանձնահատկությունը՝ ինչպես առաջին ատյանի դատարանում ներկայացված, այնպես էլ նոր ապացույցներ հետազոտելու վերաքննիչ դատարանի իրավունքը:

Այնուհանդերձ, դեռևս ՌԽՍՖՀ 1922թ. քր.դատ.օր.-ը, որպես դատավճռի ակնհայտ անարդարացիության հիմքի տարր, վճռաբեկ բեկանման կամ փոփոխման ենթակա էր համարում այն դատավճիռները,

¹ Պատահական չէ, որ Ռուսական Կայսրության 1864թ. Քրեական դատավարության կանոնադրության 856 հոդվածը հնարավորինս դիսպոզիտիվ եղանակով սահմանում էր, որ վերաքննիչ բողոքարկում թույլատրվում է գործի՝ դիմողին վերաբերող բոլոր հանգամանքներով, և գործը քննելիս կամ դատավճիռ կայացնելիս ցանկացած սխալի կապակցությամբ: Տե՛ս «**Ошоаа Оаі еі аі ааі ноаі і ді ёс аі ашоаа**», 3-а ёс а., ՄІ а, 1911, էջ 172:

² Տե՛ս «**Оаі еі аі սе і ді оааа**» / **і і а даа. А.Ի. Аі аааа**, էջ 52:

որոնք «դատական քննության տվյալներում չգտնելով ոչ մի հաստատում, բացարձակապես մերկապարանոց են»¹:

ՌԽՍՖՀ քր.դատ.օր. 1923թ. խմբագրությունը դատավճիռների բողոքարկման այս հիմքը վերացրեց: Այն բացակայում էր նաև ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների քրեական դատավարության հիմունքների 26 հոդվածում:

Հետագայում խորհրդային օրենսդիրը փոխեց գործի փաստական հանգամանքներին դատարանի հետևությունների անհամապատասխանության հիմքի նկատմամբ վերաբերմունքը, և 1958թ. Հիմունքներում (հոդված 49) ու դրա հիման վրա ընդունված միութենական հանրապետությունների քր.դատ. օրենսգրքերում դատավճիռների բեկանման և փոփոխման քննարկվող հիմքը նախատեսված էր:

Ռ-Գ գործող քր.դատ.օր. 379 հոդվ. 1-ին մասի 1-ին կետը ևս ամրագրում է գործի փաստական հանգամանքներին ստուգվող դատավճռի անհամապատասխանության հիմքն ինչպես վերաքննիչ, այնպես էլ վճռաբեկ բողոքների համար: Ի տարբերություն դրա՝ ՀՀ քր.դատ.օր. 406 հոդվածում նախատեսված վճռաբեկության հիմքերի մեջ նշված հիմքը բացակայում է:

Անհրաժեշտ է նշել, որ նմանությունների հետ մեկտեղ գործի փաստական հանգամանքներին ստորադաս դատարանի հետևությունների անհամապատասխանության հիմքը վերաքննիչ և վճռաբեկ վարույթներում ունեն որոշակի տարբերություններ: Մասնավորապես, վերաքննիչ հիմք է առաջին ատյանի դատարանի հետևությունների անհամապատասխանությունը *վերաքննիչ ատյանում* հետազոտված ապացույցներին, այլ ոչ թե ստորադաս դատարանի կողմից պարզված հանգամանքներին:

Ի տարբերություն վճռաբեկ հիմքի, որն անհրաժեշտաբար ստորադաս դատարանի սխալի արդյունք է, վերաքննիչ հիմքը կարող է առկա լինել նաև առաջին ատյանի դատարանի կողմից նյութաիրավական և դատավարաիրավական նորմերի պահանջների պահպանման, ապացույցների ճիշտ գնահատման պայմաններում: Հնարավոր է, օրինակ, որ կողմը գործի վերաքննիչ քննության ընթացքում ներկայացնի նոր ապացույցներ, որոնք գործի լուծման համար ունենան էական նշանա-

¹ Տե՛ս ՌԽՍՖՀ 1922թ. քր.դատ.օր. 363 հոդվածը:

կություն: Ընդ որում, առաջին ատյանի կարգով գործը քննելիս այդ ապացույցների հետ կապված միջնորդություն հարուցված չի եղել:

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ առաջին ատյանի դատարանը որոշակի սխալ է թույլ տվել, ապա դրանք հիմնականում կապված են ապացույցների սխալ գնահատման հետ: Դատարանը կա՛մ որոշակի ապացույցներ սխալ է գնահատում, կա՛մ ընդհանրապես չի գնահատում: Դա հնարավոր է հետևյալ դեպքերում.

ա) առաջին ատյանի դատարանի հետևությունները չեն հաստատվում այն ապացույցներով, որոնք հետազոտվել են դատական նիստում.

բ) առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել այն հանգամանքները, որոնք կարող էին էական ազդել դատարանի հետևությունների վրա.

գ) գործով առկա են դատարանի հետևությունների համար էական նշանակություն ունեցող հակասական ապացույցներ, իսկ դատավճռում նշված չէ, թե ինչ հիմքերով է դատարանն ընդունել դրանց մի մասը և մերժել մյուսները.

դ) առաջին ատյանի դատարանի հետևություններն իրենց մեջ էական հակասություններ են պարունակում, որոնք ազդել են կամ կարող էին ազդել ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցի լուծման, քրեական օրենքի ճիշտ կիրառման կամ պատժի որոշման վրա:

Վերը նշված դրույթները ոչ միայն ամրագրված էին ՀԽՍՀ 1961թ. քր.դատ.օր. 342 և ՌԽՍՖՀ 1960թ. քր.դատ.օր. 344 հոդվածներով, այլև նախատեսված են Ռ-Գ գործող քր.դատ.օր. 380 հոդվածում:

Ի տարբերություն դրանց, ՀՀ քր.դատ.օր.-ը վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին գործի փաստական հանգամանքների մասին դատավճռում կամ այլ վերջնական որոշման մեջ շարադրված հետևությունների անհամապատասխանության կոնկրետ տեսակներ չի առանձնացնում: Այսպես, ՀՀ քր.դատ.օր. 396 հոդվ. 1-ին մասի համաձայն՝ «պարզելով, որ գործի փաստական հանգամանքների մասին առաջին ատյանի դատարանի դատավճռում կամ որոշման մեջ շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին, վերաքննիչ դատարանն ամբողջությամբ կամ մի մասով բեկանում է դատավճիռը և

դատաքննության արդյունքներին համապատասխան կայացնում է նոր դատավճիռ»¹:

Մենք առավել ընդունելի ենք համարում հայաստանյան օրենսդրի մոտեցումը: Բանն այն է, որ բոլոր այն դեպքերում, երբ գործի վերաքննիչ ստուգման ընթացքում հետազոտված ապացույցները որոշակիորեն հակասության մեջ մտնեն բողոքարկված դատավճռում շարադրված դատարանի հետևությունների հետ, վերաքննիչ ատյանի դատարանը պետք է բեկանի այն՝ վերաքննիչ վարույթում հետազոտված ապացույցների հիման վրա կայացնելով նոր վերջնական որոշում: Ընդ որում, քանի որ վերաքննությունն ստուգման միակ ձևն է, որով վերանայվում է ոչ թե բողոքարկվող վերջնական որոշումը, այլ գործն ամբողջությամբ², և վերաքննիչ ատյանի դատարանի կայացրած դատավճիռն իրենով փոխարինում է բեկանված դատավճիռը, ուստի կարիք չկա վերաքննիչ դատարանին պարտավորեցնել դատավճռում ներկայացնել առաջին ատյանի դատարանի հետևությունների և վերաքննիչ վարույթի ընթացքում հետազոտված ապացույցների միջև առկա անհամապատասխանության տեսակային առանձնահատկությունները:

Վերոգրյալի հիման վրա՝ քննարկվող վերաքննիչ հիմքի մանրամասն օրենսդրական կարգավորումը, ինչպես նաև այն էլ ավելի կոնկրետացնելու անհրաժեշտության մասին իրավաբանական գրականության մեջ տեղ գտած մոտեցումը³, կարծում ենք, ենթակա է քննադատության:

Քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառման վերաքննիչ հիմքը իր բովանդակությամբ նույնանում է դատավարության մասնակիցների նյութական իրավունքի խախտման վճռաբեկ հիմքի հետ (ՀՀ քր.դատ.օր. 406 հոդվ. 2-րդ մաս): Այն կարող է լինել ինչպես գործի փաստական հանգամանքներին դատավճռում շարա-

¹ Մեր կարծիքով՝ ՀՀ քր.դատ.օր. 396 հոդվածի առաջին մասի վերջին բառից հետո անհրաժեշտ է ավելացնել «կամ այլ վերջնական որոշում» արտահայտությունը: Հնարավոր է, որ վերաքննիչ ատյանում դատաքննության արդյունքում դատարանը կայացնի, օրինակ, գործով վարույթը կարճելու մասին որոշում:

² Տե՛ս **Ի օձեթի Է.Ա.** *Í ääçfđi í á iđi êçáí ãñóái á óái éi áí í iđi óáññá*, էջ 6-7:

³ Տե՛ս **Ի օձաթի Է.Ա.** *Ñeñoái á ñóáái íái éi iđi éy á óái éi áí í iđi éçáí ãñóái: áí iđi ñú óái ðeè, çàéí í í ááóáéú í íái ðááóéèđi áái éy è iđáèðeèè, Èçáí ú, 2004*, էջ 208:

դրված հետևությունների անհամապատասխանության արդյունք, այնպես էլ ինքնուրույն հիմք:

Քննարկվող հիմքի բովանդակությունը հայաստանյան օրենսդիրը կոնկրետացնում է քր.դատ.օր. 397 հոդվածով: Դրա 1-ին մասի սկզբնական խմբագրությունը փաստորեն վերարտադրում էր ՀԽՍՀ 1961թ. քր.դատ.օր. 344 հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառման դրսևորման ձևերը: Դրանք էին՝

- ա) ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածի կամ հոդվածի այն մասի կիրառումը, որը ենթակա չէր կիրառման,
- բ) ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածի կամ հոդվածի այն մասի չկիրառումը, որը ենթակա էր կիրառման,
- գ) օրենքի սխալ մեկնաբանումը, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին:

2006թ. մայիսի 23-ի օրենքով ՀՀ քր.դատ.օր. 397 հոդվածի 1-ին մասը շարադրվեց նոր խմբագրությամբ: Դրանով այս հիմքի ծավալն ընդլայնվեց՝ ներառելով նաև միջազգային պայմանագրերի սխալ կիրառման դեպքերը¹:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը»:

Միջազգային պայմանագրերի սխալ կիրառումը վերաքննության և վճռաբեկության հիմքերի շարքը դասելը պետք է համարել մեջբերված սահմանադրական դրույթները քրեական դատավարությունում կենսագործելու երաշխիք: Այս առումով օրենսդրի դիրքորոշումը հիմնավորված է:

¹ Նշված դրույթի նոր խմբագրության տեքստը կոպիտ սխալ է պարունակում. «քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը *սույն օրենսգրքի* կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի այն հոդվածի կամ հոդվածի այն մասի կիրառումն է, որը ենթակա չէր կիրառման ...» (ընդգծումը մերն է - Ռ.Մ.): Ստացվում է, որ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սխալ կիրառումն է, ինչն անհեթեթ է:

Սակայն հարցի կարգավորման ընտրված եղանակը, մեր կարծիքով, լավագույնը չէ: Բանն այն է, որ ՀՀ քր.դատ.օր. 406 հոդվածի 2-րդ մասի համատեքստում՝ օրենսգրքի 397 հոդվածի ձևակերպումից բխում է, որ միջազգային պայմանագրերը կարող են պարունակել միայն *նյութական* (և ոչ դատավարական) նորմեր, ինչն իրականությունը չի համապատասխանում: Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5 և 6 հոդվածները պարունակում են բացառապես դատավարական իրավանորմեր:

Նշվածի հիման վրա առաջարկում ենք միջազգային պայմանագրի սխալ կիրառումն առանձնացնել որպես ինքնուրույն վերաքննիչ հիմք: Հարցի նման կարգավորումն առավել ընդունելի է, քանի որ դրանով ընդգծվում է ՀՀ իրավական համակարգում միջազգային պայմանագրերի առանձնահատուկ նշանակությունը:

Անհրաժեշտ է նշել, որ ՌԴ քր.դատ.օր. 382 հոդվածով ամրագրված քրեական օրենքի սխալ կիրառման հիմքի արտահայտման ձևերի ցանկն ամբողջովին տարբերվում է ՀՀ քր.դատ.օր. 397 հոդվածով սահմանվածից: Այն է՝

ա) քրեական օրենսգրքի ընդհանուր մասի նորմերի պահանջների խախտում,

բ) քրեական օրենսգրքի հատուկ մասի ոչ այն հոդվածի կամ հոդվածի ոչ այն մասի կամ կետի կիրառում, որը ենթակա էր կիրառման,

գ) հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսվածից ավելի խիստ պատիժ նշանակելը:

Մենք համակարծիք ենք այն դատավարագետների հետ, որոնք սերտ կապ և փոխապայմանավորվածություն էին տեսնում ՌԽՍՖՀ 1960թ. քր.դատ.օր.-ով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառման տարատեսակների միջև: Իրոք, այն քրեաիրավական նորմի չկիրառումը, որը ենթակա էր կիրառման, հաճախ գուրդրվում է այն նորմի կիրառմամբ, որը ենթակա չէր կիրառման: Ընդ որում, դա ոչ հազվադեպ բխում է օրենքի սխալ մեկնաբանությունից¹:

¹ Տե՛ս **Նոժիրաե+ Ի.Ն.** *Ի ծագման և զարգացման և ինտերպրետացիայի մասին* ռուսերեն լեզվով, էջ 104, **Ի աժերա Ե.Ա.** *Ի ազգային և միջազգային օրենսդրության մասին* լեզվով, էջ 164-165, «Օճի ճիճի և ճիճի ճիճի» / *Ի ճիճի ճիճի*, **Ա.Ի. Արաբաճյան**, էջ 522-523:

Սակայն ՌԴ քր.դատ.օր. 382 հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառման հիմքի դրսևորման ձևերի ինքնուրույնությունը ևս խիստ հարաբերական է: Այսպես, հատուկ մասի նորմով նախատեսված պատժատեսակներից տարբերվող պատժատեսակի նշանակման, ինչպես նաև առավելագույն պատժաչափից ավելի խիստ պատժի նշանակման արգելքը քրեական օրենսգրքի ընդհանուր մասի նորմ է¹:

Բացի այդ, հատուկ մասի ոչ ճիշտ նորմի կիրառումը հաճախ հետևանք է ընդհանուր մասի նորմերի պահանջների խախտման: Օրինակ՝ եթե գողությունը կատարվել է Ա-ի դրոմամբ Բ-ի կողմից և արարքը որակվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված գողություն, ապա ոչ ճիշտ նորմի կիրառման պատճառը հանցակցության վերաբերյալ ընդհանուր մասի նորմերի պահանջների խախտումն է:

Սակայն ՌԴ քր.դատ.օր.-ում նախատեսված դասակարգումը, մեր կարծիքով, ավելի ճշգրիտ է, քանի որ դրանով սահմանված՝ քննարկվող հիմքի դրսևորման ձևերը համեմատաբար ավելի ինքնուրույն նշանակություն ունեն, քան ՀՀ քր.դատ.օր.-ով ամրագրվածները:

Մեր կարծիքով՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառման հիմքով քրեական մասն են ենթակա առաջին ատյանի դատարանի այն վերջնական որոշումները, որոնցում՝

ա) խախտվել են ժամանակի, տարածության մեջ և ըստ անձանց շրջանակի քրեական օրենքի գործողության կանոններին, հանցակցությանը, հանցագործության փուլերին, արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներին, հանցագործության օբյեկտին, օբյեկտիվ կողմին, սուբյեկտին և սուբյեկտիվ կողմին, պատժի նշանակման կարգին, քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելուն, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմանը վերաբերող քրեական օրենսգրքի ընդհանուր մասի նորմերի պահանջները²,

բ) քրեական օրենսգրքի հատուկ մասի դիսպոզիցիայով ամրագրված հանցակազմի հատկանիշները սխալ են համարվել կատարված

¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 61 հոդվածի 1-ին մասը:

² Ավելի մանրամասն տե՛ս **Արժաբերա Ա.Ա.** *նշված աշխատությունը*, էջ 54-64:

արարքի հատկանիշներին, ինչի հետևանքով արարքը որակվել է ոչ այն հողվածով, հողվածի մասով կամ կետով, որով պետք է որակվեր¹:

գ) նշանակվել է այնպիսի պատժատեսակ, որը տվյալ հողվածի սանկցիայով նախատեսված չէ կամ տվյալ ամբաստանյալի նկատմամբ նշանակվել չի կարող, ինչպես նաև այն դատավճիռները, որոնցով նշանակված պատժաչափն ավելի բարձր է, քան համապատասխան հողվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն չափը, ներառյալ այն դատավճիռները, որոնցով խախտվել է հանցագործությունների կամ դատավճիռների համակցությանը պատժի նշանակման՝ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի նորմերով նախատեսված կանոնները²:

Թվարկածում սպառիչ տրված են *քրեական օրենքի* սխալ կիրառման դեպքերը, սակայն ամբողջությամբ ներկայացված չեն քննարկվող հիմքի դրսևորման ձևերը: Բանն այն է, որ ի տարբերություն 1924թ. Հիմունքների և դրա հիման վրա ընդունված քրեական դատավարության օրենսգրքերի՝ 1958թ. Հիմունքները և դրա հիման վրա ընդունված օրենսգրքերը, ինչպես նաև ՀՀ և ՌԴ գործող քր.դատ.օր.-երը սույն հիմքի բովանդակությունը սահմանափակում են միայն քրեական օրենքի խախտմամբ: Դրան հակառակ, 1924թ. Հիմունքները խոսում են քրեական և *այլ օրենքների* սխալ կիրառման մասին: Անկասկած, համաներման ակտի, քաղաքացիական նյութական իրավունքի և այլ նյութական նորմերի սխալ կիրառումը վկայում է տվյալ դատավճռի անօրինակաւորության մասին³: Ընդ որում, դա ընդունում էին նաև 1958թ. Հիմունքները և դրա հիման վրա ընդունված քրեական դատավարության օրենսգրքերը մեկնաբանող դատավարագետները⁴: Մասնավորապես, Վ.Ա. Պոզնանսկին քննարկվող հիմքի օրենսդրական ձևակերպումը համարում է դրա *հիմնական* բովանդակության ընդգծում⁵:

Սակայն, մեր կարծիքով, «քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում» տերմինի տարածական մեկնաբանությունը խնդրի լավագույն լուծումը

¹ Տե՛ս **Աժժաբեյր Ա.Ա.** նշված աշխատությունը, էջ 65-66:
² Տե՛ս **Աժժաբեյր Ա.Ա.** նշված աշխատությունը, էջ 66-67:
³ Տե՛ս **Նոժիրաբեյ Ի.Ն.** *Ի ծիւծիւծեա չաճիւննոճ է իւնիւննոճ նոճաւնոճ իճճաւնոճ*, էջ 105:
⁴ Տե՛ս, օրինակ, **Ի իճիւննոճ Ա.Ա.** նշված աշխատությունը, էջ 102-103:
⁵ Տե՛ս **Ի իճիւննոճ Ա.Ա.** նշված աշխատությունը, էջ 103:

չէ: Օրենսդիրը պետք է ձգտի օրենքում տեղ գտած արտահայտությունների առավելագույն հստակության, ուստի առաջարկում ենք ՀՀ քր.դատ.օր. 395 հոդվ. 2-րդ կետը վերաշարադրել հետևյալ կերպ. «Ճիշտ չի կիրառվել քրեական կամ այլ նյութական օրենքը»:

ՀՀ քր.դատ.օր.-ում առավել մանրամասն կանոնակարգված է *քրեադատավարական օրենքի էական խախտման* վերաբննիչ հիմքը (ՀՀ քր.դատ.օր. 398 հոդված):

Քրեադատավարական իրավունքը կարգավորում է հասարակության համար հույժ կարևոր հարաբերությունների համակարգ, և դրա կարգադրագրերի խախտումները հղի են ծանր հետևանքներով ինչպես հասարակության և պետության, այնպես էլ առանձին քաղաքացիների համար: Ավելին, մարդու իրավունքների խախտումների հավանականությունն ու այդ խախտումների վտանգավորությունը հասարակական կյանքի մյուս ոլորտների համեմատ քրեական դատավարությունում ավելի մեծ է:

Այս ամենը հաշվի առնելով՝ դատավարական օրենսդրության ցանկացած խախտում պետք է իրավախախտի համար որոշակի անցանկալի հետևանքներ առաջացնի: Սակայն գործի ճիշտ լուծման վրա այդ խախտման իրական կամ հնարավոր ազդեցության չափից կախված՝ որոշ խախտումներ կարող են հանդիսանալ դատավճռի բեկանման կամ փոփոխման հիմք, իսկ մյուսները՝ ոչ:

Այսպես, ՀՀ քրեադատավարական իրավունքը վերաբննիչ (ինչպես նաև՝ վճռաբեկ) հիմք է համարում քրեադատավարական օրենքի *էական* խախտումը¹:

Ընդ որում, «էական խախտում» հասկացությունն ընդհանրական բնույթ չի կրում, այլ սերտորեն կապված է կոնկրետ գործի էության հետ: Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է պարզել, թե այդ խախտումը գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրա-

¹ Համեմատության համար անհրաժեշտ է նշել, որ թեև վերաբննիչ և վճռաբեկ հիմքերը թվարկող ՌԴ քր.դատ.օր. 379 հոդվ. 2-րդ կետը նախատեսում է «քրեադատավարական օրենքի խախտում» հասկացությունը՝ առանց ընդգծելու խախտման բնույթը, սակայն այդ դրույթը կոնկրետացնող հոդվ. 381-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ բողոքարկման հիմք է հանդիսանում քրեադատավարական օրենքի ոչ թե ցանկացած խախտում, այլ միայն էական խախտումները:

վունքներից գրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ որևէ այլ ճանապարհով խոչընդոտել է արդյոք գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդե՞լ է կամ կարո՞ղ էր արդյոք ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվ. 1-ին մաս):

Հնարավոր է, որ միևնույն դատավարական խախտումը մի գործով՝ էական, իսկ մեկ ուրիշ գործով ոչ էական նշանակություն ունենա: Օրինակ՝ եթե առաջին ատյանի դատարանն առանց հիմնավորման մերժել է որպես վկա որևէ անձին հարցաքննելու՝ ամբաստանյալի միջնորդությունը, ապա այդ խախտումն էական կհամարվի, եթե այդ անձը կարող էր դատարանին այնպիսի տեղեկություններ հայտնել, որոնք կարող էին գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունենալ: Իսկ եթե անձն այդպիսի տեղեկություններ չէր կարող հայտնել, ապա տվյալ դատավարական խախտումն էական չի լինի:

Ռ-Գ քր.դատ.օր. 381 հոդվ. 1-ին մասի տեքստը որոշակիորեն տարբերվում է ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվ. 1-ին մասի բովանդակությունից: Այսպես՝

ա) Ի տարբերություն ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվ.-ի՝ Ռ-Գ քր.դատ.օր. 381 հոդվածը «քրեադատավարական օրենքի էական խախտում» հասկացությունը չի սահմանափակել քր.դատ.օր. սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտմամբ: Թեև ցանկացած քրեադատավարական խախտում վերջին հաշվով կարելի է հանգեցնել որոշակի սկզբունքի խախտման, սակայն, կարծում ենք, որ նման սահմանափակում դնելն ավելորդ է:

բ) ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածի հիման վրա վերաքննիչ հիմք են քրեադատավարական օրենքի այն խախտումները, որոնք թույլ են տրվել միայն «դատական քննության ժամանակ», մինչդեռ Ռ-Գ քր.դատ.օր. 381 հոդվածը նման սահմանափակում չի նախատեսում: Ճիշտ է, մինչդատական վարույթի ընթացքում թույլ տրված դատավարական օրենքի խախտումներն առաջին ատյանի դատարանում չվերացնելը, որպես կանոն, ինքնին դատավարական օրենքի խախտում է: Սակայն դա չի փոխում այն իրողությունը, որ քրեադատավարական օրենքի սկզբնական խախտումը թույլ է տրվել մինչդատական վարույթում, և հաճախ այն ուղղելու համար անհրաժեշտ է լինում գործն ու-

ղարկել լրացուցիչ նախաքննության: Ուստի քննարկվող հարցում Ռ-Գ քր.դատ.օր.-ի որդեգրած մոտեցումն ավելի ճիշտ է:

գ) Գործի ճիշտ լուծման վրա ազդեցության միջոցների մեջ Ռ-Գ քր.դատ.օր. 381 հոդվածը նշում է նաև դատավարական կարգը չպահպանելը: Սակայն ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածը նշված միջոցները սպառնիչ չի թվարկում, ուստի հայաստանյան օրենսդիրը ևս դատավարական կարգը չպահպանելու ճանապարհով գործի ճիշտ լուծման վրա ազդելու հիմքով վերաքննիչ բողոքարկման և դատավճռի բեկանման խոչընդոտ չի նախատեսում: Այնուհանդերձ հստակության համար վերը նշված արտահայտությունը, կարծում ենք, պետք է մտցնել ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածի տեքստի մեջ:

դ) ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածն իբրև քրեադատավարական օրենքի էական խախտման կամընտրական հատկանիշներ, նշում է *գործով ճիշտ որոշման վրա խախտման հնարավոր կամ իրական ազդեցությունը*, և *գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը դրա խոչընդոտելը*: Ի տարբերություն դրա՝ Ռ-Գ քր.դատ.օր. 381 հոդվ.-ը գործի հանգամանքների հետազոտմանը խոչընդոտելն էական խախտման հատկանիշ չի դիտում: Ավելին, Ռ-Գ քր.դատ.օր.-ն առհասարակ չի օգտագործում «գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում» արտահայտությունը: Մեր կարծիքով՝ ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվ. 1-ին մասում «խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը» արտահայտությունն ավելորդ է, քանի որ եթե որևէ խախտում խոչընդոտել է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ապա անհրաժեշտ է ընդունել, որ այդ խախտումը որոշակի ազդեցություն է ունեցել նաև գործի ճիշտ լուծման վրա:

ե) Եթե ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածն օգտագործում է «գործով ճիշտ որոշման կայացում» արտահայտությունը, ապա Ռ-Գ քր.դատ.օր. 381 հոդվ.-ը՝ «օրինական, հիմնավոր և արդարացի դատավճռի կայացում» արտահայտությունը: Մեր կարծիքով՝ «գործի ճիշտ լուծում» հասկացության ծավալն իր մեջ ընդգրկում է «օրինական դատավճռի կայացում», «հիմնավոր դատավճռի կայացում» և «արդարացի դատավճռի կայացում» հասկացությունների ծավալները: Բացի այդ, ՀՀ քր.դատ.օր.-ում նախատեսված «որոշում» տերմինն ավելի ճշգրիտ է,

քան «դատավճիռ» եզրույթը: Ուստի քննարկվող մասով անհրաժեշտություն չկա փոփոխել ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածի տեքստը:

Թեև ընդհանուր կանոնի համաձայն՝ վերաքննիչ դատարանն ազատ է քրեադատավարական օրենքի խախտման բնույթը գնահատելու հարցում, սակայն օրենքը սահմանում է հանգամանքների ցանկ, որոնք չեն կարող չազդել գործով ճիշտ որոշման կայացման վրա, ուստի դրանց բացահայտումն ինքնին վկայում է քրեադատավարական օրենքի էական խախտման առկայության մասին¹: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը հաստատված ճանաչելու դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է բեկանել առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումը և կայացնել նորը:

Իրավաբանական գրականության մեջ այդ հանգամանքներն ընդունված է անվանել «անվերապահ վերաքննիչ հիմքեր»:

Մի կողմից, անվերապահ վերաքննիչ հիմքերի օրենսդրական ինստիտուտը պետք է ներառի քրեադատավարական օրենքի բոլոր այն տիպիկ խախտումները, որոնք ինքնաբերաբար կասկածի տակ են դնում առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինականությունը, հիմնավորվածությունը կամ արդարացիությունը:

Սակայն մյուս կողմից, անվերապահ վերաքննիչ հիմքերի ցանկը չպետք է չափազանց ընդարձակ լինի, և այն չպետք է ներառի այնպիսի խախտումներ, որոնք կոնկրետ դեպքում կարող են դրսևորվել որպես քրեադատավարական օրենքի ոչ էական խախտումներ: Դա կարող է բացասաբար անդրադառնալ արդարադատության արդյունավետության վրա և նպաստել դատական քաշքշուկների²:

ՀՀ քր.դատ.օր.-ում անվերապահ վերաքննիչ հիմքերը թվարկված են 398 հոդվ. 3-րդ մասում: Բացի այդ, ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվ. 2-րդ մասի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանում ևս ամրագրված են անվերապահ վերաքննիչ հիմքեր:

Համաձայն ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածի 3-րդ մասի՝ դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

¹ Տե՛ս **Ածիսբեկյան Ի. Ի.** *Էսնոսթեմիսն է Իսսթիսն Իսթեթիսնոսն Իսթեթիսն* 1949, էջ 102-103:

² Տե՛ս **Իսթեթիսնոսն Բ.Ի.** *Իսթեթիսնոսն Իսթեթիսնոսն Էսնոսթեթիսն*, Իսթեթիսնոսն Իսթեթիսնոսն Էսնոսթեթիսնոսն Իսթեթիսնոսն, ԲԻՍԷԹ, 1978, էջ 34:

ա) գործով վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման համար հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը չի կարճել գործով վարույթը կամ չի դադարեցրել հետապնդումը.

բ) դատավճիռը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով.

գ) գործը քննվել է ամբաստանյալի բացակայությամբ.

դ) գործը քննվել է պաշտպանի բացակայությամբ, երբ նրա մասնակցությունը, համաձայն օրենքի, պարտադիր էր, կամ այլ կերպ խախտվել է մեղադրյալի՝ պաշտպան ունենալու իրավունքը.

ե) դատարանում խախտվել է մայրենի լեզվից և թարգմանչի ծառայություններից օգտվելու՝ ամբաստանյալի իրավունքը.

զ) անձամբ իր պաշտպանությունն իրականացրած ամբաստանյալին իրավունք չի վերապահվել մասնակցելու դատական վիճարկություններին¹.

է) ամբաստանյալին չի տրվել վերջին խոսքի իրավունք.

ը) խախտվել է դատավճիռ կայացնելու գաղտնիության սկզբունքը.

թ) գործում բացակայում է դատական նիստի արձանագրությունը.

ժ) դատավճռում իսպառ բացակայում է դրա նկարագրական-պատճառաբանական մասը.

ժա) խախտվել է գործի քննության ընդդատությունը:

Ինչպես նշել ենք, ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված անվերապահ վերաքննիչ հիմքերը չեն սահմանափակվում ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածի 3-րդ մասով ամրագրված ցանկով: Այսպես, համաձայն ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածի 2-րդ մասի՝ «դատավճիռը պետք է բեկանվի, երբ դատաքննության միակողմանիությունը կամ ոչ լրիվությունը հետևանք են թույլատրելի սպառնույթները գործից սխալմամբ հանելու կամ այն սպառնույթների հետազոտման հարցում

¹ Նախնական խմբագրությամբ ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվ. 3-րդ մասի 6-րդ կետում ամրագրված դրույթի ծավալն ավելի լայն էր. այն վերաբերում էր ոչ միայն իր պաշտպանությունն անձամբ իրականացրած ամբաստանյալին, այլև պաշտպան ունեցող ամբաստանյալին: Մեր կարծիքով՝ օրենսդրի դիրքորոշման փոփոխությունը հիմնավորված է: Պաշտպան ունեցող ամբաստանյալին պաշտպանական ճառ արտասանելու հնարավորություն չտրամադրելը միշտ չէ, որ կարող է դատարանի վերջնական որոշման վրա ազդեցություն ունենալ: Օրինակ՝ հնարավոր է, որ պաշտպանի արտասանած որակյալ ճառի շնորհիվ ամբաստանյալի պաշտպանության իրավունքը de facto նսեմացված չլինի:

կողմի միջնորդությունն անհիմն մերժելու համար, որոնք կարող էին նշանակություն ունենալ գործի համար»:

Այս իրավական նորմը փաստորեն ամրագրում է երկու լրացուցիչ անվերապահ վերաքննիչ հիմք: Դրանք են՝

ա) այն թույլատրելի ապացույցները գործից սխալմամբ հանելը, որոնք կարող էին գործի համար նշանակություն ունենալ,

բ) կողմի միջնորդությունն անհիմն մերժելն այն ապացույցների հետազոտման հարցում, որոնք կարող էին գործի համար նշանակություն ունենալ:

ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված անվերապահ վերաքննիչ հիմքերի ցանկի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանում տեղ գտած հանգամանքներից յուրաքանչյուրն ինքնին պետք է ազդած լիներ կամ կարող էր ազդած լինել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա¹:

Մեր կարծիքով՝ արդարացված է նաև ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածի 2-րդ մասով սահմանված հանգամանքներն անվերապահ վերաքննիչ հիմքեր համարելը և դրանք ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածի 3-րդ մաս տեղափոխելը: Քանի որ ապացույցներն ու ապացուցումը քրեական դատավարության առանցքային ինստիտուտն է, ուստի ապացույցների հավաքման, ստուգման, գնահատման և օգտագործման գործընթացում թույլ տրված առավել էական և տիպական խախտումները պետք է սահմանվեն որպես ինքնուրույն անվերապահ վերաքննիչ հիմքեր:

Ավելին, կարծում ենք՝ անհրաժեշտ է անվերապահ վերաքննիչ համարել նաև ապացուցման դատավարական կարգի այնպիսի խախտում, ինչպիսին է *վերջնական որոշումն անթույլատրելի ճանաչված ապացույցով հիմնավորելը*, որը նախատեսված է ՌԴ քր.դատ.օր. 381 հոդվ. 2-րդ մասի 9-րդ կետով:

ՀՀ քր.դատ.օր.-ով նախատեսված վերջին վերաքննիչ հիմքը *դատավճռով նշանակված պատժի անհամապատասխանությունն է կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին*: Այս հիմ-

¹ Տե՛ս **Աժիպեմե՛ս Է Է** . **Է**աննօեմիմա՛ն է Էաճիճիմա՛ն Էճիճաիմնօնօն օննօնօնի օննօնիմի Էճիճանն, Է ., 1949, էջ 103-114, **Նոճիմա՛ն Է Է** .Ն. Էճիճաճեճ ճաճիմիմնօն է Էննիմաճիմնօն օննօնիմն Էճիճիմն, էջ 81-93, **Էճիմիմե՛ս Է.Ա.** նշված աշխատությունը, էջ 95-98:

քի առանձին ամրագրումը վկայում է պատժի անհատականացման՝ իբրև սոցիալական արդարության վերականգնման միջոցի մեծ նշանակության մասին¹:

Այս վերաքննիչ հիմքը պրակտիկայում ամենատարածվածն է: Մեր ուսումնասիրած 100 գործերից 56-ում վերաքննիչ բողոքը բերվել է քննարկվող հիմքով: Դրանց հիման վրա փոփոխվել է 34 դատավճիռ: Եվս 18 գործերով վերաքննիչ բողոքը բերվել է այլ հիմքով, սակայն առաջին ատյանի դատավճիռը փոփոխվել է կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին դատավճռով նշանակված պատժի անհամապատասխանության հիմքով:

Դեռևս ՌԽՖՍՀ 1922թ. քր.դատ.օր. 417 հոդվ.-ը քննարկվող հիմքն անվանում էր «դատավճռի անարդարացիություն»: ՌԴ գործող քր.դատ.օր. 379 հոդվ. 4-րդ կետը ևս այս հիմքը նույն կերպ է բնութագրում²:

Դրան հակառակ, ՀՀ քր.դատ.օր. 395 հոդվ. 4-րդ կետը, ինչպես նաև 399 հոդվածն օգտագործում են «կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին դատավճռով նշանակված պատժի անհամապատասխանություն» արտահայտությունը:

Իհարկե, անձին և իր արարքին չհամապատասխանող պատժն անարդարացի դատավճռի դրսևորման ձևերից է: Սակայն ճիշտ չի լինի պատժի անարդարացիության տակ չհասկանալ նաև դրա անհիմն կամ անօրինական լինելը, ընդհանրապես, ամենը անձի դատապարտման, մեղավոր անձի արդարացման կամ ոչ ճիշտ դատապարտման յուրաքանչյուր դեպք³:

Մյուս կողմից, մեր օրենսդրի կողմից ընտրված եզրույթը լակոնիկ չէ, և ինչ-որ տեղ հասկանալի է լակոնիկ ձևակերպում ամրագրելու՝ ռուսաստանյան օրենսդրի ցանկությունը, անգամ «անարդարացիություն» հասկացության նեղացման ճանապարհով:

Սակայն քննարկվող խնդրին ՀՀ քր.դատ.օր. մոտեցումը մեզ ավելի ընդունելի է թվում, քանի որ այն չի առաջացնում օրենքում ամրագրված

¹ Տե՛ս «Օննիմնիմն Էճիճիմն» / Էնն օնն. **Է.Է. Աննննն**, էջ 523:
² Երկու դեպքում էլ խոսքն ըստ էության վերաբերում է ոչ թե ընդհանրապես *դատավճռի*, այլ *պատժի* անարդարացիությանը:
³ Տե՛ս **Նոճիմա՛ն Է Է** .Ն. Էճիճաճեճ ճաճիմիմնօն է Էննիմաճիմնօն օննօնիմն Էճիճիմն, էջ 110-111:

արտահայտությունների սահմանափակ մեկնաբանման անհրաժեշտություն:

Պետք է նշել, որ սույն հիմքը կարող է առկա լինել ինչպես ինքնուրույն, այնպես էլ իբրև այլ հիմքերի, հատկապես քրեական օրենքի սխալ կիրառման արդյունք:

Նշանակված պատժի անարդարացիությունը կարող է դրսևորվել հետևյալ ձևերով.

ա) առաջին ատյանի դատարանի կողմից համապատասխան հողվածի սանկցիայի շրջանակներում ակնհայտ խիստ հիմնական կամ լրացուցիչ պատժատեսակ կամ պատժաչափ նշանակելը, որը չի համապատասխանում ամբաստանյալի կամ նրա արարքի հասարակական վտանգավորության բնույթին և աստիճանին: Օրինակ՝ որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք՝ դատարանը հաշվի չի առել այն, որ ամբաստանյալը դրական է բնութագրվում:

բ) առաջին ատյանի դատարանի կողմից ակնհայտ մեղմ պատժատեսակ կամ պատժաչափ նշանակելը, այդ թվում նաև առանց բավարար հիմքերի օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կիրառելը: Օրինակ՝ դատարանը հաշվի չի առել ամբաստանյալի կողմից դատվածություն ունենալու հանգամանքը:

Վերոգրյալն ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ վերաքննիչ վերանայման մեխանիզմում վերաքննության հիմքերի ինստիտուտն առանցքային նշանակություն ունի: Դրանով որոշվում են քրեական գործը վերաքննիչ վարույթի փուլ տեղափոխելու անհրաժեշտ դատավարական-իրավական նախադրյալները, ինչպես նաև վերաքննության արդյունքում դատարանի կողմից կայացվող որոշումների բնույթն ու բովանդակությունը:

Ելնելով դատարանի վերջնական որոշումների բողոքարկման և ստուգման դատավարական մեխանիզմների առանձնահատկություններից՝ առաջարկում ենք վերաքննության հիմքերի դասակարգումը **զուտ վերաքննիչ հիմքերի** (ՀՀ քր.դատ.օր. 395 հոդվ. 1-ին և 4-րդ կետերով նախատեսված հիմքեր) և **վերաքննիչ-վճռարկելի հիմքերի** (ՀՀ քր.դատ.օր. 395 հոդվ. 2-3 կետերով նախատեսված հիմքեր): Ներկայացված դասակարգման գործնական արժեքն այն է, որ այն օրենսդրին հնարավորություն է տալիս վերաքննիչ հիմքերը կանոնակարգելիս

տարբերակված մոտեցում ցուցաբերել և չմանրամասնել զուտ վերաքննիչ հիմքերի դրսևորման եղանակները:

Վերաքննիչ վարույթի դատական քննության ենթափուլում վերաքննիչ հիմքերի իրավական կարգավորումը հատկեցնելու համար առաջարկում ենք՝

1. Միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառման առանձնացնել որպես ինքնուրույն վերաքննիչ հիմք:

2. ՀՀ քր.դատ.օր. 395 հոդվածի 2-րդ կետը վերաշարադրել հետևյալ կերպ. «Ճիշտ չի կիրառվել քրեական կամ այլ նյութական օրենքը»: ՀՀ քր.դատ.օր. 397 հոդվածի վերտառությունը վերաշարադրել հետևյալ կերպ. «քրեական կամ այլ նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառումը»:

3. ՀՀ քր.դատ.օր. 397 հոդվածում սահմանել քրեական կամ այլ նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառման վերաքննիչ հիմքի հետևյալ դրսևորումները՝ ա) խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի նորմերի պահանջները, բ) կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի ոչ այն հողվածը կամ հողվածի ոչ այն մասը կամ կետը, որը ենթակա էր կիրառման, գ) նշանակվել է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հողվածով նախատեսվածից ավելի խիստ պատիժ, դ) ճիշտ չի կիրառվել այլ նյութական օրենք:

4. ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածի 1-ին մասը վերաշարադրել հետևյալ կերպ. «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են սույն օրենսգրքի սկզբունքների կամ այլ դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու, դրանցում սահմանափակելու, դատավարական կարգը չպահպանելու կամ այլ ճանապարհով ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

5. Հանել ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվածի 2-րդ մասը: Նշված հողվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ կետերով. «12) այն թույլատրելի սպացույցները գործից սխալմամբ հանելը, որոնք կարող էին գործի համար նշանակություն ունենալ, 13) կողմի միջնորդությունն անհիմն մերժելն այն սպացույցների հետագոտման հարցում, որոնք կարող էին գործի համար նշանակություն ունենալ, 14) վերջնական որոշումն անթույլատրելի ճանաչված սպացույցով հիմնավորելը»:

§ 3. Վերաքննիչ վարույթը եզրափակող որոշումների հասկացությունը, ընդունման կարգը և տեսակները

Հայրենական իրավաբանական գրականության մեջ «վերաքննիչ վարույթը եզրափակող որոշում» հասկացությունը սահմանված չէ: Մեր կարծիքով՝ դրա կարևորությունը ոչ միայն տեսական է, այլ նաև գործնական, քանի որ նշված հասկացության էական հատկանիշների վերահանումը կարող է նպաստել որոշակի օրենսդրական շտկումների կատարմանը:

Որպես «վերաքննիչ վարույթը եզրափակող որոշման» սեռային հասկացություն կարող է դիտարկվել ՀՀ քր.դատ.օր. 6-րդ հոդվ. 7-րդ կետով նախատեսված «դատավարական որոշումը»: Մասնավորապես, իբրև դատավարական որոշումներ, վերաքննիչ դատարանի կողմից կայացվող վերջնական որոշումներն օժտված են հետևյալ ընդհանուր հատկանիշներով.

1. դրանք առաջացնում և դադարեցնում են որոշակի քրեադատավարական իրավահարաբերություններ,
2. իրավասու սուբյեկտների՝ օրենքով կանոնակարգված դատավարական գործունեության հիման վրա կայացվում են վարույթն իրականացնող մարմնի կողմից,
3. պարզված փաստական հանգամանքների հիման վրա բովանդակում են իրավական հարցերի պատասխաններ¹,
4. դրանց ձևին ու բովանդակությանը, կայացման պայմաններին ու կարգին ՀՀ քր.դատ.օր.-ով որոշակի պահանջներ են ներկայացվում:

«Վերաքննիչ վարույթը եզրափակող ակտ» և «դատարանի վերջնական որոշում» հասկացությունների հարաբերակցությունը կախված է «վերջնական որոշում» հասկացության սահմանումից: Եթե ընդունենք սույն աշխատանքի 2-րդ գլխի §2-ում մեր առաջ քաշած մոտեցումը, ապա այդ հասկացությունների միջև պետք է տեսնենք խաչավորման հարաբերակցություն: Սակայն հիմնվելով այդ հասկացության՝ դատական պրակտիկայում ընդունված սահմանման վրա՝ «վերաքննիչ վարույթը եզրափակող ակտը» կարող ենք համարել «դատարանի վերջնական ո-

¹ Տե՛ս **E. J. A. van der Meer**, *De oorspronkelijke en de huidige betekenis van de termen 'einde van de zaak' en 'einde van de procedure'*, 1976, էջ 149:

որոշման» մասնավոր դրսևորում: Որպես այդպիսին՝ «վերաքննիչ վարույթը եզրափակող ակտ» հասկացությունն օժտված է լրացուցիչ հատկանիշներով: Այսպես՝

1. այդ ակտերի անվանումները և տարատեսակներն օրենքով ուղղակի նախատեսված են,
2. դրանցով գործը լուծվում է ըստ էության կամ բացառվում է վարույթի շարունակումը տվյալ դատավարական փուլում,
3. դրանք նախապայմաններ են ստեղծում գործով վարույթը դատավարական նոր փուլ տեղափոխելու համար¹:

Վերոգրյալի հիման վրա կարող ենք տալ *վերաքննիչ վարույթը եզրափակող որոշման* հետևյալ սահմանումը. դա *քրեական գործով առաջին ատյանի դատարանի վերջնական որոշման վերաքննիչ վերանայման արդյունքում ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի կողմից և Հայաստանի Հանրապետության անունից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան կայացված դատավարական որոշում է, որով ավարտվում է վարույթը վերաքննիչ ատյանում, և նախապայմաններ են ստեղծվում գործով վարույթը դատավարական նոր փուլ տեղափոխելու համար:*

ՀՀ քր.դատ.օր.-ը մանրամասն կանոնակարգում է վերաքննիչ վարույթը եզրափակող որոշում ընդունելու կարգը:

Համաձայն ՀՀ քր.դատ.օր. 392 հոդվ. 3-րդ մասի՝ դատական վիճաբանությունները և ամբաստանյալի վերջին խոսքն ունկնդրելուց հետո վերաքննիչ դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ գործով վերջնական որոշում կայացնելու համար:

Մինչև դատական վիճաբանություններն ու ամբաստանյալի վերջին խոսքն ունկնդրելը վերաքննիչ դատարանը կարող է կայացնել միայն մեկ տեսակի եզրափակիչ որոշում՝ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշում:

¹ ՀՀ քր.դատ.օր.-ում 2006թ. կատարված փոփոխությունների հիման վրա գործի վերաքննիչ վերանայման փուլին հաջորդում է դատական որոշման կատարման փուլը: Հնարավոր է նաև, որ գործով վարույթը վերադառնա նախնական քննության փուլ (եթե կայացվել է գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշում): Մինչև 2006թ. փոփոխությունները վերաքննիչ վարույթին կարող էր հաջորդել նաև վճռաբեկ վարույթի փուլը (այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվում էր):

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում վերջնական որոշման կայացման կարգի տարբերությունները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ վերաքննիչ դատարանը գործը կոլեգիալ է քննում: Այսպես, ՀՀ քր.դատ.օր. 393 հոդվածը սահմանում է, որ՝

1. Խորհրդակցական սենյակում օրենքով սահմանված հարցերին պատասխան է տրվում *քվեարկությամբ՝* ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության դրված հարցին յուրաքանչյուր դատավոր պետք է դրական կամ բացասական պատասխան տա. դատավորներն իրավունք չունեն ձեռնպահ մնալ քվեարկությունից: Ընդ որում, նախագահող դատավորը քվեարկում է վերջում (ՀՀ քր.դատ.օր. 393 հոդվ. 6-րդ մաս):

2. Վերաքննիչ վարույթի համար ՀՀ քր.դատ.օր.-ը նախատեսել է *առանձին կարծիքի* ինստիտուտը:

ՀՀ քր.դատ.օր. 393 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նախագահողի կողմից վերաքննիչ դատարանի լուծմանը ներկայացվող հարցերի հաջորդականությունը և ձևակերպումը համընկնում են առաջին ատյանի դատարանի կողմից լուծվող հարցերին: Այսինքն՝ վերաքննիչ ատյանի դատարանը, առաջին ատյանի դատարանի նման, պետք է հաջորդաբար պատասխանի հետևյալ հարցերին.

ա) ապացուցված է արդյոք արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է ամբաստանյալը,

բ) այդ արարքը համապատասխանում է արդյոք քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի հատկանիշներին,

գ) ապացուցված է արդյոք ամբաստանյալի կողմից այդ արարքը կատարելը,

դ) ապացուցված է արդյոք ամբաստանյալի մեղավորությունը տվյալ հանցանքը կատարելու մեջ և, եթե այո, ապա քրեական օրենսգրքի n°ր հոդվածով, մասով, կետով է նախատեսված այն և այլն:

Եթե բողոքարկվել է անձին քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ու նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու կամ անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթը կարճելու մասին որոշումը, ապա վերաքննիչ դատարանը պետք է պատասխանի ՀՀ քր.դատ.օր. 463 հոդվածով սահմանված հարցերին.

ա) կատարվե՞լ է արդյոք հանրորեն վտանգավոր արարք,

բ) արարքը կատարե՞լ է արդյոք այն անձը, որի նկատմամբ իրականացվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ,

գ) արարքը կատարվե՞լ է արդյոք անմեղսունակության վիճակում, անձը գտնվում է արդյոք տվյալ վիճակում դատական քննության պահին,

դ) անձը կարիք ունի՞ արդյոք իր նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու և հատկապես ինչպիսի՞ միջոցներ:

Յուրաքանչյուր հարցով առաջին հերթին քվեարկության է դրվում այն առաջարկը, որն առավել բարենպաստ է ամբաստանյալի համար:

Մեր կարծիքով՝ վերաքննիչ դատարանի կողմից լուծվող հարցերի հաջորդականության վերաբերյալ հայաստանյան օրենսդրի մոտեցմամբ նսեմացվում է վերաքննիչ բողոքի՝ որպես վերաքննիչ վարույթի հիմքի դերը և նշանակությունը: Քանի որ վերաքննիչ վարույթը հարուցվում է միմիայն վերաքննիչ բողոքի հիման վրա, ուստի նախ և առաջ վերաքննիչ դատարանը պետք է լուծի այն հարցը, թե վերաքննիչ բողոքում, իսկ եթե դրանք մի քանիսն են, ապա դրանցից յուրաքանչյուրում բովանդակվող պահանջը ենթակա՞ է արդյոք բավարարման, թե՞ ոչ, և եթե այո, ապա ամբողջությամբ, թե՞ մասամբ: Միայն այս հարցերին լուծում տալուց հետո դատարանը կարող է անցնել ՀՀ քր.դատ.օր. 360-361 հոդվածներով նախատեսված հարցերի լուծմանը:

Բացի այդ, նշված հոդվածներում ամբագրված բոլոր հարցերը կրկին լուծելու պարտականությունը հակասում է վերաքննության՝ իբրև դատական վերանայման ձևի էությանը: Վերաքննիչ դատարանն ամենևին էլ պարտավոր չէ քննության առնել և լուծել այն հարցերը, որոնք վերաքննիչ բողոքում արժարժված չեն: Օրինակ՝ եթե քաղաքացիական օրենսգրքի նորմերի սխալ կիրառման հիմքով քաղաքացիական պատասխանողը բողոքարկել է առաջին ատյանի դատարանի այն դատավճիռը, որով իր վրա դրվել է տուժողին հասցված նյութական վնասի հատուցման պարտականությունը, ապա ճիշտ չի լինի վերաքննիչ դատարանին պարտավորեցնել քննության առնել և դատավճռում կրկին լուծել ամբաստանյալի մեղավորության հարցը:

Վերաքննիչ դատարանի որոշման եզրափակիչ մասում լուծվող հարցերի առաջարկվող հերթականությունը համապատասխանում է նաև դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասին ՀՀ

կարծում ենք, որ այդ ակտը, ինչպես ՌԴ-ում, անհրաժեշտ է անվանել «որոշում»¹:

Քննարկվող ակտի անվանումն ունի նաև որոշակի գործնական նշանակություն՝ կապված դատավճիռների կայունության խնդրի հետ: Շատ դատավարագետներ արդարադատության հեղինակությունը և արդյունավետությունը մեծապես պայմանավորում են դատավճիռների կայունության աստիճանով: Այսպես, Պ.Ֆ. Պաշկեիչն ընդգծում է, որ կայունություն չունեցող դատավճիռը չի հասնում իր նպատակին²: Եթե առաջին ատյանի դատարանն անշեղորեն պահպանել է նյութական և դատավարական նորմերը, կայացրել է օրինական և հիմնավորված վերջնական որոշում, դրանով իրականացրել է քրեական դատավարության ամսիջական խնդիրները, ապա տվյալ գործով կայացնելով նոր *դատավճիռ*՝ վերաքննիչ դատարանը, կարծում ենք, որոշակիորեն արժեզրկում է առաջին ատյանի դատարանի աշխատանքը: Դրա հետևանքով գործի քննությունն առաջին ատյանի դատարանում վերածվում է գործով վերաքննիչ վարույթին նախորդող «փորձնական ներկայացման (ռեպեթիցիայի)»³: Այս ամենը չի կարող բացասական ներազդեցություն չունենալ արդարադատության հեղինակության և արդյունավետության վրա:

Այսպիսով, չպետք է վերաքննիչ դատարանին պարտավորեցնել գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու, առաջին ատյանի դատարանի դատավճիռը կամ որոշումն անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքն առանց բավարարման թողնելու մասին, ինչպես նաև գործը կարճելու վերաբերյալ ակտերն անվանել «դատավճիռ»:

Ինչպես վերը նշել ենք, վերաքննիչ վարույթը եզրափակող դատավարական որոշումների տեսակներն օրենքով սպառնիչ թվարկված են: Որոշման կոնկրետ տեսակի ընտրությունը պայմանավորված է բողոքարկվող որոշման տեսակով, վերաքննիչ բողոքի բովանդակությամբ,

¹ ՀՀ վերաքննիչ դատարանի պրակտիկայում այդ ակտերն անվանվում են «դատավճիռ»:

² Տե՛ս **Ի.Օ. Ի ժի օանթոսեւի սե շաճի է ջՕԹաճեճի թոս օթի ճի ճի թոս**, 1984, էջ 150:

³ Տե՛ս **Վ.Օ. Է. Յ.** և ձ. նշված աշխատությունը, էջ 450:

ինչպես նաև վերաքննիչ վարույթի ընթացքում պարզված փաստերի համակցությամբ¹:

ՀՀ քր.դատ.օր. 394 հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանը կարող է կայացնել հետևյալ հինգ վերջնական որոշումներից որևէ մեկը՝

1) *Որոշում առաջին ատյանի դատարանի դատավճիռը կամ որոշումն անփոփոխ թողնելու, իսկ վերաքննիչ բողոքն առանց բավարարման թողնելու մասին*: Վերաքննիչ դատարանն այս որոշումը կայացնում է այն դեպքում, երբ գործի վերաքննության արդյունքում հանգում է այն եզրակացության, որ վերաքննիչ բողոքը (իսկ եթե դրանք մի քանիսն են, ապա բոլոր վերաքննիչ բողոքները) անհիմն են և, միաժամանակ, բողոքարկվող վերջնական որոշումն օրինական է, հիմնավորված և արդարացի:

Անհրաժեշտ է նշել, որ վերաքննիչ բողոքի անհիմն լինելու մասին հետևությունն ինքնին չի հանգեցնում այս որոշմանը: Լինում են դեպքեր, երբ, օրինակ, ամբաստանյալը վերաքննիչ բողոքով խնդրում է կայացնել արդարացման դատավճիռ, իսկ վերաքննիչ դատարանը, թողնելով բողոքն առանց բավարարման, միաժամանակ գտնում է, որ տվյալ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը չի համապատասխանում հանցագործության ծանրությանն ու նրա անձին և որոշում է մեղմացնել նշանակված պատիժը:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռը կամ որոշումն անփոփոխ թողնելու, իսկ վերաքննիչ բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումը դատական պրակտիկայում բավական հաճախ է կայացվում: Դրանով կարող են անփոփոխ թողնվել ինչպես մեղադրական և արդարացման դատավճիռները, այնպես էլ գործի կարճման և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումները:

2) *Որոշում առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը բեկանելու և արդարացման դատավճիռ կայացնելու կամ գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին*: Այս որոշումը կարող է կապված լինել վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին գործի փաստական հանգամանքների մասին առաջին ատյանի դատարանի հետևությունների անհամապատասխա-

¹ Տե՛ս **Վ.Օ. Է. Յ.** և ձ. նշված աշխատությունը, էջ 56:

նության, նյութական օրենքի սխալ կիրառման, քրեադատավարական օրենքի էական խախտման հետ:

Չի բացառվում նաև, որ վերաքննիչ դատարանն այս որոշումը կայացնի այն պայմաններում, երբ առաջին ատյանի դատարանը նյութական և դատավարական օրենքները չի խախտել, ապացույցները գնահատելիս որևէ սխալ թույլ չի տվել: Գործի՝ ըստ էության կրկին քննությանը պայմանավորված՝ միայն վերաքննիչ վերանայմանը բնորոշ դեպքերի հետ մեկտեղ (օրինակ՝ նոր ներկայացված ապացույցների հիման վրա ապացույցների նորովի գնահատում), դա հնարավոր է նաև որոշ այլ դեպքերում: Օրինակ՝ երբ գործը վերաքննիչ դատարանում քննելիս անցել է ամբաստանյալին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը (ՀՀ քր.դատ.օր. 35 հոդվ. 1-ին մաս 6-րդ կետ), կամ ամբաստանյալը մահացել է (10-րդ կետ), կամ ընդունվել է համաներման ակտ (13-րդ կետ):

3) *Որոշում առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը բեկանելու և մեղադրական դատավճիռ կայացնելու մասին:* Վերաքննիչ դատարանն իրավասու է բեկանել ոչ բոլոր արդարացման դատավճիռները: Նա կարող է այդպես վարվել այն դեպքում, եթե վերաքննիչ բողոք են բերել դատախազը, տուժողը կամ նրա ներկայացուցիչը: Ընդ որում, նշված սուբյեկտները վերաքննիչ բողոքով պետք է դատարանից խնդրեն տվյալ ամբաստանյալի արդարացումը ճանաչել անհիմն: Եթե վերաքննիչ բողոք է բերել այլ սուբյեկտ, օրինակ՝ պաշտպանը, կամ եթե վերաքննիչ բողոք բերողը, ասենք, տուժողն է, սակայն նա խնդրում է մեղավոր ճանաչել տվյալ արդարացվածի հանցակցին, ապա վերաքննիչ դատարանը չի կարող տվյալ անձի մասով բեկանել արդարացման դատավճիռը:

Նշված նորմը, որը ձևակերպված է ՀՀ քր.դատ.օր. 400 հոդվածում, դեպի վատթարացումը շրջադարձի արգելման հիմնադրույթի դրսևորում է՝:

4) *Որոշում առաջին ատյանի դատարանի դատավճիռը կամ որոշումը փոփոխելու մասին:* Բողոքարկվող վերջնական որոշումները վերաքննիչ դատարանը բավական հաճախ է փոփոխում: Դա կարող է արտահայտվել հետևյալ ձևերով՝

¹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Ղազինյան Գ.Ս.** նշված աշխատությունը, էջ 389-390: Տե՛ս նաև սույն աշխատանքի 1-ին գլխի §3-ը:

ա) փոփոխվում է արդարացման հիմքը (օրինակ՝ արադարացվածի բողոքի հիման վրա),

բ) փոփոխվում են գործի կարճման մասին առաջին ատյանի դատարանի որոշման հիմքերը,

գ) մեղմացվում կամ խստացվում է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը:

5) *Որոշում բողոքարկվող դատավճիռը կամ որոշումը բեկանելու և քր.դատ.օր. 311 հոդվածի հիմքերով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին:*

Գործը լրացուցիչ քննության ուղարկելը տիպիկ խորհրդային քրեադատավարական ինստիտուտ է: Այն պայմանավորված է եղել դատարանի ակտիվ, ղեկավար դերով և այն հանգամանքով, որ դատարանը կաշկանդված չի եղել հավաքված ապացույցների շրջանակով, պարտավոր է եղել անշեղորեն ձգտել ճշմարտության բացահայտմանը¹:

ՀՀ գործող քր.դատ.օր.-ն էապես փոփոխել է դատական փուլերում դատավարական իրավահարաբերությունների «կառուցման» և կարգավորման սկզբունքները, մասնավորապես, վճռական նշանակություն են ստացել մրցակցային հիմունքները:

Այնուհանդերձ, մրցակցության սկզբունքը բացարձակացնելուց հայաստանյան օրենսդիրը ձեռնպահ է մնացել և պահպանել է նախկին դատավարական կառուցակարգի որոշ տարրեր: Դրանցից է նաև գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը:

Այս հարցին ռուսաստանյան օրենսդիրն առավել արմատական մոտեցում է ցուցաբերել: ՌԴ քր.դատ.օր.-ը քննարկվող ինստիտուտից ընդհանրապես հրաժարվել է: Սակայն ՌԴ քր.դատ.օր. կիրառման պրակտիկան ցույց է տալիս, որ դատարանները, օգտագործելով տարբեր եզրույթներ և դատավարական ինստիտուտներ, երբեմն գործը, փաստորեն, լրաքննության են ուղարկում²: Այս հանգամանքն ավելորդ

¹ Տե՛ս **Авемуров Е.И.** . *Í ãî ðààèáí èà òóáî ì óáî èí áí î áî ààè í á áî ñèááí ááí èà, Í ., 1960, էջ 11:*

² Որոշ դեպքերում, օրինակ, դատարանները հիմնվում են ՌԴ քր.դատ.օր. 237 հոդվածի վրա, որը դատարանին իրավունք է վերապահում գործով նախնական լուսմների արդյունքում այն վերադարձնել դատախազին: Տե՛ս **Авдберга Д. Í î áî á óáî èí áí î-í ðî óáñîóáèóí í á çàèí í í ààðáèóñóáî è í ðàèðèèà í ðî èóðî ðñèí áí í áäçí ðà // «Ðî ññèèèèäý òñðèèèè», 2003, N6, էջ 46:**

անգամ վկայում է այն մասին, որ կայուն իրավական ավանդույթներից «հեղափոխական ճանապարհով» ձեռքբազատվելը հեշտ չէ:

Կարծում ենք՝ մեր օրենսդրի որդեգրած «աստիճանական (էվոլյուցիոն)» մոտեցումն ավելի ընդունելի է: ՀՀ քր.դատ.օր.-ն էապես սահմանափակել է գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու դատարանի հնարավորությունները՝ սկզբունքորեն այդ ինստիտուտից չհրաժարվելով: Այսպես, վերաքննիչ դատարանն այս որոշումը կարող է կայացնել միայն հետևյալ դեպքերում՝

ա) եթե հայտնաբերում է նախնական քննության կամ առաջին ատյանի կարգով գործի դատական քննության ընթացքում թույլ տրված քրեադատավարական օրենքի այնպիսի էական խախտում, որը վերաքննության կարգով գործի քննության ընթացքում չի կարող վերացվել (ՀՀ քր.դատ.օր. 311 հոդվ. 1-ին կետ և 398 հոդվ. 6-րդ մաս)¹,

բ) եթե առկա են մեղադրանքն ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր: Ընդ որում, այս դեպքում վերաքննիչ դատարանը գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշում կարող է կայացնել միմիայն մեղադրողի միջնորդությամբ (ՀՀ քր.դատ.օր. 311 հոդվ. 2-րդ կետ):

¹ ՀՀ քր.դատ.օր. 398 հոդվ. 6-րդ մասը սահմանում է. «Վերաքննիչ դատարանը բեկանում է դատավճիռը եւ գործն ուղարկում լրացուցիչ նախաքննության, եթե թույլ են տրվել քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի օբյեկտիվ, բազմակողմանի եւ լրիվ քննության վրա և որոնք չեն կարող վերացվել դատական քննությամբ»: Մեր կարծիքով՝ այս դրույթը չի նախատեսում գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու նոր հիմք, այլ պարզապես վերարտադրում է 311 հոդվ. 1-ին մասում ամրագրված հիմքը: Նշված երկու դրույթների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք տարբերվում են միայն թույլ տրված դատավարական խախտման բնույթի նկարագրությամբ: Այսպես, 311 հոդվածը սահմանում է, որ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու հիմք է քրեադատավարական օրենքի էական խախտումը, իսկ 398 հոդվածը՝ այնպիսի խախտումը, որը ազդել է գործի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության վրա: Մակայն 398 հոդվածի 1-ին մասում տրված քրեադատավարական օրենքի էական խախտման օրենսդրական սահմանումից բխում է, որ դրա տակ օրենսդիրը նկատի ունի այն խախտումը, որը ազդել է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա: Դա վկայում է այն մասին, որ 398 հոդվ. 6-րդ մասում ամրագրված դրույթը ինքնուրույն նորմատիվային արժեք չունի և չի կարող համարվել գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինքնուրույն հիմք:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է կատարել քննարկվող ինստիտուտի աստիճանական բարեփոխման հաջորդ քայլը՝ ավելի մեծացնել մրցակցային տարրերի դերը գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշման կայացման գործընթացում՝ դատարանին իրավունք վերապահելով գործն ուղարկել լրացուցիչ քննության միայն կողմի միջնորդությամբ:

Վերաքննիչ վարույթը եզրափակող որոշումների տեսակները սահմանող Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության քր.դատ.օր.-երի համապատասխան հոդվածների բովանդակային տարբերությունները գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշմամբ չեն սահմանափակվում: Մասնավորապես, ՀՀ քր.դատ.օր. 394 հոդվ. 1-ին և 4-րդ կետերը վերաբերում են ինչպես առաջին ատյանի դատարանի դատավճիռն, այնպես էլ որոշմանը: Մինչդեռ, ՌԴ քր.դատ.օր. 367 հոդվ. 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերն առաջին ատյանի դատարանի որոշմանը չեն անդրադառնում:

Քանի որ վերաքննիչ դատարանի վերջնական որոշումների ցանկը ՀՀ քրեադատավարական իրավունքում սպառիչ է տրված, ուստի օրինականության սկզբունքից ելնելով՝ նշված հինգ տեսակի որոշումներից տարբերվող վերջնական որոշում կայացնելու իրավունք վերաքննիչ դատարանը չունի:

Մակայն իրավաբանական գրականության մեջ արդեն իսկ տեսակետներ են արտահայտվում այն մասին, որ վերաքննիչ դատարանի կողմից ընդունվող վերջնական որոշումների ցանկը թերի է և չի համապատասխանում վերաքննիչ վարույթի իրավական հնարավորությունների ծավալին:

Այսպես, Ա.Շմելյովան գրում է. «Համաձայն ՌԴ քր.դատ.օր. 361 հոդվածի՝ գործը կարճելու մասին հաշտարար դատավորի որոշումը կարող է վերաքննիչ բողոքարկման առարկա լինել: Համապատասխանաբար, վերաքննիչ դատարանի դատավորը պետք է որոշում կայացնի կամ այդ որոշումը բեկանելու կամ փոփոխելու մասին, կամ հաշտարար դատավորի որոշումը՝ օրինական, իսկ բողոքարկողի փաստարկներն անհիմն ճանաչելու վերաբերյալ՝ վկայակոչելով օրենքի համապատասխան նորմը:

կան դատավճիռը բեկանելու և նոր մեղադրական դատավճիռ կայացնելու վերաքննիչ դատարանի իրավունքն օրենսդրորեն ամրագրելուն:

Ա.Ա. Գիները կարծիք է հայտնում, որ իր կողմից մատնանշված օրենսդրական բացերը կարող են լրացվել նաև օրենքի անալոգիայով¹:

Քրեադատավարական իրավունքում անալոգիայի հարցն սկզբունքորեն վիճելի համարելով², մենք կարծում ենք, որ վերաքննիչ դատարանի վերջնական որոշումների տեսակների ցանկը պետք է հստակ սահմանվի օրենքով: Իսկ դատարանի հայեցողությամբ (անալոգիայով) այն լրացնելը կարող է հանգեցնել վերաքննիչ վարույթի բնույթին չհամապատասխանող վերջնական որոշումների կայացմանը: Օրինակ՝ վերաքննիչ դատարանը կարող է կայացնել գործն առաջին ատյանի դատարան վերադարձնելու մասին որոշում:

Վերոգրյալն ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ վերաքննիչ վարույթը եզրափակող դատավարական որոշումների կայացման կարգը և դրանց տեսակները կանոնակարգող քրեադատավարական օրենսդրությունը պարունակում է որոշակի բացթողումներ, որոնք մեծապես պայմանավորված են վերաքննության ինստիտուտի անբավարար գիտական հետազոտմամբ:

Օրենսդրական թերությունները վերացնելու նպատակով մենք առաջարկում ենք՝

1. ՀՀ քր.դատ.օր. 393 հոդվածում սահմանել, որ եզրափակիչ որոշում կայացնելիս վերաքննիչ դատարանն առաջին հերթին պետք է լուծի վերաքննիչ բողոքի բավարարման հարցը:

2. ՀՀ քր.դատ.օր. 393 հոդվ. 1-ին մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բողոքը քննելու արդյունքում վերաքննիչ դատարանը կայացնում է դատավճիռ կամ որոշում, որը կարող է ամբողջությամբ

¹ Տե՛ս **Ջեյմս Ա.Ա.** *և ձ.* նշված աշխատությունը, էջ 56-57:

² Մ.Մ. Գրողգինսկու կարծիքով, օրինակ, անալոգիան իր կիրառումն է գտնում իրավունքի տարբեր դրսևներում, և բացառություն չի կազմում նաև քրեական դատավարությունը (տե՛ս **Աժիաբեյ Ա.Ի.** *Աիաբեյ ա նի աոոեի օաի աի աի-իժի օաոոաեի ի ի ժաա // «Օ-աի ա չաի եե Օաուեի աեի ա թժաե-աեի աի եի ոեժժոժ», 1948, աու ժե III, էջ 3):* Իսկ, օրինակ, Վ.Ի. Կամինսկայան քրեական դատավարությունում անալոգիայի կիրառմանը սկզբունքորեն դեմ է (տե՛ս **Էաի եի եայ Ա.Է.** *Աաի եժժաժե-աեեա ի ոի ի աու նի աաոեի ա նի օեաեժոժե-աեի աի ի ժաաի ոոաեյ, I ., 1965, էջ 89):*

կամ մասամբ փոխարինել առաջին ատյանի դատարանի դատավճիռը կամ որոշումը»:

3. ՀՀ քր.դատ.օր. 394 հոդվածը համալրել նոր մասով, որը կպարզաբանի, թե որ դեպքերում է վերաքննիչ դատարանը դատավճիռ կայացնում, իսկ որ դեպքերում՝ որոշում:

4. ՀՀ քր.դատ.օր. 394 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում կատարել փոփոխություններ, որոնցով վերաքննիչ դատարանին իրավունք վերապահել մեղադրական դատավճիռը բեկանելով կայացնել նոր մեղադրական դատավճիռ և արդարացման դատավճիռը բեկանելով կայացնել նոր արդարացման դատավճիռ:

5. ՀՀ քր.դատ.օր. 394 հոդվածի տեքստի վերջում կատարել հետևյալ լրացումը՝

6) բեկանում է քրեական գործը կարճելու և ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը և կայացնում է քրեական գործը կարճելու կամ ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նոր որոշում, արդարացման կամ մեղադրական դատավճիռ,

7) բեկանում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը և կայացնում է անձին քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ու նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին նոր որոշում կամ գործով վարույթը կարճելու մասին որոշում:

Եզրահանգումներ

Հետազոտության արդյունքներն ընդհանրացնելով՝ վերաքննության ինստիտուտի ներմուծումը ՀՀ քրեական դատավարություն կարող ենք արդարացված համարել:

Վերաքննիչ վերանայման տեսության և պրակտիկայի հարցերի ուսումնասիրության արդյունքում մեր կողմից կատարված մյուս հետևությունները հանգում են հետևյալին.

1. ՀՀ քրեադատավարական համակարգում վերաքննության տեղը, դերը և խնդիրները ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է բացահայտել այդ ինստիտուտի էությունը: Այդ նպատակով իրականացվել է վերաքննության հասկացության վերլուծություն ձևի և բովանդակության փիլիսոփայական կապի մեջ գտնվող երկու հարաբերականորեն ինքնուրույն հասկացությունների՝ վերաքննության քրեադատավարական մեխանիզմի և վերաքննիչ վարույթի քրեադատավարական փուլի:

Առաջարկվել է *վերաքննության քրեադատավարական մեխանիզմի* հետևյալ բնորոշումը. այն դատական վերանայման ինքնուրույն ձև է, որով փաստի կամ իրավունքի հիմքով կողմերի բողոքարկման արդյունքում վերադաս դատարանը, իրականացնելով գործի ըստ էության կրկին քննություն, ստուգում է առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած վերջնական որոշումների օրինականությունը, հիմնավորվածությունը և արդարացիությունը:

Առաջարկվել է *վերաքննիչ վարույթի քրեադատավարական փուլի* հետևյալ սահմանումը. այն մինչև վերջնական դատական որոշման օրինական ուժի մեջ մտնելը դատական սխալներն ուղղելու և դատարանի վերջնական որոշման մեջ շարադրված հետևությունների՝ գործով փաստերին համապատասխանությունն ապահովելու նպատակով վերաքննիչ ատյանի դատարանի և այլ իրավասու սուբյեկտների՝ օրենքով կարգավորված գործունեությունն է, որն ավարտվում է վերաքննիչ դատարանի կողմից նոր դատավճռի կամ այլ վերջնական որոշման կայացմամբ:

Վերոգրյալի հիման վրա առաջ է քաշվել այդ երկու հասկացությունների համապատասխանության հայեցակարգը, ըստ որի՝ վերաքննության մեխանիզմի հասկացությունն արտահայտում է միայն վե-

րաքննիչ վարույթի քրեադատավարական փուլի հասկացությունը, իսկ քրեական դատավարության այդ փուլը հանդիսանում է միայն վերաքննության քրեադատավարական մեխանիզմի բովանդակությունը, ինչպես նաև ձևակերպվել է *վերաքննության* միավորյալ հասկացության հետևյալ բնորոշումը. այն որպես ձև՝ դատարանի վերջնական որոշումների վերանայման ինքնուրույն եղանակ և որպես բովանդակություն՝ քրեական դատավարության ինքնուրույն փուլ հանդիսացող միասնական ինստիտուտ է, որի էությունն առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ չմտած վերջնական որոշումների ինչպես իրավաբանական, այնպես էլ փաստական կողմի բողոքարկումն ու ստուգումն է:

2. Վերաքննիչ վարույթը, լինելով քրեական դատավարության ինքնուրույն փուլ, իր հերթին կազմված է հաջորդաբար ընթացող երկու մասերից՝ ենթափուլերից:

Վերաքննիչ վարույթի առաջին ենթափուլը՝ *վերաքննիչ բողոքարկումը*, սկսվում է վերաքննիչ բողոք բերելու պահից և ավարտվում է գործը դատական նիստում քննության նշանակելու մասին վերաքննիչ դատարանի կազմը նախազահող դատավորի որոշմամբ:

Վերաքննիչ վարույթի երկրորդ ենթափուլը *վերաքննիչ ատյանում գործի քննությունը և լուծումն է*, որը սկսվում է վերաքննիչ դատարանի նիստը բացելով և ավարտվում է վերաքննիչ դատարանի վերջնական որոշման հրապարակմամբ:

Գրանք միմյանցից տարբերվում են մասնակցող սուբյեկտների շրջանակով և նրանց միջև ծագող իրավահարաբերությունների բնույթով:

3. Գնահատելով վերաքննիչ վարույթում մրցակցային և ոչ մրցակցային (ինկվիզիցիոն) տիպային տարրերի հարաբերակցությունը՝ ՀՀ-ում վերաքննության ինստիտուտը կարող է բնութագրվել որպես առավելապես մրցակցային:

Միևնույն ժամանակ, վերաքննիչ վարույթում մրցակցային տիպային տարրերի «տեսակարար կշիռն» անհրաժեշտ է էլ ավելի մեծացնել: Մասնավորապես, դատարանի նախաձեռնությամբ հավաքված ապացույցները չպետք է դրվեն ամբաստանյալի վիճակը վատթարացնող վերջնական որոշման հիմքում, իսկ գործը լրացուցիչ նախաքննության

ուղարկելու մասին որոշումը պետք է կայացվի դիսպոզիտիվության սկզբունքով՝ բացառապես որևէ կողմի միջնորդության հիման վրա:

Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է պահպանել նաև վերաքննիչ վարույթին բնորոշ ոչ մրցակցային ինստիտուտների մի մասը, մասնավորապես՝ վերաքննիչ ստուգման լայն սահմանները, ինչպես նաև ապացուցման ընթացքում ակտիվություն դրսևորելու դատարանի հնարավորությունը՝ օրենքում հստակեցնելով, որ նախաձեռնություն դրսևորելը դատարանի իրավունքն է և ոչ թե պարտականությունը:

4. Ունենալով հարաբերական ինքնուրույնություն՝ վերաքննությունը հանդիսանում է քրեական գործերով դատական ակտերի վերանայման համակարգային ինստիտուտի կառուցվածքային տարր, ուստի վերաքննության մեխանիզմը կարող է իրապես արդյունավետ ճանաչվել միայն այն դեպքում, երբ ճիշտ կառուցված լինի դատավճիռների բողոքարկման-ստուգման եղանակների համակարգը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում գործող դատական վերանայման համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանում վերաքննության տեղը հայեցակարգային առումով ճիշտ է ընտրված: Դրա հետ մեկտեղ, դատավճիռների օրինականության, հիմնավորվածության և արդարացիության ապահովման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել վերաքննիչ ատյանի ապակենտրոնացում:

5. Վերաքննիչ բողոքը վերաքննիչ վարույթի հիմքն է, ինչպես նաև մեծապես կանխորոշում է վերաքննիչ վերանայման ընթացքը և արդյունքները:

Առաջարկվել է *վերաքննիչ բողոքի* հետևյալ սահմանումը. այն ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով իրավասու անձանց և մարմինների կողմից առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումների դեմ ներկայացվող դատավարական փաստաթուղթ է, որը համապատասխանում է օրենքով դրա ձևին և բովանդակությամբ ներկայացվող պահանջներին, կասեցնում է բողոքարկվող դատավճիռի կամ որոշման օրինական ուժի մեջ մտնելը և առաջացնում է օրենքով նախատեսված այլ իրավական հետևանքներ:

6. Վերաքննիչ բողոքարկման առարկան անհրաժեշտ է սահմանափակել առաջին ատյանի դատարանի դատավճիռներով, քրեական

գործը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և անմեղսունակության վիճակում քրեորեն պատժելի արարք կատարած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին որոշումներով:

Դրա հետ մեկտեղ, օրենքով անհրաժեշտ է ամրագրել վերաքննիչ բողոքարկման առարկայի մեջ չմտնող առաջին ատյանի դատարանի որոշումների (կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, գործը լրացուցիչ նախաքննության կամ ըստ ընդդատության ուղարկելու, գործով վարույթը կասեցնելու, բացարկն ընդունելու կամ ինքնաբացարկի մասին որոշումների) բողոքարկման և դատական ստուգման այլ կարգ:

7. Վերաքննիչ բողոքի բովանդակությանն անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորվածության հստակ պահանջ՝ վերաքննիչ բողոք բերող անձանց օրենսդրորեն պարտավորեցնելով վերաքննիչ բողոքում նշել մեկ կամ մի քանի վերաքննիչ հիմք: Վերաքննիչ բողոքի հիմնավորվածությունն ապահովելու համար նաև անհրաժեշտ է ձևավորել վերականգնման համար այն վերաքննիչ բողոքները վերադարձնելու ընդհանուր դատական պրակտիկա, որոնք չեն պարունակում ո՛չ բողոքատուի փաստարկներն առաջին ատյանի դատարանի թույլ տված անճշտությունների և խախտումների մասին, ո՛չ նոր (չհետազոտված) ապացույցներ հետազոտելու միջնորդություն և ո՛չ էլ առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցների վերլուծություն:

8. ՀՀ քր.դատ.օր.-ով վերաքննիչ բողոքարկման իրավունք ունեցող անձանց և մարմինների շրջանակը ենթակա է ընդլայնման՝ ներառելով մեղադրողի վերադաս դատախազին, իսկ որոշ սուբյեկտների կողմից բողոքարկման իրավունքի իրականացման պայմաններն ունեն հստակեցման կարիք:

9. Կողմերի դատավարական իրավունքների պաշտպանության երաշխիքներն ընդլայնելու համար անհրաժեշտ է որոշակիորեն մանրամասնել վերաքննիչ բողոքարկման դատավարական կարգի օրենսդրական կանոնակարգումը՝ ամրագրելով վերաքննիչ դատարանի, բողոքարկվող որոշումը կայացրած առաջին ատյանի դատարանի և կողմերի իրավունքներն ու պարտականությունը:

10. Առաջարկվել է վերաքննիչ հիմքերի հետևյալ սահմանումը. դրանք օրենքով սահմանված այն հանգամանքներն են, որոնց մատ-

նանշումն անհրաժեշտ է վերաքննիչ բողոք բերելու համար և որոնց առկայության հաստատումը վերաքննիչ ատյանի դատարանի կողմից հանգեցնում է առաջին ատյանի դատարանի վերջնական որոշման բեկանմանը կամ փոփոխմանը:

Առաջարկվել է վերաքննության հիմքերի դասակարգումը *զուտ վերաքննիչ հիմքերի* (ՀՀ քր.դատ.օր. 395 հոդվ. 1-ին և 4-րդ կետերով նախատեսված հիմքեր) և *վերաքննիչ-վճռաբեկ հիմքերի* (ՀՀ քր.դատ.օր. 395 հոդվ. 2-3 կետերով նախատեսված հիմքեր): Այն օրենսդրին հնարավորություն է տալիս վերաքննիչ հիմքերը կանոնակարգելիս տարբերակված մոտեցում ցուցաբերել և չմանրամասնել զուտ վերաքննիչ հիմքերի դրսևորման եղանակները:

11. Անհրաժեշտ է վերաքննության կարգով գործի քննության և վերջնական որոշման ընդունման կարգը համապատասխանեցնել վերաքննության էությանը, մասնավորապես սահմանել, որ վերաքննիչ դատարանում պարտադիր պետք է հետազոտվեն այն ապացույցները, որոնք վիճարկվում են դատավարության որևէ մասնակցի կողմից, ինչպես նաև օրենքում ամրագրել, որ վերաքննիչ դատարանի կողմից լուծվող առաջին հարցը հետևյալն է. վերաքննիչ բողոքում, իսկ եթե դրանք մի քանիսն են, ապա դրանցից յուրաքանչյուրում բովանդակվող պահանջը ենթակա՞ է արդյոք բավարարման, և եթե այո, ապա ամբողջությամբ, թե՞ մասամբ:

Օգտագործված գրականություն

Մենագրություններ և գիտագործնական ձեռնարկներ

1. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս» / **Գ.Մ. Ղազինյանի** խմբագրությամբ, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2000, 416 էջ:
2. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս» / **Գ.Մ. Ղազինյանի** խմբագրությամբ, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2003, 586 էջ:
3. **Ղազինյան Գ.Մ.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2001, 432 էջ:
4. **Ղուկասյան Հ.Հ.** Պաշտպանի դատավարական վիճակը նախնական քննության փուլում, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2001, 198 էջ:
5. **Պետրոսյան Ռ.Գ.** Հայաստանի քաղաքացիական դատավարություն (**Գ.Հ. Ղարախանյանի** խմբագրությամբ), 2-րդ հրատ., Եր., Երևանի համալսարանի հրատ., 2003, 704 էջ:
6. **Աբաբաբա Ա.Ն., Էրաճոյ Ի.Ի.** *Արաբոյոյ օ ճոննեյի օմբեյալի նօմարի ճիւղի անօմար, Ի.Ի. Էրաճոյ, Էրաճոյ-Արաբոյ-Արաբոյ օ ճոննեյի օմբեյալի նօմար, 1999, 108 էջ:*
7. **Աբաբա Օ.Օ., Էրաճոյ Ի.Ա.** *Ի նիւթիւն արաբոյոյ օ ճոննեյի նօմարի ճիւղի անօմար, Ի.Ա. Էրաճոյ, 2003, 144 էջ:*
8. **Աբաբա Աբաբա, Ի.Ա.** *Ի ճոննեյի օմբեյալի նօմար, Ի.Ա. Էրաճոյ, 1995, 304 էջ:*
9. **Արաբոյոյ Ա.Ա.** *Արաբոյոյ օ ճոննեյի (արաբոյոյ օ ճոննեյի) ճիւղի անօմար, Ի.Ա. Էրաճոյ, 2000, 288 էջ:*
10. **Աբաբա Ա.Ի.** *Արաբոյոյ օ ճոննեյի նօմար, Ի.Ա. Էրաճոյ, 1991, 160 էջ:*
11. **Արաբոյոյ Ի.Ա.** *Շարժում արաբոյոյ օ ճոննեյի օմբեյալի նօմար, Ի.Ա. Էրաճոյ, 1976, 102 էջ:*
12. **Աբաբա Է.Ի.** *Ի նիւթիւն արաբոյոյ օ ճոննեյի օմբեյալի նօմար, Ի.Ա. Էրաճոյ, 1960, 170 էջ:*
13. **Արաբոյոյ Ի.Ա.** *Էրաբոյոյ օ ճոննեյի օմբեյալի նօմար, Ի.Ա. Էրաճոյ, 1949, 220 էջ:*

14. **Άσπασίτης Ε.Ο., Άγιερίτης Ε.Α., Ουγγερίτης Α.Α.** Οάτιεράιυέ ιδιόανη χαιάιύο αι νόααδνόα / ιία δαα. **Ε.Ο. Άσπασίτης, Ι .,** “Çaðòàèì-Ì ”, 2001, 480 τγ:

15. **Άειάδ Α.Α., Ι αδουίγυοί Ε.Ο., Νάιηί Ι.Ι.** Αιαεγυοείιιη ιδιεçáιάνοαι á διηηεέηι οάτιεράιυι ιδιόανη: Ι ά+ιι-ιδάεοε-άηεία ιιηπáα / ιία ίαυ. δαα. **Ε.Ο. Ι αδουίγυοί, Ι .,** “P ðeηóυ”, 2003, 112 τγ:

16. **Άιαδίατευηέγ Ο.Ι.** Ι δειοείυ ηίααοηείαί οάτιεράιυι ιδιόανη (Áιιδιηύ οάιδεε è ιδαεοέε), Ι ., “P ðeàe-áηeáγ èeòaðàòòðà”, 1971, 199 τγ:

17. «Áιεαçúαáιέá á οάτιεράιυι ιδιόανη. Οðáαεòεè è ηιáðáι áιιηòυ» / Ι ίá δαá. **Α.Α. Άεαηεοείá, Ι .,** “P ðeηóυ”, 2000, 272 τγ:

18. **Άιθιόια Α.Β., Ι εετáαá Α.Ν.** Ι áιηιááιιηòυ ιδεάιáιðá á ηιáαοηείη οάτιεράιυι ιδιόανη Ι ., “Áιηpðeçáαò”, 1959, 236 τγ:

19. **Άσπασίτης Ι.Α.** Δóηηεέε οάτιεράιυέ ιδιόανη: εçááιέá äéγ ηóóáιθíá, Ι ., Οείιáðáòéγ Α.Ι. Ι ιιεáαηείαί, 1908, 464 τγ:

20. **Çαáιðηεέ Α.Ε.** Νóαááιá ðαçáeðáòáεüηóαι ιι οάτιεράιυι ó ááεò, Ι ., “P ðeàe-áηeáγ èeòaðàòòðà”, 1985, 111 τγ:

21. **Έαιείηεγ Α.Ε.** Άáιιεðáε-áηeéá ηιηίαύ ηιáαοηείαί ηιò-εáεηòε-áηeίαί ιðááι ηóáεγ, Ι ., “Í áóεá”, 1965, 392 τγ:

22. **Έιαδεά Ç.Ο.** Οάτιεράι-ιδιόανηοάεüιá ιδελóεááιέá, Άιθιόιαε, Έçá-ái Άιθιόιαε. óι-òá, 1975, 175 τγ:

23. «Έιιιáιòáðεè è ΟÍ È ΔΟ (ιιηòááείυé)» / Ι óá. δαá. **Ε.Ε. Ι αδóóεί, 3-á εçá., Ι .,** “Í ðιηιáεò”, 2004, 1032 τγ:

24. «Έιιιáιòáðεè è ΟÍ È ΔΟ» / Ι ίá ίáυ. δαá. **Ι.Α. Ι αδóóιáá è Α.Ε. Çαáιðηείαί, 2-á εçá., Ι .,** “ΥΕΙ Ι Ν”, 2002, 779 τγ:

25. «Έιιιáιòáðεè è ΟÍ È ΔΟ» / Ι ίá ίáυ. δαá. **Α.Β. Νóóáðááá, Ι .,** “Í ιðιá”, 2002, 896 τγ:

26. **Έοσπáá Υ.Ο.** Ηιáαοηεáγ εáηηáεéγ, εáε ááðáιòéγ çáειιίηòε á ι-ðááιηóáε. Ι ., “Áιηpðeçáαò”, 1957, 227 τγ:

27. **Έοτρεηεγ Ι.Α.** Δαóáιéγ á οάτιεράιυι ηóαιιδιεçáιάνοáá. Έò áε-áυ, ηιááðáεáιέá è Οιðι ú, Ι ., “P ðeàe-áηeáγ èeòaðàòòðà”, 1976, 168 τγ:

28. **Έραεείηεέ Ι.Ε., Ι τεγίηεέ Ι.Ι.** ΟÍ È ΔΝÓΝΔ: Έιιιáιòáðεè. 2-á εçááιέá, Ι ., “Í ðááι è æεçíυ”, 1928, 342 τγ:

29. **Ι ιοίáείáεáð Β.Ι.** Ι áειθιðύá áιιθιηύ ηιáαοηείαί οάτιεράιυι ιδιόανη á ηáαòá ιίáιái οάτιεράι-ιδιόανηοάεüιáί çáειιίááòáεüηóáá / Ι ίá δαá. **Ι.Ε. Άιθιόιαί, Έαι áðιái, 1962, 296 τγ:**

30. **Ι ιοίáείáεáð Β.Ι.** Ι ιδελóείáò ίáúáεòεáιέ éηεéιυ, ιðáçóι ιòεè ίááείáιηòε è ηιηóγçáòáεüιηòε ιδιόανη, Βðιηεááεü, Έçá-ái Βðιηεáá. áιη. óι-òá, 1978, 96 τγ:

31. **Ι óðáοιáá Ι.Α.** Ηεηóáιá ηóáááιίái είιòðιéγ á οάτιεράιυι ηóαιιδιεçáιάνοáá: áιιθιηύ οάιðεε, çáειιίááòáεüιáί ðááóεèðιááιéγ è ι-ðáεòεèè, Έαçáιú, Έçá-ái Έαçáι. óι-òá, 2004, 346 τγ:

32. **Ι áçáðιá Α.Α.** Άεéγίéá ηεááηóááιιúò ιòεáίé ίá ιòεáéè ηóáá, ΗΙ á, “P ðeàe-áηeéè óáιòð Ι ðáηη”, 2003, 323 τγ:

33. **Ι áçεááε- Ι.Ο.** Ι ðιόáηηóáεüιúé çáείι è γòðáεèáείηòυ οάτιεράιυι ηóαιιδιεçáιάνοáá, Ι ., “P ðeàe-áηeáγ èeòaðàòòðà”, 1984, 175 τγ:

34. **Ι áðείá Ε.Α.** Έáηηáεéιιίá ιðιεçáιάνοái á ηιáαοηείη οάτιεράιυι ιδιόανη, Ι ., “P ðeàe-áηeáγ èeòaðàòòðà”, 1968, 395 τγ:

35. **Ι áðείá Ε.Α.** Ι ááçιðιá ιðιεçáιάνοái á οάτιεράιυι ιδιόανη, Ι ., P ðeá. èèò., 1974, 256 τγ:

36. **Ι αδóóεί Ε.Ε.** Ι ðááιηóáεá: áðáι γ ðáοιðι, Ι ., “Í áóεá”, 1991, 207 τγ:

37. **Ι αδóóεί Ε.Ε.** Οάτιεράιυέ ιδιόανη. Ο-ááιéè, Ι ., Ι ΑΙ P È, 2001, 520 τγ:

38. **Ι ιçíáιηεέ Α.Α.** Άιιθιηύ οάιðεε è ιðáεοéè εáηηáεéιιίái ιðιεçáιάνοáá á ηιáαοηείη οάτιεράιυι ιδιόανη, Ηáðáοιá, Έçá-ái Ηáðáο. óι-òá, 1978, 136 τγ:

39. **Δαçείεείá Α.Ι.** Αιαεγυοéγ á οάτιεράιυι ηóαιιδιεçáιάνοáá, Ι ., “P ðeèòεί Οιðι”, 2004, 160 τγ:

40. **Δαóóιá Δ.Α.** Ο-áηóιéèè οάτιεράι-ιδιόανηοάεüιé ááγáεüιηòε, Ι ., “Áιηpðeçáαò”, 1961, 277 τγ:

41. **Δεáεεί Α.Ε.** Ι áðáηι ιòð ιðεáιáiðιá á ΗΝΝΔ, Ι ., “Áιηpðeçáαò”, 1958, 309 τγ:

42. **Νεó-ááηεέ Α.Ε.** Ο-ááιéè ðóηηείαί οάτιεράιυι ιδιόανη: Ηóáιòηòðιéηóαι-ηóαιιδιεçáιάνοái, ΗΙ á, 1913, 699 τγ:

43. **Ηι εðιίá Α.Α.** Ι ίááεè οάτιεράιυι ιδιόανη, ΗΙ á, “Í áóεá”, 2000, 224 τγ:

44. **Ηιεíáυáá Α.Α., Οιεáðááá Ι.Α., Οáεòεεί Α.Α., Βεóáιáε- Ι.Α.** Çáειιίηòυ á áιηóááιιúò ηóááéγò οάτιεράιυι ιδιόανη Διηηεè, Ι .-Έái áðιái, “Έóçááηηóóεçεçáαò”, 1997, 161 τγ:

45. **Ηòðιááε- Ι.Ν.** Έòðη ηιáαοηείαί οάτιεράιυι ηóαιιδιεçáιάνοáá, á 2-ò θιι áò, θιι 2-ίé, Ι ., “Í áóεá”, 1970, 516 τγ:

46. **Ηòðιááε- Ι.Ν.** Ι áòáðεáεüιáγ éηòείá è ηóáááιúá áιεαçáòáεüηóáá á ηιáαοηείη οάτιεράιυι ιδιόανη, Ι ., Έçá-ái ΑΙ ΗΝΝΔ, 1955, 384 τγ:

47. **Ηòðιááε- Ι.Ν.** Ι ðιááðεá çáειιίηòε è ίáιηιááιιηòε ηóááá-ιúò ιðεáιáiðιá, Ι ., Έçá-ái ΑΙ ΗΝΝΔ, 1956, 319 τγ:

48. «Ηóáááιáγ áεáηóυ» / Ι ίá δαá. **Ε.Ε. Ι αδóóείá, Ι .,** “Í ðιηιáεò”, 2003, 720 τγ:

49. «Νόααίαι γ δαοίδη α: ρδεαε-αηεεε ιδιόαηηείαιεεçi è ιδιáεá-ì ú ρδεαε-αηείαι íαδαçíαιéý. Άεηεóηηεý» / Í íá δαá. **È.Ì . Èαδίçíαιé**, Ì ., Ì áεáοίáδíαι úε éíì εòáò ηí áεηόáεý ιδιáαίαιé δαοίδη á, 1995:

50. **Ò.ì óεεéí Ì.Ï.** Í δαáíεçáεéíííí-ιδιáαíáúá οίδη ú ιδιááδεé çáεííííηóε è íáíηííááíííηóε ιδεáíαιδίá, Ì ., “Í áóεá” 1978, 239 τγ:

51. «Óαιéíαιí-ιδιόαηηóεúííá ιδιáαí Δíηηεéηεíé Óááαδáεé: Ó-ááíéé» / Í óá. δαá. **Ï.Á. Èóíεíηεáý**, Ì ., “Ρ δεηού”, 2004, 800 τγ:

52. «Óαιéíαιúε ιδιόαηη: ó-ááíéé», 3-á εçá., εηíð. è áíí. / Í íá δαá. **Á.Ï. Áíæúááá**, Ì ., “Ñíáðε”, 2002, 704 τγ:

53. **Óíεíεóεé È.Β.** Èóðη óαιéíαιíαι ηόαιíδηεçáíáηóáá, á 2-ó οίì áð, οίì 2-íé, Ñí á, “Áεúçá”, 1996, 606 τγ:

54. **×áεúçá-Áááóçá Ì.Á.** Èóðη óαιéíαιí-ιδιόαηηóεúííαι ιδιááá. Í-áδεé íí εηóíδεé ηόáá è óαιéíαιíαι ιδιόαηηá á δαáíáεáááεú-αηεéð, óáíááεúíúó è áóðεáçíúó áíηόáαδηόá, 2-á εçá., Ñí á, “Áεúçá-Δαááíá”, 1995, 846 τγ:

55. **×áεúçá Ì.Á.** Óαιéíαιúε ιδιόαηη, Ì ., “Ρ δεá.εçá.”, 1948, 624 τγ:

56. **×áδíεéíáηεé Ç.Ì.** Áηαíáúáý εηóíðεý áíηόáαδηόáá è ιδιááá, Ì ., “Ρ δεηού”, 1999, 576 τγ:

57. **Ýεúεíá Ï.Ñ.** Ñóúííηóú ηíááóηεíαι óαιéíαιí-ιδιόαηηóεúííαι ιδιááá, Èáíεíáδáá, Èçá. ÈÁÓ, 1963, 172 τγ:

58. **Βεéííáε- Ρ.È.** Ñóðéóóðá ηíááóηεíαι óαιéíαιíαι ιδιááá: ηεηόáì á ηόááεé è ηεηόáì á ιδíεçáíáηόá. Í ηííáíúá è áíííεíεóáεúíúá ιδíεçáíáηόáá / Í íá δαá. **È.Á. Èáðáηááá**, Óííηé, Èçá-áí Óííηé. óí-óá, 1991, 138 τγ:

59. **Mary Ann Glendon, Michael Wallace Gordon, Christopher Osakwe**, Comparative legal traditions, St. Paul, Minn., West Publishing, 1994, 772 τγ:

60. **Frank M.Coffin**, On appeal: courts, lawyering and judging, New York – London, W. W. Norton & Company Ltd., 1994, 373 τγ:

Հողվածներ և այլ հրատարակումներ

61. **Áááí áεéðí Ì.** Èáé áííðáεéááóú ηáεááóáεáé á áíáεéýóεííííé éíηόáíóεé // «Δíηηεéηεáý ρηόεóεý», 2003, N10, τγ 52:

62. **Áεáεηαíáδíá Á.** Í çíá-áíéé éííóáíóεé íáúáééáííé εηόεíú // «Δíηηεéηεáý ρηόεóεý», 1999, N1, 23-24 τγτγ:

63. **Áεáεηαíáδíá Á.Ñ., Èíáóóí Ì.Ï.** Áíáεéýóεíííá ιδíεçáíáηόáí á óαιéíαιíí ιδιόαηηá Δíηηεé: ιδíáεáí ú è δαóáíéý // «Áíηόáαδηόáí è í-ðááí», 2001, N3, 38-45 τγτγ:

64. **Áεáεηαíáδíá Á.Ñ., Èíáóóí Ì.Ï.** Í ηííááíéý è íòíáíá (εçí áíáíερ) ιδεáíαιðá á ηόáá áíáεéýóεíííé éíηόáíóεé // «Áíηόáαδηόáí è íðááí», 2001, N10, 55-62 τγτγ:

65. **Áεáεηαíáδíá Á.Ñ., Èíáóóí Ì.Ï.** Ñόáúáεéú áíáεéýóεííííαι íá-æáéíááíéý ιδεáíαιδίá: ιδιáááεú ιδιόαηηόáεúíúó ιδιáá è íéíííí-éé // «Èóðíáé δíηηεéηεíαι ιδιááá», 2002, N5, 108-115 τγτγ:

66. **Áεúááηεéé Ó.Á.** Í δαááεú ιδιáá ηόáá ιδεé δáηηííðáíéé óαιéíαιíαι ááεá á εáηηáóεííííí ííðýáεá è á ííðýáεá íááçíðá // «Ñíááóηεíá áíηόáαδηόáí è íðááí», 1956, N6, 70-80 τγτγ:

67. **Áεðρεíá Ρ.** Í íáíá óαιéíαιí-ιδιόαηηόáεúííá çáεíííááóáεúηόáí è ιδιáεééá ιδíεóðíðηεíαι íááçíðá // «Δíηηεéηεáý ρηόεóεý», 2003, N6, 44-46 τγτγ:

68. **Áíæúáá Á.** Í δαáí ííðáδíááçááí íá εáηηáóεíííá íáæáéíááíéá // «Ñíááóηεáý ρηόεóεý», 1962, N5, 5-7 τγτγ:

69. **Áíðíáεóíá Ñ.Á.** Í δεíóεíú εáηηáóεé íí ííáííó ÓÍÈ // «Δíηηεéηεáý ρηόεóεý», 2002, N12, 14-16 τγτγ:

70. **Áúáðý Ì.Ì.** Áðáíóεé ιδιáá ííðáδíááçááí è ááí ιδιááηááεóáεý ιδεé δáηηííðáíéé óαιéíαιíαι ááεá á ηόáá // «Ñíááóηεíá áíηόáαδηόáí è í-ðááí», 1965, N7, 134-137 τγτγ:

71. **Áíεíáεí È.Á.** Δαοίδη á óαιéíαιíαι ιδιόαηηá áí Óðáíóεé // «Áíηόáαδηόáí è íðááí», 2001, N8, 89-98 τγτγ:

72. **Áíεíáεíá Á.È., Óáσýγíεíá È.Á.** Í íéíííí-éý ηόáá áíáεéýóεíííé éíηόáíóεé ιδεé íáðáηííðáðá δáóáíéé íεðíáíé ηόáúε // «Çáεííííηóú», 2004, N6, 41-43 τγτγ:

73. **Áðíáçéíηεé Ì.Ì.** Áíáεíáεý á ηíááóηεíí óαιéíαιí-ιδιόαηη-óáεúííí ιδιááá // Ó-áíúá çáíεηéé Óáðúεíáηεíαι ρδεαε-αηεíαι éíηóεóóðá, áúíóηé 3-é, 1948, 3-24 τγτγ:

74. **Áíðíóεíá Á.** Í áðáηí íðð δáóáíéé í εðíáíαι ηόáúε íí óαιéíαιúí ááεáí á áíáεéýóεííííí ííðýáεá // «Δíηηεéηεáý ρηόεóεý», 2002, N7, 39-41 τγτγ:

75. **Áεééí Á.** Áíáεéýóεý: ííéíáý è íáííéíáý // «Ýæ-ρδεηó», 2003, N5, 25-28 τγτγ:

76. **Çáεóáá È.** Í ηííááíéý è íòíáíá ηόáááíúó δáóáíéé á ííðýáεá íááçíðá // «Ñíóεáεéηóε-áηεáý çáεííííηóú», 1969, N8, 39-41 τγτγ:

77. **Èηεáíááδíá Δ.** Ñí δαáááεéáíηóú – ááεííá óðááíááíéá è ιδεáíαιðó // «Ñíááóηεáý ρηόεóεý», 1988, N7, τγ 15:

78. **Ï íáááεéí Á.Á.** Áíáεéýóεíííá ιδíεçáíáηόáí á óαιéíαιíí ιδιόαηηá: ιδíáεáí ú ηόáííáεáíéý // «Áíηόáαδηόáí è íðááí», 2001, N3, 46-50 τγτγ:

79. **Ծառերի Ա.Է.** Շաբաթօրեայ, իմաստասիրական և բանասիրական գիտությունների լուսաբանական և բանասիրական թանգարանի թանգարան // «Իմաստասիրական», 1969, N2, 98-101 էջեր:

80. **Նաթանիել Ա.Ի.** Իմաստասիրական և բանասիրական թանգարանի թանգարան (ժողովրդական և երիտասարդական «Երիտասարդական» թանգարանի թանգարան) // «Երիտասարդական» թանգարանի թանգարան, 1969, N8, 131-133 էջեր:

81. **Օհանյան Ա.Ա.** Իմաստասիրական և բանասիրական թանգարանի թանգարան // «Երիտասարդական» թանգարանի թանգարան, 2005, N2, 76-83 էջեր:

82. **Օհանյան Ա.Ա.** Ժողովրդական և երիտասարդական «Երիտասարդական» թանգարանի թանգարան // «Իմաստասիրական», 1970, N3, 140-142 էջեր:

83. **Մանուկյան Ի.Ա., Կարամյան Ի.Ն.** Իմաստասիրական և բանասիրական թանգարանի թանգարան // «Երիտասարդական» թանգարանի թանգարան, 1973, N9, 33-41 էջեր:

84. **Օհանյան Ա.** Իմաստասիրական և բանասիրական թանգարանի թանգարան // «Երիտասարդական» թանգարանի թանգարան, 2002, N2, 77-78 էջեր:

85. **Սահակյան Ա.** Իմաստասիրական և բանասիրական թանգարանի թանգարան // «Երիտասարդական» թանգարանի թանգարան, 2005, N1, 44-47 էջեր:

Առարկայականություն

86. **Արմենյան Ա.Ա.** Իմաստասիրական և բանասիրական թանգարանի թանգարան // «Երիտասարդական» թանգարանի թանգարան, 2003, 183 էջ:

87. **Արմենյան Ա.Է.** Իմաստասիրական և բանասիրական թանգարանի թանգարան // «Երիտասարդական» թանգարանի թանգարան, 2005, 314 էջ:

88. **Էրանյան Ի.Ի.** Իմաստասիրական և բանասիրական թանգարանի թանգարան // «Երիտասարդական» թանգարանի թանգարան, 2003, 520 էջ:

89. **Ծառերի Ա.Ի.** Իմաստասիրական և բանասիրական թանգարանի թանգարան // «Երիտասարդական» թանգարանի թանգարան, 2003, 194 էջ:

90. **Նաթանիել Ա.Է.** Իմաստասիրական և բանասիրական թանգարանի թանգարան // «Երիտասարդական» թանգարանի թանգարան, 2005, 201 էջ:

91. **Նաթանիել Ա.Է.** Իմաստասիրական և բանասիրական թանգարանի թանգարան // «Երիտասարդական» թանգարանի թանգարան, 2005, 244 էջ:

92. **Մանուկյան Ի.Ն.** Իմաստասիրական և բանասիրական թանգարանի թանգարան // «Երիտասարդական» թանգարանի թանգարան, 2003, 175 էջ:

Մեթոդական Խորհուրդ

Վերաբերյալի Վերաբերյալի Վերաբերյալի
քրեական դատարանի

Հրատ. խմբագիր՝ **Գ.Վ. Պետրոսյան**

Տեխ. խմբագիր՝ **Վ.Զ. Բորոյան**

Համակարգչային ձևավորում՝ **Ա.Հ. Պետրոսյան**

Ստորագրված է տպագրության 05.02.2007թ.:

Չափսը 60x84¹/₁₆: Թուղթը՝ օֆսետ: 12.5 տպ. մամուլ:

Տպարանակը՝ 300

Երևանի համալսարանի հրատարակչություն

Երևան, Ալ. Մանուկյան 1